

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր Ի Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ
ՀՅՈՒՄԻՄԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱԶՈՒՂԻՆԵՐՈՒՄ
(պատմամշակութային համադրություններ)
Միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր
23-24 սեպտեմբեր, 2023, Գյումրի

СБОРНИК СТАТЕЙ
СЕВЕРНАЯ АРМЕНИЯ
НА ПЕРЕКРЕСТКАХ ИСТОРИИ
(историко-культурные сопоставления)
Вторая международная конференция
Гюмри, 23-24 сентября, 2023

COLLECTION OF ARTICLES
NORTHERN ARMENIA
IN THE CROSSROADS OF HISTORY
(Historical and Cultural Relations)
Second international conference
Gyumri, september 23-24, 2023

ՀՏԴ 94(479.25):008(082)

ԳՄԴ 63.3(5Հ)+71գ43

Հ 694

Հոդվածների ժողովածուն հրատարակության է երաշխավորվել

**ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտական խորհրդի 19. 09. 2023թ. նիստի որոշմամբ:**

Հրատարակվում է ՀՀ ԿԳՄՍ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ
21Տ-2Ա292 ծածկագրով «Տայրը IX-XI դարերում (պատմաճարտարապետական
ուսումնասիրություն)» գիտական թեմայի շրջանակներում:

Խմբագրական հանձնախումբ՝

գլխ. խմբագիր՝ պ.գ.թ. Արկաղի Ակոպով

պ.գ.թ. Արմեն Հայրապետյան

ճ.թ. Դավիթ Նահատակյան

Ռոզա Հովհաննիսյան:

Հ 694 «Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակույթային համադրություններ)»: Միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր: 2023, Գյումրի: Հոդվածների ժողովածու: Գյումրի: ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023.-260 :

Ժողովածուն ընդգրկում է 2023թ. սեպտեմբերի 23-24-ին Գյումրիում «Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակույթային համադրություններ)» խորագրով միջազգային երկրորդ գիտաժողովին ներկայացված զեկուցումները գիտական հոդվածների տեսքով: Դրանք վերաբերում են Հյուսիսային Հայաստանի պատմության, հնագիտության, ազգագրության, ճարտարապետության և արվեստի տարբեր կնճռոտ հիմնահարցերին: Ժողովածուն նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25):008(082)

ԳՄԴ 63.3(5Հ)+71գ43

ISBN 978-9939-1-1758-4

DOI: 10.54503/978-9939-1-1758-4

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՆԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ,
anisaratikyaniae@gmail.com

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում պեղված բազմաթիվ հուշարձանների տվյալները վկայում են մ.թ.ա. I հազ. տարածաշրջանի միլիտարիզացման և մշակութային նոր իրողությունների ձևավորվելու մասին: Վերջիններս նոր լույս են սփռում նաև հոգևոր-պաշտամունքային կյանքի վերաբերյալ: Այս տվյալները համադրելով՝ հնարավորություն ենք ստանում պատկերացում կազմելու հնագույն հանրության սոցիալական կազմի, նրանց հոգևոր-պաշտամունքային կյանքի վերաբերյալ: Հոդվածի նպատակն է գիտական շրջանառության մեջ դնել Հյուսիսարևելյան Հայաստանի տարածքի մի խումբ նորահայտ հուշարձաններ, քննարկել դրանք ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանի հնագիտական իրողությունների համատեքստում:

Բանալի բառեր՝ Հյուսիսարևելյան Հայաստան, Կոթի, Այրում, Շնող, կիկլոպյան ամրոց, մարակերպ կոթող, խեցեղեն, մետաղ:

NEW DATA ON THE IRON AGE MONUMENTS OF NORTHEASTERN ARMENIA

ANI SARATIKYAN

Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Armenia,
anisaratikyaniae@gmail.com

The data of monuments excavated in the north-east of the Armenian highlands testify to BC. I millennium about the militarization of the region and

the formation of new cultural realities. The latter shed new light especially on spiritual-religious life. Combining these facts, we get an opportunity to form an idea about the social structure of ancient society, its spiritual and religious life. The purpose of the article is to put into scientific circulation a group of newly discovered monuments of the territory of North-Eastern Armenia, to discuss them in the context of both local and regional archaeological realities.

Keywords: Northeast Armenia, Koti, Ayrum, Shnogh, cyclopean fortress, human-like statue, pottery, metal.

НОВЫЕ ДАННЫЕ О ПАМЯТНИКАХ ЖЕЛЕЗНОГО ВЕКА СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

Ани Саратикян

Институт археологии и этнографии НАН РА, Армения
anisaratikyaniae@gmail.com

Данные памятников, раскопанных на северо-востоке Армянского нагорья, свидетельствуют о милитаризации региона и формировании новых культурных реалий в I тысячелетии до н.э. Последние проливают новый свет прежде всего на духовно религиозную жизнь. Сопоставляя эти факты, мы получаем возможность составить представление о социальной структуре древнего общества, его духовной и религиозной жизни. Цель статьи – ввести в научный оборот группу вновь открытых памятников территории Северо-Восточной Армении, обсудить их в контексте как местных, так и региональных археологических реалий.

Ключевые слова: Северо-Восточная Армения, Коти, Айрум, Шнох, циклопическая крепость, антропоморфный, статуя, керамика, металл.

Նախաբան. Հայաստանի հյուսիսարևելյան հատվածը¹ մեծ կարևորություն ունի հնագիտական հետազոտությունների շարքում: Տարածաշրջանը՝ որպես վաղ երկրագործական գոտի, հայտնի է դեռևս նեոլիթյան ժամանակաշրջանից²: Հնդվածում ընդգրկված է Կոթի, Այրում, Շնող բնակավայրերից վերջին տարիներին հայտնաբերված հուշարձանների մի խումբ, որը թույլ է տալիս նորովի մեկնաբանել տարածաշրջանի երկաթե դարյան մշակութային իրողությունները: Նպատակն է, ըստ հնագիտական նոր գտածոների, որոշակի պատկերացում տալ հնագույն հասարակության սոցիալական կազմի, հոգևոր-պաշտամունքային կյանքի, լեռնաշխարհի մյուս հատվածների հետ ունեցած փոխառնչությունների մասին:

Ուսումնասիրության պատմությունն ու նորահայտ հուշարձանները

Հյուսիսարևելյան Հայաստանի վերաբերյալ համապարփակ և արժեքավոր ուսումնասիրություն է կատարել հնագետ Ստեփան Եսայանը³, առանձին հոդվածներով անդրադարձել են Ս. Զիլինգարյանը, Օ. Խնկիկյանը և այլ հեղինակներ⁴:

Վերջին տարիներին ՀՀ Տավուշի մարզի Կոթի գյուղում հողային աշխատանքների ժամանակ գտնվել են հնագիտական ուշագրավ արտեֆակտեր, կավանոթներ, զենքեր, արձաններ, մետաղադրամներ⁵ և այլն: Շատ

¹ Հնդվածում ընդգրկված հուշարձանները վերաբերում են ՀՀ Տավուշի և Լոռու մարզերին:

² Զիլինգարյան Ս., Նեոլիթյան նորահայտ հուշարձաններ Նոյեմբերյանի շրջանում, ՊԲՀ № 3, 1970, էջ 294-297:

³ Есаян С., Древняя культура племен Северо-Восточной Армении, Ереван, Изд. АН Арм. ССР, 1976, 269 с.

⁴ Խնկիկյան Օ. Հյուսիս-արևելյան Հայաստանը մ.թ.ա. VII-VI դարերում (ըստ հնագիտական տվյալների), Բանբեր հայագիտության, № 2, 2019, էջ 124-145, Զիլինգարյան Ս., Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան կառույցները, ՊԲՀ, № 1, 1968, էջ 221-231:

⁵ Օրինակ՝ Բյուզանդիայի Կոստանդ II կայսեր (642-668) արծաթե դրամը (ՀՊԹ, Մայր մատյան №19750, գրանցվել է 1991թ., որպես Շավարշավանի գտածո), Սասանյան Կավաղ I դրամը (տե ս ադ. 5, նկ. 1), շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ ՀԱԻ միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի աշխատակից՝ դրամագետ Հասմիկ Հովհաննիսյանին դրամը նույնականացնելու համար:

կարևոր են Կոթիում փաստագրված կիկլոպյան ամրոցները՝ Սբ Սարգիս և Շոր աղբյուր (աղ. 7, աղ. 8): Շոր աղբյուր կիկլոպյան ամրոցին կից կա նաև դամբարանադաշտ: Մեծ կարևորություն ունեն Կոթիից հայտնաբերված մարդակերպ կուռքերը (տե՛ս օրինակ՝ աղ. 9): Առանձնակի կարևորություն ունեն կենդանակերպ ոճավորմամբ անոթներն Այրում և Շնող հնավայրերից:

Խեցեղեն նյութերը. Կոթիի խեցեղեն նյութերի ամենավաղ նմուշները վերաբերում են մ.թ.ա. II հազ. կեսին (մ.թ.ա. XVI-XV դդ.)¹ (տե՛ս աղ. 3, նկ. 2, 3, 8) :

Երկաթի դարին վերաբերող գտածոները հիմնականում հայտնաբերվել են Կավահանք և Քոռ աղբյուր հնավայրերից, խեցեղենի կազմը հիմնականում խոհանոցային և սեղանի սպասք է, որտեղ առկա են միականթ գավաթներ ու սավորներ, քրեղան, թասեր:

Կավահանք տեղամասում կավահողի լավ հումք կա, որն այժմ տեղացիներն օգտագործում են, այդ պատճառով էլ տարբեր տարիների ընթացքում ավերվել են մի շարք դամբարաններ: Այդ խառնված հողաշերտի մեջ տարիներ շարունակ հայտնաբերվել են մ.թ.ա. VII-VI դարերի խեցեղեն (աղ. 3, նկ. 1, 4, 5, 6, 7) և մետաղե առարկաներ (աղ. 4, նկ. 2, 3, 4, 5, 6, 7, 8): Քոռ աղբյուր դամբարանադաշտում, որը գտնվում է գյուղից 2 կմ հյուսիսարևելք, պահպանվել են հատուկենտ դամբարանների արտաքին նշաններ, որոնցից մեկը պեղվել է 2008 թվականին²: Դամբարանի խեցեղեն նյութերը թվագրվում են մ.թ.ա. VIII-VII դարերով (աղ. 1, 2):

¹ Տեքստում նշվող դարաշրջանները թվագրվում են հետևյալ կերպ. միջին բրոնզ՝ մ.թ.ա. XXV-XVI, ուշ բրոնզ՝ մ.թ.ա. XV-XIII, վաղ երկաթ՝ մ.թ.ա. XII-X, միջին երկաթ՝ մ.թ.ա. IX-VII դդ.: Քննվող դարաշրջանների փուլաբաժանման և թվագրության մանրամասների վերաբերյալ տե՛ս Ավետիսյան Պ., Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխությունների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Դոկտ. ստեղծ. գիտական զեկուցում, Երևան, 2014:

² Քալանթարյան Ա., Հոբոյան Ս., Կոթի (2008թ. դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքները), Տավուշ. Նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, «Գիտություն», 2009, էջ 257:

Գավաթներ. Գավաթներից մեկն արտաքուստ ունի թույլ սև փայլեցված մակերես, լայնաբերան է, շուրթի հատվածում ունի ակոսագոտիներ: Մյուս գավաթն ունի ուռուցիկ իրան և հարթ նստուկ (աղ. 1, նկ. 1): Իրանի մեջտեղի հատվածում առկա են ակոսագոտիներ, օղակաձև բռնակը միանում է շուրթին (աղ. 1, նկ. 2): Այսպիսի գավաթներ հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի վաղ երկաթեդարյան հուշարձաններում¹:

Սափորներ. Միականթ սափորները ներկայացված են երկու տեսակով (աղ. 1, նկ. 3, աղ. 3, նկ. 7): Առաջին տիպն ունի զարդարված ակոսագոտիներով ուռուցիկ իրան, կարճ վիզ, որը մեջտեղի հատվածում ներձկվում, նեղանում է, այնուհետև՝ լայնանում շուրթի և իրանին միանալու հատվածներում (աղ. 1, նկ. 3): Նմանատիպ սափորներ գտնվել են Լոռու մարզի Թեղուտ գյուղի Բարձրյալ հնավայրից², ինչպես նաև այն իր գուգահեռներն ունի Միգեչաուրի և Վրաստանի համաժամանակյա խեցեղեն նյութերում³:

Առանց կանթի սափորը մեկ օրինակից է, որն առանձնանում է թե՛ գույնով, թե՛ զարդանախշով: Բաց շագանակագույն այս անոթն ունի ուռուցիկ իրան, երկար վիզ և լայնացող բերան: Իրանի մեջտեղի հատվածում կա ցորենի հասկ հիշեցնող զարդանախշ: Կավահանքի դամբարանադաշտից գտնված այս գտածոն պատրաստված է տեղական կավից (աղ. 3, նկ. 6):

Սափորների շարքին ենք դասում նաև փոքր չափի երկու անոթները, որոնցից առաջինն ունի երկու կանթ, ուռուցիկ իրան, դեպի դուրս ուղղվող

¹ Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, Изд. ЕГУ, 1975, с. 250, рис. 160; Петросян Л., Раскопки памятников Кети и Воскеаска, (III-I тис. д. н. э.), Изд. АН Арм. ССР, Ереван, 1989, таб. 59, рис. 6; Хнкикян О., Syunik during the Bronze and Iron Ages, Barington, Mayreni publishing, 2002, plate XLIX, pic. 6; Saratikyan A., The Tombs Of Warriors, According To The Data Of The Cemetery Of Bardzrial (Late II millennium - first quarter of I millennium BC), *Բանբեր հայագիտության*, 2022, № 2, tab. 5, pic. 2, tab. 8, pic. 2, 4.

² Saratikyan A., The Tombs Of Warriors, According To The Data Of The Cemetery Of Bardzrial (Late II millennium-first quarter of I millennium BC), tab. 5, pic. 3, tab. 3, pic. 18.

³ Асланов Г. М., Ваидов Р. М., Ионе Г. И., Древний Мингечаур, Баку, Изд. АН Азерб., 1959, таб. XLII, рис. 6; տե՛ս Վրաստանի ազգային թանգարան, *պահոց, նմուշ № 2* 21.2014-1:

շուրթ (աղ. 3, նկ. 4): Մյուս սափորն ունի ուռուցիկ իրան, ուղիղ վիզ և դեպի դուրս թեքվող շուրթ: Անոթը կոճակազարդ է (աղ. 3, նկ. 5):

Քրեղան, թաս. Երկկանթ քրեղանն ունի սև փայլեցված մակերես, լայնահատակ է, անզարդ (աղ. 3, նկ. 1): Մյուս նմուշը թերի պահպանվածությամբ, գորշ փայլեցված մակերեսով, դեպի դուրս լայնացող իրանով, ընդգծված շուրթով քրեղան է: Իրանի արտաքին մակերեսին՝ շուրթից ներքև, ունի գծազարդ ակոսագոտի (աղ. 2, նկ. 1): Թասերը նույնատիպ են (աղ. 2, նկ. 2, 3, 4)՝ ուղիղ պատերով, հարթ նստուկով կավանթոններ են, որոնք արտաքուստ ունեն փայլանախշեր:

Խոյապատկերով անոթները. Խեցեղեն նյութերի մեջ առանձին խումբ են կազմում կենդանակերպ՝ խոյակերպ ոճավորմամբ անոթները: Այս խմբի խեցեղենը գտնվել է Այրումից և Շնողից: Այրումի անոթի վրա խոյապատկերը զարդարում է կավանթի կանթերը (աղ. 6, նկ. 2)¹, իսկ Շնողի խեցեղենի վրա հանդես է գալիս ծորակի և իրանի առանձին հատվածներում որպես առանձին դրվագ (աղ. 6, նկ. 1, 3, 4):

Խոյի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում մեծ տարածում է ստանում մ.թ.ա. III հազ. սկսած², որը, ինչպես տեսնում ենք խեցեղեն նմուշների օրինակով, շարունակվում է նաև հետագա դարերում:

Չնայած այն հանգամանքին, որ ներկայացված խեցեղենի կազմը որոշակի ձևաբանական ընդհանրություններ ունի Հայաստանի և հարակից տարածաշրջանների այլ հնավայրերի համաժամանակյա նյութերի հետ³, այնուամենայնիվ այս տեսականին ունի նաև որոշակի տեղական առանձնահատկություններ:

¹ *Շնորհակալություն ենք հայտնում Այրումի մշակույթի տան տնօրեն՝ Արմինե Սահակյանին՝ նյութը հրատարակության տրամադրելու համար:*

² *Եզանյան Լ., Գուր-արաքսյան մի կարասի զարդագոտու սիմվոլիկայի շուրջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», № 15, Գյումրի, 2012, էջ 35:*

³ *Ջուզահեռները վերաբերում են առավելապես Վրաստանի համաժամանակյա խեցեղեն նյութերին, հմնտ. Абрамишвили Р.М. Тбилиси, Археологические памятники I, Тбилиси, Мецниереба, 1978, с. 125.*

Մետաղը. Մետաղական գտածոները հայտնաբերվել են Կոթիի Կավահանք և Շոր աղբյուր հնավայրերից: Դրանց մեջ առանձնակի կարևորություն ունեն գեները, ինչը վկայում է տարածաշրջանում երկաթի դարի վաղ և միջին փուլում տեղի ունեցող մետաղագործության բուռն վերելքի մասին: Տարբեր զինատեսակների առկայությունը խոսում է նաև մետաղագործության ոլորտում տեղի ունեցող տեխնիկական առաջընթացի մասին:

Դանակներ. Ձենքերի այս խումբը պատրաստված է երկաթից, դրանք խիստ քայքայված են, սակայն նկատելի է, որ ձգված աղեղի տեսք ունեն (աղ. 4, նկ. 7, 8): Բռնակի վրա առկա են կոման հետքեր: Դանակի այս տեսակը հանդիպում է երկաթի դարի բոլոր փուլերում: Այդպիսիք հայտնի են Բերդից, Աստղաձորից, Խրտանոցից եւ այլն¹:

Նիզակի ծայրեր. Նիզակները հայտնաբերվել են Կոթիի Շոր աղբյուր կիկլոպյան ամրոցի տարածքից (աղ. 4, նկ. 9, 10, 11): Դրանք միաձույլ երկաթե և բրոնզե լայն շեղբով, խողովակաձև կոթառով նիզակների օրինակներ են (աղ. 4, նկ. 9, 10, 11): Կոթառի վրա երբեմն հանդիպում են այն ամրացնելու համար նախատեսված անցքեր: Զուգահեռներ հայտնի են Հայաստանի երկաթեդարյան բազմաթիվ հնավայրերից²:

Պերճանքի առարկաներ. Պերճանքի իրերը պատրաստված են բրոնզից, որոնք ներկայանում են մի քանի խմբով՝ օղեր, մատանիներ, բրոնզե ապարանջաններ:

Ապարանջաններ. Ապարանջանները պատրաստված են բրոնզից, երկու օրինակից են: Առաջին տիպը պատրաստված է բարակ լայն թիթեղից: Ծայրերը իրար չեն միանում, ունեն կոճակաձև զարդանախշեր: Մակերևույթը գոտևորում են փորագիր ալիքաձև կետագարդերը: Երկրորդ տիպը պատրաստված է բարակ մետաղալարից, ունի անզարդ մակերես (աղ. 4, նկ. 5, 6):

¹ Тирацян Г.А., Культура древней Армении VI в. до н.э. - III в. н.э (по археологическим данным), Ереван, Изд. АН Арм. ССР, 1988, 45, рис. 13.

² Sk' u օրինակ Եսայն Շ., Древняя культура племен Северо-Восточной Армении, 1976, 220, табл. 144; Քալանթարյան Ա., Հոբոսյան Ա., Կոթի (2008 թ. դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքները, 2009, էջ 257:

Մատանի, օղեր. Մատանին մեկ օրինակից է՝ պատրաստված բարակ բրոնզե տափակ թիթեղից, իրար վրա բերված ծայրերով (աղ. 4 նկ. 2, 3, 4): Օղերը պատրաստված են իրար մոտեցող տարբերակով, ունեն կետագարդ մակերես: Նման մատանիները բավական լայն տարածում ունեին միջին երկաթի դարում¹:

Կոթիի կիկլոպյան ամրոցները. Երրորդ հազարամյակի երկրորդ կեսից Հայկական լեռնաշխարհում հայտնված ամրությունների այդ ձևը, ինչպես մասնագետներն են պնդում, կապված էր ռազմական գործի զարգացման հետ: Ցեղային միությունների կազմավորման և ուժեղացման հետ աստիճանաբար ձևավորվում էին ռազմական հենակետեր²: Այս ամրացված բնակատեղիները, որ կառուցվել են բարձր՝ իշխող վայրերում, ջրամերձ և աղբյուրառատ վայրերում պատկանում են հնագիտորեն քիչ ուսումնասիրված հուշարձանների խմբին³: Կոթիում փաստագրվել է երկու կիկլոպյան ամրոց, որոնցից առաջինը, որտեղ դեռևս հնարավոր է տեսնել կիկլոպյան շարվածքը, Շոր աղբյուր կոչվող բլուրն է, երկրորդը՝ Շոր աղբյուրի թիկունքում, այժմ Աղբբեջանի վարչական տարածքում գտնվող Գագ լեռնաբլրի վրա գտնվող կիկլոպյանն է (մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես Սբ Սարգիս ամրոց (աղ. 8))⁴:

¹ *Xnkikyan O., Syunik during the Bronze and Iron Ages, plete XLII, pic. 3-4; plate XL, pic. 8-9; Мартиросян А., Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурагского периода (IX-VIII вв. до н.э.), Изв. АН Арм. ССР, 1956, 70, рис. 9; Հովհաննիսյան Վ., Պեղումներ Եղեգնաձորի Ջոջ դար դամբարանադաշտում, Բրոնզե երկաթեդարյան Մյունիքի սրբազան լանդշաֆտը (Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 112, աղ. 8, նկ. 23; Խանգաղյան Է.Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս. Մեծամոր, Երևան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1973, XLIII, նկ. 5:*

² *Չիլինգարյան Ս., Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան կառույցները, 1968, էջ 221:*

³ *Դանիելյան Հ., Հայաստանի «կիկլոպյան» ամրոցների հետազոտության հիմնական փուլերը, Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, XIII, «Գիտություն», 2018, 19:*

⁴ *Есаян С., Древняя культура племен Северо-Восточной Армении, 1976, с. 251.*

Շոր աղբյուրը մի երկգագաթ բարձունք է՝ մոտ 200 մ բարձրությամբ: Այստեղ տեղագնություն են կատարել Ս. Եսայանը և Ս. Չիլինգարյանը¹: Այս բլրի վրա տեղ-տեղ պահպանվել են կիկլոպյան ամրոցի պատերի շարվածքի մնացորդներ՝ աշտարակով և կոնտրֆորսով (աղ. 7, նկ. 2, 3): Դեռևս 1980-ական թվականներին բլրի տարածքից հայտնաբերվել են մի քարե կաղապար-շերեփ², բրոնզե և երկաթե զենքեր: Վերջին տարիներին հողային աշխատանքների ժամանակ անմիջապես բլրի ստորոտից հայտնաբերվել են երկաթեղարյան (մ.թ.ա. VIII-VII դդ.) նիզակի բրոնզե և երկաթե ծայրեր (աղ. 4, նկ. 9, 10, 11):

Շոր աղբյուրի հարևանությամբ է գտնվում Կավահանքի դամբարանադաշտը, որտեղ փաստագրվել են միջին երկաթի և վաղ հայկական ժամանակաշրջաններին պատկանող խեցեղեն: Հայտնաբերված հնագիտական գտածոները թույլ են տալիս ենթադրել, որ ամրոցը, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է մ.թ.ա. III հազ. կեսից մինչև երկաթի դարի վերջին փուլը:

Կարևոր հանգամանք է նաև ամրոցի տեղադիրքի ուսումնասիրության հարցը, քանի որ այստեղից շատ մոտ է Քոի ավազանը (տե՛ս աղ. 6): Այդ հանգամանքից ելնելով՝ ենթադրվում է, որ հատկապես վաղ երկաթի ժամանակաշրջանում (մ.թ.ա. XII-IX դդ.) այս ամրոցները մեծ նշանակություն են ունեցել Հայաստանի հյուսիսարևելյան հատվածի պաշտպանության գործում:

Հյուսիսարևելյան Հայաստանի մարդակերպ կոթողների ֆենոմենը

Մարդակերպ արձաններ գտնվել են Հայաստանի և Արցախի մի շարք հնավայրերից, օրինակ, Կարմիր բլուրից, Դվինից, Հարժիսից, Ջուջևանից,

¹ *Есаян С., Древняя культура племен Северо-Восточной Армении, 1976, с. 251; Չիլինգարյան Ս., Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան կառույցները, 1968, էջ 230:*


² *Բջևանի պատմա-երկրագիտական թանգարան, նմուշ № 6, հնագ. բաժին, թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազ.:*

Կոթիից և այլն¹: Այդ արձանները հրատարակվել են և մեծ կարևորություն ունեն համանման արձանների ուսումնասիրության և թվագրության հարցում: Մինչ այժմ Կոթի գյուղի տարբեր հատվածներից գտնվել են քարե 9 արձան:

Աղյուսակ 1



¹ Բարսեղյան Լ., Ուշ բրոնզե էպոխայի մի քանի նորահայտ պատմամշակութային հուշարձաններ, ՊԲՀ, № 3 (18), 1962, 258; Мартиросян А., Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX-VIII вв. до н.э.), 139; Тараян З., Статуэтки человека-рыбы из Кармир блура, Հուշարձան, տարեգիրք Զ, Երևան, «Հուշարձան», 2010, с. 177; Երանյան Ն.Ա., Նոր գտածոներ Արցախի երկաթեդարյան մշակույթի վերաբերյալ, ՎԷՄ համահայկական հանդես, № 3 (51), 2015, էջ 128-140:








Աղյուսակ 5



Աղյուսակ 6





1




2



3



4



1



2



3

Աղյուսակ 9



Աղյուսակ 10



Կոթիի արձաններից առաջինը հայտնաբերել է հնագետ Ս. Եսայանը, որը, համեմատելով Մեծամորում գտնված համանման արձանի հետ, գրում է. «Երևում է, որ այդ նույն տիպին է պատկանում Կոթիից մեծ քարե կուռքի ֆիգուրը, որը կանգնած է եղել երբեմնի դամբարանի վրա»¹: Կոթիից հայտնաբերված մեկ այլ կուռքի մասին գրում է հնագետ Ս. Դեմջյանը՝ Լոռի Բերդի դամբարանադաշտից հայտնաբերված մի քարե կուռք քննարկելիս: Համեմատելով այդ երկու կուռքերը՝ նա նշում է, որ այն, ինչպես նաև նույն տարածքից գտնվածները, հավանական է, որ դրված լինեին ցեղի առաջնորդների դամբարանների վրա, խորհրդանշելով պտղաբերության ու կյանքի հարատևության գաղափարը²: Նմանատիպ մի կուռք էլ գտնվել է Ջուջևանից (աղ. 5)³, այն որոշակի ընդհանրություններ ունի Կոթիի կոթողների հետ մշակման և ռճավորման առումով:

Առանձնակի կարևորություն ունեն 2021-2022 թթ. Կոթիից հայտնաբերված ձկնակերպ և խառնեակության՝ մարդաձկան հատկանիշներով կոթողները (աղ. 9,10): Դրանք կապվում են ջրի և ձկնակերպ աստվածությունների պաշտամունքի հետ, որն իր հեռավոր զուգահեռն ունի Միջագետքում⁴, ապա նաև ուրարտական մշակույթում⁵: Քննարկվող արձանների խումբը վերաբերում է մ.թ.ա. I հազ. առաջին կեսին:

¹ Есаян С. Древняя культура племен Северо-Восточной Армении, 1976, с. 229:

² Devedjyan S. Stone Stelae in the Bural Ground of Lori Berd, Aramazd, vol. 4, issue 2, Association for near eastern and Caucasian studies (editor-in-chief Aram Kosyan), Yerevan, 2009, p 149.

³ ՀՊԹ, լուսանկարը՝ «Դրվագներ ինքնության. զարդ» ցուցահանդեսից:

⁴ Միջագետքում հայտնի էր մարդաձկան կերպարով իմաստության, արհեստների և մոգության էա աստվածությունը, որին վերաբերող արձաններ են գտնվել Աշուրում, հիմն. Мифы народов мира 1991, том 1, с. 524, 545.

⁵ Мифы народов мира 1992, том 2, с. 24, 40, 234. Тараян З. Статуэтки человека-рыбы из Кармир блура, 177; Այդ արձանախմբի մասին նշում է նաև Բ. Պիտրովսկին, Пиотровский Б.Б. 1959, Ванское царство (Урарту), ред. И. А. Орбели, Москва, изд. Восточной литературы, с. 230: Այդ արձանները հանդիպում են նաև հիվանդների սենյակներում, Пиотровский Б.Б. 1952, Кармир-Блур II, Результаты работ археологической экспедиции Института истории АН Арм. ССР и Государственного Эрмитажа

Քննարկում. Հնագիտական աղբյուրներում առաջին անգամ Հյուսիսարևելյան Հայաստանի մասին հիշատակվում է ուրարտական սեպագրերում¹: Կարծիքներից մեկի համաձայն՝ ուրարտական բանակը հասել է մինչև ներկայիս Իջևան-Դիլիջան քաղաքների տարածք: Ըստ հնագիտական փաստագրումների, որոնք վերաբերում են լեռնաշխարհի այդ հատվածի ցեղախմբերի միլիտարիզացմանը, մասնավորապես՝ պաշտպանական համակարգի ստեղծմանը՝ կիկլոպյան ամրոցների կառուցմանը, կարելի է ենթադրել, որ հնագույն ցեղախմբերը որոշակի փոխառնչություն են ունեցել ուրարտական մշակույթի հետ, առավելապես՝ դիմագրավելով ուրարտական էքսպանսիային: Չնայած այն հանգամանքին, որ որոշակի ընդհանրություններ կան ուրարտական մշակույթի հետ, հատկապես,

1947-1950 гг., Ереван, изд. АН Арм. ССР, с. 24; Улլ գուգահեռների համար հմնտ. Мифы народов мира 1991, том 1, 24, 186. Խաչմանյան Ս.Հ. 2019, Կաթողիկոսական թագ-խույրի խորհրդարանությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, էջ 281-282: Ջրի պաշտամունքին են առնչվում հայտնի վիշապ քարակոթողները: Այդ պաշտամունքը կապվում էր պտղաբերության, հողագործության և անասնապահության հետ: Տե՛ս Սուրյան Հ.Է. К семантике прикладного искусства Древнего Кавказа и Закавказья, Советская археология, N 1, Москва, 1973, с. 59, 61. Ձկնակերպ վիշապաքարերի համար տե՛ս Բորոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, 2019, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 651 էջ; Բորոխյան Ա. 2020, Ատրպետի «գիտական արկածները» և վիշապ քարակոթողների հայտնագործումը, Երևան, Հայաստանի պատմության թանգարանի հրատ., 152 էջ:

¹ Արգիշտի I-ը, ներկայացնելով տարածաշրջան կատարած իր երկու արշավանքները, հայտնում է, որ առաջինի ժամանակ, նվաճելով Էթիունին, հասել է Ուդուրի-Էթիունի, իսկ երկրորդ անգամ, հաղթելով լճամերձ Կիեխունի քաղաքի երկիրը, հասել է Բշտիկունիկ և ապա Ալիշտու քաղաք: Ենթադրվում է, որ Ալիշտուն գտնվել է Դիլիջան-Իջևան հատվածում: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ այն կարող է համարվել Ղազախի Սարը-թեփե բնակավայրին: Այս մասին տե՛ս Խնկիկյան Օ., Հյուսիսարևելյան Հայաստանը մ.թ.ա. VII-VI դարերում (ըստ հնագիտական տվյալների), 125: Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960, с. 212, 216, 237, 248, 249, 261.

հոգևոր-պաշտամունքային կոթողների առումով¹, այնուամենայնիվ կիկլոպյան ամրոցները ինտենսիվ օգտագործելու փաստը, ինչպես նաև խեցեղեն և մետաղե նյութի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հյուսիսարևելյան Հայաստանի նշված բնակավայրերը չեն հանդիսացել ուրարտական ազդեցության գոտի: Տեղական առանձնահատկությունների մեջ հատկապես ուշագրավ է մարդարձանների առկայությունը, որի վերաբերյալ մեր ունեցած տվյալները վերջնական չենք համարում, և միայն տևական պեղումների արդյունքում հնարավոր կլինի ընդհանրական պատկերացում ունենալ:

References

1. Avetisyan P. Armenian Highland XXIV-IX centuries BC (socio-cultural dynamics according to archaeological data) [Haykakan lernashkharhy m.t.a. XXIV-IX darrerum (sotsial-mshakutayin dinamikan yst hnagitakan tvyalneri)], Doctoral Dissertation, Yerevan, 2014: (in Armenian)
2. Abramishvili R.M. Tbilisi. Archaeological monuments I [Tbilisi. Arkheologicheskie pamiatniki I]. Tbilisi: «Metsenereba» publ., 1978, 276 p. (in Georgian).
3. Aslanov G. M., Vaidov R. M., Ione G. I. Ancient Mingechaur [Drevniy Mingechaur]. Baku: Publication of NAS of Azer. SSR, 189 p. (in Russian).
4. Barseghyan L. Some newly discovered cult monuments of the Late bronze age [Ush bronze epokhayi mi k'ani norahayt pashtmamshak'utayin hushardzanner]// «Historical and Philosophical Journal» publication of Academy of Sciences of Armenian SSR, Yerevan, 1952, v.3 (18), pp. 258-260. (in Armenian).

¹ Գոթիի ձկնակերպ կոթողները մասամբ շարունակում են վիշապաքարերի բրոնզեդարյան երևույթը, իսկ խառնեակության հատկանիշով կոթողը կրում է հեռավոր միջագետքյան ազդեցություն, որն ավելի հստակ է արտահայտված կոթողներին ժամանակակից ուրարտական արվեստում: Հմմտ. Կուենա աստվածության հետ կապվող կոթողները, Գրեկյան Ե. Ուրարտական կոթողը հինարևելյան համատեքստում (նախնական դիտարկում), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին (խմբ. Ա. Բորոխյան, Ա. Ջիլբերտ, Պ. Հնիլա), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 2019, էջ 437:

5. Bobokyan A., Gilibert A., Hnila P. (ed.) The dragon on the border of fairy tale and reality [Vishapy hek'iat'i yev irakanut'yan sahmanin]. Yerevan: Publication of the Institute of Archeology and Ethnography, 2019, 651 p. (in Armenian)
6. Bobokhan A. Atrpet's "scientific adventures" and the discovery of dragon stones [Atrpeti «gitakan arkatsnery» yev vishap k'arakot' oghneri haytnagortsumy]. Yerevan: Publication of the History Museum of Armenia, 2020, 152 p. (in Armenian)
8. Chilingaryan S. Newly discovered Neolithic monuments in the Noyemberyan region [Neolit'yan norahayt hushardzanner Noyemberyani shrjanum]// «Historical and Philosophical Journal» publication of Academy of Sciences of Armenian SSR, 1970, v.3, pp. 294-297. (in Armenian).
9. Chilingaryan S. Cyclopean structures of Noyemberyan region [Noyemberyani shrjani kiklopyan karuytsnery]//«Historical and Philosophical Journal» publication of Academy of Sciences of Armenian SSR, 1968, v. 1, pp. 221-231. (in Armenian).
10. Devedjyan S. Stone Stelae in the Bural Ground of Lori Berd//Aramazd, Vol. 4, issue 2, Association for near eastern and Caucasian studies (editor-in-chief Aram Kosyan), Yerevan, 2009, pp. 146-153.
11. Danielyan H. The main stages of the study of the Cyclopean fortresses of Armenia [Hayastani kiklopyan amrotsneri usumnasirman himnakan pulery]// «Middle East. history, politics, culture», v. 13, «Gitutyun», Yerevan, 2018, pp. 19-28. (in Armenian)
12. Grekyan E. The Urartian monument in the ancient Eastern context (preliminary observation)[Urartakan kot'voghy hinarevelyan hamatekstum (nakhnakan ditarkum)]// «The dragon on the border of fairy tale and reality» (ed. A.Bobokhyan, A. Gilbert, P. Hnila) publication of Institute of Archeology and Ethnography, Yerevan, 2019, pp. 437-447. (in Armenian).
13. Yeganyan L. Around the symbolism of the ornament belt of jar from Kura-Araxes culture [Kurarakhsyan mi karasi zardagotu simvolikayi shurj]// «Shirak Armenological Research Center of NAS RA. Scientific works», publication of Academy of Sciences of Republic of Armenia, Gyumri, 2012, № 15, pp. 32-38. (in Armenian)
14. Yeranyan N. New findings regarding the Iron Age culture of Artsakh [Nor gtatsoner Arts'akhi yerkat'edaryan mshakuyt'i veraberyal]// «VEM pan-Armenian journal» publication of Academy of Sciences of Republic of Armenia, Yerevan, 2015, v.3 (51), pp. 128-140. (in Armenian).

15. Kalantaryan A., Hobosyan S. Koti (2008 field research results) [Kot'i (2008t'. dashtayin hetazotkan ashkhatank'neri ardyunk'nery)]// «Tavush. Material and spiritual heritage» (ed. A. Kalantaryan, H. Sargsyan), Yerevan, "Gitutyun" publ., 2009, pp. 247-269. (in Armenian).
16. Khachmanyany S. The symbolism of crown-diadem of the Catholicos [Kat'oghikosakan t'ag-khuyri khorhrdabanut'yuny]// «Journal of social sciences» publication of Academy of Sciences of Republic of Armenia, 2019, v.1, pp. 275-292. (in Armenian).
17. Khanzadyan E., Mkrtchyan K., Parsamyan E. Metsamor [Metsamor]. Yerevan: publication of Academy of Sciences of Armenian SSR, 1973, 214 p. (in Armenian).
18. Khnkikian O. North-Eastern Armenia BC In the VII-VII centuries (according to archaeological data) [Hyusis-arevelyan Hayastany m.t.a. VII-VII darerum (yst hnagitakan tvyalneri)]// «Journal of Armenian Studies», publication of National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, 2019, v. 2, pp. 124-145. (in Armenian).
19. Hovhannisyany V. Excavations in the Joj Dar burial site of Yeghegnadzor [Peghumner Yeghegnadzori Joj dar dambaranadashtum] // «The sacral landscape of Syunik during the Bronze-Iron Ages» (Ed.Avetisyan H., Gnuni A., Bobokhyan A., Sargsyan G.), Yerevan, publication of YSU, pp. 107-117. (in Armenian).
20. Martirosyan A. Excavations in Kirovakan and some monuments of the early Urartian period (IX-VIII centuries BC) [Raskopki v Kirovakane i nekotoryye pamyatniki ranneurartskogo perioda (IX-VIII vv. do n.e.)] // . «Proceedings of the Academy of Sciences» publication of NAS Arm. SSR, 1956, pp. 61-84. (In Russian).
21. Myths of the peoples of the world (encyclopedia in two volumes) [Mify narodov mira (entsiklopediya v dvukh tomakh)]. Moscow: Chief editor S. A. Tokarev, Publishing house "Soviet encyclopedia", 1991, v. 1, 672p. (In Russian).
22. Myths of the peoples of the world (encyclopedia in two volumes) [Mify narodov mira (entsiklopediya v dvukh tomakh)]. Moscow: Chief editor S. A. Tokarev, Publishing house "Soviet encyclopedia", 1992, v. 2, 720 p. (In Russian).
23. Martirosyan A. Idols from the excavations of Karmir Blur [Idoly iz raskopok Karmir-Blura]//. «Historical-philological Journal», Publication of Armenian SSR Academy of Sciences, Yerevan, v. 2, pp. 115-139. (In Russian).
24. Melikishvili G.A. Urartian cuneiform inscriptions [Urartskiye klinoobraznyye nadpisi]. Moscow, publishing of Academy of sciences of USSR, 1960, 502 p. (In Russian).

25. Petrosyan L. A. Excavations of the sites of Ketı and Voskehask (III-I tys. BC) [Raskopki pamyatnikov Ketı i Voskeaska, (III-I tis. d. n. e.)]. Yerevan, publication of Academy of Sciences of Armenian SSR, 1989, 178 p. (In Russian).
26. Piotrovsky B. Kingdom of Van (Urartu) [Vanskoye tsarstvo (Urartu)]. Moscow (ed. I. A. Orbeli), publ. «Eastern Literature», 1959, 284p. (In Russian).
27. Piotrovsky B. Karmir-Blur II, The results of the work of the archaeological expedition of the Institute of History of the Academy of Sciences of Arm. SSR and the State Hermitage museum 1947-1950 [Karmir-Blur II, Rezul'taty rabot arkheologicheskoy ekspeditsii instituta Istorii Akademii Nauk Arm. SSR i Gosudarstvennogo Ermitazha 1947-1950 gg.,]. Yerevan, publication of Academy of Sciences of Armenian SSR, 1952, 114 p. (In Russian).
28. Philiposyan A. Daggers and swords with framed wrists of the Ancient East [Hin Arevelk'i shrjanakavor dastakov dashuynnern u srery]. Yerevan, "Zangak-97" publ., 1999, 150 p. (in Armenian).
29. Tarayan Z. Figurines of a man-fish from Karmir Blur [Statuetki cheloveka-ryby iz Karmir blura]//. «Monument», Hushardzan publ., Yerevan, 2010, v.6, 177-186. (In Russian).
30. Tiratsyan G. Culture of ancient Armenia of the VI century. BC. - III century. AD (according to archaeological data) [Kul'tura drevney Armenii VI v. do n.e. - III v. n.e (po arkheologicheskim dannym)]. Yerevan, publication of Academy of Sciences of Armenian SSR, 1988, 230 p. (In Russian).
31. Urushadze N. On the semantics of applied art of the Ancient Caucasus and Transcaucasia [K semantike prikladnogo iskusstva Drevnego Kavkaza i Zakavkaz'ya,]// «Soviet Archeology», Moscow, Nauka Publishing House, v.1, 1973, 54-70 pp. (In Russian).

ՀՏԴ. 902

**ԼՈՌԵ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ 2022-2023 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ
ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՈՍԿՐԵ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ**

ՄՇԵՐ ԽԵՉՈՅԱՆ

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, ՀՀ
khechoyan.mher@mail.ru

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ
hnagetyan18@gmail.com

Վերջին տարիներին՝ հուշարձանների վերականգնման և ամրակայման զանազան ծրագրերի շրջանակներում լայն թափ են առել միջնադարյան հուշարձանների հնագիտական պեղումները: Հնագիտական հնավայրերից հայտնաբերված ամենազանգվածային նյութը, եթե բացառենք խեցեղենը, ոսկրաբանական նյութն է, ինչը հիմնականում տարբեր տեսակի ընտանի կենդանիների՝ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձիեր, խոզեր, թռչուններ, կրծողներ, երբեմն էլ վայրի կենդանիների՝ կենսաբանական վիճակում մեզ հասած մնացորդներ են: Սակայն բազմաթիվ հնավայրերում կավե, քարե և այլ նյութերից պատրաստված հազարավոր գտածոների կողքին հայտնաբերվում են, թեև սակավաթիվ, ոսկրե գործիքներ: Սույն հոդվածը նվիրված է Տաշիր-Չորագետյան թագավորության մայրաքաղաք Լոռե բերդից 2022-2023 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերված ոսկրե գործիքներին, բազմատեսակ իրերին, այլ նյութերից պատրաստված առարկաների ոսկրե մասերին և դրանց համար հումք հանդիսացող եղջյուրներին:

Բանալի բառեր՝ հուշարձան, պեղումներ, հնակենդանաբանություն, գտածոներ, ոսկոր, ոսկրե գործիք, եղջյուր:

BONE OBJECTS FOUND DURING THE EXCAVATIONS OF THE LORI FORTRESS IN 2022-2023

MHER KHECHOYAN

Scientific Research Center of Historical and Cultural Heritage, Armenia
khechoyan.mher@mail.ru

ARMAN NALBANDYAN

Scientific Research Center of Historical and Cultural Heritage,
Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, Armenia
hnagetyan18@gmail.com

In recent years, within the framework of various programs of restoration and conservation of monuments, archaeological excavations of medieval monuments have been gaining momentum. The most abundant material found in medieval archaeological sites, if ceramics are excluded, is the osteological material. These are mostly the remains of various types of domestic animals, cattle and small cattle, horses, pigs, birds, rodents, and sometimes wild animals, extant in their natural biological state. However, in many ancient monuments, along with thousands of finds made of clay, stone and other materials, there are, although few in number, bone tools. This article focuses on the bone tools, various objects, bone parts of objects made of other materials and the horns, used as a raw material found during the excavations of the capital of the Kingdom of Tashir-Dzoraget Lore Fortress in 2022-2023.

Keywords: monument, excavations, zoo archaeology, findings, bone, bone tool, horn.

КОСТЯНЫЕ ИЗДЕЛИЯ, ОБНАРУЖЕННЫЕ ПРИ РАСКОПКАХ ГОРОДА ЛОРИ БЕРД 2022-2023 ГГ.

МГЕР ХЕЧОЯН

Научно-исследовательский центр историко-культурного наследия
при МОНК РА, Армения
khechoyan.mher@mail.ru:

АРМАН НАЛБАНДЯН

Научно-исследовательский центр историко-культурного наследия при
МОНК РА, Армения
Институт Археологии при Национальной Академии Наук и Технологий РА
hnagetyan18@gmail.com

В последние годы, в рамках различных программ по реставрации и консервации памятников, набирают обороты археологические раскопки средневековых памятников. Наиболее массовым материалом, кроме гончарных изделий, найденных во время проведения раскопок на территории средневековых памятников, является остеологический материал. В основном это остатки пищи разных видов домашних животных: крупного и мелкого рогатого скота, лошадей, свиней, птиц, грызунов, а иногда и диких животных, дошедших до нас в естественном биологическом состоянии.

Однако, на многих памятниках, наряду с большим количеством керамических, каменных и других материалов, встречаются, хоть и не в многочисленном количестве, также и костяные орудия.

Данная статья посвящена найденным при раскопках 2022-2023 гг. в столице Ташир-Дзорагетского царства крепости Лори костяным орудиям труда, украшениям из кости, различным предметам, находкам из других материалов со вставками из кости являющимся сырьем для нихрога.

Ключевые слова: памятник, раскоп, палеонтология, артефакты, кость, костяное орудие, рог.

Նախաբան. Լոռեի բերդաքաղաքը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Լոռիի բերդ համայնքում, պատմական Գուգարաց աշխարհի տարածքում, Ձորագետ և Ուռուտ (Միսիսանա) գետերի միախառնման վայրում գոյացած հրվանդանի

տարածքում, ծովի մակերևույթից 1490մ բարձրության վրա, և արվարձանների հետ զբաղեցրել է 50-60 հա տարածք (միայն միջնաբերդը՝ 9 հա):

11-րդ դ. Դավիթ Անհողին արքայի կողմից հիմնադրվելով, ապա Կյուրկե II-ի կողմից հռչակվելով Տաշիր-Չորագետյան թագավորության մայրաքաղաք՝ Լոռեբերդը շարունակ կառուցապատվել է և ամրացել վիթխարի պարիսպներով: 11-12-րդ դդ. Լոռեն ուներ տասը հազարի հասնող բնակչություն: Քաղաքը նաև առևտրային և արհեստագործական կենտրոն էր, ինչը հաստատվում է նաև տարբեր տարիների իրականացված պեղումներով, որոնց ժամանակ ոչ միայն բացվել են զանազան կենցաղային ու տնտեսական նշանակության կառույցների հիմքեր, այլև գտնվել են բազմաթիվ արհեստագործական գործիքներ ու դրանց հումքը: Կարևոր է այն, որ Լոռեբերդի զարգացած միջնադարյան կառույցները հետագայում նույնպես օգտագործվել են տնտեսական և արհեստագործական նպատակներով: Օրինակ 11-12-րդ դդ. հիմնադրված Առաջին բաղնիքը, ամենայն հավանականությամբ, 14-15-րդ դդ. և ավելի ուշ օգտագործվել է որպես կաշեգործական և մանածագործական արհեստանոց: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ միջնաբերդի մշակութային շերտերը չափազանց հարուստ են քաղաքային կյանքին և արհեստներին, առևտրին ու ռազմարվեստին, կենցաղին, պերճանքին ու ժամանցին առնչվող բազմապիսի հնագիտական իրերով:

Ամրոցի տարածքում առաջին լայնամասշտաբ պեղումներն իրականացվել են Երևանի պետական համալսարանի արշավախմբի կողմից (ղեկ.՝ Ի. Ղարիբյան) 1966- 1974 թթ.: 2009-2014 թթ. պեղումներ կատարեց Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան) Երկու դեպքում էլ աշխատանքների ընթացքում գտնվեց ահռելի քանակությամբ հնագիտական նյութ, այդ թվում՝ խեցեղեն, ապակե սրվակների բեկորներ, մետաղական գործքիներ, զարդեր, կավե ծխամորձեր, զենքեր և այլն:

2022-2023 թթ. ՀՀ ԿԳՄՄ նախարարության առանձին դրամաշնորհով, վերականգնման և բարեկարգման ծրագրի շրջանակներում Պատմա-

մշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Ա. Նալբանդյան) վերսկսեց պեղումները միջնադարյան ամրոցի մի քանի կառույցների ներսում և հարակից տարածքներում: Մասնավորապես՝ պեղումներ կատարվեցին պարիսպներին ներսից հարող ընդարձակ հատվածում, Առաջին և Երկրորդ բաղնիքների տարածքում, որտեղից հայտնաբերվեցին մեծաքանակ խեցեղեն, այդ թվում ջնարակված և թռչնապատկերներով թասեր, մետաղական գործիքներ, զարդեր, զենքեր, ապակե ապարանջանների ու սրվակների բեկորներ, ուլունքներ, դրամներ, ծխամորձեր և այլն: Գտնվեցին նաև շուրջ երկու տասնյակ ոսկրե գործիքներ, կամ զանազան առարկաների ոսկրե մասեր ու հումք, որոնք համալրեցին մինչ այժմ հայտնի «լոռեբերդյան» ոսկրե իրերի հավաքածուն՝ բնականաբար հարստացնելով մեր պատկերացումները միջնադարյան ոսկրագործական արհեստի վերաբերյալ:

Ոսկրե առարկաները. Լոռեբերդի 2022-2023 թթ. պեղումներով հայտնաբերված ամենազանգվածային նյութերից են կենդանիների ոսկրերը: Դրանց մեջ կան ինչպես ընտանի, այնպես էլ վայրի կենդանիների (հիմնականում՝ եղնիկ) մեծաքանակ ոսկրեր՝ կմախքի առանձին մանրամասներ և գանգեր: Պատահում են նաև մանր կրծողների, թռչունների, ձկների, ինչպես նաև զանազան գիշատիչների ոսկրեր, ժանիքներ, եղջյուրներ և այլն: Որոշ դեպքերում սննդի մեջ օգտագործված մանր եղջերավոր անասունների ոսկրերի վրա նկատվում են մարդու միջամտության հետքեր:

Բացի հնակենդանաբանական նյութից, Լոռեբերդի բոլոր տեղամասերից և հատկապես Մեծ բաղնիքի տարածքից գտնվեցին նաև մշակված ու հղկված ոսկրե գործիքներ: Զանազան տիպի գործիքների առկայությունը խոսում է Լոռե ամրոցում տարբեր արհեստների և արտադրության գոյության մասին: Նշենք, որ դրանք գտնվեցին տարբեր շերտերի պեղումներով և կարող են թվագրվել տվյալ շերտի ժամանակաշրջանով: Պարսպին հարող տարածքում և բաղնիքներում, եթե չհաշվենք ուշբրոնզ-վաղերկաթեդարյան ժամանակաշրջանի հատուկենտ խեցաբեկորներն ու պատերի մեջ կիրառված վաղմիջնադարյան (6-7-րդ դդ.) ճարտարապետական

մանրամասները, ապա կարելի է տալ շերտագրական հետևյալ պատկերը, որը բավականին խաթարված է. ա/ 11-13-րդ դդ. (տնտեսական նորահայտ կառույց, խեցեղեն, ջնարակված թասեր, նետասլաքներ, մետաղադրամներ և այլն), բ/ 14-15-րդ դդ. և ավելի ուշ (կառույցների հիմքեր, վառարաններ, հորեր, ծխամորճեր, արկեր, քարե գործիքներ և այլն):

Եղջյուրից բիզ (երկ.՝ 17 սմ). Գործիքի սուր ծայրը մշակված, հղկված է, իսկ մյուս եզրին առկա են կտրող գործիքով արված տաշվածքի հետքեր, որը հավանաբար եղջյուրի ընդհանուր արմատից կտրելու ժամանակ է արվել: Գործիքի ծայրի մաշվածությունը խոսում է վերջինիս կիրառելիության մասին: Նման բիզերը կիրառվել են կավագործության մեջ՝ անոթների վրա թաց ժամանակ փորագիր զարդեր անելու նպատակով: Ջանազան հուշարձանների հայտնաբերված օրինակները բազմաթիվ են: Մասնավորապես՝ վերջին տարիների պեղումներով գտնված նմուշներից մեր օրինակին մոտ է Մյունիքի մարզի Շիկահող գյուղի Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու հարավային ավանդատան՝ 2013 թ. պեղումներով գտնված գործիքը: Այն պատրաստված է ազնվացեղ եղջերուի եղջյուրից, ունի մոտ 18 սմ երկարություն: Մի եզրում հարթ կտրված և հղկված է, իսկ մյուս՝ սուր եզրին նկատելի են օգտագործման հետևանքով առաջացած մաշվածությունը: Ուշագրավ է, որ այն գտնվեց արձանագիր բրոնզե երաժշտական նվագարանի հետ (10, էջ 15): Կավագործական բիզեր, սակայն չափերով փոքր, բրուտի այլ գործիքների հետ գտնվել են նաև այլ միջնադարյան հուշարձաններում, իսպախիք են Գառնի (3, էջ 70-71), Տանձափարախի անապատ (9, էջ 109) և այլն: Նմանատիպ մաշված ծայրերով եղջյուրներ գտնվեցին նաև Մարմաշեն վանական համալիրի 2020 թ. պեղումներից: Մասնավորապես՝ այժի 10 սմ երկարություն ունեցող կոտոշի վրա նշմարվում են մշակման կամ օգտագործման հետքեր: Մարմաշենի Կլոբ հատակագծով եկեղեցու սրահի պեղումները ցույց տվեցին, որ այն 19-րդ դարում, տարածքի վերաբնակեցման հետևանքով, եկեղեցին օգտագործվել է տնտեսական նշանակությամբ: Դրա վառ վկայությունն են թոնիրը և կարասը: Վերջինս գտնվեց ամբողջությամբ բեկոտված վիճա-

կում, սակայն ակնհայտ էր, որ իր սկզբնական տեղում էր: Նույն հատվածից գտնվեցին նաև տուֆե խոշոր խուփ և 17սմ երկարությամբ եղջյուրից գործիք¹: Կարելի է առանձնացնել Տանձափարախ անապատի (ՀՀ Սյունիքի մարզի, Կապանի ենթատարածք) 2014 թ. պեղումների ժամանակ սեղանատանը արևմուտքին կից տնտեսական կառույցից հայտնաբերված մոտ 8 սմ երկարությամբ բիզը: Մրա մի եզրը սրածայր է, իսկ մյուս եզրում կախելու նպատակով միջանցիկ անցք է արված: Նման բիզերը կիրառվել են խեցեգործության մեջ, դեռևս դուրգի վրա պտտվող կավե անոթների վրա ուղիղ կամ ալիքաձև նախշեր անելու նպատակով: Տանձափարախից գտնվել է նաև գիշատիչ կենդանու (հավանաբար արջի՝ *Ursus arctos*) ժանիք, որը թերևս նույնպես օգտագործվել է որպես թաց կավի վրա նախշեր անելու գործիք: Ժանիքն ունի 7.2 սմ երկարություն, մի կողմում՝ ճեղքվածք: Նման ոսկրե գործիքներ գտնվել են Տավուշի մարզի Կոթի գյուղի եկեղեցու պեղումներից՝ ավանդատներից մեկում, որը ուշ միջնադարում վերածվել է կավագործական արհեստանոցի²:

Եղջյուրից կտուտիչ (երկ.՝ 20 սմ). Եղջյուրի սուր ծայրը կտորված է, իսկ մյուս եզրը հիանալի հղկված ու վերածված է երկատամ կտուտիչի: Կտուտիչները, որոնք հայտնի են Հայաստանի մի շարք հնավայրերից և առկա են ՀՀ թանգարաններում, օգտագործվել են գորգագործության ու մանածագործության մեջ: Վերջինիս՝ Մեծ բաղնիքի տարածքում գտնվելու իրողությամբ առաջ է քաշվում այն վարկածը, որ բաղնիքի շենքը ինչ-որ ժամանակ կարող էր օգտագործված լինել որպես մանածագործական կամ գորգագործական արհեստանոց (մանավանդ որ այդ ոլորտին առնչվող այլ գործիքներ ևս գտնվել են): Կտուտիչներ գտնվել են նաև Լոռեբերդի 1960-70-ական թթ. (5, էջ 245), 2010-ական թթ. պեղումներից (13, էջ 50, աղ. 12): Ամբողջական ոսկրից պատրաստված կտուտիչներ, ինչպիսիք գտնվել են

¹ Մարմաշեն վանական համալիրի 2020թ., դեկ.՝ Ա.Նալբանդյան, ՀՀ ԳԱԱ հնագիտական պեղումների հաշվետվություն, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

² 2009 թ. Կոթիի հնախուրդական-հնագիտական աշխատանքների հաշվետվություն, հնագետներ՝ Ա. Քալանթարյան, Ս. Հոբոսյան, Ա. Բորոխյան, Ս. Հակոբյան:

Լոռեբերդից, Հայաստանի և հարակից երկրների այլ հուշարձաններից հայտնի չեն (5, էջ 246): Ավելի ուշ գորգագործական կամ կարպետագործական ոսկրե կտուտիչները փոխարինվում են մետաղականով, սակայն որոշ դեպքերում դրանց բռնակները շարունակում են պատրաստվել ոսկրից (եղջյուր): 19-րդ դարով թվագրվող այդպիսի նմուշներ պահպանվում են Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանում:

Մախաթասեղ (երկ.՝ 12,5 սմ). Հիանալի հղկված այս խոշոր ասեղը գտնվեց Մեծ բաղնիքի լողասենյակի ներսից՝ հարավարևմտյան անկյունից, որտեղ ենթադրում ենք, որ եղել է կաշեգործական արհեստանոց (բաղնիքի ներսից գտնվել են նաև կաշվե կտորներ): Ունի տափակ կողեր, մի ծայրը սուր է, որը օգտագործելիս վնասվել է, մյուսը՝ լայն և տափակ, որտեղ առկա է շրջանաձև անցք (0,6 սմ տրամագծով անցքի մեջ պահպանվել է կաշվե թելի ժապավենաձև մնացորդ): Մակերեսին տեղ-տեղ առկա են սուր գործիքով արված խազեր և սպունգանման ծակոտկենների հետքեր: Ոսկրից ասեղներ և մանածագործական զանազան գործիքներ (շյուղեր, կկոցներ, իլիկի գլխիկներ և այլն) հայտնի են դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից, որոնցից գտնվել են Գառնիում, Շենգավիթում, Էլարում և այլն (7, էջ 32, աղ. VII): Շքասեղներ հայտնի են նաև 4-րդ հազարամյակով թվագրվող Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրից (14, տխ. III):

Հեջուններ. Պեղումներից գտնված եղջյուրից փոքր (երկ.՝ 4,7 սմ) հեջունները օգտագործվել են մանած թելը կոկելու, հղկելու, բարակեցնելու համար: Դրանց վրա փաթաթված թելը առնելով մատների մեջ հեջունը ձգելով թելը կոկել են (1, էջ 273): Սրանք եղել են հիմնականում մետաղական: Լոռեբերդի ոսկրե առաջին նմուշը երկու կողմից հարթ կտրած է, իսկ կենտրոնում մնացել է թելի կոկման հետևանքով մնացած հետքը: Մեկ այլ նույնաչափ եղջյուրից հեջունի ներսը, ի տարբերություն նախորդ օրինակի, սնամեջ է, միջանցիկ անցքով: Մի եզրը ուղիղ կտրած է, մյուսը՝ հղկված, ատամնավոր: Մակերեսին պահպանվել են կտրող գործիքի կամ թելը կոկելու հետևանքով առաջացած խազերը:

Լոռեբերդի տարբեր տարիների պեղումներով հայտնաբերվել են մեծ քանակությամբ դանակների, անձեղների և զանազան այլ գործիքների *բռնակներ կամ կոթեր*: 2022-2023 թթ. պեղումներով դրանց քանակը ավելացավ ևս մի քանիսով: Ուշագրավ է դանակի կոթը (երկ.՝ 8,6 սմ), որի երկու եզրերը հարթ կտրած են, մեջտեղում՝ հորիզոնական ճեղքով: Մակերեսը հիանալի հղկված է, երկու փեղկերը միմյանց ամրացված են երկաթե գամերով: Մի եզրում կա անցք, որը ժամանակին պահել է երկաթե դանակի շեղբը: Ածելիի բռնակը (երկ.՝ 9,7 սմ) պատրաստված է երկու առանձին փեղկերից, որոնք իրար են ամրացված երկու երկաթե գամերով: Եզրերից մեկում կա ակոսաձև փորվածք և գայլիկոնված անցք, որոնք նախատեսված են եղել մետաղական շեղբը ամրացնելու համար: Նման բռնակներ կամ կոթեր մեծ թվով հայտնաբերվել են Անի քաղաքի պեղումներից և պահվում են Հայաստանի պատմության թանգարանում (Անի, 1982, 109-111, աղ. XIX-XX):

Բացի վերը թվարկված գործիքներից՝ գտնվել են նաև ոսկրե այլ իրեր, այդ թվում՝ մի քանի ոսկրե օղ: Մասնավորապես ուշագրավ է 2010-ական թթ. հայտնաբերված օղը, որի մակերեսին առկա են հատուկ գործիքի հպման միջոցով արված օղակներ (13, էջ 50-51, աղ. 12): Այսպիսի օղերը մեծ տարածում ունեն և հայտնաբերվել են ոչ միայն Լոռեբերդից այլև միջնադարյան այլ հուշարձաններից: Տանձափարախի անապատի 2021 թ. պեղումների ընթացքում հայտնաբերվեց նմանատիպ օղ՝ մակերեսին զույգ գծազարդերով: Այն ունի 24 սմ բարձրություն և 3 սմ տրամագիծ: Կարելի է ենթադրել, որ ինչ-որ առարկայի կոթառին ամրացվող օղ է: Նման ոսկրե օղերի կիրառությունը բավականին մեծ ժամանակագրություն ունի. դրանցից հայտնաբերվել են նաև Կարմիր բլուրի պեղումներից (12, էջ 55, 57, 353, 395):

Պարսպին կից տարածքի պեղումներով հայտնաբերվեց ոսկրե օղանման առարկայի բեկոր (տրամ.՝ 2,9 սմ)՝ միզուցե մատանի կամ ոսկրե անոթի բռնակ: Ոսկրե մատանու բեկոր գտնվել էր Լոռեբերդի նախորդ տարիների պեղումների ժամանակ ևս (13, էջ 51, աղ. 12):

Հնակենդանաբանական նյութի մեջ մեծ թիվ էին կազմում նաև մանր ամբողջական թիակոսկրերը, ինչպիսիք հայտնի է, որ օգտագործվել են որպես քերիչներ կաշվի մշակման համար (14, էջ 60): Քանի որ Լոռեբերդում բացվել է կաշեգործական արհեստանոց, մենք չենք բացառում, որ հայտնաբերված թիակոսկրերի մեջ լինեն նաև նման թիակ-քերիչներ:

Ոսկրե գտածոներից բացառիկ է փոքր իլիկի կամ թեշիկի գլխիկը (0,7սմ տրամ., 1,4 սմ բարձր.), որն ունի հիանալի հղկվածություն և փայլուն մակերես: Մի կողմում հարթ, մյուսում կոնաձև նիստերով, կենտրոնում միջանցիկ անցքով գլխիկի մակերեսին առկա է նաև զարդանախշ՝ օղակների և ուղղահայաց գծերի տեսքով: Իլիկի գլխիկներ գտնվել են նաև Ի. Ղարիբյանի ղեկավարած պեղումների ժամանակ, որոնք, սակայն, հիմնականում պատրաստված են կենդանիների վերջույթների հողերի խնձորակներից (5, էջ 246): Այս առարկաներից գտնվել են բազմաթիվ միջնադարյան հուշարձաններից, այդ թվում՝ Անիից, Գառնիից (7, էջ 33), Դվինից, որոնք պատրաստվում էին ոչ միայն ոսկրից, այլև բազմազան քարերից և հիմնականում խնամքով ու վարպետորեն մշակված են լինում (2, էջ 324): Մեր օրինակին հատկապես իր ձևով և նախշերով նման են Դվինից գտնված օրինակները, որոնք թվագրվում են 9-12-րդ դդ. (4, էջ LXI; 6, աղ. LII): Ոսկրե նման գլխիկներ հայտնի են նաև վաղ շրջանի հուշարձաններում, ինչպես, օրինակ՝ Քերթից (11, աղ. 18), Հին Շիրակավանից (15, աղ. V, VII) և այլն:

Գործիքների մեծ մասի համար որպես հումք են ծառայել մանր ու խոշոր եղջերավորների և, որ հատկանշական է, ազնվացեղ եղջերուի եղջյուրները: Հիմնականում օգտագործվել են եղջերուի եղջյուրից հատուկ գործիքի միջոցով սղոցված առանձին ճյուղերը: Այս իսկ պատճառով գործիքների եզրերը հիմնականում հարթ սղոցված են: Այդ առումով հետաքրքրական է Լոռեբերդի պարսպապատին կից 2022 թ. հայտնաբերված ջնարակված թասերով հարուստ հորի միջից՝ 1.80 մ խորությունում գտնված հումքը: Այստեղ վերին շերտերից հայտնաբերվել էին ջնարակված թասերի բազմաթիվ բեկորներ, որոնցից հավաքվել են ավելի քան 40

ամբողջական անոթներ, այդ թվում թռչունների պատկերներով: Ոսկրե եռաճյուղ հումքը հայտնաբերվեց մասնատված վիճակում¹: Այն ունի 12 սմ երկարություն: Ճյուղերից յուրաքանչյուրն ունի հստակ, հարթ կտրվածք, որից կարելի է ենթադրել, որ այն որպես հումք է եղել երկու, կամ նույնիսկ երեք գործիքի համար:

Եզրակացություն. Լոռեբերդում քաղաքային կյանքը բավականին ակտիվորեն դրսևորվել է զանազան արհեստների զարգացմամբ: Այստեղ զարգացած են եղել ապակեգործությունը, խեցեգործությունը, մետաղագործությունը, մանածագործությունը և այլ արհեստներ, որոնց համար հաճախ կիրառվել են ոսկրից, հիմնականում եղջյուրից պատրաստված գործիքներ: Մոնղոլական ասպատակություններից հետո քաղաքը, ճիշտ է, կորցնում է իր նախկին փառքն ու դարդարում գոյություն ունենալուց որպես խոշոր կենտրոն, սակայն կյանքն այստեղ ամբողջովին չի կանգնում, և եղած կառույցները շարունակում են օգտագործվել՝ հարմարեցվելով քաղաքի նոր բնակիչների կարիքներին և աշխարհայացքին: Մասնավորապես՝ 11-12-րդ դդ. կառուցված շինությունները 14-15-րդ դդ. սկսում են օգտագործվել արհեստագործական կամ տնտեսական նպատակներով: Օրինակ՝ Առաջին բաղնիքի ներքին տարածքը օգտագործվել է որպես կաշեգործական արհեստանոց, իսկ կցակառույց բաժանմունքները, հնարավոր է՝ որպես մանածագործական արհեստանոց: Պարսպապատին կից՝ ուշ միջնադարում կառուցված սենյակների ներսում, որտեղ բացվեցին զանազան օջախ-վառարաններ, տնտեսական հորեր, շարվածքներ և այլն, նույնպես գտնվեցին ոսկրե առարկաներ ու գործիքներ, որոնք ևս կարող են հաստատել այդ կառույցների արհեստագործական նշանակության հանգամանքը:

¹ Լոռեբերդի հնագիտական ողջ հավաքածուն վերականգնվել է Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի լաբորատորիայում:



Նկար 1. Լոռե ամրոցի պարսպի պեղված հատվածները
(լուս.՝ Բեն Վարդանյանի)




Նկար 2. Առաջին (Մեծ) բաղնիքի ընդհանուր տեսքը
(Լուս.՝ Սահակ Վարդանյանի)




Նկար 3. Բաղնիքի ներսույթը (I շերտ), որտեղ գործել է կաշեգործական արհեստանոց (Լուս.՝ Արման Նալբանդյանի)



Նկար 4. Բաղնիքի ներսույթը (II շերտ), տաքացվող հատակի մանրամասներ, (Լուս.՝ Արման Նալբանդյանի)



Աղյուսակ I. Ոսկրե առարկաներ. 1. Մատանու բեկոր, 2-3. Ոսկրե օղեր, 4. 6. Եղջյուրից հումք, 5. Իլիկի գլխիկ (Լուս.՝ Աստղիկ Մելքոնյանի), Առաջին բաղնիքի հատակագիծը (ԳՖ. Հովհաննես Սանամյանի)



Առաջին II. Ոսկրե առարկաներ. 1. Կտուտիչ, 2-3. Հեջուններ, 4. Բիգ, 5. Մախաթասեղ, 6. Քերիչ, 7. Դանակի կոթ, 8. Ածելիի բռնակ (Լուս.՝ Աստղիկ Մելքոնյանի):

References

1. Acharyan H. *“Dictionary of the Armenian Dialect”* [Hayots lezvi barbarayin bararan] vol. 3, Language Institute named after H. Acharyan, National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, 2004. (in Armenian).
2. Arakelyan B. *Cities and crafts in Armenia in the IX-XIII centuries* [Qaghaqern u arhestnery Hayastanum 9-13-rd dd.] Yerevan, USSR State ed., 1958. (in Armenian).
3. Arakelyan B., Karakhanyan G. *Garni III-The excavation results of 1949-1956* [Garni II, 1949-1956 tt peghumneri ardyunqner], Archaeological excavations in Armenia, vol. 10, USSR State ed., Yerevan, 1962. (in Armenian).
4. Ghafadaryan K., Kalantaryan A. *Dvin II* [Dvin II] Archaeological excavations in Armenia, vol. 20, Gitityun ed., Yerevan, 2002. (in Armenian).
5. Gharibyan I. *Lore fortress and its excavations* [Lore berdaqaghaqy tev nra peghumner], Gitityun ed., Yerevan, 2009. (in Armenian).
6. Hakobyan N., Zhamkochyan A., Babayan F., Qocharyan G. *Dvin IV, The city of Dvin and its excavations* (1981-1985) [Dvin IV, Gorod Dvin i ego raskopki], Archaeological excavations in Armenia, vol.24, Gitityun ed., Yerevan, 2008. (in Russian).
7. Khanzadyan E. *Garni IV-The excavation results of 1949-1966* [Garni IV, 1949-1966 tt peghumneri ardyunqner], Archaeological excavations in Armenia, vol. 12, USSR State ed., Yerevan, 1969. (in Armenian).
8. Musheghyan Ye. *The objects found in the excavations of the city of Ani* [Ani qaghaqi peghumnerits haytnabervats ararkanery], Yerevan, Hayastan ed., 1982. (in Armenian).
9. Nalbandyan S., Nalbandyan A., Badalyan H., Aleksanyan T. *The results of excavation of Tandzaparakh from 2012-2019*, [Tandzaparaxhi anapati 2012-2019 tt. Peghumneri ardyunqner]. Hushardzan, vol. 16, Yerevan, 2021, pp. 85-119. (in Armenian).
10. Nalbandian A. *The results of the excavations of St. Stepanos Nakhavka church of Shikahogh* [Shikahoghi Sb Stepanos Nakhavka yekeghetsu peghumneri ardyunqner], Works of the History Museum of Armenia, vol. 2 (10), Yerevan, 2022, pp. 8-17. (in Armenian).
11. Petrosyan L. *Excavations of the sites of Ketii and Voskeaska: III-I millennium BC* [Raskopki pomyatnikov Ketii i Voskeaska], Archaeological excavations in Armenia, vol.21, Yerevan, 1989. (in Russian).
12. Piatrowski B. *History and culture of Urartu* [Istoria i kultura Urartu] St. Petersburg, State Hermitage, 2011. (in Russian).
13. Simonyan H., Gharibyan I., Badalyan H., Aleksanyan T. *Lore Fortress* (preliminary excavation results from 2009-2013), [Lore berdaqaghaqy], “Hushardzan” ann., vol. 10, Yerevan, Hushardzan ed., 2015, pp. 29-56. (in Armenian).

14. Torosyan R. *The early-agricultural settlement of Toghut (4th millennium BC)* [Teghuti vagh yerkragortsakan bnakavayry], *Archaeological excavations in Armenia*’, vol. 14, USSR State ed., Yerevan, 1976. . (in Armenian).
15. Torosyan R., Khnkikyan O., Petrosyan L. *Hin Shirakavan-The excavation results of 1977-1981*, [Hin Shirakavan, 1977-1981 tt peggumneri ardyunqneri], *Archaeological excavations in Armenia*, vol.23, Gitutyun ed., Yerevan, 2002. (in Armenian).

ՀՏԴ՝ 7.072

**ԳԱԳԿԱՇԵՆ (ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ) ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դիանա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի պատմության թանգարան, ՀՀ
dianagrigoryan73@gmail.com

Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիում կառուցված շինությունների մեջ առանձնացել է Գագկաշեն (Սբ Գրիգոր) եկեղեցին, որի ճարտարապետը նշանավոր Տրդատն էր: Այն կրկնել է Ձվարթնոցի տաճարի հորինվածքն ու առանձնացել է իր հարուստ քանդակային հարդարանքով: Հողվածի շրջանակներում փորձ է արվում Թ. Թորամանյանի գծագրերի, արխիվային լուսանկարների, ինչպես նաև տեղում պահպանված բեկորների հիման վրա վերականգնել եկեղեցու արտաքին քանդակային համակարգը, ինչպես նաև այն դիտարկել նույն ճարտարապետի կողմից կա-

ռուցված մեկ այլ կառույցի՝ Մայր տաճարի արտաքին հարդարանքի համատեքստում:

Բանալի բառեր՝ Գագկաշեն, Տրդատ, կիսարմավիկ, արմավազարդ, կեռիսաչ-մեանդր, միահյուսված շրջան, երկրաչափական զարդանախշ, բուսական զարդանախշ, քառաթերթ զարդանախշ, կլոր պատուհանի շրջանակ:

FEATURES OF THE ARCHITECTURAL DECORATION OF GAGKASHEN (ST. GRIGOR)

Diana GRIGORYAN

History Museum of Armenia
dianagroryan73@gmail.com

The Church of Gagkashen (Surb Grigor), built by the famous architect Trdat in Ani, the capital of Bagratid Armenia, had unique architectural composition: it replicated the architecture of Zvartnots, an important monument of early medieval Armenia, and had rich external decoration. This article attempts to restore the decorative system of the church based on the drawings of T. Toramanyan, archival photographs, as well as architectural fragments preserved among the ruins of the church and analyze it in the context of the external decoration of the Cathedral, built by the same architect Trdat.

Key words: Gagkashen, Trdat, half-palmette, palmette, swastika-meander, interlocking circle, geometric ornament, floral ornament, four-petal ornament, round window framing.

ОСОБЕННОСТИ АРХИТЕКТУРНОГО ДЕКОРА ЦЕРКВИ ГАГКАШЕН (СУРЬ ГРИГОР)

Диана ГРИГОРЯН

Музей истории Армении
dianagrigoryan73@gmail.com

Церковь Гагкашен (Сурб Григор), построенная знаменитым зодчим Трдатом в Ани – столице Багратидской Армении, выделялась своей архитектурной композицией: она была построена по типу Звартноца – важного памятника раннесредневековой Армении, и имела богатый внешний декор. В настоящей статье предпринята попытка восстановить декоративную систему церкви на основании чертежей Т. Тораманяна, архивных фотографий, а также сохранившихся среди руин церкви архитектурных фрагментов и рассмотреть ее в контексте внешнего декора Кафедрального собора, построенного тем же Трдатом.

Ключевые слова: Гагкашен, Трдат, полупальметка, пальметка, свастика-меандр, переплетающийся круг, геометрический орнамент, растительный орнамент, четырехлепестковый орнамент, обрамление круглого окна.

Խախարան. Հոդվածը նվիրված է Անիում Գագկաշեն (Սուրբ Գրիգոր) եկեղեցու արտաքին հարդարանքի վերլուծությանը: Զվարթնոցատիպ այս եկեղեցու զարդանախշերում արտացոլված են Տրդատ ճարտարապետի ստեղծած մայրաքաղաքային ոճի նորարարական մոտեցումները և հորինվածքները, որոնք տեղ են գտել նաև Մայր տաճարի հարդարանքում:

Գագկաշեն (Սբ Գրիգոր) եկեղեցին կառուցվել Գագիկ Ա Բագրատունու (989-1017/20 թթ.) օրոք՝ Տրդատ ճարտարապետի կողմից՝ քրիստոնեության ընդունման 1000-ամյակի կապակցությամբ, միաժամանակ այն ընդօրինակել է Զվարթնոցի տաճարի հորինվածքը: Մասնագիտական գրականության մեջ բազմիցս նշվել է Տրդատի՝ որպես տաղանդավոր ու

նորարար ճարտարապետի մասին: Մյուս կողմից՝ մայրաքաղաք Անիում նրա ստեղծած ճարտարապետական գլուխգործոցների ղեկորատիվ հարդարանքն առանձին վերլուծության չի ենթարկվել, գրեթե անտեսվել է: Հողվածի շրջանակներում դիտարկելու ենք Գագկաշենի քանդակային համակարգը՝ Տրդատի կերտած մեկ այլ կառույցի՝ Մայր տաճարի¹ քանդակային համակարգի հետ համեմատության համատեքստում: Մայր տաճարի և Գագկաշենի քանդակային հարդարանքում տեղ գտած զարդանախշերի վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև եկեղեցիները պատկանում են ճարտարապետական տարբեր հորինվածքների, բայց արտաքին հարդարանքում հանդիպում են նմանատիպ զարդանախշեր և տեղտեղ նաև՝ լուծումներ: Վարպետների խումբը՝ Տրդատի գլխավորությամբ, կիրառել է միանգամայն նոր, ստեղծագործական մոտեցում՝ ստեղծելով ծավալի ու մակերեսի ընկալման բոլորովին նոր գեղարվեստական «լեզու»: Մյուս կողմից, Գագկաշենում եղել են այնպիսի հորինվածքներ, որոնք բացառիկ էին ոչ միայն Անիի, այլ նաև նույն շրջանի հայկական եկեղեցիների քանդակային հարդարանքի համատեքստում:

Գագկաշեն Մբ Գրիգոր եկեղեցին պեղվել է 1905-1906 թթ. Ն. Մառի գլխավորած արշավախմբի կողմից²: Տեղում հայտնաբերված Գագիկ Ա արքայի քանդակի մաս կազմող եկեղեցու մանրակերտի և գտնված ճարտարապետական բեկորների հիման վրա Թ. Թորամանյանն արել է եկեղեցու վերակազմությունը:

Գագկաշենի արտաքին հարդարանքի մանրամասն վերլուծությունը բացակայում է մասնագիտական գրականության մեջ: Հուշարձանի ուսումնասիրությունը բարդանում է նրանով, որ ճարտարապետական բեկորների միայն չնչին մասն է մնացել: Բարեբախտաբար, ճարտարապետ Թ. Թորամանյանի կատարած գծագրերը, արխիվային լուսանկարները և

¹ Մայր տաճարի կառուցումը սկսվել է Մմբատ Բ Տիեզերակալ Բագրատունու (977-989 թթ.) օրոք, նրա մահից հետո շինարարական աշխատանքներն ընդհատվել են և ավարտվել են Գագիկ Ա արքայի կողակից Կատրամիդե թագուհու կողմից:

² Марап Н. Я. Ани, с. 99-121.

տեղում պահպանված բեկորները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու եկեղեցու արտաքին տեսքի վերաբերյալ:

Հետևաբար, քանդակային հարդարման առանձնահատկությունները, նոր մոտեցումներն ու խորհրդարանությունը հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է դասակարգել առկա նյութերը:

Քանդակագարդ են եղել առաջին հարկաբաժնի դեկորատիվ կամարաշարը, նրանից վերև անցնող շրջագոտին, կլոր լուսամուտների շրջանակները, գմբեթի շրջագոտին, հարավային և հյուսիսային շքամուտքերը, որմնասյուների խոյակները և խարիսխները: Գազկաշենի հարդարանքում հանդիպում են ինչպես մեկ, այնպես էլ համակցված զարդանախշերից բաղկացած հորինվածքներ: Հատկանշական է, որ նրանց գերիշխող մասը հարթային, խիստ ոճավորված է, գերիշխում է գրաֆիկական մոտեցումը: Այս սկզբունքը բնորոշ է նաև Մայր տաճարին. զարդանախշերը ենթարկվում են պատի հարթությանը՝ ստեղծելով երկրաչափական հստակ գծեր:

Զարդանախշերի առաջին խումբը կլոր պատուհանների շրջանակներն են՝ պատված բուսական ու երկրաչափական քանդակներով, միագոտի կամ բազմագոտի հորինվածքներով, մշակված խոր ակոսի տեսքով.

1. Պատուհաններից մեկն ունեցել է դեպի վերև նեղացող, սրածայր վերջավորությամբ բուսազարդերից բաղկացած եզրագոտի [Նկ. 1]: Բուսազարդերը կազմվել են աղեղնաձև գոտիով իրար միացված կիսարմավիկներից՝ ստեղծելով ռիթմիկ, անդադար շրջան: Այս նույն զարդանախշը հանդիպում է Մայր տաճարի հյուսիսային ճակատի դեկորատիվ կամարաշարերի արևելյան 2 կամարների վրա [Նկ. 2] և հարավային ճակատի արևելյան խորշի պսակին¹, իսկ մյուս հուշարձանների պահպանված հատվածներում կամ արխիվային լուսանկարներում այն չկա: Կարելի է ենթադրել, որ այստեղ գործ ունենք հենց վարպետի անհատական մոտեցման հետ: Երկու դեպքում էլ հարդարվել է կոր մակերեսը, ընդ որում, Մայր տաճարի դեպքում հյուսիսային ճակատի որմնակամարների հիմքում՝

¹ Karapetyan S., Ani 1050, p. 89, fig. 220.

որմնախոյակից վեր, շրջանի մեջ առնված հավասարաթև խաչերի փոքր քանդակներ են՝ եռանկյունաձև պատվանդանի վրա:

2. Թ. Թորամանյանի գծագրերի մեջ պահպանվել է բացառիկ մի նմուշ. խաղողի գալարվող հաստ որթի՝ 3 գոտուց բաղկացած հորինվածք, որը ձևավորել է 2 գոտի, որի մեջը քանդակված են եղել խաղողի ողկույզները՝ կից եռաթերթ տերևներով¹: Որթերի ստեղծած շարժուն ուրվագիծը և իրար դեմ դիմաց քանդակված ողկույզների ստատիկ դիրքը ստեղծել են անկրկնելի հորինվածք, որը չի հանդիպում նույն շրջանի մյուս հուշարձաններում և բացառիկ է եղել անգամ Գագկաշենի հարդարանքի համատեքստում: Ամենայն հավանականությամբ, այն մի տեղ չէ, որ կիրառվել է, սակայն, ցավոք, նյութերի բացակայության պայմաններում հնարավոր չէ հստակ սահմանել:




Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4

¹ Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani*, p. 96.



Նկ.5



Նկ. 8



Նկ. 6



Նկ. 7

3. 2 գոտուց բաղկացած շրջանակ: Վերին գոտին պատված է կաթիլաձև զարդանիշով, որի կոր հատվածում սկավառակաձև նախշ է: Ստորին գոտին պատված է կիսարմավիկներով [Նկ. 3]: Կաթիլաձև զարդանախշն ամենահաճախն է կիրառվել Մայր տաճարի հարդարանքի՝ կոր մակերես ունեցող տարբեր հատվածներում (կամարներ, պատուհանների կամարունքեր, կլոր պատուհանների շրջանակներ), իսկ ոճավորված կիսարմավիկների այս տարբերակը հանդիպում է Մայր տաճարի՝ արևել-

յան ճակատի խորշերի պսակներին [Նկ. 4]: 2 հուշարձանում էլ այս զարդանախշն օգտագործվել է կոր մակերեսի վրա:

4. 4 գոտուց բաղկացած շրջանակ: Արտաքին 2-ը ոլորապտույտ նախշի գոտիներ են: Նրանց միջև ոճավորված կիսարմավիկների և նշաններկթերթ զարդանախշերից բաղկացած 1-ական գոտիներ են¹: Նշաններթիկների արանքներում սկավառակներ են: Ոլորապտույտ նախշը Մայր տաճարի հարդարանքում հաճախ հանդիպող մոտիվներից է, հիմնականում բարդ հորինվածքներում [Նկ. 2, 4]: Մա այն եզակի դեպքերից է, երբ զարդանախշն իր ճկուն հորինվածքի շնորհիվ կարող էր կիրառվել հարթ, ուղիղ և կոր մակերեսների վրա, ինչից և օգտվել են վարպետները: Մինչդեռ նշաններկթերթ զարդանախշը քանդակվել է միայն Մայր տաճարի հարավային ճակատի կենտրոնական հատվածի 2 նեղ պատուհանների հարթ կամարունքերին²:

5. 3 գոտուց բաղկացած շրջանակ: Արտաքին վերին գոտին պատված է ոլորապտույտ նախշով, 2-րդ գոտին՝ կաթիլաձև, 3-րդը՝ կիսարմավենիկներից գոտիով [Նկ. 5]: Փաստացի, այս 3 նախշերի համակցությամբ ստեղծվել են միմյանցից տարբերվող մի քանի հորինվածքներ:

Վերը նշված 3 հորինվածքներն իրենց մեկնաբանության սկզբունքով ավելի մոտ են Մայր տաճարի օրինակներին, թեև զարդանախշերի գոտիների հերթականությունն անմիջականորեն չի կրկնվում:

6. 3 գոտուց բաղկացած շրջանակ: Արտաքին գոտիներին ոլորապտույտ նախշեր են, մեջտեղում՝ քառաթերթ զարդանախշերի գոտի: Նշաններթիկները ոչ թե առանձին ելնում են կենտրոնից, այլ միահյուսված են ու դասավորված անկյունագծերով: Ներքին ուրվագծում ավելացված է փոքրիկ շրջան, որը միահյուսվում է թերթիկների հետ³: Վերին ու ստորին զույգ թերթիկների արանքներում տափակ սկավառակներ են: Քառաթերթ զարդանախշը հանդիպում է նաև Մայր տաճարի արևմտյան և հարավային

¹ Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani*, pp. 95, 98.

² Karapetyan S., *Ani 1050*, p. 88, fig. 215.

³ Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani*, p. 98.

ճակատների որմնախոյակների վրա¹: Մակայն Գագկաշենի օրինակն ավելի բարդ հորինվածք է՝ դինամիկ, նորարարական, այն չի հանդիպում այլ կառույցների վրա:

7. Գծագրերից մեկում պահպանված մի օրինակում երևում է 3 գոտիներից բաղկացած կլոր շրջանակի հատված: Հորինվածքի արտաքին գոտիները կազմված են եղել ուղրապտույտ նախշերից, իսկ մեջտեղինը՝ հյուսածո զարդանախշից՝ բաղկացած 4 զիգագաձև, ուղիղ անկյան տակ թեքված գոտիներից²: Այս զարդանախշն առանձին հանդիպում է Մայր տաճարի արևմտյան ճակատի չորս որմնակամարներին և հարավային ճակատի արևելյան պատուհանի կամարունքին³: Գագկաշենում այն դարձել է մի քանի գոտուց բաղկացած հորինվածքի մաս:

Եկեղեցու կլոր պատուհանների շրջանակների հարդարանքի մեջ առանձին խումբ են կազմել միահյուսված շրջաններից բաղկացած հորինվածքները՝

1. Թ. Թորամանյանի գծագրի համաձայն՝ շրջանակներից մեկը պատված է եղել 2 շարք միահյուսված շրջաններից կազմված հորինվածքով⁴: Ակնհայտ է, որ այս տարբերակում վարպետներն անմիջականորեն ոգեշնչվել են Մայր տաճարից, քանզի երկշարք տարբերակը հանդիպում է հյուսիսային ճակատի արևելյան [Նկ. 2] և հարավային ճակատի արևելյան⁵ խորշերի պսակներին, արևմտյան ճակատի կենտրոնական կամարին (հարավային ճակատի կենտրոնական ուղղանկյուն շրջանակին այն ևս կա):

2. Հաջորդ 2 հորինվածքում հիմնական տարրը կարճ պոչիկով ոճավորված արմավազարդերն են, որոնք հանդիպում են Մայր տաճարի արևմտյան ճակատի կենտրոնական պատուհանի և հարավային ճակատի արևմտյան պատուհանի ուղղանկյուն շրջանակների հորինվածքում [Նկ.

¹ Karapetyan S., Ani 1050, p. 88, fig. 215, 218.

² Toramanyan T., St. Grigor (Gagkashen) Church in Ani, p. 98.

³ Karapetyan S., Ani 1050, p. 89, fig. 222.

⁴ Toramanyan T., St. Grigor (Gagkashen) Church in Ani, p. 96.

⁵ Karapetyan S., Ani 1050, p. 89, fig. 220.

6]: Ուղղանկյուն միափյունավոր շրջանակներից բաղկացած հորինվածքի ներսում նույն կենտրոնից դուրս եկող, տերևներով դեպի դուրս ուղղված 4 արմավազարդեր են, որոնք իրենց տեսքով խաչ են հիշեցնում: Նույն հորինվածքը հանդիպում է ինչպես Սբ Առաքելոց եկեղեցու պատուհանի շրջանակին, այնպես էլ ԺԱ դ. խաչքարերի վրա, այսինքն՝ երևում է անիական դպրոցի ազդեցությունը: Մինչդեռ Գազկաշենում արմավազարդերը ստացել են բոլորովին նոր մեկնաբանություն.

- 1-ին տարբերակում արմավազարդերը քանդակված են նույն տեսքով, սակայն միափյունավոր շրջանների մեջ՝ մեկ գոտիով: Առանց պոչիկի մեկական առանձին արմավազարդ քանդակված է շրջանների միափյունաման կետից վերև ու ներքև՝ ուղղահայաց դիրքով¹:
- 2-րդ տարբերակում արմավազարդերը գլխիկներով են ուղղված դեպի կենտրոն, տարբերվում են նաև կառուցվածքով [Նկ. 7]: Արխիվային լուսանկարից ելնելով՝ նրանք նաև համակցված են եղել 1-ին տարբերակի հետ՝ ստեղծելով միայն Գազկաշենում հանդիպող հորինվածք²:

3. Թ. Թորամանյանի գծագրում հանդիպում է կլոր պատուհանի շրջանակի մեկ այլ գծագիր՝ միափյունաված շրջանի պատկերով, որի ներսում քառաթերթ նախշ է, կաթիլաձև յուրաքանչյուր թերթ ունի սկավառակաձև նախշեր, իսկ շրջանից դուրս՝ միափյունաման կետից վերև ու ներքև, մեկական սկավառակներ են³: Եթե մյուս տարբերակներում կաթիլաձև նախշն առանձին գոտիով է քանդակված եղել, ապա այս տարբերակում նրա միջոցով ստեղծվել է նոր հորինվածք:

Եկեղեցին ունեցել է նաև քառաթերթ ուրվագիծ ունեցող պատուհաններ: Դրանցից մեկի գծագրից երևում է, որ այն պատված է եղել գալարվող կիսարմավիկներից գոտով⁴: Ինչպես վերը նշվեց, այս զարդանախշը հանդիպում է ինչպես Գազկաշենի, այնպես էլ Մայր տաճարի հարդարանքում:

¹ Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani*, p. 98.

² Strzygowski J., *Die Baukunst der Armenier und Europa*, vol. 1, p. 452.

³ Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani*, p. 98.

⁴ Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani*, p. 98.

Բացի վերը նշված զարդանախշերից, որոնք հիմնականում հանդիպում են նաև Մայր տաճարի վրա, Գազկաշենի հարդարման համակարգում եղել են այնպիսի տարրեր, որոնք դեկորի՝ խորհրդանշական ընկալման նոր մոտեցման արդյունք են և ցույց են տալիս, որ Տրդատը ստեղծագործական մեծ ջանք է ներդրել այստեղ և դարձել է գեղարվեստական նոր ոճի հեղինակ՝ ստեղծելով բացառիկ քանդակային համակարգ:

Խոսքն առաջին հարկաբաժնի դեկորատիվ կամարաշարից վերև անցնող շրջագոտու և գմբեթի շրջագոտու զարդանախշերի մասին է՝ կեղծ մեանդրը կամ կեռիսաչ-մեանդրը, որի ճկուն կառուցվածքը հնարավորություն է տալիս ստեղծելու տարբեր հորինվածքներ ու ծածկել մեծ մակերեսներ: Գմբեթի շրջագոտու վրա եղել է պարզ գոտի՝ բաղկացած իրար հաջորդող կեղծ մեանդրից ու միահյուսվող շրջաններից, որոնց մեջ քանդակված են եղել 6-թերթ ծաղիկ, խեցիներ¹: Առաջին հարկաբաժնի գոտու վրա կիրառվել է ավելի բարդ հորինվածք. երկշարք տեղադրված 4 կեղծ մեանդրի թևերի միջև՝ կենտրոնում, տեղադրված են նույն կենտրոնից դուրս եկող 4 ոճավորված բուսազարդեր կամ Կենաց ծառեր, որոնց ուրվագիծը խաչի տեսք ունի, իսկ հորինվածքին հաջորդում են մեկական նմանատիպ բուսազարդեր, որոնք պատկերված են ուղղահայաց և ուղղված դեպի կենտրոն²: Իր կատարման եղանակով այս հատվածը տարբերվում է մյուսներից՝ ավելի զանգվածեղ է, հարթային մշակումով: Հատկանշական է, որ այս զարդանախշը շատ քիչ է հանդիպում նույն ժամանակաշրջանի եկեղեցիների հարդարանքում և հիմնականում այն սահմանափակ քանակությամբ եկեղեցիներում, որոնք անմիջական կապ ունենին անիական դպրոցի հետ կամ կրում էին նրա ազդեցությունը (Հռոմոսի վանքի գավիթ, Մարմաշեն, Ցաղաց քար, Բղենո Նորավանք, Արատես):

Շինության տեսողական ընկալման համատեքստում առանձնացվել է ոչ միայն առաջին հարկաբաժնի դեկորատիվ կամարաշարից վեր

¹ Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani, fig. XIII.*

² Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani, fig. XXXVI.*

գտնվող գոտին, այլ նաև կամարները, որոնք հարդարված են եղել յուրահատուկ զարդանախշով, որը չի հանդիպում կանգուն ոչ մի հուշարձանի վրա և, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է բացառապես Գազկաշենի համար: Զարդանախշը հնգատերև, ոճավորված արմավազարդեր են կամ արմավափնջեր, որոնք օղակաձև որդագալարով միացված են իրար՝ կազմելով անդադար ռիթմ, իսկ կամարների հիմքում ավարտվում են կիսարմավենիկներով [Նկ. 8]: Որդագալարների վրա ևս կան կիսարմավենիկներ, իսկ արմավազարդերը դասավորված են ոչ թե մեկ, այլ հակառակ ուղղություններով և թերթիկներից բացի ունեն նաև փոքր, դեպի ներս կորացող տերևներ: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ արմավազարդերի տերևները կաթիլաձև են, վերին կոր մասում ունեն սկավառակաձև նախշեր, ինչպես մյուս օրինակներում է: Կարելի է փաստել, որ կատարողական արվեստը նույնն է եղել, տարբերվել են միայն հորինվածքների ձևերը, նույն նախշի միջոցով ստեղծվել են տարբեր համադրություններ:

Եզրակացություն. Գազկաշենի քանդակային հարդարանքի վերլուծությունը ցույց է տալիս, որ մայրաքաղաքային արվեստում ստեղծվել էր յուրօրինակ հուշարձան՝ արքայական իշխանության խորհրդանիշ: Մինչև նույն վարպետի կողմից կառուցված Մայր տաճարում և Գազկաշենում թեև կիրառվել են մի խումբ միանման զարդանախշեր, բայց միաժամանակ նույն Գազկաշենում առկա են եղել հորինվածքներ, որոնք, առանց չափազանցության, բացառիկ են միայն այդ կառույցի համատեքստում և ցույց են տալիս, որ Գազկաշենն ունեցել է առանձնահատուկ խորհրդաբանություն նաև արտաքին հարդարանքի տեսանկյունից:

References

1. Karapetyan S., Ani 1050, Yerevan: Research on Armenian Architecture Foundation, 2011, 264 p.

2. Marr N. Ia, *Ani. Book History of the City and the Excavations on the Place of the Town [Ani. Knizhnaia istoria goroda i raskopki na meste gorodishcha]*, Moscow-Leningrad, 1934, 133 p. (in Russian).
3. Strzygowski J., *Die Baukunst der Armenier und Europa*, vol. 1, Vienna: Anton Schroll & Co. G.m.b.H., 1918, 455 p.
4. Toramanyan T., *St. Grigor (Gagkashen) Church in Ani, Documents on Armenian Historical and Cultural Heritage*, vol. 3, Yerevan: The Service for the Protection of Historical Environment and Cultural Museum Reservations, 2014, 136 p.

Հապավումներ

ՀՃՈՒՀ – Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ

1. Գազկաշենի կլոր պատուհանի շրջանակի բեկորները: Լուս.՝ ՀՃՈՒՀ արխիվի (Ալ. Թամանյանի արխիվից)
2. Մայր տաճարի հյուսիսային ճակատի արևելյան որմնակամարները և խորշի պսակը: Լուս.՝ հեղինակի, 2018 թ.
3. Գազկաշենի կլոր պատուհանի շրջանակի բեկորը: Լուս.՝ Ժ.-Մ. Թիերրիի, 1964 թ. (ՀՃՈՒՀ արխիվ)
4. Մայր տաճարի արևելյան ճակատի հարավային խորշի պսակը և կամարը: Լուս.՝ Ջ. Սարգսյանի, 2005 թ. (ՀՃՈՒՀ արխիվ)
5. Գազկաշենի կլոր պատուհանի շրջանակի բեկորները: Լուս.՝ ՀՃՈՒՀ արխիվի (Ալ. Թամանյանի արխիվից)
6. Մայր տաճարի հարավային ճակատի արևմտյան պատուհանը: Լուս.՝ Ջ. Սարգսյանի, 2013 թ. (ՀՃՈՒՀ արխիվ)
7. Գազկաշենի կլոր պատուհանի շրջանակի բեկորը: Լուս.՝ Պ. Դոնապետյանի, 2013 թ. (ՀՃՈՒՀ արխիվ)
8. Գազկաշենի կլոր պատուհանի շրջանակի բեկորը: Լուս.՝ Ժ.-Մ. Թիերրիի, 1969թ. (ՀՃՈՒՀ արխիվ)

ՀՏԴ 726. 5

**ՏՄՅՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹**

Աշոտ Հայկազուն ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՃՇՀԱՀ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ,
ashothaykazun@gmail.com

Անի ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՃՇՀԱՀ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՀՀ,
ahaykazun@gmail.com

Հոդվածում ներկայացվում են Տայքի և հարակից շրջանների բնակելի տների տիպերը՝ ըստ իրենց հատակագծային և ծավալատարածական, ինչպես նաև գեղագիտական առանձնահատկություններով: Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: Աշխատանքում ներկայացված են Տայքի և հարակից շրջանների բնակելի տների ճարտարապետական առանձնահատկությունները, որոնց մեծ մասը ուսումնասիրված չէ և հանիրավի իրենց տեղը չի գտել հայկական բնակելի տներին նվիրված հետազոտություններում, շատերն էլ նույնիսկ հայտնի չեն: Զուգահեռներ են տարվել Տայքի և պատմական Հայաստանի տարբեր շրջանների բնակելի տների ճարտարապետական հորինվածքային ձևերի հետ՝ ցույց տալով դրանց ընդհանրականությունը Հայկական լեռնաշխարհի մյուս բնակավայրերի բնակելի տների ճարտարապետության հետ: Ուսումնասիրության մեջ հատակեցվել են Տայքի բնակելի տների տեսակները, դրանց հատակագծային և կառուցողական առանձնահատկությունները. ինչպես նաև տիպաբանական տեսականին: Հոդվածը գրվել է հեղինակների համատեղ ջանքերով: Ճարտարապետական մասը հեղինակել է Ա. Հայկազունը, բնակելի տների գեղագիտական վերլուծությունները՝ Ա. Գրիգորյանը:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Բանալի բառեր՝ Տայք, Գուգարք, բնակելի տուն, տիպաբանություն, հասակագիծ, հարդարանք:

TYOLOGICAL FEATURES OF TAYK AND SURROUNDING AREAS DWELLINGS

Ashot Haykazun GRIGORYAN

NUACA , Doctor of Architecture, Professor, Armenia
ashothaykazun@gmail.com

Ani GRIGORYAN

NUACA , SCAS NAS RA, Armenia
ahaykazun@gmail.com

Introduction. The article presents the types of residential houses in Tayk and neighboring regions according to their plan and spatial, as well as aesthetic features. Historical-comparative, as well as the methods of combining and analyzing sources were used in the work. The work presents the architectural features of residential houses in Tayk and neighboring regions, most of which have not been studied and have not found their rightful place in the research field dedicated to Armenian residential houses, many of them are not even known. Parallels have been drawn with the architectural forms of residential houses in Tayk and various regions of historical Armenia, showing their commonality with the architecture of residential houses in other settlements of the Armenian Highlands. In the study, the types of Tayk residential houses, their planning and construction features were specified as well as the typological assortment. The article was written by the joint efforts of the authors. The architectural part was authored by A. Haykazun Grigoryan, aesthetic analysis of residential houses by A. Grigoryan.

Key words. Tayk, Gugark, residential house, typology, plan, decoration.

ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЖИЛЫХ ДОМОВ ТАЙКА И ПРИЛАГАЮЩИХ РАЙОНОВ

Ашот Айказун ГРИГОРЯН

НУАСА, доктор архитектуры, профессор, Армения,
ashothaykazun@gmail.com

Ани ГРИГОРЯН

НУАСА, ШЦАИ НАН РА, Армения,
ahaykazun@gmail.com

В статье представлены типы жилых домов Тайка и соседних районов по их планировочно-пространственным, а также эстетическим признакам. В работе использовались методы историко-сравнительного анализа, а также методы объединения и анализа источников. В работе представлены архитектурные особенности жилых домов Тайка и соседних районов, большинство из которых не изучено и не нашло своего достойного места в исследованиях, посвященных армянским жилым домам, многие из них даже не известны. Проведены параллели с архитектурными формами жилых домов Тайка и различных районов исторической Армении, показана их общность с архитектурой жилых домов других населенных пунктов Армянского нагорья. Результаты. В ходе исследования были уточнены типы тайкских жилых домов, их планировочные и конструктивные особенности, а также типологический ассортимент. Статья написана совместными усилиями авторов. Автор архитектурной части - А. Айказун Григорян, эстетический анализ жилых домов - А. Григорян.

Ключевые слова: Тайк, Гугарк, жилой дом, типология, план, оформление.

Նախաբան: Հայ ճարտարապետության տեսականու տիպաբանական շղթայի կարևոր մաս է հանդիսանում բնակելի տնաշինությունը: Այն ծագել և իր հետագա զարգացումն է ունեցել Հայկական լեռնաշխարհում քարի դարից սկսած մինչ մեր օրերը¹: Հայկական բնակելի տների ճարտարապետության ուսումնասիրությունների մեջ գրեթե անդրադարձ չի եղել

¹ *Գրիգորյան Ա. Հ., Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում, Եր., 2005, 178 էջ, 106 աղյուսակ:*

Տայքի բնակելի տների ճարտարապետությանը: Իրականում դրանք առանձին ուսումնասիրության կարոտ են:

Մեր ուսումնասիրությունները Տայքում կատարվել են 2016 թվականի աշնանը: Այդ ընթացքում առիթ է եղել այցելել Կղարջիք գավառի (Արդվինի նահանգ) Համալ գյուղ, Ագորդացիոր գավառի Օշկվանք գյուղ (պատմական Տայք նահանգ), Էրզրումի նահանգի Օլթի գավառի Իրիաղաջ (նախկին՝ Փառնակ) գյուղ, Հոպայի շրջանի Քամավիաշա գյուղ (Նոդեղի, պատմական Խաղտիք), Շավշատի տարածաշրջանի Քյուփրուջե գյուղ, Տայքի նահանգի Բերդարցվոր գավառի, Գոյարք նահանգի Կղարջք գավառի Նորաշեն:

Հիմնական երթուղին անցել է Ղարս, Արդահան, Շավշատ, Արդանուշ, Արդվին, Իբրիկ, Բորչկա, Իշխան, Բուլանդ, Ռաբատ, Հոփա բնակավայրերով, որոնք ներկայացրել են փաստորեն պատմական Ջավախք, Վանանդ, Տայք, Պոնտոս շրջանները: Ուսումնասիրության հիմնական նյութը առնչվելու էր տարածաշրջանի պաշտամունքային (քրիստոնեական) հուշարձաններին, սակայն ընթացքում մեր կողմից նյութեր են ձեռք բերվել նաև այլ հուշարձանների վերաբերյալ (կամուրջներ, բնակելի տներ, բնակավայրեր, աղբյուրներ և այլն): Ներկայացվող հոդվածում կանգ ենք առել տարածաշրջանի բնակավայրերում հանդիպած ճարտարապետահատակագծային և գեղագիտական առավել բարձր արժեք ներկայացնող մի շարք բնակելի և տնտեսական կառույցներին՝ փորձելով համեմատական վերլուծական մեթոդով վեր հանել դրանց տիպաբանական առանձնահատկությունները:

Ճարտարապետական տիպաբանության տեսանկյունից ուշագրավ տներ կային Արտվինի տարածաշրջանի Ագարա, Բոսելըր (այժմ՝ Օքում Ուշլար), Յուսուֆեղիի տարածաշրջանի Դիվաձոր (այժմ՝ Դարիջա), Իշխան, Էրզրումի նահանգի Ուզունդերեյի տարածաշրջանի Աշունքավանք, Օշկվանք (այժմ՝ Չամըլյամաչ), Թորթումի Խախու, Խախ (այժմ՝ Բաղբաշը) և այլ գյուղերում, ինչպես նաև Արդվինի նահանգի Շավշատի տարածաշրջանի Ռաբատ (այժմ՝ Քյոփրուլու) գյուղում և այլն:

Հորինվածքային տեսանկյունից առավել հետաքրքրական են այն տիպերը, որոնցում պահպանվել են Հայկական լեռնաշխարհում վաղնջական ժամանակներից պահպանված և հետագա զարգացում ունեցած տիպերը: Օրինակ՝ գետնափոր, կիսագետնափոր, քարաշեն կամ փայտաշեն տները: Այս տեսանկյունից հետաքրքիր էին Ասփակի կառույցները:

Պատմական Մեծ Հայքի Տայք նահանգի Բողխա գավառի Դիվաձոր բնակավայրի մոտ է գտնվում Ասփակի IX-XV դարերի վանական համալիրը¹:

Համալիրից հարավ-արևմուտք ընկած տարածքում գտնվում է IX-XI դարերի գողտրիկ միասրահ եկեղեցին: Վանքային համալիրը և եկեղեցին տեղադրված են տեղանքի թերակղզաձև համեմատաբար հարթ վայրում, որից անդին բավական խոր տարածվող կիրճ է: Բնակավայրից դեպի վեր՝ բավականին անմատչելի վայրում է գտնվում Ասփակի ամրոցը: Վանական համալիրում պահպանվել են նաև ուշմիջնադարյան օժանդակ կառույցներ, կիսագետնափոր կամ ամրոցչությանը բնահողի մակերևույթին կառուցված բազմաթիվ ախոռներ, պահեստային սրահներ, հարդանոցներ և այլն, որոնք մինչ այժմ օգտագործվում են:

Մեզ առավել հետաքրքրողը, անշուշտ, դեպի կիրճը տանող թեքությունները հնարամիտ կերպով օգտագործած կառույցներն են: Դրանք, ամենայն հավանակությամբ, օգտագործվել են որպես անասնագոմեր, հարդանոցներ կամ պահոցներ: Այդ կառույցները իրենց հորինվածքում կիսագետնափոր են: Կառույցներից յուրաքանչյուրի աջ ու ձախ կողմերից քարե պատեր են կառուցված, որոնց վրա որպես ծածկ տեղադրվել են հաստ գերաններ և վրան փոփել ավելի բարակ գերաններով ու տուպանաձև կավահողով ծածկ: Դիմացի մասից կառույցները փակված են մեծ փայտե դուռ-դարպասներով: Բնականաբար հետնապատը տեղանքի ռելիեֆի թեքու-

¹ Կուտիքից արևմուտք՝ Թորթումի գավառի (Լիվա) հարևանությամբ էր գտնվում Խուվախ գյուղը (Խուվախ բերդը): Գյուղով էր անցնում Ոսիսիանի առվակը, որը սկիզբ առնելով Լեանյի լեռներից՝ անցնում էր Խուվախ գյուղով, ապա ընդունում համանուն գյուղերից իջնող Մեչենք և Ագրուղ յայյա առվակները: Ապա այն անցնում է Ոսիսան գյուղով, որից հյուսիս-արևելք Ասփեկ (Ասփակ) գյուղն էր:

թյան մեջ է և նույնպես քարաշար: Երբ վանական համալիրից քայլում ես դեպի կիրճը, ապա առանց կռահելու կարող ես հայտնվել այս կառույցների տանիքների վրա: Դժվար չէ նկատել այս կառույցների հորինվածքային նմանությունները Հայկական լեռնաշխարհում տարածված բնակելի տների «գլխատուն» տիպաբանական տեսակի հետ: Այս տիպերով էին կառուցվում թեք լանջի վրայի տները, որոնցից մեկի տանիքը ծառայում էր մյուսին (ավելի վեր գտնվողի համար) որպես բակ:

Մեր ուսումնասիրության տարածաշրջանում գտնվող Տանձուտ գյուղում կարողացանք չափագրել և լուսանկարել մի շատ հետաքրքիր բնակելի տուն, որն իր հորինվածքով, հիրավի, լավագույն օրինակներից մեկն է մեզ հանդիպած տներից: Այն իր մեջ խտացնում է գյուղական ու քաղաքային բնակելի տների ճարտարապետական և գեղագիտական մոտեցումները: Այս տունը, փաստորեն, բացի բնակելի գործառույթից, ունի նաև այլ գործառույթ: Նրա առաջին հարկը իրենից ներկայացնում է հացի փուռ՝ վաճառասրահով: Առաջին հարկը քարե պատերով է կառուցված: Փուռ-վաճառասրահի փողոցին նայող հատվածը փայտե մեծ դռներով է պատված: Տունը գտնվում է գյուղի կենտրոնում, եկեղեցու հարևանությամբ¹: Նրա առաջին հարկը շարված է նույն (կանաչավուն) քարից և նույն տեխնիկայով, ինչ որ եկեղեցին է: Տան երկրորդ հարկը և ծպեղնահարկը ամբողջությամբ փայտաշեն են (բացառությամբ առաջին հարկից դեպի վեր բարձացող վառարանային և բուխարու հորինվածքներից, որոնք քարաշեն են): Այս տան հորինվածքում փայտի օգտագործումը հասցված է բարձր վարպետության: Տան հատակները, պատերը, առաստաղը, պատուհանների դռները, պատուհանները, դեպի սենյակները և պատշգամբները բացվող դռները, ոլորապտույտ աստիճանը և հատկապես պատշգամբները իրենց

¹ Արդանուշի տարածաշրջանի Տանձուտ (Այդն), Տանձուտ, Տանգուտ գյուղի եկեղեցին կառուցվել է 1843 թվականին: Ամենայն հավանականությամբ, մեզ հետաքրքրող ինքնատիպ բնակելի տունը նույնպես այդ թվականներին պիտի կառուցված լինի: Նման հետևության հանգեցրելու համար մենք համեմատում ենք կառույցում օգտագործված շինանյութը պատի շարվածքում, քարերի մշակման եղանակը, որոնք նույնատիպ են:

կախովի նստարանային մասերով և գեղագիտական բարձր ճաշակով ու վարպետությամբ պատրաստված հենակ-պահիչներով, բազրիքներով և ճաղաշարերով իսկապես արվեստի բարձրարժեք գործեր են: Առանձնապես հիշարժան է պատշգամբի ձախ հատվածում երեխաների խնամքի և հանգստի համար նախատեսված նստարանը՝ իր ինքնատիպ հորինվածքով: Տանձուտի հայտնի այս տունը հավանաբար կառուցել է Գալոյան Աթանեսը կամ Ղուկասյան Մարկոսը: Իսկ ներսի և դրսի փայտի գործերը Գրիքոր Բարսեղյանը կամ Գեղեոն Դանիելյանը, որոնք իրենց մասնագիտության մեջ եզակի էին¹:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ տան երկրորդ և երրորդ (ծպեղ-նահարկ) հարկերի բուխարի վառարանների աջ և ձախ կողմերում գտնվող պատրիան-պահարանները իրենց գեղարվեստական հարդարանքով ու լուծումներով հար և նման են Կեսարիայի, Վան-Վասպուրականի, Շիրակի և այլ շրջանների բնակելի տների նմանատիպ հորինվածքներին: Իսկ առաջին հարկի քարաշեն հորինվածքը ընդհանրապես հիշեցնում է Հայկական լեռնաշխարհի հատկապես բարձրադիր վայրերում շատ տարածված ձևերը: Տունը լքված էր, ինչպես մյուս գյուղերում հանդիպածներից շատերը: Ընդհանրապես հայկական բնակավայրերի բնակելի տներից շատերը լքված էին և քայքայված, իսկ նրանք, որ այժմ օգտագործվում էին որպես ամառանոցային ժամանակավոր կացարաններ, մասամբ և անկանոն վերանորոգված էին:

Տայքի և հարակից շրջանների պահպանված բնակելի տներից յուրաքանչյուրին անրադառնալ չհաջողվեց, սակայն ուսումնասիրված նյութերը հնարավորություն են ընձեռում որոշակի եզրահանգումներ կատարելու:

Տայքի ժողովրդական բնակելի տների ճարտարապետական հորինվածքային ձևերը, ըստ իրենց հատակագծային, ծավալատարածական, օգտագործված շինանյութերի և գործառնականորեն անհրաժեշտ տարածքների կազմակերպման և անհրաժեշտ կապերի ապահովման բաժանվում են բարձրլեռնային, նախալեռնային, հովտային, մերձծովյա տիպերի:

¹ Տե՛ս Մազմանյան Վ., *Ճորոխի ակիին*, Եր., 2018, էջ 24:

Ըստ այդմ, պայմանավորված տեղանքի բնակլիմայական պայմաններով, քարաշեն, հարթ տանիքով, քարաշեն, լանջավոր տանիքով, քարի և փայտանյութի մասնակի օգտագործման, քարի և փայտի հավասար համադրությամբ, փայտաշեն, քարի մասնակի օգտագործման, լրիվ փայտաշեն:

Ըստ ռելիեֆի թելադրանքի և օգտագործման՝ կիսով գետնափոր, նկուղային, հարկը կիսագետնափոր, վերին հարկը քարաշեն, նկուղային հարկը քարաշեն, վերին հարկը փայտաշեն:

Ըստ հարկայնության՝ մեկհարկանի, մեկհարկանի նկուղով, երկուհարկանի, երկուհարկանի նկուղով, երկուհարկանի նկուղային հարկով և ծպեղնահարկով, մեկհարկանի գետնաբարձ, ոտքերի վրա, փայտաշեն:

Ըստ գործառական նշանակության՝ բնակելի, բնակելի, վաճառատեղիով, բնակելի, արհեստանոցներով, բնակելի, նկուղով և տնտեսական մասով, չորանոց, հարդանոց և այլն,բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրներ:

Ըստ հատակագծային և ծավալային լուծումների՝ ուղանկյուն հատակագծերով, խորանարդաձև ծավալներով, որոնք ծածկվում են ինչպես հարթ, այնպես էլ երկթեք, կամ միաթեք տանիքներով, միակողմանի, երկկողմանի կամ չորսկողմանի պատշգամբներով և այլն:

Գեղագիտական առանձնահատկությունների առումով նկատելի են փայտի և քարի մշակման բազմաթիվ օրինակներ: Գեղարվեստական լուծումներում հանդիպում են զարդարիկ տարրեր, որոնցում լայնորեն օգտագործվում են այնպիսի երկրաչափական պատկերներ, ինչպիսիք են շրջանակները, քառակուսին, եռանկյունին, բազմանկյունը, խաչը, աստղաձև պատկերները: Դրանք հաճախ նաև գունային լուծումներ ունեն: Փայտի գեղարվեստական ձևավորման մեջ հաճախ օգտագործվում են եռանկյունաձև, քառակուսի և ալիքավոր ատամնաշարերը հատկապես տանիքների, պատշգամբների համապատասխան հատվածների ձևավորման համար: Յուրահատուկ ճոխությամբ են ձևավորված պատշգամբների բազրիքները և ճաղերը, բնակելի տների ներքին տարածքների հատակները, առաստաղները, թաղիքները, մանկական հանգստի համար նախատեսված անկյունները և այլն:

Բնակելի տների կոնստրուկտիվ լուծումներում տարածված է կոպտատաշ և սրբատաշ քարե պատերի միդիա շարվածքների կիրառումը: Փայտաշեն տների տարբերակներում կիրառվում են գերաններով և տախտակներով պատելու հորինվածքները, ինչպես նաև բարակ տախտակներով փակված, մինչ սյունային տարածությունները, դրսից և ներսից, սվաղի օգնությամբ ծածկելու հնարանքները: Պատշգամբների կառուցման մեջ տարածված են հենակահեծանային և հենակ պահպանակների կիրառման տեխնոլոգիաները: Տների տաքացման համար լայն տարածված է եղել քարե վառարան-բուխարիների կիրառումը, որոնք որպես կանոն գուգորդվել են գեղեցիկ ձևավորումներով, պատրիան-պահարանների հարևանությամբ ընդհանուր հորինվածքներով:

Ուսումնասիրվող տարածաշրջանի բարձրլեռնային տարածքների տները հար և նման են հարակից շրջանների գլխատան տիպերին: Նախալեռնային շրջանների տների ճարտարապետությունը նման է պատմական Հայաստանի մյուս համանման տարածքների տներին:

Հոփայի, Արհավի շրջանների տները ունեն հնդկացորեների, թեյի ու հարդի չորացման ու պահպանման համար նախատեսված չորանոցներ և հարդանոցներ, որոնց հորինվածքները փայտաշեն են: Այս կառույցները ունեն փայտաշեն կմախքներով պատեր, որոնք լցունված են գլաքարերով կամ թերթաքարերի կտորներով, մասամբ սվաղված թե՛ ներսից, թե՛ դրսից, մեկ կամ մի քանի կողմից (հիմնականում հարավային և հարավարևելյան կողմնորոշումով) ունեն պատշգամբներ, իսկ տանիքները ծածկված են նաև կղմինդրով: Այս կառույցներից շատերը գետնի մակերևույթից բարձրացված են փայտե ոտքերի վրա:

Առավել անտառապատ մասերում բնակելի տների պատերը տախտակապատ են (այստեղ օգտագործված են ինչպես մաքրատար, այնպես էլ կոպտատար փայտե տախտակներ, որոնք իրար ագուցված են տախտակների նեղ մասում թողնված ելուստներով): Կառույցների հիմքերը բարձր են քարաշեն, հաճախ կիսանկուղային հարկով, իսկ կառուցվածքային հորինվածքը կարկասային է, տանիքները՝ փայտաշեն: Բացի տախտակապատ

պատերից, լայն տարածված են նաև տների պատերը գերաններով և կիսագերաններով կառուցելու եղանակները: Չորանոցները, հարդանոցները կամ տնտեսական օժանդակ շինությունները կառուցված են ինչպես տան ուղղակի հարևանությամբ, այնպես էլ բակերում առանձին կանգնած: Հարկ է նշել, որ վերջին 100 տարիների ընթացքում նկարագրված տները կրել են տարատեսակ փոփոխություններ, որի արդյունքում նրանից շատերի նախնական տեսքը փոփոխվել է: Տներից շատերն էլ մինչ այժմ լքված են և քայքայման եզրին են գտնվում: Կարևոր է նշել, որ ուսումնասիրվող տարածաշրջանի բնակավայրերի քաղաքաշինական կառուցապատումը նույնպես ինքնատիպ է: Որպես կանոն՝ հայկական գյուղ-բնակավայրերը կոմպակտ լուծում ունեն: Գյուղի կենտրոնում եկեղեցին է, հրապարակը, աղբյուրը և այլն, իսկ բնակելի հատվածը տեղակայված է տարածքի հարավային մասում: Ընդհանուր առմամբ բոլոր բնակավայրերը գտնվում են գետահունսային հատվածներում, որտեղ հնարավոր էր զբաղվել այգեգործությամբ ու անասնապահությամբ, օգտվել ջրային ռեսուրսներից ու բնակավայրը կառուցել առնվազն մի կողմից բնական պաշտպանիչ «պատնեշների» հարևանությամբ: Բնակելի տների հորինվածքներում օգտագործվել է տեղանքի ռելիեֆը, ինչի արդյունքում տարածված մոտեցում է եղել հենապատերի օգնությամբ հարթակների կասկադային լուծումներ ստանալը: Այս առումով հանդիպում են գետնափոր, կիսագետնափոր (գլխատների տիպի), մեկ, երկուհարկանի գետնահարկով քարաշեն կամ փայտաշեն տների տիպեր: Կարևոր է նշել նաև այն փաստը, որ բնակավայրերը պաշտպանված են, նրանցից ոչ հեռու ավելի բարձր, անմատչելի վայրերում կառուցված ամրոցներով: Ինչ վերաբերում է բնակավայրերը իրար կապող ճանապարհներին, ապա դրանք անցնում են լանջերով ու գետահուններով, գետերն անցնում են կամուրջներով, որոնք մեկ կամ մի քանի կամարաշարերով են կառուցված: Փաստորեն գետահունային մշակույթը սկսվում է գետերի ակունքների ձյունածածկ շրջաններից, գետերի հուններով իջնում դեպի վար, անցնելով ինչպես ալպիական, այնպես էլ անտառածածկ տարածքներով, հասնելով մինչև Սև ծով: Այս բնական աշխարհագրական և բնա-

կլիմայական պայմաններով էլ պայմանավորված, ինչպես արդեն նշվեց, ամբողջանում է տարածաշրջանի բնակելի տների տիպաբանությունը:

Հարկ է նշել, որ փայտի, ինչպես նաև փայտ և քար համադրության կիրառմանը Թուրքիայի հայ ճարտարապետներից շատերն են դիմել: Սկսած մեծն Մինանից, Պայլան գերդաստանի ճարտարապետներից, փայտաշեն հորինվածքներ են նախագծել և իրականացրել Ավետիսյան խալֆան, Անտոն Գազազյանը, Արթին Մաճարյանը, Գրիգոր Միլիտոսյանը, Հովսեփ Ազնավուրը, Միքայել Նուրիջյանը, Լևոն Կուրեղեանը, Արամ Թախտաջեանը, մեր օրերում՝ Արամ Պարտիզպանյանը, Ժան Գավրիլովը և այլք: Կարևոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ուսումնասիրվող տարածաշրջանում, ինչպես Հայկական լեռնաշխարհի այլ վայրերում, մեծ թիվ են կազմել հայ վարպետ-արհեստավորները (քարտաշեն, պատշարներ, հյուսներ, ատաղձագործներ, դարբիններ և այլ), որոնք ինչպես առանձին, այնպես էլ խմբեր կազմած շրջել են բնակավայրերով և կատարել տարաբնույթ աշխատանքներ: Դրանցից շատերն էլ 1915-20-ականներին ստիպված գաղթել են տարբեր երկրներ (Ռուսիինիա, Բուլղարիա և այլ)՝ հիմք դնելով և զարգացնելով տեղի արհեստներն ու արվեստը, այդ թվում և բնակելի տների կառուցման ճարտարվեստը:

Բնակելի տների ճարտարապետությունը պայմանավորված է տեղի բնակլիմայական և կենցաղավարության առանձնահատկություններով: Յուրաքանչյուր տարածաշրջան պահպանում է իրեն բնորոշ հատակագծային և կառուցողական հնարանքները, որոնք, համադրվելով տվյալ տարածքի շինանյութերին, ստեղծում են ինքնատիպ բնակելի տների տեսականի: Սակայն բոլորին ընդհանրացնողը կենցաղավարության ավանդականությունն է, որը ընդհանուր է հայի ապրելակերպին և ունի հազարամյակների պատմություն: Սրանով է պայմանավորված, որ ուսումնասիրվող տարածաշրջանի հատկապես բարձրլեռնային շրջանների տների հորինվածքներում նկատելի է «զլխատուն» տարատեսակի հետքերի կիրառումը, հիմնականում քարի ճարտարապետությանը բնորոշ գծերով, իսկ դեպի Սև ծովի ափամերձ, անտառածածկ շրջանները ընդգրկող տարածքներում գե-

րակշռում են այն տների տիպերը, որոնք հիմնականում կառուցված են փայտով:

Եզրահանգում. Այսպիսով՝ պատմական Վանանդ, Գուգարք, Ջավախք, Տայք տարածաշրջանների ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը խտացնում է Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների բնակելի տների հորինվածքային առանձնահատկությունները: Դրանք դրսևվորվում են ինչպես իրենց տիպաբանական, այնպես էլ գեղագիտական հորինվածքային տարրերի լայն կիրառմամբ:

Ուսումնասիրությունից հետևում է, որ բնակելի տների ճարտարապետությանը նվիրված հետազոտությունների մեջ հիմնականում ներկայացված են Հայաստանի այժմյան տարածքի բնակելի տները իրենց ճարտարապետական առանձնահատկություններով: Այս իսկ պատճառով գրեթե ուսումնասիրված և ընդհանրացված չէ Կիլիկիայից մինչև Արցախ, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիսից հարավ տարածաշրջանների բնակելի տների գոյության փաստը, որը բնականաբար չի նպաստել հայկական բնակելի տնաշինության տիպաբանական ողջ շղթայի ընդհանրացմանը, հանրահոչակմանը և զարգացմանը, ինչը, ցավոք սրտի, արվել է մեր հարևան երկրների կողմից:

Տայքի և հարակից շրջանների բնակելի տների տիպաբանական և գեղագիտական տեսականու ուսումնասիրությունը կլրացնի հայկական բնակելի տնաշինության ընդհանրական պատկերացումների պահոցը՝ հնարավորություն ընձեռելով հետագա առավել ընդարձակ հետազոտությունների կատարմանը:

References

1. Haykazun A. *Symbolic thinking in Armenian architecture* [Khorhrdanshanayin mtatsoghutyun@ hay chartarapetutyunum]. Yerevan, 2005, 178 p., 106 table (in Armenian).
2. Akopov A. *Tayk, Presidential democratic images of the 1st decade of the 16th-19th centuries* [Tayk, Varchazhoghovrdavarakan patker@ XVI-XIX dari I eresnamyakum]. Yerevan, 2013, 213 p. (in Armenian).
3. Mazmanyan V. *On the bank of Chorrok* [Chorokhi apin]. Yerevan, 2018, 116p. (in Armenian).

ՀՏԴ 93.94

**ՏԱՅՔ-ԿՂԱՐՁՔՅԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԿՈՒՐԱՊԱՂԱՏՆԵՐԸ X ԴԱՐՈՒՄ**

Լիանա ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., ՀՀ

Lian_nazaryan@mail.ru

Ատրնեքսեի կուրապաղատը և թագավորը մահացավ 923 թ. և իշխանությունը թողեց իր չորս որդիներին: Նա միաժամանակ կրում էր թագավորի և կուրապաղատի տիտղոսը: Մինչդեռ նրանից հետո այդ տիտղոսները փոխանցվեցին նրա որդիներին: Նրանք ժառանգաբար կրում էին կուրապաղատի տիտղոսը, որը երբեմն հաստատվում էր Բյուզանդիայի կայսեր կողմից: Աղբյուրների տեղեկությունների քննությունը փաստում է, որ X դ. կուրապաղատ էր դառնում Բագրատունիների վրացական ճյուղի անդամներից մեկը: Այսինքն՝ միաժամանակ մեկից ավելի կուրապաղատներ չեն իշխել: Թեև տիտղոսը ժառանգական էր, այնուամենայնիվ երբեմն Բյուզանդիայի կայսրերը հաստատում կամ ճանաչում էին այդ տիտղոսը ստացած Բագրատունի իշխանին՝ որպես կուրապաղատի: Ուսումնասիրության արդյունքում ցույց է տրվում, որ X դ. երկրորդ կեսին կուրապաղատ է դարձել այն Ատրնեքսեի Բագրատունին, որը մահացել է 961 թ., իսկ վերջինին հաջորդել է որդին՝ Տայքի տիրակալ Դավիթ Մեծ կուրապաղատը:

Բանալի բառեր՝ կուրապաղատ, Բագրատ մագիստրոս, Ատրնեքսեի կուրապաղատ, Բյուզանդական կայսրություն, Տայք, Կղարջք, Սմբատ պատմիչ, Դավիթ Մեծ կուրապաղատ, արքայազն Վախուշտ:

THE BAGRATID KOUROPALATES OF TAYK- KGHARJK IN THE 10TH CENTURY

Liana NAZARYAN

Institute of History NAS RA, PhD in History

Lian_nazaryan@mail.ru

Kouropalate Adarnase died in 923 leaving behind a legacy that extended to his four sons. Simultaneously holding the titles of king and kouropalate during his reign, these titles continued to be passed down through subsequent generations within his family. The hereditary title of kouropalate was occasionally confirmed by the Byzantine emperor.

Upon examining historical sources, it becomes evident that during the 10th century, only one member of the Georgian branch of the Bagratids held the position of kouropalate. While this title was typically hereditary, Byzantine emperors would at times officially confirm or acknowledge the Bagratid prince who had been granted the title of kouropalate.

According to the findings of this study, it is apparent that Adarnase Bagratuni, who died in 961, assumed the role of kouropalate during the latter half of the 10th century. Following him, his son, known as the kouropalate David the Great and the lord of Tayk, succeeded to this prestigious title.

Keywords: Kouropalate, Bagrat Magistros, kouropalate Adarnase, Byzantine Empire, Tayk, Kgharjk, historian Smbat, kouropalate David the Great, Prince Vakhushti.

БАГРАТИДСКИЕ КУРОПАЛАТЫ ТАЙК-КГАРДЖКА В X ВЕКЕ

Лиана НАЗАРЯН

Институт истории НАН РА, к.и.н., Армения

Lian_nazaryan@mail.ru

Адарнасе Куропалат, который также был первым царем Грузии, ушел из жизни в 923 году, передав власть своим четырем сыновьям. Во время своего правления он нес одновременно титулы короля и куропалата. После него эти титулы стали наследственными и перешли к его сыновьям и внукам. Наслед-

ственный титул куропалата иногда подтверждался византийским императором.

Изучение источников свидетельствует о том, что только один член грузинской ветви Багратидов стал куропалатом в X веке. Несмотря на наследственный характер этого титула, византийские императоры иногда официально подтверждали или признавали куропалатом Багратидского принца.

Исследование указывает на то, что Адарнасе Багратуни, ушедший из жизни в 961 году, получил титул куропалата во второй половине X века. За ним этот почетный титул унаследовал его сын, который был известен как куропалат Давид Великий и владыка Тайка.

Ключевые слова – Куропалат, Баграт Магистрос, Адарнасе куропалат, Византийская империя, Тайк, Кхарджк, историк Смбат, куропалат Давид Великий, князь Вахушти.

Նախաբան. Տայքում և Կղարջքում հաստատված Բագրատունիներից Աշոտ Մեծը (787-826) Բյուզանդիայի Լևոն V Հայկազն կայսրից (813-820) ստացավ կուրապաղատի տիտղոս¹ և հիմնեց ժառանգական իշխանություն, որը պատմագիտական գրականության մեջ առավել հայտնի է «Կուրապաղատություն» ձևով: Նրանից հետո (մահ. 826 թ.) իշխանության տարածքը բաժանվեց Աշոտի երեք որդիների՝ Ատրներսեհի, Բագրատի և Գուարամի միջև: Կուրապաղատի տիտղոսն անցավ միջնեկ որդի Բագրատին (մահ. 876 թ.)², ապա՝ նրա որդի Դավիթին (մահ. 881 թ.): Վերջինից հետո կուրապաղատ դարձավ հորեղբոր՝ Ատրներսեհի որդի Գուրգենը:

Այսինքն՝ Աշոտ Մեծից հետո կուրապաղատի տիտղոսը ժառանգաբար փոխանցվում է նրա որդուն ու թոռներին: Իսկ իշխանության տարածքը բաժանվում է Բագրատունիների վրացական ճյուղի բոլոր անդամների

¹Տե՛ս Հավարթումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ ի Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդան վարդապետ), էջ 77, Կարլուս Ըջոքեբա, История Грузии, главный редактор Р. Метрели, Тб., 2008 (այսուհետև՝ Կարլուս Ըջոքեբա, 2008), էջ 140:

² Չի բացառվում՝ բյուզանդական Ֆեոֆիլ (829-842) կայսեր համաձայնությամբ միտումնավոր էր միջնեկը կուրապաղատի տիտղոս ստացել, որպեսզի եղբայրների միջև պայքար ու թշնամանք բորբոքեր:

միջև: Հետևաբար, նրանց միջև գերիշխանություն ուներ միայն նա, ով կրում էր կուրապաղատի տիտղոս: Այդ իսկ պատճառով Տայքի ու Կղարջքի Բագրատունիների միջև պայքար է ընթանում այդ տիտղոսի համար: Պայքարի հետևանքով Գուրգենը հեռացավ իր տիրույթ Տայքից, որն անցավ 881 թ. սպանված Դավիթ կուրապաղատի որդի Ատրներսեհին: Վերջինս նախ ինքն իրեն հռչակեց վրաց թագավոր, ապա 899 թ., Հայոց արքա Սմբատ I-ի (890-914) կողմից թագադրվելով, դարձավ Բագրատունիների վրացական ճյուղի առաջին արքան (899-923): Իսկ Գուրգենը, որ գնացել է Շավշեթ ու Արտահան, 891 թ. մահացավ և կուրապաղատ դարձավ Ատրներսեհը, որն արդեն ինքն իրեն հռչակել էր թագավոր:

Այսինքն՝ Ատրներսեհը կուրապաղատ է դարձել 891 թ., իսկ որպես թագավոր՝ պաշտոնապես ճանաչվել է 899 թ.: Նրա մահից հետո՝ 923 թ., իշխանությունն ու տիտղոսները փոխանցվեցին որդիներին: Մինչև XI դ. սկիզբը Բագրատունիների վրացական կամ Տայք-Կղարջքյան ճյուղը շարունակեց կրել և՛ թագավորի, և՛ կուրապաղատի տիտղոսները:

Աղբյուրները տարբեր, երբեմն նաև հակասական, տեղեկություններ են հայտնում Ատրներսեհ I թագավորի ու կուրապաղատի ժառանգների ստացած տիտղոսների մասին: Համաձայն դրանց, կարելի է կարծել նաև, թե Բագրատունիների վրացական ճյուղի անդամներից մի քանիսը միաժամանակ են եղել կուրապաղատներ: Ուստի ծագում են մի շարք հարցեր.

1. X դ. ովքե՞ր և ե՞րբ են ստացել այդ տիտղոսը:
2. Արդյոք միաժամանակ եղե՞լ է մեկից ավելի կուրապաղատ:
3. Այդ տիտղոսը ժառանգաբա՞ր էր փոխանցվում, թե՞ նշանակվում էր բյուզանդական կայսեր կողմից:

Այս հարցերի քննությանն ու պարզաբանմանն է ուղղված սույն հոդվածը:

Տայքի ու Կղարջքի Բագրատունի կուրապաղատները X դ. առաջին կեսին

Ըստ վրացական աղբյուրների՝ Ատրներսեհ I թագավոր-կուրապաղատն (891-923 թթ.) ուներ չորս որդի՝ Դավիթ, Աշոտ, Բագրատ և Սմբատ¹:

¹ *Տն'ս սյժմաչ զազոտոս ժոս յրօնոյս Թաօ-վլարջքոտոս Բագրատոնտա Մեսախեթ, Գամուցեմա մեսաժե, Եղեկտո Գամուցեա Յրցելո ՄեսաՅլոտ, ՄենիՄշեղեթոտ զա օրո*

Համաձայն Սմբատ պատմիչի՝ Ատրներսեհի մահից հետո որդիներից Դավիթը, որը ժառանգեց թագավորի տիտղոսը (923-937 թթ.), մահացավ անժառանգ¹: Սմբատ պատմիչն Ատրներսեհ I-ի որդիներից Աշոտին կոչում է կուրապաղատ, Բագրատին՝ մագիստրոս, իսկ Սմբատի մասին նշում է, որ եղբայրներից հետո կարգվեց կուրապաղատ²: Ըստ պատմիչի՝ Բագրատը³ մահացել էր 945 թ., Աշոտը՝ 954 թ., իսկ Սմբատը՝ 958 թ.⁴: Հետևաբար, վերջինս 954-958 թթ. է դարձել կուրապաղատ, իսկ մինչ այդ՝ անթիպատոսպատրիկոս էր, ինչպես նշված է Իշխանի եկեղեցու արձանագրությունում⁵: Կոստանդին Ծիրանածինը ևս վկայում է, որ Ատրներսեհ կուրապաղատն ուներ չորս որդի, սակայն նշում է միայն Դավթի և Աշոտի անունները⁶: Թեև

գენეալոգիური լաբլուտ սախրտցեղոս სსრ მეცნიერებათა აკადემიის ნამდვილმა წევრმა ე. თაყაიშვილმა, თბილისი, 1949 (այսուհետև՝ სუმბატ დავითის ძის ქრონიკა), էջ 66, Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Памятники грузинской исторической литературы, III, Тб., 1979 (այսուհետև՝ Сумбат Давитис-дзе), էջ 34-35, Вахუшти Багратиони, История царства грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе, Тб., 1976 (այսուհետև՝ Вахушти Багратиони), էջ 189:

¹ *Տե՛ս նույն տեղում:*

² *Տե՛ս Սუმբատ Դավիթից Դավթից-Դե, էջ 66, Сумбат Давитис-дзе, էջ 34-35:*

³ *Համաձայն Մ. Լորդքիպիանիձեի, եղբոր՝ Դավթից հետո 937-945 թթ. Բագրատն է դարձել վրաց թագավոր (տե՛ս Սումբատ Դավիթից-Դե, էջ 55, ծանոթ. 119, հմմտ. Կարլիս Ըջոքրեբա, 2008, էջ 238, ծանոթ. 111):*

⁴ *Տե՛ս Սუმբատ Դավիթից Դավթից-Դե, էջ 66-67: Եղբայրներից Սմբատի մահվան թվականը Մ.Լորդքիպիանիձեն նշում է 944թ. (տե՛ս Սումբատ Դավիթից-Դե, էջ 55, ծանոթ. 122), որը նույնությամբ նշված է նաև «Քարթլի Ցխովրեբա»-ի 2008 թ. տուսերեն հրատարակությունում (տե՛ս Կարլիս Ըջոքրեբա, 2008, էջ 238, ծանոթ. 114):*

⁵ *Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, Археологическая экспедиция 1917-го года в Южные провинции Грузии, Тб., 1952, էջ 30:*

⁶ *Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն քննարկից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1970 (այսուհետև՝ Կոստանդին Ծիրանածին), էջ 20-22:*

պատմիչ-կայսրը հիշատակում է նաև Բագրատին, նրան կոչելով՝ Պանգրատ մագիստրոս, սակայն չի նշում, որ նա ևս Ատրնեբսեհի որդին էր¹:

Կոստանդին Ծիրանաձնից նաև տեղեկանում ենք, որ Ատրնեբսեհի մահից հետո դարձյալ պայքար է ծավալվել Տայքի ու Կղարջքի Բագրատունիների միջև՝ կուրապաղատի տիտղոսի համար: Բանն այն է, որ այդ ժամանակաշրջանում Կղարջքում ազդեցիկ դիրք էր ձեռք բերել վերոհիշյալ Գուրգենի (մահ. 891 թ.) թոռ Գուրգենը, որին Սմբատ պատմիչը կոչում է մեծ և էրիսթավների էրիսթավ²: Հովհաննես Դրասխանակերտցին ևս վկայություն ունի Գուրգենի մասին՝ վերջինիս կոչելով «մեծ իշխանն Վրաց Գուրգեն»³: Ըստ Կոստանդին Ծիրանաձնի՝ Ատրնեբսեհի որդիներ Դավիթը և Աշոտը երկյուղում էին, որ Ռոմանոս I Լեկապենոս (919-944) կայսրն իրենց հորը պատկանած կուրապաղատի տիտղոսը կշնորհի այդ Գուրգենին: Սակայն կայսրը վերջինիս տալիս է մագիստրոսի, իսկ Ատրնեբսեհի որդի Աշոտին՝ կուրապաղատի տիտղոսներ⁴: Այսինքն՝ Կղարջքի տեր Գուրգենը ստացել է մագիստրոսի տիտղոս⁵ (մահ. 941 թ.):

Ինչպես վերը նշվեց, Ատրնեբսեհ I թագավորի չորս որդիներից Դավիթը մահացավ 937 թ.՝ անժառանգ: Ապա 945 թ. մահացավ Բագրատ մագիստրոսը, որն ուներ մեկ որդի՝ Ատրնեբսեհը (մահ. 961 թ.): Վերջինս, ըստ Սմբատ պատմիչի, հոր մահից հետո դարձել էր մագիստրոս, իսկ հորեղբայրներից հետո՝ կուրապաղատ⁶: Այսինքն՝ Ատրնեբսեհը 945-958 թթ. եղել

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:

² Տե՛ս Եղմնաճ Չաչոտոս ձոն յԹԵԵՅՅՅ, էջ 66, *Сумбат Давитис-дзе*, էջ 35:

³ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, *Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները* Գ.Բ. Թոսունյանի, Եր., 1996, էջ 302:

⁴ Տե՛ս Կոստանդին Ծիրանաձին, էջ 20-22:

⁵ Մագիստրոսը բյուզանդական արքունիքում բարձրագույն տիտղոսներից մեկն էր: Դրանից բարձր տիտղոսները շնորհվում էին միայն կայսեր ազգականներին: VIIIդ. և IXդ. առաջին կեսին միաժամանակ մագիստրոս կարող էին լինել երկու հոգուց ոչ ավելի: Փաստորեն, Xդ. առաջին կեսին ևս միաժամանակ երկու մագիստրոս կար Բագրատը և Գուրգենը:

⁶ Տե՛ս Եղմնաճ Չաչոտոս ձոն յԹԵԵՅՅՅ, էջ 66, *Сумбат Давитис-дзе*, էջ 35-36:

Է մագիստրոս, ապա Սմբատ հորեղբորից հետո 958 թ. դարձել է կուրապաղատ, քանի որ, ինչպես վերը նշվեց, հորեղբայրներից Աշոտը մահացավ 954 թ.¹ անժառանգ, իսկ կուրապաղատի տիտղոսն անցավ մյուս եղբորը՝ Սմբատին, որն էլ մահացավ 958 թ.: Վերջինս ուներ երկու որդի՝ Բագրատ Ռեզվինին, որը դարձավ վրաց թագավոր (958-994) և մյուսը՝ Ատրներսեհը (մահ. 983 թ.): Այս Ատրներսեհին ևս պատմիչը կոչում է կուրապաղատ¹, սակայն չի նշում, թե նա երբ է ստացել այդ տիտղոսը: Այսպիսով, չորս եղբայրներից երկուսը՝ Դավիթն ու Աշոտը, մահացան անժառանգ, իսկ մյուս երկուսը՝ Բագրատն ու Սմբատը, ունեցան Ատրներսեհ անունով որդիներ: Այս երկուսն էլ, ըստ Սմբատ պատմիչի, կրում էին կուրապաղատի տիտղոսներ: Սա առաջին դեպքն է, որ Բագրատունի երկու ներկայացուցիչ միաժամանակ հիշվում են որպես կուրապաղատներ: Այդուհանդերձ, կասկածելի է, որ միաժամանակ երկու կուրապաղատ են եղել: Մինչ այս հարցի պարզաբանումն անդրադառնանք նաև Ատրներսեհ I թագավորի սերնդի մասին վրաց հեղինակներից Վախուշտի տեղեկություններին, որոնք մասամբ տարբերվում են Սմբատի վկայություններից:

Վախուշտը ևս վկայում է, որ Ատրներսեհ I թագավորը, որի մահվան թվականը չի նշում, ուներ չորս որդի՝ Սմբատ, Աշոտ, Դավիթ և Բագրատ²: Ըստ նրա՝ Դավիթը դարձել էր թագավոր և մահացել 937 թ., իսկ նրա եղբայր Աշոտին Ռոմանոս I Լեկապենոս կայսերը կարգել էր կուրապաղատ, և սա էլ մահացել էր 954 թ. անժառանգ³:

Այսինքն՝ Վախուշտը վկայում է, որ Դավիթն ու Աշոտը մահացան անժառանգ՝ նույնությամբ կրկնելով Սմբատ պատմիչի տեղեկությունները: Նրանց վկայությունները տարբերվում են մյուս երկու եղբայրների մասին հաղորդելիս: Եղբայրներից Սմբատին Վախուշտը կոչում է թագավոր՝ չնշելով նրա մահվան թվականը⁴: Իսկ Բագրատի մասին նշում է, որ

¹ *Տե՛ս Եջմեճժ Վաչուշտի ձեռագրի մասին ժրգոծոյն, էջ 67, Сумбат Давитис-дзе, էջ 36:*

² *Տե՛ս Вахушти Багратиони, էջ 189:*

³ *Տե՛ս նույն տեղում:*

⁴ *Տե՛ս նույն տեղում:*

կայսրը շնորհել էր մագիստրոսի ու *կուրապաղատի* [ընդգծումը մերն է-
Լ.Ն.] տիտղոսներ¹:

Այսինքն՝ ի տարբերություն Սմբատ պատմիչի և Կոստանդին Ծիրանածնի վկայությունների, ըստ Վախուշտի, Բագրատը ստացել է նաև կուրապաղատի տիտղոս: Հետևաբար, ստացվում է երկու եղբայրները՝ Աշոտն ու Բագրատը, դարձել են կուրապաղատներ: Ընդ որում, եթե հավատանք Վախուշտի վկայությանը, ապա նրանք միաժամանակ պետք է լինեին կուրապաղատներ, ինչը դարձյալ կասկածելի է: Իսկ ինչո՞ւ միաժամանակ, որովհետև, ինչպես վկայում է Կոստանդին Ծիրանածինը, Աշոտը կուրապաղատի տիտղոսը ստացել է հոր մահից հետո 923 թ.² և այն կրել է մինչև իր մահը՝ 954 թ.: Իսկ Բագրատը, ինչպես վերը նշվեց, մահացել էր ավելի վաղ՝ 945 թ., հետևաբար, եթե վերջինս իսկապես ստացած լիներ կուրապաղատի տիտղոս, ապա նրանք միաժամանակ պետք է կրեին այն: Սակայն, հիմնվելով դեպքերի ժամանակակից Ծիրանածնի ու XI դ. պատմիչ Սմբատի տեղեկությունների վրա, կարծում ենք՝ Վախուշտը շփոթելով է Բագրատին կոչում կուրապաղատ: Վերջինս ստացել է միայն մագիստրոսի տիտղոսը:

Բացի այդ, Վախուշտը շփոթել է Բագրատի մասին մեկ այլ տեղեկություն հաղորդելիս ևս, ըստ որի՝ «այս Բագրատին *որդիները* ստիպեցին դառնալ հոգևորական, և նա մահացավ 945 թ.»³ [ընդգծումը մերն է-Լ.Ն.]: Սակայն հաջորդ նախադասությամբ պատմիչը նշում է, որ Բագրատն ուներ միայն Ատրներսեհ անունով որդի, որին կայսրը շնորհել էր մագիստրոսի կոչում, և սա մահացել էր 971 թ. (պետք է լինի՝ 961 թ., քանի որ նշված է քրոնիկոնի 181 թ., որը համապատասխանում է 961 թ.)՝ թողնելով երկու որդիներ՝ Բագրատին և Դավիթին՝ էրիսթավների էրիսթավ⁴: Ըստ Վախուշտի՝ այս Բագրատը մահացել էր 979թ. (պետք է լինի՝ 969թ., քրոնիկոնի

¹ *Տե՛ս նույն տեղում:*

² *Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 21-23:*

³ *Вахушти Багратиони, էջ 189:*

⁴ *Տե՛ս նույն տեղում:*

189թ.), իսկ եղբայրը՝ Դավիթը՝ 976թ. (պետք է լինի՝ 966թ., քրոնիկոնի 186թ.), որոնք ժառանգներ չունեին¹: Վախուշտի նշած Բագրատը (մահ. 945թ.), որին որդիները ստիպել են դառնալ հոգևորական, իրականում ուներ միայն մեկ որդի՝ Ատրներսեսի անունով (մահ. 961թ.): Իսկ հոգևորական դառնալու վկայությունը շփոթված է Սմբատ պատմիչի նշած այդ նույն Բագրատի որդի Ատրներսեսի՝ իր որդիներ Բագրատի ու Դավիթի կողմից ստիպողաբար հոգևորական դառնալու հետ: Այսինքն՝ Վախուշտը ոչ միայն Ատրներսեսի I-ի որդի Բագրատին կուրապաղատ է կոչել, այլև շփոթել է նաև նրա սերունդին վերաբերող տեղեկությունները: Ուստի սխալված չենք լինի, եթե նշենք, որ Ատրներսեսի I-ից հետո կուրապաղատ է դարձել միայն նրա որդի Աշոտը, ապա վերջինից հետո՝ եղբայր Սմբատը, իսկ Բագրատը եղել է լույս մագիստրոս: Այսպիսով, հերքվում է այն կարծիքը, թե երկու եղբայր միաժամանակ եղել են կուրապաղատներ:

Տայթի ու Կղարջքի Բագրատունի կուրապաղատները Ջդ. երկրորդ կեսին

Ինչպես վերը նշվեց, Սմբատից հետո 958թ. կուրապաղատ է դարձել Բագրատ մագիստրոսի որդի Ատրներսեսի (մահ. 961թ.): Համաձայն Սմբատ պատմիչի՝ վերջինս ուներ երկու որդի՝ Բագրատ և Դավիթ երիտասարդների երիտասարդները²: Ըստ նույն աղբյուրի՝ վերջիններս իրենց հորը ստիպել են դառնալ հոգևորական և մտնել վանք, որտեղ էլ նա 961թ. մահացել է: Որդիներից Բագրատը մահացել է 966թ., իսկ «Դավիթը դարձել է մեծ», որի մահվան թվականը պատմիչը չի հայտնում³:

Սմբատ պատմիչը ևս մեկ Ատրներսեսի կուրապաղատ է նշում, որը մահացել էր 983 թ.: Վերջինս 958 թ. մահացած Սմբատ կուրապաղատի որդին և Բագրատ Ռեզվինիի եղբայրն էր: Այս Ատրներսեսին ուներ մեկ որդի՝ Դավիթը, որը երիտասարդ էր⁴: Սրա մահվան թվականը նույնպես պատմիչը չի նշում: Այսինքն՝ ըստ Սմբատ պատմիչի, Ատրներսեսի I թագավորի

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս ԵՊԹՅԾ ՎՅՅՈՍՈՍ ժՈՍ ԺՐԵԾՈՅՅ, էջ 67, *Сумбат Давитис-дзе*, էջ 36:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

երկու որդիները՝ Բագրատն ու Սմբատը, ունեին Ատրներսեհ կուրապաղատ անունով որդիներ, իսկ սրանք երկուսն էլ ունեին Դավիթ անունով ժառանգներ, որոնց մահվան թվականները հայտնի չեն: Մակայն պատմիչը քիչ անց նաև նշում է, որ «մահացավ Դավիթ մեծ կուրապաղատը, Ատրներսեհ կուրապաղատի որդին, քրոնիկոնի 221 թ. (1001 թ.), և նա չուներ որդի»¹: Խոսքը վերաբերում է Տայքի տիրակալ Դավիթ Մեծ կուրապաղատին, որը հայտնի է ինչպես վրացական, այնպես էլ՝ հայկական ու բուզանդական աղբյուրներում: Մակայն պատմիչի տեղեկություններից չի հասկացվում, թե նրա հայր Ատրներսեհ կուրապաղատը 961 թ., թե 983 թ. մահացածն է:

Ուսումնասիրելով Տայքի տիրակալ Դավիթ Մեծ կուրապաղատի տոհմային ծագումը՝ կարելի է վստահ փաստել, որ վերջինս 961 թ. մահացած Ատրներսեհի որդին էր²: Մակայն խնդիրը հետևյալն է, արդյո՞ք միաժամանակ իշխած երկու Ատրներսեհն էլ եղել են կուրապաղատներ: Կասկածից վեր է, որ 961 թ. մահացած Ատրներսեհը կրել է այդ տիտղոսը, քանի որ այդ մասին են վկայում ոչ միայն Սմբատ պատմիչն ու Կոստանդին Ծիրանածինը³: Օշկի Մ. կառուցված եկեղեցու պատին թողնված արձանագրությունում նշված է Ատրներսեհ կուրապաղատի և նրա որդիներ Բագրատ երիսթավների երիսթավի և Դավիթ մագիստրոսի անունները⁴: Քանի որ 961 թ. մահացած Ատրներսեհն էր ունեցել Բագրատ և Դավիթ անունով որդիներ, ուստի վստահաբար կարող ենք փաստել, որ կուրապաղատի տիտղոսը Սմբատից հետո՝ 958 թ., անցել է հենց նրան: Ամենայն հավանականությամբ, Սմբատ պատմիչը շփոթում է, որ 983 թ. մահացած Ատրներսեհին մեկ անգամ կոչում է կուրապաղատ: Այստեղ կարող է տրամաբանական հարց ծագել, իսկ հնարավոր չէ արդյոք, որ 961 թ., երբ մահացել է Ատրներ-

¹ Եղմծնճ ճոցոտոս ծոս յրճոճոց, ՅՅ. 68, *Сумбат Давитис-дзе*, с. 37.

² Տէ՛ս Նազարյան Լ., *Դավիթ Կուրապաղատի տոհմաբանությունը*, «Քաներ Հայագիտության», Եր., 2019, N1 (19), էջ 48-54:

³ Եղմծնճ ճոցոտոս ծոս յրճոճոց, ՅՅ. 67, *Сумбат Давитис-дзе*, с. 36., *Կոստանդին Ծիրանածին*, էջ 19:

⁴ Տէ՛ս *Такайшвили Е.*, նշվ. աշխ., էջ 57:

սեհը, կուրապաղատ է դարձել նրա անվանակիցը, քանի որ աղբյուրները չեն հաղորդում՝ ում է անցել այդ տիտղոսը: Ուստի հարկավոր է նախ պարզել, թե ով էր հաջորդ կուրապաղատը:

Ատրնեբսեհը, ինչպես վերը նշվեց, որդիների կողմից ստիպողաբար դարձել է նախ հոգևորական, ապա մահացել 961 թ.: Բացառված չէ, որ նրա հոգևորական դառնալը, ապա մահը կուրապաղատի տիտղոսի համար էր: Նախադեպ եղել է Բագրատունիների վրացական ճյուղի ներսում: Աշոտ Մեծ կուրապաղատի որդի Գուարամը նույնպես դարձել էր հոգևորական, ապա մահացել: Նա և իր որդի Նասրը նույնպես պայքարում էին կուրապաղատի տիտղոսի համար: Հետևաբար, հնարավոր է, որ Մմբատ պատմիչի վկայությամբ, Ատրնեբսեհին էլ տիտղոսին տիրանալու համար իր որդիները ստիպել են դառնալ հոգևորական, ապա սպանել են¹: Սակայն, պատմիչը չի նշում, թե նրանից հետո ո՞վ ստացավ այդ տիտղոսը՝ սպանվածի որդիներից մեկը կամ մյուսը, թե՞ նրանց այլ տոհմակից: Միայն հաջորդիվ վկայում է, որ Ատրնեբսեհի որդի Բագրատը ևս մահացավ 966թ., իսկ «սրա եղբայր Դավիթ՝ կուրապաղատը դարձավ մեծ»²: Փաստորեն, որդիներից Դավիթն է ստացել այդ տիտղոսը: Իսկ է՞բբ է վերջինս դարձել կուրապաղատ՝ հորի՞ց, թե՞ եղբորից հետո, հստակ չէ: Բացի այդ, ի՞նչ եղավ մյուս Ատրնեբսեհը (մահ. 983թ.), չէ՞ որ նա էլ էր, ըստ աղբյուրի, կրում այդ տիտղոսը: Ընդ որում, Վախուշտը հենց վերջինիս որդի Դավթին է նշում կուրապաղատ ձևով, հորից հետո, որը տեր է դարձել Տայքին և շրջակա այլ տարածքներին³: Այսինքն՝ ըստ Վախուշտի սա էր Տայքի նշանավոր Դավիթ կուրապաղատը: Սակայն, ինչպես նշվեց, Տայքի տիրակալ Դավիթ կուրապաղատը 961թ. մահացած Ատրնեբսեհի որդին էր: Վերջինիս կենդանության օրոք իր որդի Դավիթը հիշվում է մագիստրոս⁴: Կարելի է ենթադրել, որ երբ 958թ. նրա հայրը դարձել է կուրապաղատ, մագիստրոսի տիտղոսը

¹ *Եղծմատ զճշօտօս ձօն յԹՄԵՅՅ, ՅՅ. 67, Սմբատ Դավիթից-ձե, Կ. 36.*

² *Նույն տեղում:*

³ *Տե՛ս Վախուշտի Բագրատիոնի, էջ 189:*

⁴ *Տե՛ս Կապիշվիլի Է., նշվ. աշխ., էջ 57:*

փոխանցվել է որդուն: Իսկ Ատրնեբսեհի հոգևորական դառնալն ու մահը Դավիթին ու եղբորը հնարավորություն են տվել ստանալու նաև կուրապաղատի տիտղոսը: Չի բացառվում, որ հենց տիտղոսի համար պայքարի ընթացքում է մահացել (գուցե սպանել են) նաև Բագրատը՝ 966թ., իսկ եղբայրը ձեռք է բերել այն: Իսկ տոհմակից Ատրնեբսեհը, հակված ենք կարծելու, որ Սմբատ պատմիչի կողմից սխալմամբ է կուրապաղատ կոչվել: Փորձենք հաստատել մեր տեսակետը:

Սմբատ պատմիչի երկում Բագրատունի իշխաններին թվարկելիս՝ նկատվում է մի սկզբունք, ըստ որի՝ եթե որևէ մեկը եղել է կուրապաղատ կամ մագիստրոս, կամ նույնիսկ այլ տիտղոս է կրել, ապա նրանց մասին նշելիս՝ վկայում է հոր մահից հետո դարձավ կուրապաղատ կամ մագիստրոս: Այնուհետև տվյալ անձի մահվան մասին հայտնելիս՝ դարձյալ շեշտում է, որ նա կուրապաղատ կամ մագիստրոս էր և այլն: Այդ սկզբունքը խախտված է միայն 983 թ. մահացած Ատրնեբսեհի մասին հիշատակելիս: Նրա մասին առաջին վկայության մեջ հոր՝ Սմբատ կուրապաղատի մահվան առթիվ նշվում է, որ կուրապաղատ էր, իսկ հենց Ատրնեբսեհի մահվան մասին վկայելիս պատմիչը նշում է միայն «մահացավ Ատրնեբսեհը, Սմբատ կուրապաղատի որդին, Բագրատ Ռեզվինիի եղբայրը, քրոնիկոնի 203թ. (983) և թողեց երիտասարդ որդի Դավիթին»¹: Այսինքն՝ պատմիչը միայն մեկ անգամ է հիշատակում Ատրնեբսեհին որպես կուրապաղատ: Ընդ որում, նույնիսկ եթե ընդունենք նրա կուրապաղատ լինելը, ապա կրկին հարց է առաջանում, իսկ ով է կրել այդ տիտղոսը նրանից հետո: Ուստի կասկածելի է, որ նա իսկապես կրել է այդ տիտղոսը: Սակայն միայն այդ փաստը բավարար չէ պնդելու համար նրա կուրապաղատ չլինելը:

Բագրատունիների վրացական ճյուղի ներսում գերագույն իշխանության կրողը կուրապաղատն էր, որը նաև հաստատվում էր բյուզանդական կայսեր կողմից: Քննելով Աշոտ Մեծ կուրապաղատից սկսած բոլոր հաջորդ կուրապաղատների տիտղոս ստանալը՝ կարելի է վստահ պնդել, որ մինչև չի մահացել այդ տիտղոսը կրողը, հաջորդը չի դարձել կուրապաղատ: Այ-

¹ Նյմմաթ Վաչոտոս ձոն յԹՊԵՈՅԱ, ՅՅ. 67, *Сумбат Давитис-дзе*, с. 36.

սինքն՝ միայն հաջորդաբար է փոխանցվել տիտղոսը, ուստի հերքվում է միննույն ժամանակ մեկից ավելի կուրապաղատներ լինելը: Իսկ եթե ենթադրենք, որ Բյուզանդիայի կայսրերն են նշանակել ում ցանկացել են, ապա հարց կառաջանա, ինչպես է պատահել, որ մինչև գործող կուրապաղատը չի մահացել, նորը չի նշանակվել, հետևաբար հաջորդականության սկզբունքը պահպանել են նաև կայսրերը: Բացի այդ, ոչ բոլոր դեպքերում են, որ կայսրերը նշանակել կամ հաստատել են կուրապաղատներ: Աղբյուրները փաստում են, որ եղել են նաև կուրապաղատներ, որոնք ո՛չ նշանակվել, ո՛չ էլ հաստատվել են կայսեր կողմից, բայց աղբյուրներում նրանք համարվել են կուրապաղատ: Դրանցից են, օրինակ, Գուրգեն կուրապաղատը (մահ. 891թ.), Սմբատ կուրապաղատը (մահ. 958 թ.) և այլք: Հետևաբար, կասկածից վեր է, որ այդ տիտղոսը ժառանգաբար, ընդ որում, առանց ընդհատման, փոխանցվել է Բագրատունիների վրացական ճյուղի ներկայացուցիչներին, իսկ որոշ դեպքերում այն հաստատվել կամ ճանաչվել է կայսեր կողմից: Այդպիսով՝ հարց է առաջանում, իսկ Ատրներսեհ կուրապաղատից (մահ. 961թ.) հետո կամ նրա հետ միաժամանակ ինչո՞ւ չէր կարող մյուս Ատրներսեհն էլ լինել կուրապաղատ: Քանի որ միաժամանակ այդ տիտղոսը մեկից ավելի անձ չի կրել, ապա այդ տեսակետը հերքվում է, իսկ 961 թ. հետո նրա կուրապաղատ լինելը կարելի է ժխտել դարձյալ Սմբատ պատմիչի տեղեկություններով: Պատմիչը բացի այն, որ Ատրներսեհից հետո նրա որդիներից Դավիթին է հիշում կուրապաղատ ձևով, սակայն հայտնի չէ՝ երբվանից է կրել այդ տիտղոսը, կարելի է կարծել նաև, որ 983 թ. մահացած Ատրներսեհից հետո է դարձել կուրապաղատ, ինչպես ենթադրել են որոշ ուսումնասիրողներ¹: Սակայն Սմբատ պատմիչը, անդրադառնալով Աբխազաց թագավոր Դեմետրե III-ի (957-975/6) ու նրա եղբայր Թևդատի հարաբերություններին, Տայքի տեր Դավիթին հիշում

¹ Դավիթ կուրապաղատի տիտղոսի ստացման ժամանակի քննության և այդ խնդրին վերաբերող այլ ուսումնասիրությունների մասին մանրամասն տե՛ս Կосоуров Դ. А., К вопросу о датировке титула куропалат правителем Тао-Кларджети Давидом III, „Античная древность и средние века“, Вып. 46, Екатеринбург, 2018, с. 90-101.

է կուրապաղատ ձևով, որի մոտ էր գնացել Թևդատը: Հետևաբար, վստահ կարելի է փաստել, որ դեռևս մինչև Դեմետրեի մահը, Դավիթն արդեն կուրապաղատ էր: Այդ հիմքով և հաշվի առնելով այն պնդումը, որ միաժամանակ երկու կուրապաղատներ չեն եղել, կարելի է վստահ պնդել, որ 961թ. մահացած Ատրնեբսեհից հետո կուրապաղատ է դարձել որդին՝ Դավիթը¹: Այդպիսով՝ հերքվում է 983 թ. մահացած Ատրնեբսեհի կուրապաղատ լինելը: Այդ իսկ պատճառով վերջինիս մահվան մասին հիշատակելիս Սմբատ պատմիչը նրան այդ տիտղոսով չի կոչում:

Անդրադառնանք նաև այն հարցին, իբրև թե Դավիթ կուրապաղատը Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ից (976-1025) է ստացել այդ տիտղոսը, վերջինիս դեմ ապստամբությանը մասնակցելու և պարտություն կրելուց հետո, երբ ստիպված էր իր տիրույթները կտակել կայսրին, ինչպես պնդում է արաբ հեղինակ Յահյա Անտիոքացին²: Այսինքն՝ ըստ վերջինիս, Դավիթը ստացել է կուրապաղատի տիտղոսը 989թ.՝ Վարդ Փոկասի ապստամբության ճնշումից հետո: Եթե հիմնվենք արաբ հեղինակի վկայության վրա և այն համադրենք Սմբատ պատմիչի տեղեկություններին, ըստ որի՝ 983թ. մահացած Ատրնեբսեհը եղել էր կուրապաղատ, ապա կարելի է ենթադրել, որ վերջինիս մահից հետո այդ տիտղոսը ստացել է ոչ թե իր մանկահասակ որդի Դավիթը, այլ 961թ. մահացած Ատրնեբսեհի նույնանուն որդին: Կրկին փաստենք՝ մինչ 989թ. դեպքերը Դավիթն արդեն աղբյուրներում հիշվում է կուրապաղատ տիտղոսով, բացի այդ նա չի մասնակցել Վարդ Փոկասի ապստամբությանն ընդդեմ կայսրի³: Այդպիսով՝ հերքվում է նաև այն ու-

¹ Չի բացառվում, որ նախորդներից Բագրատն է ստացել այդ տիտղոսը, ապա 966 թ. նրա մահից հետո՝ եղբայր Դավիթը:

² Розен В., Император Василий Болгаробойца. Извлечения из Летописи Яхъи Антиохийского. Приложение к XLIV-му тому "Записок" Императорской Академии наук, N 1, СПб., 1883, с. 27:

³ Վարդ Փոկասի ապստամբությանը Դավիթ կուրապաղատի մասնակցության մասին մանրամասն տե՛ս Նազարյան Լ., Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի ապստամբություններն ու Դավիթ Կուրապաղատը, «Հայոց պատմության հարցեր», N 10, Եր., 2009, էջ 34-49:

սումնասիրողների տեսակետները, որոնք Դավիթ կուրապատի տիտղոս ստանալը թվագրում են X դ. վերջերով: Կարծում ենք՝ Դավիթը հորից ու եղբորից հետո է դարձել կուրապատ, իսկ հետագայում Վասիլ II-ը իր դեմ բռնկված Վարդ Մկլեռոսի ապստամբությունը (976-978թթ.) ճնշելու համար Դավիթի ցուցաբերած օգնության դիմաց հաստատել է նրա տիտղոսը:

Եզրահանգում. Այսպիսով՝ աղբյուրագիտական քննության արդյունքում հնարավոր եղավ պարզել, որ X դ. Բագրատունիների վրացական ճյուղի ներսում կուրապատի տիտղոսը ժառանգաբար էր փոխանցվում, երբեմն այն հաստատվում էր բյուզանդական կայսեր կողմից, երբեմն՝ ոչ:


Նաև հարկ է արձանագրել, որ միաժամանակ մեկից ավելի կուրապատներ չեն եղել, նրանք այդ տիտղոսը ձեռք են բերել այն կրող ազգակցի մահից հետո միայն:

Միակը Արտներսես I վրաց թագավորն էր, որ կրում էր միաժամանակ թագավոր և կուրապատ տիտղոսները, նրանից հետո բոլոր մնացյալ տիտղոսակիրները կրել են կա՛մ միայն թագավորի, կա՛մ միայն կուրապատի տիտղոսներ: Այդ կարգը պահպանվել է ողջ X դ. ընթացքում:

References

1. Hovhannes the Catholicos of Draskhanakertsi, *History of Armenia* [Hayoc patmutyun], worldly translation and annotations by G.B. Tosunyan, Yerevan University Publishing House, Yerevan, 1996, 400 p. (in Armenian).
2. Kartlis Tskhovreba, *History of Georgia* [Istoriya Gruzii], chief editor R. Metreveli, ed. „Artanudzhi“, Tbilisi, 455 pages + 4 maps + 15 paintings (in Russian).
3. Konstantin Porfirogenet, *Foreign sources about Armenia and Armenians*, [Otar axbyurnery Hayastani ev hayeri masin] 6, Byzantine sources, B, translation from the original, preface and notes H. Bartikyan, Yerevan, Armenian SSR GA ed, LXV+ 370 p.+2 map (in Armenian).
4. Kosourov D. A., *On the issue of dating the title of Kuropalat by the ruler of Tao-Klarjeti David III* [K voprosu o datirovke titula kuropalat pravitelem Tao-Klardzeti Davidom III], // “Ancient Antiquity and the Middle Ages”, Vol. 46, Ekaterinburg, 2018, 90-101 pp. (in Russian).
5. Nazaryan L., *Genealogy of Davit Kurapaghat* [Davit Kurapaxati tohmabanutyuny], // “Banber Armenian Studies”, Yerevan, 2019, N1 (19), 48- 54 pp. (in Armenian).

6. Nazaryan L., *Ward Skleros and Ward Pokas rebellions and Davit Kurapaghat* [Vard Skerosi ev Vard Fokasi apstambutyunnern u Davit Kurapaxaty], // "Armenian History Issues", N 10, Yerevan2009, 34-49 p. (in Armenian).
7. Rosen V., *Emperor Vasily the Bulgarian Slayer* [Imperator Vasilii Bolgoroboyca]. Extracts from the Chronicle of Yahya of Antioch. Appendix to the XLIV volume of "Notes" of the Imperial Academy of Sciences, N 1, St. Petersburg, 1883, X+0103 p.+447 p.+72 p. (in Russian).
8. Sumbat Davitis-dze, *History and narration about the Bagratians* [Istoriya i povestvovanie o Bagrationax], translation, introduction and notes by M. Lordki-panidze, Monuments of Georgian Historical Literature, III, ed., „Metsniereba”, Tbilisi, 69p. (in Russian).
9. Takayshvili E. *Archeological Expedition of 1917 In the Southern Provinces of Georgia* [Arheologicheskaja jekspedicija 1917 g. v Juzhnye provincii Gruzii]. Tbilisi: publication of Academy of Sciences of Georgian SSR. 1952. 289 p. (in Russian).
10. The Chronicle of Sumbat Davits Dze *about the Bagratians of Tao-Klarjeti* [Tao-Klarjetis Bagrationta shesaxeb], third edition, the text was published with an extensive introduction, notes and two genealogical tables by E. Takaishvili, Publishing House of the Academy of Sciences of the USSR of Georgia, Tbilisi, 95 p. (in Georgian).
11. Vakhushti Bagrationi, *History of the Georgian Kingdom* [Istoriya carstva Gruzinskogo], translated, supplied with a preface, dictionaries and index by N. Nakashidze, Tbilisi, ed. „Metsniereba”, 340 pp. (in Russian).
12. Vardan vardapet. *The collection of the history* [Havaqumn patmutyan]. Venice, in St. Lazarus, JA+184 p. (in Armenian).



Պատկերը հիմնված է Քաղաքացիական պատերազմների կրթագրությունների վրա: Աշոտ Գործարարի մահի 882 թվականը հիմնված է Վահուստիի տարբերակի վրա:

ՀՂՏ 73.02, 93.94

**ՏԱՅՔ ՆԱՀԱՆԳԻ ԲԵՐԴԱՑՓՈՐ ԳԱՎԱՌԻ
ԿԱԽԱՄԱՆԻՔԻ ԵԿԵՂԵՑԻ. ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝**

Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

ԿԳՄՄՆ ՃՇՀԱՀ, ՃՏՊԺ ամբիոն, ԳԱԱ ՇՀՀԿ, ճ.թ., ՀՀ,
nahatakyan@gmail.com

Արկադի ԱԿՈՂՈՎ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, պ.գ.թ., ՀՀ,
arkadone1@gmail.com

Կաղամախիքի եկեղեցին գտնվում է պատմական Տայք աշխարհի Բերդացվոր գավառում և համարվում է միջնադարյան հայկական ճարտարապետության կարևոր օրինակներից մեկը: Աշխատությունում իրականացվել են պատմաճարտարապետական նոր հետազոտություններ, որոնց արդյունքում առաջ է քաշվել և հիմնավորվել նախնառաջ եկեղեցու հին անունը: Իրականացվել են համեմատական ճարտարապետական վերլուծություններ՝ եկեղեցու հատակագծային և ծավալատարածական լուծումների պարզաբանման և ներկայացման մեջ: Առաջարկում ենք մեր կողմից իրականացված եկեղեցու տեսական վերակազմության տարբերակի սխեման՝ Է.Թաղայիշվիլու տարբերակի հիման վրա:

Բանալի բառեր՝ Տայք, Բերդացվոր գավառ, Կաղամախիքի դաշտ, եկեղեցի, կենտրոնագմբեթ բազմախորան, ճարտարապետական լուծումներ, տեսական վերակազմության սխեմա:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ЦЕРКОВЬ КАХАМАХИК В ОКРУГЕ БЕРДАЦПОР
ПРОВИНЦИИ ТАЙК: НОВЫЕ ИСТОРИКО-АРХИТЕКТУРНЫЕ
ИССЛЕДОВАНИЯ

Давид НААТАКЯН

МОНКС НУАСА, кафедра АТИН, НАН РА ШЦАИ, РА, к., а., Армения,
nahatakyan@gmail.com

Аркадий АКОПОВ

НАН РА ШЦАИ, РА, к.и.н., Армения,
arkadone1@gmail.com

Церковь Кахамахик, расположенная в округе Бердацпор исторической провинции Тайк, является значительным образцом средневековой армянской архитектуры. В данном исследовании мы представляем новые исследования в области истории и архитектуры, которые привели к важным выводам. В первую очередь, мы успешно выдвинули и обосновали первоначальное название церкви.

Помимо этого, в нашей работе проведены детальные сравнительные архитектурные анализы, направленные на более глубокое понимание планировки и пространственных особенностей церкви. Мы также представляем схему теоретической реконструкции церкви, основанную на исследованиях и идеях, предложенных Э. Такаишвили. Эта схема разработана с учетом исторических и архитектурных данных с целью предоставления ясного и обоснованного видения потенциального восстановления этой исторически важной структуры.

Ключевые слова: Тайк, Округ Бердачпор, поле Кахамахик, церковь, центрально-купольная много-апсида, архитектурные решения, схема теоретического восстановления.

KAGHAMAKHIK CHURCH IN BERDATSPOR DISTRICT OF TAYK PROVINCE: NEW HISTORICAL AND ARCHITECTURAL STUDIES

Davit NAHATAKYAN

MESCS NUACA, Chair of ATHH, NAS RA SHCAS, RA, Ph.D in Arch., Armenia,
nahatakyan@gmail.com

Arkadi AKOPOV

NAS. RA. (SHCAS), RA, Ph.D in Hist, Armenia,
arkadone1@gmail.com

The Kaghmakhik Church, situated in the Berdatspor district of the historical province of Tayk, stands out as a significant exemplar of medieval Armenian architecture. Our research introduces new historical and architectural investigations, resulting in several noteworthy findings. First and foremost, we have successfully put forth and substantiated the original name of the church. Furthermore, our work encompasses comprehensive comparative architectural analyses aimed at elucidating the church's design, layout, and spatial characteristics.

In addition to our analytical endeavors, we present a proposed scheme for the theoretical restoration of the Kaghmakhik Church. This restoration scheme is based on the research and ideas put forth by E. Takaishvili. This scheme has been developed with historical and architectural evidence to provide a clear and grounded vision for the potential restoration of this historically important structure.

Keywords: Tayk, Berdaspor District, Kaghmakhik fields, church, central-domed multi-upside, architectural solutions, scheme of theoretical restoration.

Պատմական և աղբյուրագիտական վերլուծություն. Կաղամախիքի (Քյամխիս, Կյագլիս-Ալթի, Քյագվիս Ալթը) եկեղեցին գտնվում է պատմական Տայք աշխարհի Բերդացվոր գավառի Բանակ (Փենեկ) բնակավայրի և համանուն նշանավոր բերդի (Բանակ, Բանակ Արքունի) և Հայոց Ներսես Տայեցի Կաթողիկոսի VII դ. կառուցած Բանակի նշանավոր տաճարի մոտավորապես միջնամասում՝ ներկայիս Թուրքիայի հանրապետության Էրզրումի նահանգի Շենքայայի շրջանի Էվբաքան բնակավայրի մոտ:

VII դարի հայ պատմիչ Սեբեոսը, նկարագրելով Մամիկոնյանների ապստամբությունը Պարսկաստանի դեմ, նշում է, որ Միհրան Միհրևանդակի 20-հազարանոց զորքը մեծ պատերազմ է տվել Խաղամախիկի դաշտում, որտեղ պարսիկները պարտություն են կրել և հեռացել: Նույն աշխատության մեջ Սեբեոսը հայտնում է, որ Փիլիպոսը՝ Սյունիքի տերը, մի ճակատամարտ է տվել քաղաքի և Խաղամախիքի դեմ, և վերստին մի ճակատամարտ Վանանդում ու Ութնուս գյուղերում, որոնք բոլորն էլ պարտվել է: Պատմիչի մոտ հիշատակված «Խաղամախիկ», «Խաղամախիք» տեղանունները «Կաղամախիկ» և «Կաղամախիք» բառերի բարբառային տարբերակներն են:

Ինչպես որ ներկայացված է Հրաչյա Աճառյանի բառարանում՝ «Կաղամախ»-ը անտառային բարձր ծառատեսակ է («populus tremula», «populus alba» և այլն)³:

Ըստ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի»՝ պարզվում է, որ XVI-XVII դդ. պատմական Հայաստանի Տայք նահանգի Բանակի շրջանն ուներ 3 գյուղախմբեր՝ Փանակի, Քիամխիսի, Փանազկերտի և հարկման ենթակա 109 բնակավայր: Քյամխիսի գյուղախումբն ընկած էր Բանակից ավելի հյուսիս, գրավում էր գավառի (սանջակ) կենտրոնական մասը և իր կազմում ուներ 16 բնակավայր⁴: Սակայն մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում իրավիճակն արմատապես փոխվում է: Հետազոտությունները ցույց են տալիս, որ XVI դարավերջի համեմատ XVIII դ. կեսերին Բանակի գյուղախմբում ընդամենը մնացել էր 46 բնակավայր, իսկ Քյամխիսի գյուղախմբի կազմում՝ 5 բնակավայր⁵:

¹ Սեբեոս, Պատմություն, քննական բնագիրը՝ Գ.Վ. Աբգարյանի, թարգմ. Գ.Կ. Խաչատրյանի, Վ.Ա. Եղիազարյանի, Եր., 2004, էջ 48

² Սեբեոս, նշվ. աշխ., էջ 54

³ Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, Հ. II, Եր., 1973, էջ 492:

⁴ Ակոպով Ա., Տայք. Վարչաժողովրդավարական պատկերը XVI-XIX դարի I երեսնամյակ, Եր., 2013, էջ 64, 108:

⁵ Ակոպով Ա., Տայք, էջ 137

Կաղամախիքի կամ Քյամխիսի գյուղախմուսնը ընկած էր Բանակի գավառի կենտրոնական շրջանում՝ հիմնականում Կաթի Ջուր (Բանջրուտ) վտակի երկայնքով, իսկ կենտրոնը՝ Կաղամախիք գյուղն էր (Ռաբաթ): Կաթի ջուր վտակի շրջանում են ընկած Բանջրուտ, Խաբան, Տաճարիկ (Տաջերեք), Փերթևան (Պարթևան) և Սողոմոն գյուղերը: Կաղամախիքի շրջանի հարավային շրջանում էր Սողոմոն գյուղը, որը կառուցված էր ոչ բարձր սարի վրա, իսկ գյուղի մոտ պահպանվում է Սողոմոնի բերդը (Սողոմոն-քալե): Գյուղից երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվում է նաև ժայռափոր եկեղեցին: Գետի վտակի և գյուղերի պահպանված անունների հայերեն լինելն արդեն իսկ հուշում են, որ նրանք հայաբնակ են եղել¹:

Հայտնի ճանապարհորդ Կ. Կոխն իր 1846 թ. տպագրված աշխատության մեջ որոշակիորեն անդրադառնում է եկեղեցուն՝ տալով նաև սխեմատիկ հատակագիծ: Կ. Կոխը եկեղեցու պատերի վրա նկատել է նաև հազիվ նշմարվող որմնանկարներ, որոնք արտաքին ազդեցություններից բավականին վնասված էին: Նա նկատել է Աստվածածնին՝ մանուկ Քրիստոսը գրկում և մոզերի պատկերներ²:

Է. Թաղայիշվիլու 1907 թ. այցելության ժամանակ կառույցը արդեն կիսավերակ է եղել և իրենց արշավախմբի ուղեկցողն ասել է, որ եկեղեցին կոչվում է Կյազիխ-Ալթի, իսկ անվան ծագման մասին հայտնել է, որ այն նշանակում է «բնակավայրից ցած գտնվող վայր»: Ըստ Թաղայիշվիլու՝ այդ բնակավայրը Սողոմոն գյուղն էր (Սոլոմոն կալա)³:

Է. Թաղայիշվիլին, համեմատելով Կաղամախիքի և Արտահանի (Արդահան) Սբ Գևորգ եկեղեցիները, Կաղամախիքի եկեղեցին թվագրում է «X դ.-ից ոչ ուշ»⁴:

¹ Ակոսյով Ա., *Տայք*, էջ 110-111:

² Koch K., *Reise im pontischen Gebirge und türkischen Armenien, Landes-Industrie-Comptoir, Weimar, 1846, 250-252 p.*

³ Такайшвили, Е., *Христианские памятники 1902г., Материалы по археологии Кавказа, собранные экспедициями Императорского МАО, Вып. 12, Москва, 1909, с. 85.*

⁴ Նույն տեղում, էջ 87-88:

Այսպիսով, պատմամատենագրական և աղբյուրագիտական նյութերի համալիր վերլուծությունները ցույց են տալիս, որ միջնադարյան եկեղեցին Կաղամախիքի դաշտի ու շրջանի նշանավոր եկեղեցիներից է եղել և այդպիսով վերցրել է նաև այդ անվանումը: Անվանման աղավաղված ու մասնակի ձևափոխված տարբերկներ են համարվում՝ Քյամխիս, Կյագլիս-Ալթի, Կյամգլիս, Քյագմիս Ալթը տարբերակները:

Արդի վիճակը, Ճարտարապետական վերլուծություն:

Եկեղեցին այժմ գտնվում է հաստ հողաշերտի և ավերակների տակ, որի պատճառով մանրակրկիտ ուսումնասիրություններ անհնար է կատարել: Հուշարձանի տարածքին շատ մոտ է կառուցված ավտոճանապարհը, իսկ տարածքի մյուս մասն էլ գյուղատնտեսական նպատակներով է օգտագործվում: Կառույցը կատարյալ անտերության է մատնված և դատապարտված է իսպառ վերանալուն:

Եթե XIX-XX դդ. սկզբի այցելուները հնարավորություն են ունեցել որոշակիորեն պատկերացում կազմելու կառույցի ծավալատարածական, հատակագծային և կոնստրուկտիվ համակարգերի մասին, ապա այժմ պահպանվել է միայն վեցախորան եկեղեցու հյուսիսային մի փոքր հատվածը: Այդ պահպանված հատվածն ինքնին վտանգի տակ է, քանի որ ստորին շարքի քարերը պոկված են, այդպիսով՝ թուլացվել է պատի կրողունակությունը: Հատակագիծը գրեթե անընթեռնելի է այժմ՝ կառույցի փլատակ մեծ զանգվածների և լիցքի պատճառով: Կառույցի վրայի առկա փլուզման տեսակը հուշում է, որ այն, ամենայն հավանականությամբ, XX դ.-ում պայթեցվել է:

Կաղամախիքի եկեղեցու նկատմամբ մինչ այսօր շարունակվում են վանդալիզմի դրսևորումները: Կառույցի ողջ տարածքը լեցուն է ապակե տարաների բեկորներով և աղբով, այսինքն՝ այսօրվա անցնող-դարձողները չեն զևանում ապակե տարաներ շպրտել X դ. կառույցի վրա:

Կաղամախիքի եկեղեցին իր հատակագծային լուծումներով պատկանում է կենտրոնագմբեթ բազմախորան տիպի եկեղեցիներին, մասնավորապես՝ վեցախորան (գծ. 2): Եկեղեցու ավագ խորանն ուղղված է դեպի

արևելք և մյուս խորանների համեմատ ավելի խորն է իրականացված: Գլխավոր խորանը նաև արտաքինից է դուրս գալիս ընդհանուր ծավալից: Առաջին հայացքից թվում է, թե խախտվում է հատակագծային համաչափությունը, սակայն գլխավոր առանցքային սիմետրիայի պահպանման շնորհիվ ոչինչ չի խախտվում: Այդպիսի լուծումը բավականին հետաքրքիր է նաև խորհրդաբանական տեսանկյունից: Վերոնշյալ հատակագծային լուծումը հանդիպում է նաև Տայք նահանգի Օլթիի (Ուղտիք) վեցախորան Սբ Գևորգ եկեղեցում: Ընդհանրապես գլխավոր խորանը ավելի խորը իրականացնելու միտումը բնորոշ է Տայք-Գուգարքի ճարտարապետական դպրոցին՝ IX-X դդ. (Օշկ, Կուրբուրդո, Խախու և այլն):

Կաղամախիքի եկեղեցու գլխավոր խորանին ուղղահայց տեղակայված են հյուսիսային և հարավային խորը խորշերը, որոնք ավարտվում են կիսաշրջանաձև խորան հիշեցնող շարով: Դրանք ո՛չ խորշ են, ո՛չ ավանդատուն, և կարծես թե միջին օղակ են հանդիսանում: Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ ինչպես Տայք-Գուգարքի, այնպես էլ Այրարատ նահանգի նմանատիպ կառույցներում հաճախ հանդիպում են ավանդատներ (Անիի Ապուղամբենց Սբ Գրիգոր, Անիի միջնաբերդի վեցախորան և այլն), իսկ Կաղամախիքի եկեղեցու դեպքում նրանք ինտեգրվել են արտաքինից դուրս եկող բազմանիստ ծավալի մեջ: Կաղամախիքի եկեղեցուն հատակագծով ամենամոտը Օլթիի Սբ Գևորգ եկեղեցին է, սակայն իր լուծումներով բնորոշ է հայկական միջնադարյան կենտրոնագմբեթ բազմախորան տիպի պաշտամունքային կառույցներին:

Ճիշտ է նկատել Տ. Մարությանը, երբ կատարելով համեմատական վերլուծություններ, փաստում է, որ հետագայում Կաղամախիքի և Օլթիի եկեղեցիների փորձի հիման վրա կառուցվել են Քացխիի և Բոչորմայի եկեղեցիները հարևան Վիրքում, որոնք թվագրվում են XI դարով¹:

Կաղամախիքի եկեղեցին արտաքուստ տասնչորս նիստ է ունեցել: Արևմտյան նիստի մեջ է բացվել եկեղեցու մուտքը: Նիստերը լուծված են եղել հատակագծում եռանկյուն կտրվածքով «հայկական խորշերով», որոնք

¹ Մարության Տ., *Խորագույն Հայք, Եր.*, 1978, էջ 142-144:

դեպի վեր իրենց ուղղահայաց հորինվածքով ընդգծել են եկեղեցու առաջին «հարկի» ծավալը՝ նրան հաղորդելով լույս ու ստվերի գեղագիտական տրամաբանված ծավալային լուծում: Եկեղեցին ուղղահայացությամբ երկմաս է եղել, որի երկրորդ մասը թմբուկն է եղել, որն ավարտվել է վեղարով:

Կառուցված է հայկական ճարտարապետությանը բնորոշ «միդիս» շարվածքով: Հյուսիսային կանգուն պատից կարելի է հասկանալ նաև, որ կառույցի գմբեթային փոխանցումն իրականացված է եղել առագաստների միջոցով:

Կառույցի ներքին պատերին այժմ տեսանելի են ծեփի մնացորդներ, որոնց վրա Կ. Գոխը տեսել էր որմնանկարի մնացորդներ: Այժմ պահպանվածից որմնանկարի որևէ հետք չի երևում:

Հայկական կենտրոնագմբեթ բազմախորան եկեղեցիների շարքին են պատկանում նաև Եղվարդի Սբ Զորավոր (Է դար), Իրինդի, Ագարակի Սբ Ստեփանոս Նախավկա (VII դար), Արագածի Գրիգորաշենը (VI-VII դդ.), Բագարանի Սբ Շուշանը (VII դար) և զարգացած միջնադարի մի շարք եկեղեցիներ: Այս երևույթը փաստում է ժառանգորդականության մասին, երբ հայկական վաղ քրիստոնեության շրջանից ավանդված հիմնական հարուստ փորձի հիման վրա ստեղծվել է այս եկեղեցին, որը կուրորեն չի կրկնել վաղ փորձը, այլ հավելել է հետաքրքիր նորույթներ՝ այդպիսով ազդելով նաև իրենից հետո կառուցված եկեղեցիների վրա:

Հուշարձանի համակողմանի ուսումնասիրության արդյունքում առաջարկում ենք մեր կողմից իրականացված եկեղեցու տեսական վերակազմության տարբերակի սխեման՝ Է.Թաղայիշվիլու տարբերակի հիման վրա: Դաշտային աշխատանքի և համաչափական վերլուծության հիման վրա, առաջարկում ենք որոշ փոփոխություններ՝ Կաղամախիքի եկեղեցու ծավալատարածական լուծումներում: Նախ առաջին «հարկի» տանիքի թեքությունը առաջարկում ենք ավելացնել, որը Է. Թաղայիշվիլին շատ ավելի ցածր է պատկերել: Հաջորդ փոփոխությունն առաջարկում ենք իրականացնել թմբուկ-վեղար համակարգում: Հայկական վաղ քրիստոնեության շրջանից մինչև XI դարը (նույն պատկերն ենք տեսնում նաև Տայք-Գուգար-

քի դպրոցում) հիմնականում թմբուկ-վեղար ուղղահայաց համաչափությունը համապատասխանում է 1:1 հարաբերությանը: Համաձայնելով Է. Թաղայիշվիլու տարբերակին, որ Կաղամախիքի եկեղեցին IX-X դդ. կառույց է, առաջարկում ենք վերը նշված համաչափությամբ իրականացնել տեսական վերակազմությունը: Վերջին առաջարկը վերաբերում է թմբուկի պատուհաններին: Է. Թաղայիշվիլին դրանք տեղակայել է անմիջապես թմբուկի ստորին մասը եզերող գոտու վրա, որը անտրամաբանական է, քանի որ այդպիսի օրինակներ չունենք: Այսպիսով՝ առաջարկվում է պատուհանները ստորին գոտուց առնվազը մեկ քար վերև բարձրացնել:

Եզրահանգում. Առաջարկում ենք գիտական շրջանառության մեջ դնել եկեղեցու ճշտված և հիմնավորված հին անվանումը:

- Ներկայացրել ենք մեր կողմից իրականացված եկեղեցու տեսական վերակազմության տարբերակի սխեման՝ Է. Թաղայիշվիլու տարբերակի հիման վրա:

Այսպիսով՝ Կաղամախիքի եկեղեցին, այսինքն՝ այն, ինչ մնացել է նրանից, համարվում է ոչ միայն Տայք-Գուգարքի հայկական միջնադարյան դպրոցի կենտրոնագմբեթ բազմախորան տիպի կարևորագույն կառույցներից մեկը, այլ նաև իր բազմադարյան պատմությամբ ու ճարտարապետական մշակույթով միջնադարյան հայկականության մասին լուր վկայող կարևոր նմուշներից մեկը:

References

1. Acharyan Hr. *Armenian Roots Dictionary* [Hayeren armatakan bararan], Yerevan, Vol II, YSU publication, publ. 1973, 687 p. (in Armenian).
2. Akopov A., Tayk: *Administrative and demographic picture from the XVI century till the first third of the XIX century* [Tayk, Varchajogovrtakan patkery XVI-XIX dari 1-in eresnamyakin] Yerevan, Institute of History of the National Academy of Sciences of RA, publ. 2013, 213 p (in Armenian).
3. Koch K. *Wanderungen im Oriente während der jahre 1843 und 1844. II. Reise im Pontischen Gebirge und Türkisch-Armenien*, Weimar, Druck und Verlag des Landes, 1846. 520 s.

4. Marutyan T. *Deeper Armenia* [Xoraguyn Hayq]. Yerevan: «Sovetakan grogh.» publ. 1978. 183 p. (in Armenian).
5. Sebeos. *History* [Patmutyun]. Original materials by G.V. Abgaryan, translated by G. K. Khachatryan, Yerevan, Zangak 97, publ., 2005, 394 p. (in Armenian).
6. Takayshvili E. *Christian monuments of 1902, Materials on the archeology of the Caucasus* [Khrisianskie pamyaniki 1902 g. Maeriali po arkeologii Kavkaza]. Moscow: collected by Imperial MAO's expeditions. 1909. 164 p. (in Russian).


Հավելված 1:





Նկ. 1,2. Արխիվային լուսանկարներ՝ ըստ Ե. Թաղայիշվիլու



Նկ. 3. Արդի վիճակի լուսանկար



Գծ. 1, 2. Հատակագծեր ըստ Կ. Կոխի և Է. Թաղայիշվիլու



Գծ. 3, 4. Տեսական վերակազմության սխեմա ըստ Է. Թաղայիշվիլու, մեր առաջարկը՝ Է. Թաղայիշվիլու տարբերակի հիման վրա

ՀՏԴ-392

**ՋՈՒՐԸ ՔԱՌՈՒՍԱՆՔԱՀԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՈՒՄ¹
(ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ք.գ.թ., ՀՀ
hasvrej@mail.ru

Արեգնազ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՀՀ,
aregnaz.meliksetyan@mail.ru

Թե՛ ծննդկանի, թե՛ նորածնի քառասունքի գաղափարը հայ ազգագրության ուսումնասիրության տիրույթում է: Ազգային այս սովորույթն ավանդույթի ուժով այժմ էլ կենսունակ է հայ հասարակության մեջ: Չնայած նշյալ ծիսակարգային սովորույթին առնչվող որոշ գործողություններ այժմ քիչ գործածական են, սակայն պիտի փաստել, որ ժողովրդի մտածողության մեջ վերջիններս խոր արմատներ ունեն, որը պայմանավորված է ժողովրդի կրոնական պատկերացումներով: Ասվածի լավագույն վկայությունը հողվածում տարբեր բանասացներից գրառած ծեսերի նկարագրություններն են, սնահավատությունները և հնագույն հավատալիքների պատառիկները:

Հետազոտական աշխատանքը կատարել ենք զրույցի մեթոդով:

Քառասունքը ծննդկանի մաքրագործման խորհրդանիշ է. ժողովրդական ավանդությունը ինքնուրույն այս արարողակարգում ջուր է ներմուծել որպես մաքրագործող, կենարար տարր: Մկրտության արարողակարգում է ջուրը մաքրագործման հիմք:

Բանալի բառեր՝ նորածին, ծննդկան, ջուր, ծես, սովորույթ, ավանդույթ, չարք, օրհնանք, աղոթք:

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6B030 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

**THE SYMBOLISIM OF WATER IN CHILDREN'S
FORTY-DAYS' RITUAL
(IN THE FRAME OF THE FIELD WORK CARRIED OUT IN
SHIRAK REGION)**

Hasmik MATIKYAN

Shirak Center for Armenological Studies NAS RA, PhD in Philology, Armenia
hasvrej@mail.ru

Aregnaz MELIKSETYAN

Shirak Center for Armenological Studies NAS RA, Armenia
aregnaz.meliksetyan@mail.ru

In the Shirak region water is used in children's rituals. The symbolic usage of water in rituals is in the domain of Armenian ethnography.

The Shirak dwellers have abundant resources of paremiological units with the component 'water', such as "The word is for the man, the water for a child", "May your child have a long lasting life as water"(Blessing).

The national custom of forty days' ritual is still alive in the Armenian society due to the strength of tradition. Although some actions related to the mentioned ritual are not used much now, it must be stated that they have deep roots in the people's mentality. The best evidence of this is the descriptions of rituals, superstitions and fragments of ancient beliefs recorded by many narrators.

We performed the research work using the field work approach.

Key words: newborn, birth, water, ritual, custom, tradition, evil, blessing, prayer.

**СИМВОЛИКА ВОДЫ В ДЕТСКОМ РИТУАЛЕ
СОРОКОДНЕВКИ
(В РАМКАХ ПОЛЕВЫХ РАБОТ В ШИРАКСКОЙ
ОБЛАСТИ)**

Асмик МАТИКЯН

Ширакский центр арменоведческих исследований НАН РА, к.ф.н., Армения
hasvrej@mail.ru

Арегназ МЕЛИКСЕТЯН

Ширакский центр арменоведческих исследований НАН РА, Армения
aregnaz.meliksetyan@mail.ru

В Ширакской области вода используется в детских ритуалах. Символическое использование воды в ритуалах относится к области армянской этнографии.

У жителей Ширака запасы паремиологических единиц с компонентом «вода», таких как «Слово для человека, вода для ребенка», «Да будет жизнь твоему ребенку долгой, как вода» (Благословение).

Национальный обычай сорокодневного ритуала до сих пор жив в армянском обществе благодаря силе традиции. Хотя некоторые действия, связанные с упомянутым ритуалом, в настоящее время мало используются, необходимо констатировать, что они имеют глубокие корни в народном менталитете. Лучшим свидетельством этого являются описания обрядов, суеверий и фрагментов древних верований, записанные многими сказателями.

Мы выполнили исследование, используя метод полевой работы.

Ключевые слова: новорожденный, рождение, вода, ритуал, обычай, традиция, зло, благословение, молитва.

Նախաբան. Մինչ քառասունքահանի ժողովրդական ծիսակարգին անդրադառնալը ներկայացնենք վերջինիս եկեղեցական նշանակությունը: Ծնելուց քառասուն օրերի ընթացքը ծննդկանի համար համարվում է մաքրման շրջան, և այդ ընթացքում նա չի կարող տաճար մտնել: Քառասուներորդ օրը համարվում է մաքրագործման շրջանն ավարտված և ծննդկանն իր որովայնի պտուղը բերում է ներկայացնելու Աստծուն՝ որպես

երախտագիտության խոսք և վերականգնում նրա մուտքը եկեղեցի: Այս կարգը հիմնված է Ղուկ. 2.22-ի վրա:

Ըստ եկեղեցու՝ ոգու անցումը մի վիճակից մյուսին սահուն չի կատարվում, ու որոշակի ժամանակ է պահանջվում, որ այն հարմարվի նոր վիճակին: Նախ՝ 7 օր իրեն նոր վիճակում զգալու, ապա 40 օր՝ նոր կյանքին հարմարվելու համար:

Քառասունքի խորհուրդը կապվում է Հիսուս Քրիստոսին ծննդյան քառասուներորդ օրը եկեղեցուն նվիրաբերելու հետ. «21 Եւ երբ ութ օրերը լրացան, եւ նա թլպատուեց, նրա անունը Յիսուս դրուեց, ինչպէս հրեշտակի կողմից կոչուել էր, երբ դեռ չէր յղացուել մօր որովայնում:

22 Երբոր նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսէսի Օրէնքի համաձայն՝ նրան Երուսաղէմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, 23 ինչպէս գրուած էր Տիրոջ Օրէնքում. «Ամէն արու զաւակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչուի»: 24 Եւ Տիրոջ Օրէնքում ասուածի համաձայն՝ ընծայ պէտք է տալ մի զոյգ տատրակ կամ աղանու երկու ձագ» (Ղուկաս 2)¹:

Երեխաներին եկեղեցի տանելով՝ ծնողներն Աստծո հետ ուխտ են կապում և խնդրում Աստծո գորակցությունը աստվածահաճո երեխա մեծացնելու համար:

Երեխայի քառասուն օրականը լրանալուն պէս կնքելը ևս ունի իր խորհուրդը, քանի որ համարվում է, թէ երեխան նախքան կնունքը իր վրա է կրում ադամական մեղքերը, որոնք ունեն բոլոր նորածինները: Այս մեղքերը Ադամից մինչև տվյալ երեխան ծնված ու ապրած համայն մարդկության մեղքերն են, որոնք մկրտության ավագանում մաքրվում են և հնարավորություն են տալիս մաքուր հոգով ապրելու համար: Մաքրագործումը կատարվում է ջրի ավագանում:

¹ *Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանների, Արևելահայերեն նոր թարգմանություն, վերահրատարակություն, Մայր աթոռ ու Էջմիածնի և Հայաստանի Աստուածաշնչային ընկերության հրատ., 1999թ.*

Վարդավառի՝ որպես կրոնական ծիսակատարության խորհրդի հիմքում ևս մաքրագործումն է ջրի միջոցով, որին մասնակից են թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Վարդավառի տոնախմբության լավագույն գրական նկարագրություններից է նորագույն շրջանի հայ արձակի վարպետ Խ. Դաշտենցի «Խողեղան» վեպի «Վարդավառի կիրակին» հատվածը. «Տարոնի շինականը չտեսնված շքեղությամբ էր տոնում Վարդավառը: Այդ գյուղացիներն իրենց տները զարդարում էին ծառերի թարմ ճյուղերով: Եփում էին իրենց ամենահամեղ կերակուրները, թխում էին գաթա: ... Երիտասարդները հագնում էին իրենց տոնական ամենաթանկ զգեստները և տոնախմբության էին ելնում Մեղրագետի ափերին: Նրանք աղավնիներ էին թոցնում, ջուր էին սրսկում միմյանց վրա»¹:

Բացի եկեղեցական արարողակարգից, մեզանում այժմ էլ կան հնուց ավանդված որոշ ավանդություններ և ծիսակարգեր, որոնցով առաջնորդվում են նորածնի ծնողներն ու հարագատները՝ թե՛ մինչև երեխայի ծննդյան քառասուն օրը լրանալը, թե՛ քառասունքահանի ծիսակարգում: Հոդվածում փորձել ենք առանձնացնել նորածնի քառասունքի սովորույթները, արարողակարգերն ու մեկնաբանել ենք դրանք՝ համադրելով ժամանակակից գիտական գրականության մեջ առկա տեղեկություններին, ներառել ենք նաև բանահավաքության ընթացքում մեր կողմից ձեռք բերված վկայությունները:

Նորածնի քառասունքահանի ծեսի կարևորագույն բաղադրիչներից է ջուրը: Այն, ինչպես վերևում նշեցինք, ունի մաքրագործող հատկություն: Մինչև երեխայի քառասունքը լրանալը երեխային օձառով չեն լողացրել, այլ ջրին աղ են ավելացրել, որն ունեցել է նախնառաջ մանրէասպան հատկություն: Ավագանում՝ որտեղ լողացրել են փոքրիկին, մի կտոր հում միս են դրել, որպեսզի երեխան *կռխ* չընկնի: Կռխ ընկած երեխան թույլ է եղել, քաշ չի հավաքել: Կռխից խուսափելու կամ այն բուժելու համար երեխայի հարագատները քառասունքի մեջ հետևել են որոշ քայլերի, որից հետո,

¹ Դաշտենց Խ., *Խողեղան*, Հայպետհրատ, Երևան, 1956., էջ 241:

նրանց վկայությամբ, երեխան բուժվել է: Նման մի պատմություն լսեցինք Լուսաղբյուր համայնքում մեր կատարած բանահավաքության ընթացքում.

«Օր ծընվրմ էր երեխեն, բալուլ էինք էնրմ, ամեն օր լոխծընըմ էինք, լոխծընելուց մինձն քառսունք: Քառսունկին լոխծընելուց քառասուն կըռուշկա ջուր էինք լըծըմ: Պըբբզգծընըմ էինք տաշտի մեճը յիրան, քառասուն կըռուշկա ջուր էինք լըսնըմ: Իսու Քրիստոս էնեին երեխին ամեն բոբա: Տեղը դնելուց, լոխծընելուց, օր տունը թողնըմ էլնըմ էիր, խաղըմ էր, էլի Ասուն դիմըմ էիր, նոր էտըմ էիր, օր երեխեն փոռծընկի չգար:

Կոխ էղնելը, թփխի էին առաչ ըսըմ, յիրանց մայրերը միամիդ, ըսենք, մալ էիր մոռըմ, միամիդ, չգիդուտյամպ, էլնըմ կոխըմ են արունը, օր կոխըմ են, դե թագա ծննտկան է, չէ՞. արունը արնան հետ չի համընգնըմ: Էդ վախտ առտեն ցավը ընգնըմ է կընգա ջանը, երեխեն կոխ է էղնըմ: Լավ չի աջե ըշտը, ամխսներն անցնըմ են վրեն երեխի, երեխեն հլը ժաժ չի գալըմ, փոպոխուտյուն չկա: Էդ ժամանագ դիմըմ են մենձ մատոկանց, էդ էլ առտեն չիդեն, կոխի տուն են տանըմ, թե ուրդեղ են տանըմ: Ես գուդ Իսու Քրիստոս եմ երե, հմի էլ օր տնեն դուս են գալըմ, ըսըմ եմ՝ Ասվաձ հեղներդ էղնի: Առանց Ասվաձ ինչ էնենք»¹:

Նույն բանասացը պատմում է նաև, թե ինչպես են քնեցրել նորածիններին.

«Յիրգունը դե ճրակ էր մենագ, լույս բան գոյուտյուն չուներ, յիրգունն օր բոյի քընծընեի, Իսու Քրիստոս էինք էնրմ, ջուրն աղոտըմ էինք մեն մեգով «Ասվաձ ջան պայես մեր երեխանծը, փոռծընկից, շառից, մըրից, սադանի չարկից», դընըմ էինք գըլխի քովը: Էն վախտ չարկերը շաղ էին: Էն վախտ շաղ էինք վախենըմ: Ողըդ փոխեիր, դուս էլնեիր, Իսու Քրիստոս բոյի էնեիր, նոր էլնեիր: Տղոսկանն ագադվալ՝ հագար ու մի չարք կա բոլորը, կըռվըմ են յիրար հեղ: Կըռվըմ են՝ էնի սըմ է՝ իմս է, էնի սըմ է՝ չէ, իմս է, ըստեղ օր որ չարկը հախտեց հարի վեռձ էղի տունն է գը քանդե, ամեն ինձով, իսկ օր բարին է հախտըմ՝ բարու մեճ կմնան: Մնան գը բարու

¹ Բանասաց՝ Մմբատյան Մուսան Մուկուչի, 1941 թիվ: Նախնիները Լուսաղբյուրից են, 40 տարի էս կնիգը ֆերման է դադե: Ունի 6 թոռ: Այժմ ապրում է Լուսաղբյուրում:

մեճ՝ ժառանգից ժառանգ: Իսկ օր չարկը մղավ՝ ավիրում է՝ տեյ տագ: Դանագ-մրգաղ էլ ենք դրե: Էրեխեկին կրնկրմ ենք նախ, հեղո էլ օր յիրանք քընրմ էին, ես հարի Իսուս Քրիստոս չենեի, չխաճակնկեի, ես իրավունկ չունեի իրանց օրոսկի քովից, կառավատի քովից հեռենայի: Ես շաղ եմ հավաղրմ»¹:

Ծննդկանի շուրջը հավաքված չարքերի գոյությանը հավատացել են Շիրակում, իբր չարքը հետապնդել է ծննդկանին ու նորածնին: Զրույցներ կան այն մասին, թե ոմանք նույնիսկ կարողացել են ասեղով կամ քորոցով բռնել չարքին և հնազանդեցնել: Այն տները, որոնց դա հաջողվել է՝ բռնել չարքին, կոչվել են Ալի տներ: Այլ չար ոգին է, այսը: Ալերի մասին տեղեկությունների ենք հանդիպում Մանուկ Աբեղյանի աշխատության մեջ. «Ըստ մի գրույցի՝ Աստված Ադամի համար ընկեր ստեղծեց ալին, բայց Ադամը հողեղեն էր, այլը՝ հրեղեն, և նրանք իրար չէին սագում: Դրա համար էլ Ադամը ալին չէր սիրում: Երբ աստված այդ տեսավ, ստեղծեց Եվային: Այդ ժամանակից ի վեր Եվայի և նրա ցեղի հանդեպ թշնամաբար է տրամադրված: Նա երիտասարդ գույզին պարտադրում է սեռական ժուժկալություն, անցնում արգանդի մեջ և ոչնչացնում պտուղը: Դրանով նա չբերություն է հարուցում»²: Մանուկ Աբեղյանի վկայությամբ, ալերը հեռանում են այնտեղից, որտեղ հնչում է Հիսուս Քրիստոսի կամ Մարիամ Աստվածածնի անունը, այդ է պատճառը, որ մանկանը լողացնելու ժամանակ լողացնողը ջուր լցնելուն զուգահեռ ասում է «Իսուս Քրիստոս»:

Ալերը ժողովրդի պատկերացումներում ներկայանում են հիմնականում որպես իգական սեռի, ժանիքավոր, երկաթե կացինը ձեռքին: Նրանք իբրև թե հանել են ծննդկանի կամ նորածնի լյարդը և տարել իրենց թագավորին: Նրանցից մորը և մանկանը պաշտպանելու համար բարձերի տակ ասեղ, մկրատ կամ դանակ են դրել, հավատացել են, որ չարքերը, դրանք տեսնելով, այլևս մոտ չեն գա ծննդկանին և նորածնին: Չարխափան միջոց-

¹ Նույն բանասացի պատմությունից:

² Աբեղյան Մ., Երկեր, հատ. Է, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր. 1975, էջ 95:

ների գորությունն ավելացնելու համար բարձերի տակ դրել են նաև «Աստվածաշունչ» կամ «Նարեկ»:

«Ըստ սնահավատական գրույցներում առկա հավատալիքների՝ ալերից պաշտպանվելու միջոց էր համարվում նաև այն ընտանիքների անդամների կամ նրանց տներից տարատեսակ իրերի առկայությունը ծննդաբերության ժամանակ, որոնք իբրև թե ալ են բռնել և բաց են թողել, փոխարենը ստացել այլևս իրենց տանը չմտենալու երդում»¹:

Մեկ այլ՝ Իսահակյան համայնքում հանդիպած բանասաց Հրանուշը պատմում է. «Էն վախտ խավիձ էին էնրմ, տըղոցկանին խավիձ էին կերծընրմ: Տըգները մոխիր էին փըռըմ՝ դոշկի վրա, շորով մոխիր էին բերըմ դընըմ, մոխրի վըրեն է շոր էին փըռըմ. պարգըծընըմ էր, օր գողինկը չմունդըռեր: Իմ կիսուրըս քառասուն օր տնից դուս չէր թողընըմ ելնեի: Մըմ էր՝ տղոցկանի պըշներից քամի է էրտըմ, սաղ ամբողճ քու էդ ազադման ժամանագ, ըսըմ է կանանձի էս քիտը, քըտի օսկոռը ժաժ չի գալըմ, թե չէ սաղ մարմինըդ ցավըմ է: Ըզզըմ էս, դողըմ էս, վախենըմ էս, բայց հըմի ընդեղ քըծըմ են, գալըմ ըստեղ շոր են փըռըմ: Քառասուն օր կիսուրըս չէր թողընըմ տեղից դուս գայի: Ըսըմ էին՝ լուսնըգին բղի էրեխի շորը դուսը չմնա, էրեխեն նորենց կեղնի, հիվընդնա գը: Լուսնըգից նորենց կեղնի, հիվընդնա գը էրեխեն: Նորենց կոռողի քով փուլ էին կըղոըմ, փող էին հարալեգ անըմ: Տանըմ էին, կըղոըմ էին, ծագըմ էին, բերըմ էին թելով կախըմ էին էրեխի բուզը: Էրեխեն օր նորենց էր էղնըմ, սենք օր դուս էր էլնըմ, խաղըմ էր լուսնըգին, էրեխեն վաղ էր էղնըմ, թուլ էր ըզզըմ, աշըմ էինք օր բըռի մեձը լեղի է: Տանըմ էինք նորենց բըռնող կար՝ բիձա մառտ կար, ըսենք թե կնիգմառտ կար, ձեռի ըստոնկը/դաստակ-Չ.Մ./ բըռնըմ էր, էս ուսերը բըռնըմ էր: Կոխըն է գիդե՞ս ինչը էր, իմ կիսուրըս ըսըմ էր էրզըսի էրեխեկը էրգուսն է քառսընկի մեշն են էղե: Էն մեգի էրեխեն կոխ է էղե: Օղորմաձիգ կերսարըս պաղի տագը չիշիգ էրաձ կեղնի, գուկա էդ կընիգը էդ չիշիգի տեղից վերսնե, տանի գը էրեխին գը լոխընե: Յիրան

¹ *Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, N1(22), Եր., 2017, Հասմիկ Գալստյան, Ալը հայ ժողովրդական սնահավատական գրույցներում, էջ 44:*

Երեխեն պրոծել էր, կիսրոճըս Երեխեն կոխ էր Էղե: Կոխըն է, զօր ու գիշեր անվեոչ լալըմ է ու Երեխեն հեչ առաչ չի գալըմ: Տանըմ են գերեզմընները, թազա մեռելի վրա ջուր էին դընըմ, բերըմ էին լոխծընըմ էին, օր երեխեն կոխից պրոճըներ: Զօր ու գըշեր դըժըմ էր մե բերնի: Հեչ առաչ չի գալըմ, Էղնըմ է ինչդ օր չոպը: Քառսունքներն օր խառնըվըմ է յիրար՝ ըսենք իմըս տղա է, քուգըդ՝ ախճիգ է: Ոճ դու բըդի գաս մեր տունը, ոճ է ես բդի գամ: Սատիգըս ու օդորմաճիգ Շավոն յիրար հընգեր էին: Էս Ռաֆիգը գնաց ըդոնց տնեն սալոմ բերավ: Մեգ է տենիք էս Կառլենը մե շալագըմ է նորից յինկը եղևից մերը հեդ էգավ մեր տունը: Էգավ, Ռաֆիգի հեդ կըռվավ: Քու Երեխեդ ու իմ Երեխես յիրար հընգեր են, հիվանդանոճը յիրար հեդ էինք ազադվե ես ու Քնարը, էգար մեր Երեխեն կոխ կեղնի: Տո սավ այ մառո, թող իմ Երեխեն Էղնի՝ իմըս ախճիգ է, ձերը տղա է՝ բան չեղնի: Նորից էս Ռաֆիգին տարավ յիրանց տունը, յիրան տղին տըվավ Ռաֆիգի գիրգը, չե, Քնարին բերավ, կըռնագ կըռնըգի զարգեծինք, ես յիրան տըղին ծիճ տըվի, յինկըն իմ ախճըգան ծիճ տըվավ:

Օր հիվանդանոճից բերըմ են օր տունը տղամարտ Էղավ, բդի բերես տաս Էդ տղամարտու գիրգը. կոխ չեղնի: Ախճիգ Էղավ՝ տղիճ է, տղամարտուց կոխ կեղնի, բդի անպայման գիրգը տաս: Օրինագ Ալինայիս բերեծին, էս Երեխեն, փեսես տունն էր՝ Նառայիս մառտը, տվինք գիրգը: Ըսի՝ Արդյո՛մ ջան, գըրգե:

Ետե տունը կալբաստ Էղավ, միս Էղավ՝ Երեխիդ հիվանդանոճից բերեծիր տուն, բըդի լոխծընելուց մե թիկեմ քըճես ջըրի մեճը, օր Երեխեն Էդ մըսից կոխ չեղնի: Մոռտըն օր Էնըմ էին, Էդ մըսից բերըմ, քըճըմ էին ջրի մեճը լոխծընըմ էին Երեխին: Ցըռտաճ կադուն էգավ, նես մըդավ, Երեխի գլխու վիրևից անձավ, կամ տան մեշն էգավ, Երեխեն կոխ կեղնի, բըդի զգուշ Էղնիս:

Լոխճըրեկ եմ, ջուրն էլ ցանել եմ վըրեն, քընճըրեկ եմ փատտե: Փատտելուց ըսել եմ Իսսու ու Քրիստոս, խաճ եմ հանե, Իսսու ու Քրիստոս,

բուլավկա եմ զարգե վըրըները, ասեղ եմ զարգե բառծերի վըրեն, օր չարը հեռենա, բարին գա էրեխին, օր քընի էրեխեն հանկիստ»¹:

Քառասունքահանի ծեսի ընթացքում երեխայի լողանալու ավագանի մեջ լցրել են նաև վարդի թերթիկներ և ոսկի: Բանասացներից Օովինար Մարգարյանը պատմում է, որ երբ ծննդկանը ծննդաբերելիս ոսկյա զարդ է ունեցել իր վրա, երեխայի մաշկը դեղնել է ծնվելուց հետո, իսկ երբ քառասունքահանի ժամանակ ջրի մեջ ոսկի են գցել, երեխայի դեղնությունն անցել է: Նույն բանասացը վկայում է, որ երեխայի գլխին ձվի կեղևով քառասուն անգամ ջուր են լցրել: Նրա մեկնաբանմամբ՝ ձուն խորհրդանշում է Երկիր մոլորակը, իսկ դրա կեղևում լցված ջուրը՝ մարդկության իմաստնությունը, որը լցնելով երեխայի գլխին, հավատացել են, որ այդ իմաստնությունը փոխանցում են նորածնին:

Քառասունքահանի ծեսը ուղեկցվել է նաև մանկանն ուղղված օրհնանքներով և բարեմաղթանքներով.

Բախտավոր բալա էղնիս,

Հորն ու մորդ պարծանք էղնիս:²

Իսկ երբ գլխին ջուր են լցրել, կարծես երեսը նկարելով ասել են.

Պարզ ճակատ էղնի,

Ունքերը բարձր էղնի,

Աչքերը նուշ էղնի, լավ տեսնի,

Քիթիկն ուղիղ էղնի,

Բերանը փոքր էղնի:³

Օովինար Մարգարյանի հաղորդմամբ՝ երեխային լողացնելիս ձեռքերը ծալել են մեջքի հետևում, երեխան տոտիկ է արել այդ դիրքով, իսկ իրենք ասել են. «Աղա էղնի մեր տղեն», իսկ աղջիկ երեխայի դեպքում. «Պա-

¹ Բանասաց՝ Հովդյան Հրանուշ Խոսրովի, 1931 թ., ծնվել է Բուղդաշենում (Բագրավան), ապրում է Բասահակյանում, ունի 10 թոռ, 16 ծոռ

² Բանասաց՝ Ղազարյան Օովինար Երվանդի, 1942թ., Անիի շրջանի Չորաշեն գյուղ (Ղոխ), ունի 10 թոռ, 7 ծոռ

³ Բանասաց՝ Ղազարյան Օովինար Երվանդի, 1942թ., Անիի շրջանի Չորաշեն գյուղ (Ղոխ), ունի 10 թոռ, 7 ծոռ

ռավ դառնա մեր բալեն», այսինքն՝ երկար կյանք ունենա: Եթե քառասունքը լրումին չհասած երեխային լողացնելիս մարդ է եկել սենյակ, չեն թողել, որ գնա, մինչև ավարտել են լողացնելն ու ասել են. «*Արի՛, քու քունը տու՛ր իմ բալին»*, իսկ եթե այդ մարդը նախքան լողացնել-վերջացնելը գնար, երեխայի քունը հետը կտաներ:

Ջրին առնչվող ասույթաբանական կայուն բանաձևեր են հիշվում Շիրակում, մասնավորապես՝ *Խոսքը մեծին, ջուրը՝ փոքրին* կամ *Ջրի պես յերգար կյանք ունենաս* /Շիրակում երեխաներին ասվող օրհնանք/ և այլն:

Ուշագրավ է, որ երեխաներին լողացնելու ժամանակ Շիրակում մինչև այսօր օգտագործվում է *չոփ-չոփ* ենել կրկնավոր բայը, որը *չ-փ* բաղաձայն հնչյունների համատեղ կիրառմամբ ստեղծում է աշխուժություն երեխայի մոտ:

Եզրահանգում. Նշենք, որ Շիրակում ցայսօր պահպանվել է երեխային քառասունքից հանելու ծեսը, որն ուղեկցվում է օրհնանքներով, բարեմաղթանքներով:

Ըստ էության, ջուրը՝ որպես մանկանոցի կարևոր աղբյուր, կենսական անհրաժեշտություն ունի հանուրի համար: Եվ բնավ պատահական չէ, որ թե՛ կենցաղում, թե՛ ժողովրդի պատկերավոր մտածողության մեջ ջուրն ուրույն տեղ է զբաղեցնում:

References

1. Abeghyan M., *Lands*, Vol. E, Armenian SSR GA ed., Yerevan 1975, p. 95.[Abeghyan M., Erker, hat. 7, Haykakan SSH GA hrat.,Erevan 1975]
2. Banber Yerevan University, Armenian Studies, N1(22), Yerevan, 2017, Hasmik Galstyan, AI in Armenian folk superstitious conversations, page 44.[Banber Erevani hamalsarani, Hayagitutyun, N1(22),Erevan 2017, Hasmik Galstyan, Aly hay joghovrdakan snahavatakan zruycnerum]
3. Dashtens Kh., *Khodedan*, Haypethrat, Yerevan, 1956, page 241.[Dashtens Kh., Khodedan, Haypethrat, Yerevan, 1956 t.]
4. *The Holy Book of the Old and New Testaments*, a new translation from Eastern Armenian, reprint, Mother See s. Etchmiadzin and Armenian Bible Society, 1999.[Astvacashunch matyan hin ev nor ktakaranneri, arevelahayeren nor targmanutyun, verahratarakutyun, Mayr ator surb Etchmiadzin ev Hayastani Astvacashnchayin ynkerutyun hrat.1999 t.]

ՀՏԴ 93.94

**ԳՈՇԱՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ :ԶԹ:
(1260) Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ
ԻՇԽԱՆՈՒՅԻ ԳՈՆՑԱ ԽԱԹՈՒՆԸ**

Ռուբեն ԳԱՄՊԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ
ruga52@mail.ru

Վրացական ծագում ունեցող իշխանուհի Գոնցա թագուհին եղել է ամիրսպասալար, աթաբեկ Ավագ Ջաքարյանի կինը: Վերջինս 1249-50 թթ. մահանում է: Երկրի իշխանությունը սկզբում տրվում է Ջաքարյան Շահնշահ Ա-ի (Սարգիս) ավագ որդի Ջաքարեին, ապա որոշ ժամանակ հետո նրանից վերցվում և տրվում է այրի Գոնցային: 1250-ականների վերջին Գոնցա իշխանուհին ամուսնանում է Վրաց թագավոր Դավիթ Է Բագրատունու հետ՝ ունենալով արու զավակ՝ Դեմետրե անունով: 1258-60 թթ. վրաց թագավոր Դավիթ Է-ն ապստամբում է մոնղոլների դեմ և փախչում Աբխազիա՝ թողնելով իր թագավորական գահը և կնոջը՝ Գոնցային, և նորածին Դեմետրեին: Նվաճող մոնղոլները, գումարելով 20-հազարանոց պատժիչ զորք, Բաղաղ Արղունի գլխավորությամբ արշավում են Վրաստանի և Հայաստանի վրա: Նրանք հիմնահատակ ավերում են վրաց թագավորների գերեզմանատեղին Գելաթում և կաթողիկոսանիստ Ածխուրին: Հայաստանում գերում են Գոնցա թագուհուն, որը, հավանական է, գտնվում էր Բջինիում և վերջինիս նորածին Դեմետրեին և դստերը՝ Խոշաքին, մեծ իշխան Շահնշահ Ա. Ջաքարիային, Արցախի իշխանակալ իշխան Հասան Ջալալ-Դոլային: Գերության մեջ Հորդայում իրենց մահկանացուն են կնքում Գոնցա թագուհին և Հասան Ջալալ-Դոլան:

Բանալի բառեր՝ Ավագ Ջաքարյան, Խոշաք, Շահնշահ, Դեմետրեուս, Խորդ, Վրաստան:

**GOSHAVANK ST. CHURCH OF GOD (1260)
THE PROTOCOL AND PRINCESS GONTSA KHATUN**

Ruben GASPARYAN

Institute of Archeology and Ethnography RA NAS, Armenia
ruga52@mail.ru

Adorning the northern wall of Nor Getik, also known as the St. Astvatsatsin Church of Goshavank (built in 1260), is a historical testament of significant importance. In compliance with a decree, Archbishop Hovhannes Armanetsi, who presided over the vast diocese of Northern Armenia, including Haghpat, acted upon the request of Archbishop Kirakos Gandzaketsi, a revered figure at the Goshavank monastery. This decree resulted in the monastery severing its ties with its previous affiliations and transferring ownership to the village of Getik. The primary goal of this move was to alleviate the tax burden on the liberated Georgian residents of Getka during the rule of Princess Gontza Khatun.

Princess Gontza, whose Georgian name was Gvantsa, hailed from Georgian origins and was the daughter of Eris-tav Kakhberidze of Rachi. Her marital journey commenced with a union to Grand Prince Avag Zakaryan. Following the passing of Senior Zakarya in 1250, Gontza found herself widowed. Subsequently, she entered into a marriage with the Georgian King David after some time, and their union bore a son named Demeter.

However, the years 1258-1260 brought tumultuous times to Georgia as uprisings roiled the land. During this period, Georgian King David, confronted with these challenges, chose to relinquish his throne and seek refuge in Svanet and Abkhazia, accompanied by his eldest son, Giorgi. Queen Gontza, perhaps in Armenia at the time, was left behind in Bjni.

In an attempt to quell the rebellion, the conquering Mongols, led by the tax collector Arghun, gathered a substantial military force to suppress the uprising. It was during this time that Arghun managed to apprehend the entire Armenian family, including Gontza, her daughter Khoshak, and her newborn son Demeter. This group also included the great prince Shahنشah I and Khachen prince Hasan Jalal Dola.

In a bid to broker peace, Mongol Khan Hulagu sought to engage Georgian King David through Queen Gontza. Influential figures, such as the khan's senior

lady, Tonghuz-khatun, and the esteemed Armenian Eruk Arkun, who held high regard within the Mongolian court, intervened in efforts at reconciliation.

Keywords: Avak Zakharyan, Khoshak, Shahnshah, Demetreus, Khord, Georgia.

КНИГИНИЯ ГОНЦА ХАТУН И ФРЕЗКИ НА СТЕНЕ ГОШАВАНКА

Рубен ГАСПАРЯН

Институт археологии и этнографии РАН, Армения
ruga52@mail.ru

На фресках собора святой Богородицы (на северной стене собора Гошаванка, 1260 г.) можно прочесть, что Иованнес Арманеский, архиепископ всей северной епархии, по просьбе священнослужителя и летописца Киракоса Гандзакеци, выполнил указ об отмене налога в епархии Гетик во времена правления княгини Гонцы Хатун.

Княгиня Гонца Хатун была грузинского происхождения и являлась дочерью Раги Кахаберидзе. После смерти великого князя Авака Захаряна в 1250 году, она осталась вдовой и через некоторое время вышла замуж за грузинского короля Давида. От короля Давида она родила сына, которого называли Деметр.

В период с 1258 по 1260 годы в Грузии начались бурные времена с восстаниями. Грузинский король Давид, столкнувшись с этими проблемами, решил отказаться от трона и укрылся в Сванетии и Абхазии, забрав с собой старшего сына Георгия. Королева Гонца Хатун, возможно, находилась в это время в Армении и осталась в Бжни.

Для подавления восстания монгольские завоеватели, под руководством налогового сборщика Аргуна, собрали большое войско. Аргун схватил в плен всю армянскую знать, включая королеву Гонцу Хатун, ее дочь Хошак и новорожденного сына Деметра, великого князя Шахншаха I и князя Хачена Хасана Джалала Долу.

Монгольский хан Хулаву пытался достичь мира через королеву Гонцу Хатун и договориться с королем Давидом. Вмешались влиятельные фигуры,

такие как старшая жена хана, Тангуг Хатун, и почтенный армянин Енок Архун, который пользовался высоким уважением в монгольском дворе. К сожалению, королева Гонца Хатун была убита в плену в Хорде в 1261-62 годах.

Ключевые слова: Авак Захарян , Хошак, Шахншах, Деметрей, Хорда, Грузия.

Նախաբան. Հյուսիսային Հայաստանի նշանավոր հոգևոր կենտրոն Գոշավանքի 1260թ. բնագիրը հայտնում է կարևոր մի իրողություն: Երկրամասի՝ Հաղբատի վանքի վերադիտող արքեպիսկոպոս Հովհաննես Արմանեցին, որը պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ եղել է նախկինում Գոշավանքի անվանի եպիսկոպոսներից մեկը, պատմիչ Կիրակոս Գանձակեցու թախանձանքով վերցրել է Գոշ գյուղին տրվող աթոռահարկը՝ իշխանուհի Գոնցայի իշխանավարության ժամանակ: Ներկա հոդվածում կներկայացնենք Գոնցա իշխանուհու գործունեությունը Հայաստանում և գերության ժամանակ Հորդայում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ: Նոր Գետիկի կամ Գոշավանքի ՍԲ Աստվածածին եկեղեցու ներքուստ հյուսիսային մուտքի ճակատակալ քարի 9-տողանոց բնագրի համաձայն՝ :ԶԹ: (1260) թ. Հովհաննես Արմանեցին¹, որ

¹ **Արմանա, Արման,** (ի, ու)- Հնագույն երկիր Հայկական լեռնաշխարհում: Գյուղ Արմ. Հայաստ. Երզրումի նահ-ի Բասենի գավ-ում: **Ա** Արմ. Հայաստ. Բաբերդ ք-ից հս-արմ.: **Հ. Սանանդյանը** և **Սարկվատը Ա** նույնացնում են Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բագրևանդ գավ-ի **Արմանա** գ-ի հետ, որը հավանական է թվում: **Արմանի**-գյուղ Մեծ Հայքի Այրարատ աշխ.-ի Շիրակ գավ.ում: (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, **Թ. Օ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան,** հ, 1, Եր 1986, էջ 465): Հավանական է՝ Հովհաննես Արմանեցի եպիսկոպոսը ծագմամբ Շիրակցի է: Հր. Աճառյանը, խոսելով նշյալ բնագրի մասին, հայտնում է. «Յովհաննես, Գետկայ ժողովուրդը ազատել է հարկից և այդ բանը արձանագրում է Գոշավանքի մի արձանագրության մեջ, 1211թ.: (Թվականը ճիշտ չէ, Ռ.Գ.), «Ազգագրական հանդես, Ժ, 24», **Հր. Աճառյան,** Հայերեն անձնանունների բառարան, Եր, 1946, հ., Գ, էջ 578:

ամբողջ թեմի թեմակալ եպիսկոպոսն էր¹, Գետկա վանքի վարդապետ, պատմագիր Կիրակոս Գանձակեցու խնդրանքով վերացրել է գյուղի՝ եպիսկոպոսական աթոռին տրվող հարկը՝ իշխանուհի **Գոնցա խաթունի** իշխանության օրոք. «Աստծով ես տր Յովանէս Արմանեցի **ազատ գերցի** զԳետկա ժողովուրդս ի հարկէ, որ **տային յաթոռն, յիշխանութե Գոնցա խաթունին**, ի խնդրո Կիրակոս վարդապետին, ի հայրութեան Աբոսմ վարդապետի.. գրեցաւ.. **:ՉԹ:** (1260) թիւս վկայութեամբ Յովհաննիսի, «Վարդան վարդապետի»²:

Հետաքրքիրն այն է, որ իշխանուհի Գոնցայի անունը ժամանակի վիմական այլ բնագրերում չի հիշատակվում, ուստի հարկ է անդրադառնալ վերջինիս գործունեությանը:

1249-50 թթ., երբ մահանում է իշխանապետ, աթաբեկ, ամիրապասալար Ավագ Զաքարյանը, Ավագյան ճյուղի իշխանական դիրքերը ենթարկվում են խիստ փոփոխության: Պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Ավագյան տիրույթների ղեկավարությունը նախապես տրվել է

¹ Անվանի հնագետ-վիմագրագետ Կ.Ղաֆադարյանի հավաստմամբ, Հաղպատի եղծված **կարևորագույն անթվակիր բնագրի**ը փորագրվել է 1110 թ., և հիշատակության տեղեկությամբ միաբանությունն ազատվել է հարկերից: Վիմագիրը փաստում է, որ վանքում վերահաստատվել է եպիսկոպոսական աթոռ, Վրաց թագավոր Դավիթ (4) Շինարարի կողմից. «Ի ժամանակս ինքնակալ արքային Դաւթի թագաւորին յաղթողի, որդոյ Գեորգեա, որդւո թագաւորին Բագրատա ..Եղբայրութեանն ազատեաց գրով»: Այդ կապակցությամբ վիմագրագետն իրավամբ նշում է, որ վանքում պետք է լիներ նաև արքայական հրովարտակ: **Ղաֆադարյան Կ., Հաղպատ**, ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Եր, 1963, էջ 144: Սակայն մինչ այդ եպիսկոպոսական «**ի մեծ աթոռն**» 979 թ. հաստատվել էր Սանահնի սրբավայրում՝ արքայական հրովարտակով թագավոր Բագրատունի Սմբատ Բ-ի կողմից՝ շնորհիցով վանքին ընդարձակ վիճակ «..զամենայն երկիրն Տաշրաց.. մինչ ի լեառն Բազում.. մինչ ի սահմանս Գուգարաց աշխարհին և մինչ սահմանս Տիփսեաց և Վրաց, և ի սահմանս Նիզ գաւառի մինչ ի սահմանս Գայենոյ և զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս տան Շիրակայ», («Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քեօթուկը)», աշխ. Պ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 67:

² Դիվան հայ վիմագրության, պրակ, VI, կզմ. **Ս. Ա. Ավագյան, Հո Մ. Զանփոլադյան**, Եր., 1977, էջ 82:

Շահնշահ Ա-ի որդի **Զաքարեին**, ապա, ինչ-որ ժամանակ հետո վերջինիցս վերցվել և շնորհվել է աթաբեկ Ավագի այրի կնոջը՝ **Գոնցային**¹։ «Ետուն զիշխանութիւն նորա Զաքարեի, որդւոյն Շահնշահի, հօրեղբօր որդւոյ Աւագին, զի Աւագն որդի ոչ ուներ, բայց միայն դուստր մի երեխա: . . Եւ ապա հանեալ ի Զաքարեէ ետուն կնոջ Աւագին, որում անուն էր Գոնցա»²: Նշյալ սոցիալ-քաղաքական իրողությունը մի փոքր այլ իրավիճակով է ներկայացնում «Մանր ժամանակագրության» հիշատակությունը. «Յայսմ ամի **մեռանի Աւագն**, որդի **Բւանէի**, անորդի, և թողու դուստր **մի Խոշաք** անուն, և սուգ անհնարին պատեաց, զերկիրս մեր, և կին նորա **Գոնցան առնէ գտերութիւն աշխարհիս ՌՄԾԱ**»³:

Նկատելի է, որ պատմական վերոնշյալ իրողությունը վիճական աղբյուրներում նույնպես իր արտացոլումն է ստացել: Վիճական վավերագրերից պարզվում է, որ Ավագյան տերության ղեկավարումն ուղղակի անցել է Շահնշահ Ա-ին՝ **Զաքարե (Բ) Մեծի** որդուն: Այդ է վկայում Հովհաննավանքի ժամատան հս. պատի «**ՈՂԹ** (1250) թ.» բնագիրն արձանագրե-

¹ Միքայել Չամչյանը Գոնցայի անունը նշում է հետևյալ ձևով. «Բնկ յանցանել ժամկաց ինչ առեալ թաթարաց զերկիրն աւագայ ի ձեռաց զաքարեայ՝ ետուն կնոջն աւագայ, որ կոչիւր **վարդոյշ գոնցա**», *Միքայել Չամչյան*, Հայոց պատմություն, հ, Գ, Եր., 1984, էջ 225: Մեզ անհայտ է, թե ինչ աղբյուրից է օգտվել անվանի գիտնականը:

² *Կիրակոս Գանձակեցի*, էջ 321: Ցավոք, պատմիչը չի մասնավորեցրել, թե ո՞վ Ավագյան տան իշխանավարության իրավունքը տվեց Շահնշահի որդի **Զաքարիային**, մոնղոլն է՞րը, թե՞ վրաց թագավորը, և որքան ժամանակ հետո **«հանեալ»**, զրկեցին վերջինիս տերությանն **իշխելու իրավունքից**, և է՞րբ, ո՞ր թվականին **փոխանցվեց** այրիացած Գոնցային: Կարծում ենք այդ փոփոխությունը կատարված պետք է լինի մոնղոլների կողմից, քանի որ, երբ Ավագը Հայաստանից անախորժության պատճառով մեկնեց Սվանեթ, իշխանավարությունը տրվեց Շահնշահ Ա-ին. «Ետուն զաշխարհս նորա ի ձեռն Շահնշահի, իբր թէ եղբայր նոցա իցէ. և զայս առնէին վասն առաւել հաւատարմութեան», *Կիրակոս Գանձակեցի*, էջ 265-266: Պատմական այս իրողությունը հիշատակում է նաև վրաց աղբյուրը: Պրոֆ. **Լ Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ, Գ, Երևան, 1955, էջ 50: Այսուհետ՝ Վրաց աղբյուրները:

³ Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ, հ. I, կազմ. **Վ. Ա. Հակոբյան**, Երևան, 1951, էջ 42:

լով, որ տերութեան իշխանավորը Շահնշահ Ա է. «Յամի ՈՂԹ ի տերութեան Շահնշահի, որոյ Մեծին Չաքարիաի»¹: Տվյալ իրողությունը վերստին հաստատվում է նույն հոգևոր հաստատության Կաթողիկե ՄԲ Կարապետ եկեղեցու ամ պատի անթվակիր բնագրով. «Անուամբն ԱՅ իշխանութենն Շահինշահի [մանդատ]որդախուցեսի և յառաջնորդութե Սարգսի միայնաւորի»²: Սակայն, արդեն Հաղպատի ՉԶ (1257 թ.) վավերագրի համաձայն՝ նկատելի է, որ երկրի իշխանավարությանը գահակից է դարձել Շահնշահ Ա-ի ավագ որդին՝ Չաքարիան (Գ). «Ի թուխ Հայոց :ՉԶ: Ի տերութեան մեծին Շահնշահի և Չաքարիայի շինեցաւ մեծափառ տունս ԱՅ»³:

Նշյալ ժամանակաշրջանին է վերաբերում նաև վրացական սկզբնաղբյուրում պահպանված կարևոր մի մեծածավալ տեղեկություն, որն ընդհանրական ձևով է ներկայացված, քանի որ այնտեղ տեղ են գտել պատմական իրողություններ, որոնք կատարվել են բավական ուշ և ոչ հաջորդական հերթագայությամբ: Վրացական աղբյուրի տեղեկության համաձայն՝ Դավիթ VII Բագրատունի⁴ թագավորը «Այս ընթացքում Դավիթ թագավորը Ուլը⁵ խանի մոտ Մուղան գնաց, որ նրա ձմեռանոցն էր: Այն-

¹ Գ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1948, էջ 103.

² Անդ, էջ 96:

³ Ղաֆադարյան Գ., *Հաղբատ*, Եր, 1963, էջ 217. Դիվան հայ վիմագրության, պրակ IX, կազմեց Բարխուդարյան Ս.Գ., Ղաֆադարյան Գ.Գ., Մաղումյան Ս.Տ., Եր, 2012, էջ 204:

⁴ Карлис Цховреба *История Грузии*, Издательство АРТАНУДЖИ, Тбилиси, 2008. Այսուհետ՝ «Карлис Цховреба», էջ 421: Վրաց թագավոր Դավիթ VII (Ե/Է) հայկական աղբյուրներում հայտնի է Վահրամուլ անունով, Տես՝ Չալչյան Ս., «...իբրև երեք վահրամ գդաւիթ ի մծիխթա՝ էօծ գնա կթղկսն վրաց թգր ի վր ազգին, ևս և իշխանքն հայոց՝ աւագ, շահնշահ, և այրուղ: Տարեալ նստուցին գնա յաթոռ թգրուե.. զի փիսկ վահրամուլայ՝ գնա թգրեցուսցէ», հ, Գ, էջ 223. Մարգարյան Հ., 11-14-րդ դարերում հայ-իրանական կապերի պատմությունից (սահիբդիվան Շամս ադ -Դին Ջուվեյնին և Հայաստանը), Արևելագիտական ժողովածու, հ, 5, Եր, 2004, էջ 115:

⁵ Նուլավյան պետության հիմնադիր Հուլավու իլխանի անունն է, տարեգիրը զուգահեռաբար օգտագործում է նաև Էջնի ձևը, Տես՝ «Վրաց ժամանակագրություն

տեղից [Ուլոյի հետ] եկավ [նրա] ամառանոցը, որտեղից թագավորին ուղարկեց Վրաստան (Քարթլի), որ թագավորը պատրաստ լինի Եգիպտոս արշավելու, որ է՝ Մսերք: Մտավ անցավ Իվանե աթաբեկի որդի Ավագ աթաբեկի երկիրը, իսկ այդ ժամանակ **վախճանված էր Ավագը** և չուներ արու գավակ, այլ **միայն Խվաշագ անունով մի աղջիկ**: Թագավորը արտասվելով գնաց Բջնի: Տեսավ Ավագի կնոջը՝ Ռաճի Էրիսթավ Կախաբերի-ձեների աղջկան, **Գվանցա** անունով, գեղեցկատես: Միրահարվեց նրան և քիչ անց նրան կնության ու թագուհի դարձնելու տարավ: Բերեց իր թագավորություն: Իսկ Ավագի **աղջկան թողեց հայրական տիրույթում** և հանձնարարեց նրան Մահկանաբերոցի Սադունին, որ իմաստուն ու խելոք մարդ էր, բարեխոհ, բարեսէս, ուժով հույժ գորեղ, նշանավոր, ընտիր ըմբիշ, վարպետ նետաձիգ»¹:

Ե՞րբ է տեղի ունեցել այրի իշխանուհի Գոնցայի² ամուսնությունը վրաց թագավոր Դավթի հետ, որևէ ստույգ թվական ժամանակի սկզբնաղբյուրնե-

(1207-1318) Թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթությունները՝ Պարույր Մուրադյանի», Եր., 1971, էջ 97:

¹ Անդ, էջ 109: Հիշատակագրության սկզբնամասը վերաբերում է Հուլավու իլխանի Մերձավոր Արևելք կատարած արշավանքին 1258-60 թթ. և որևէ **կերպ չի կարող առնչվել Ջաքարյան Ավագի մահվան՝ 1249-50թթ. հետ**, որովհետև վերջինս 1258 թ. ողջ չէր: Իսկ Մահկանաբերոցի Սադուն Բ Արծրունուն վերաբերող տեղեկության այդ իրողությունը կատարվել է դարձյալ բավականին ուշ՝ 1271/2, գուցե 1273 թթ. երբ Ավագ Ջաքարյանի դուստր Խոշաքն 1269 թ. ամուսնանալով պարսիկ խոջա Սահիբ Դիվան Մուհամմեդ Ջուվեյնու հետ, մեկնել է Հորդա կամ Պարսկաստան՝ հայրական կալվածքի տնօրինությունը՝ **հեջուք, սենեկապետությունը**, հանձնելով ամուսնու բարեկամ, ժամանակի նշանավոր իշխան Սադուն Բ Արծրունի Մահկանաբերոցուն: **Ժամկոչյան Հ. Գ.**, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին, Վ. Մ. Մուրտուվի անվան Երևանի պետական համալսարան, Գիտական աշխատանքներ, հ. 47, 1955, էջ 97:

² Ըստ Հր. Աճառյանի բառը ծագել է «իգ. Վրաց. Վանցա անունից, հմմտ. Գոնցա՝ կին Դալիթ թագավորի Վրաց, որդւոյ Լաշայի»: Հեղինակը ևս հավելում է, որ բառը ստուգապես ծագեած պետք է լինի միջին հայերենի ժողովրդական գոնցն՝ ապարանջանի թանկագին մասերից մեկը. «հմմտ. 1318 թվի մի արձանագրության հետևյալ տողը. «Ես Մամաք և իմ որդի Վաղթանկ զիմ ոսկի առպնջանի գոնցն»

րը չեն նշում, սակայն պատմիչ Կիրակոս Գանձակեցու տեղեկության համաձայն՝ 1250-ականների վերջին Վրաստանում տեղի է ունենում ապստամբություն: Վրաց թագավոր Դավիթը, որ մինչ այդ հնազանդությամբ ծառայել էր նվաճող թաթար-մոնղոլներին, նեղվելով վերջինների անվերջ հարկապահանջությունից, թողնում է իր մայրաքաղաքը, գահանիստ աթոռը և փախչում **խորին Ափխազք, յամուրսն Սուանեթոյ**. «Եւ այնպէս տազնապաւ փախավ, **զի զկին իւր՝ զԳոնցա** թագուհի, և **զնոր ծնեալ որդի իւր՝ զԴեմետրէ**, ոչ կարաց ընդ իւր տանել, բայց միայն զԳիորգի, զանդրանիկ իւր»¹: Դժվար է միանշանակ պնդել, թե պատմիչի «**զնոր ծնեալ որդի**»-ն քանի տարեկան էր՝ մեկ, երկու, թե՞ երեք: Ըստ այդմ, կարելի է մոտավոր ասել, որ այրի Գոնցայի հետ վրաց թագավոր Դավթի ամուսնությունը տեղի է ունեցել 1255/6/7 թթ.: Սակայն Կիրակոս Գանձակեցու վկայության համաձայն՝ ապստամբությանը հաջորդել է նվաճող մոնղոլների պատժիչ գործողությունները: Վերջիններս մեծաթիվ զորք են գումարել մեծ ոստիկան Արդունի² գլխավորությամբ և հետապնդել են ապստամբ վրաց թագավորին: Սակայն, ինչպես երևում է պատմիչի վկայությունից, Արդունը պատժիչ արշավանքում նշանակալից ռազմական հաջողություններ չի ունեցել, որի պատճառով ռիսկալիությամբ ու չարությամբ լցվելով՝ դաժանությամբ սրի է քաշել ազգաբնակչության մեծամասնությանը, ավերել վրաց թագավորների գերեզմանատունը Գելաթում և սրի մատնել նաև Ածդորի կաթողիկոսանիստ հոգևոր կենտրոնը. «մեծ ոստիկանն Արդուն՝ զօր բազում գումարեալ, զնաց զհետ փախուցեալ թագաւորին Դաւթի, զի ըմբռնեսցէ զնա: Եւ իբրև ո՛չ կարաց ժամանել նմա, զբազում գաւառս վրաց կոտորեաց և գերեաց անխնայաբար. այլ և զգերեզ-

տուաք ի սուրբ ուխտս» /Միսական 114 /»: **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հ, Ա, Եր. 1942, էջ 487:

¹ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 390:

² Ըստ *Ստեփանոս Օրբելյանի*՝ Արդունը բնորոշվում է «..վազիր և պատղազ (տեսուչ) կարգեալ ի մեծ դանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն՝ հրամանատար ամենեցուն և իշխեցող արքունի հարկացն և մեծ դիւանին», **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն տանն Միսական, Թիֆլիս, 1912, էջ 412:

մանատունն թագաւորացն վրաց՝ զԳելաթ, սաստկապէս կոտորեաց և քանդեաց. և զկաթողիկոսարանն՝ **զԱծողոբ**, նոյնպէս կոտորեաց անողորմաբար»¹: Մակայն չորս հարյուր հեծյալ զինվորական մի գունդ անակնկալ հարձակվում է և, ինչպէս պատկերավոր ձևով բնորոշել է պատմիչը. «...իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ»² սրի են մատնել Արղունի հրոսակորաբանակը, ինչը հիմք է հանդիսացել հնարավորինս դիմակայել մոնղոլ նվաճողներին: Այդ դեպքից հետո Արղունն այլևս վարանել է, վախեցել. «..երկուցեալ Արղունին, ոչ իշխեր այնպէս համարձակ մտանել խուզել զվայրսն»³, որի հետևանքով իլխան Հուլավուն, ակներևաբար, ստիպված հետ է կանչել վերջինիս: Ետդարձի ճանապարհին, Արղունը Բջնիում գերեվարել է վրաց թագուհի Գոնցա իշխանուհուն, նրա դուստր Խոշաքին և նորածին փոքրիկ Դեմետրեին, մեծ իշխան Շահնշահ Ա-ին և Խաչենի Հասան Ջալալ Դոլային. «ի կալանս արար զթագուհի վրաց՝ Գոնցայն, և զդուստր իւր՝ զԽոշաքն, և զիշխանն մեծ Շահնշահ, և զՋալալն Հասան՝ զտեր Խաչենոյ»⁴, այլ կերպ՝ հայոց ողջ ավագանուն:

Գոշավանքի :**ՉԹ**: (1260) թ. խնդրո բնագրի վկայության համաձայն, կարելի է հետևեցնել, որ թագուհի **Գոնցա խաթունը** դեռևս իշխանավոր է, գերեվարված չէ, այլապես թեմակալ Հովհաննես Արմանեցին չէր նշի վերջինիս անունը:

Նշյալ պատմական դեպքերը ներկայացնում է նաև վրաց սկզբնաղբյուրը մի փոքր ընդգրկուն տեղեկությամբ: Համաձայն աղբյուրի՝ թագուհի Գոնցան գերի է տարվել Հորդա. «Ավագի նախկին կին ու թագուհի Գվանցան ու նրա մանուկը մնացին Ուլոյի ձեռքում, որոնք գերի տարվեցին Հորդա»⁵: Թագուհի Գանցայի սպանությունը Պարտավ՝ Հորդայում⁶, պետք

¹ *Կիրակոս Գանձակեցի*, էջ 390:

² *Անդ*:

³ *Անդ*:

⁴ *Անդ*:

⁵ «*Վրաց ժամանակագրություն*» (1207-1318), *Թարգմանությունը՝ հին վրացերենից, առաջաբանը և ծանոթությունները՝ Պարոյր Մուրադյանի, Եր, 1971, էջ 116*:

⁶ «*Վրաց ժամանակագրություն*», էջ 119:

Է տեղի ունեցած լինի, ամենայն հավանականությամբ, «**գրույց-խտասկցությունից**»¹ առաջ², քանի որ մինչ «**հարցագրույցը**», տարեգիրը տեղեկացնում է, որ մոնղոլական արքունիքը, իլխան Հուլավուի (վրաց՝ Ուլու-Էջնի խան ՌԳ)³ գլխավորությամբ ցանկացել է «հաշտություն կապել»⁴ վրաց թագավորի հետ: Վրացական աղբյուրի համաձայն, մոնղոլական արքունիքը, ելնելով ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակից՝ հանդուրժող, խիստ բայրացկամ ու մեղմ վերաբերմունք է որդեգրել, ցանկանալով հաշտություն կնքել երկրորդ անգամ ապստամբած վրաց թագավորի հետ, ինչը զարմանալի ու տարակուսելի է: Խաղաղ հաշտությանը, վավերագրի համաձայն, ակներև է նպաստել են մոնղոլական արքունիքում մեծ հարգանք վայելող հայազգի Ենուք Արքունը⁵ և Հուլավուի ավագ տիկին, «Կոստանդնուպոլսի մեծ տիրակալի դուստրն»՝ Տոնդուգ-խաթունը⁶: Տարակուսելին այն է, որ, ըստ վավերագրի, իլխան Հուլավուն մտադրվել է ամեն գնով հաշտություն կնքել և պատվիրել է գերված թագուհի Գոնցային բանակցել ու համոզել ամուսնուն՝ վրաց թա-

¹ Անդ, «Թագավորի ու խանի **գրույցի** ժամանակ...չէր վերջացել **խտասկցությունը**...», էջ 121:

² Վրաց տարեգիրը հայտնում է, որ խանը հրաման է տալիս. «Իսկ դու **Ենուք, գնա** և թագավորի երկու որդիների՝ **Գեորգիի** ու **Դիմիտրեի, նաև թագուհի Գվանցայի հետ**, ինչպես որ դու և Տոնդուգ-խաթունը կկամենայիք, բայց բերեք Դավթին», Անդ, էջ 118:

³ Անդ, էջ 116:

⁴ Անդ:

⁵ Անդ, Ծանոթագրության մեջ անվանի հայազետ Պարույր Մուրադյանը վերջինիս մասին նշում է. «Դժվար է ասել, թե Ենուք Արքունը իրոք քաղկեդոնական դավանություն ուներ, բայց որ նա հայ ազգի էր, կասկածից դուրս է: Ինչպես նկատելի է վրաց տարեգիրը ակներևաբար «քաջատեղյակ» է, որ Արքունը հայ է, սակայն բնութագրում է նրան որպես «Քրիստոսի խաչը երկրպագող»՝ չնշելով վերջինիս ազգությունը: Ենուք Արքունի անունը գրված է վրաց ազնվականների ցանկում. տեքստը պատկանում է XVIII դ. վերջին: Անդ, էջ 117, 202 (67) հղում:

⁶ Անդ, էջ 117-118, 202, 67: Հուլավուի կնոջ անունը պատմիչ Հեթումի մոտ հետևյալ ձևով է՝ «Կինն Հուլաունի **Դուկոսսարոն** անուն **քրիստոնեայ** էր ի զարմե թագաւորաց եկելոց յարևելից տեսլեամբ»: **Հեթում պատմիչ**, էջ 46:

գավոր Դավթին գալ Հորդա. «Խանը նրան (**Գվանցային**) հրամայեց, որ մարդ ուղարկի թագավորի (ամուսնու) մոտ՝ հաշտություն կնքելու»¹: Տարեգիրի հավաստմամբ, բանակցություններն ընթացել են բացառապես վրաց թագավորի **«թելադրանք-պահանջով»**², ըստ որի, վերջինս պայմանավորվել է հանդիպել մոնղոլ ահարկու իլխան Հուլավուի հետ **միայն այն պայմանով**, որ իրեն տրվի բաադադ-հարկահան մոնղոլ Խոջա Ազիզը, որը, աղբյուրի հավաստմամբ, եղել է ապստամբության միակ հրահրողը: Դատելով սկզբնաղբյուրից՝ կարելի է եզրակացնել, որ բանագնացները քանիցս այցել են միմյանց, և իլխանը, ի վերջո, պատվիրել է Ենուք Արքունին՝ թագուհի Գոնցայի և թագավորի երկու որդիների՝ Գեորգիի ու Դեմետրեի հետ մեկնել Թ(S)փղիս և բերել վրաց թագավորին: Այդ դրվագի նկարագրությունից հետո այլևս չի հոլովվում Գոնցա թագուհու անունը: Ե՞րբ է կատարվել Ենուք Արքունի **երկրորդ, խիստ կարևոր առաքելությունը** Թփղիս, որի ընթացքում վերջինիս հաջողվել է համոզել վրաց թագավորին գնալու Հորդա՝ երկրորդ անգամ ապստամբելու մասին որոշակի տեղեկություններ պարզաբանելու համար, որի մասին ստուգապես հայտնում են վրացական և պարսկական աղբյուրները՝ խուսափելով հայտնել որևէ թվական: Մոցիլական կամ քաղաքական ինչպիսի՞ իրավիճակի փոփոխության պայման(ներ)ի առկայության դեպքում է կատարվել Գոնցայի սպանությունը, սկզբնաղբյուրները լռում են: Ուստի, պետք է եզրակացնել՝ եթե, ըստ Ռաշիդ-ադ-Դինի, Հուլավյանների և Ոսկե Հորդայի միջև պատերազմը տեղի է ունեցել 1262/3 թթ., ապա թագուհի Գոնցայի սպանությունն ակներևաբար պետք է տեղի ունեցած լիներ ավելի վաղ, ըստ վրացական աղբյուրի, բանակցության **երկրորդ փուլի ընթացքում**, երբ Ենուք Արքունին իր շքախմբով կրկին պետք է այցելեր

¹ «Վրաց ժամանակագրություն», էջ 116:

² Անդ, «Եթե խանը կամենում է ինձ ընդունել, ապա նրա մոտ կուղարկեմ իմ անդրանիկ որդի Գեորգիին, թող պարզնի իմ թագավորությունը, իսկ թագուհի Գվանցային ու որդուս՝ Դիմիտրեին, ուղարկի ինձ մոտ, նաև՝ Խոջա Ազիզին ինձ հանձնի, որպեսզի մահվամբ հատուցեմ նրա արարքները: Երբ հասան խանի մոտ, հավանեց թագավորի խոսքն ու որդի Գեորգիին պահանջեց», էջ 116:

Թփղիս¹: Սակայն, դատելով տարեգրի շարադրանքից՝ երկրորդ այցելության ժամանակ, շքախմբի անդամների մեջ² բացակայում է Գոնցայի անունը, որից կարելի է եզրակացնել, որ վերջինս այլևս ողջ չէր, սպանվել էր: Ինչպիսի՞ հանգամանքներում է սպանվել, սկզբնաղբյուրն որևէ տեղեկություն չի հաղորդում: Գուցե դեպքը կատարվել է 1261թ. վերջին կամ 1262 թ. սկզբին: Շատ հավանական է 1261-ին³:

Անվանի արևելագետ Մ. Բրոսեի կարծիքով, սպանության դեպքը տեղի է ունեցել 1262 կամ 1263 թթ., իսկ Ի. Ջավախիշվիլին, որի եզրահանգմանը ակներևաբար համակարծիք է պրոֆ. Պ.Մուրադյանը՝ 1262թ. մայիսի 14-ին⁴:

Մեզ անձանոթ է, թե ինչ աղբյուրից է օգտվել Ի. Ջավախիշվիլին, նշյալ պատմական իրողությունն անգամ թվագրելով ամսաթվով, սակայն, ամենայն հավականությամբ, գիտնականը օգտված կլինի պարսիկ

¹ Անդ, էջ 118:

² Ակներևաբար, վերադարձի շքախմբի անդամների մեջ է գուցե նաև Խոշաքը, որի անունը տարեգիրը չի հիշատակում:

³ Թվագրումը կատարվում է նկատի ունենալով Ստեփանոս Օրբելյանի հետևյալ թվագրված վկայությունը. «Իսկ եղբորորդին սոցա **Բուրթլն գնաց ընդ զօրս Հուլաուին ի պատերազմի ընդ Բերքայ դանին ի դաշտն Խազրաց** որ այժմ Խփչախք կոչին, և առ մեծ գետովն գոր **Թերզ (Տերեկ) կոչեն, սպանանի ի պատերազմին յ710 թուին», Ստեփանոս Օրբելյան, էջ 416: Անհամոզիչ է, որ պատմիչը կսխալվեր հորեղբոր որդու մահվան տարեթիվը նշելիս: Ասել կուզի, մինչ **Թերզ (Տերեկ)** գետի ճակատամարտը Գոնցան արդեն սպանվել էր:**

⁴ «Վրաց ժամանակագրություն», էջ 203, 71 հղում: Նշելի է նաև, որ տարեգիրը հայտնում է, թե Դավիթ թագավորի ավագ որդին՝ Գեորգին, **Պարտավ-Հորդայում** մնացել է մեկ տարի. «Պատվելին (Գեորգին) **մնաց այնտեղ մի տարի, որին խանը նրա ողջ թագավորությունը շնորհեց», Անդ, էջ 117: Եթե տարեգրի հայտնած տեղեկություններն իրատեսական են, ապա բանակցությունը տևել է բավականին երկար: Հ. Մանանդյանը Տերեկ գետի մոտ եղած ճակատամարտը դնում է 1263թ. հունվար ամսին և անճշտություն է նկատում Սյունյաց պատմիչի վկայության մեջ. «Բուրթլեի սպանությունը Ստեփանոս Օրբելյանի մոտ սխալմամբ ցույց է տրված «ի710 թուին»: Հ. Մանանդյան, Երկեր, հ, Գ, էջ 252: Մենք չենք վիճարկում ակադ. Հ. Մանանդյանի կարծիքը, սակայն երկմտելի է, որ Ստեփանոս Օրբելյանը կսխալվեր հորեղբոր որդու զոհվելու տարեթվի արձանագրման հարցում:**

հեղինակ Ռաշիդ-ադ-Ղինի տեղեկությունից, քանի որ վերջինս Թ(S)երեք գետի վրա եղած ճակատամարտը դնում է 1262/63 թթ. («В пятницу 23 числа месяца муьаррама 661 года (7 XII 1262,. . 7 XII 1262) **вышел указ**, чтобы все войска, вооружившись, **двинулись в путь**»)¹ (Մուարամա ամսի 23-ին 661 թ. հրապարակվեց հրաման, որ ողջ զորքը զինվի և արշավի ելնի):

Այսպիսով, ինչպես նկատելի է, ակնհայտ է, որ թագուհի Գոնցան սպանվել է Հորդայում, ակներևաբար 1261 թ. վերջին կամ 1262 թ. սկզբին, ըստ աղբյուրների՝ առեղծվածային պայմաններում:

References

1. Acharyan Hr. Armenian Personal Name Dictionary, vol., G, Yerevan, 1946. (in Armenian).
2. Divan of Armenian lithography, book, VI, comp. Avagyan S. A., Janpoladian Hr. M., Yer., 1977. (in Armenian).
3. Divan of Armenian lithography, book IX, compiled by Barkhudaryan S., Ghafadaryan K., Saghumyan S., Yerevan, 2012. (in Armenian).
4. Georgian Chronology (1207-1318) Translation from ancient Greek, introduction and introduction by Paruyr Muradyan, Yerevan, 1971. (in Armenian).
5. Ghafadaryan K., Hagbat, architectural structures and stone inscriptions, Yerevan, 1963. (in Armenian).
6. Ghafadaryan K., Hovhannavank and its inscriptions, Yerevan, 1948, p. 103. (in Armenian).
7. Hakobyan T. Ts., Melik-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh., History of Armenia, vol. 1, Yerevan, 1986. (in Armenian).
8. Kartlis Tskhovreba, Tbilisi, ARTANUJI Publishing House, 2008. (in Russian).
9. Kirakos Gandzaketsi, History of Armenians, Yerevan, 1971. (in Armenian).
10. Manandyan H., Yerker, Yerevan, 1953. (in Armenian).
11. Melikset-Bek L., Georgian sources about Armenia and Armenians, Vol. 3, Yerevan, 1955. (in Armenian).
12. Michael Chamchyan, Armenian History, Vol. 3, Yerevan, 1984. (in Armenian).
13. Rashid ad-Din, Collection of chronicles, vol. III, M-L, 1946. (in Russian).
14. Sanahin monastery memorial (Sanahin Keotuk), work: P. Muradyan, S. Etchmiatsin, 2007. (in Armenian).
15. Small chronicles of the XIII-XVIII centuries, no. I, comp. Hakobyan V. A., Yerevan, 1951. (in Armenian).
16. Stepanos Orbelyan, History of the House of Sisakan, Tiflis, 1912, page 412. (in Armenian).

¹ *Рашид-ад-Дин, Сборник летописей, т. III, М-Л, 1946, рус перевод Арендса, с. 59, 60:*

ՀՏԴ 93.94

**ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՎԵՐԱՀԻՄՆՈՒՄՆ ՈՒ
ԸՆԹԱՑՔԸ XI-XV ԴԴ.**

Աշոտ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, պ. գ. թ., ՀՀ
ashot.manucharyan.1959@mail.ru

Շիրակի թեմը Հայոց անդրանիկ 12/13 եպիսկոպոսություններից մեկն էր, թեմակալը՝ Արսուկեսը: Այն հիմնել էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Վերջինիս թեմական նոր բաժանմամբ՝ Շիրակի անկախ թեմը վերացվել է. այն միացվել է Արշարունիքի եպիսկոպոսությանը: Վաղ ժամանակներում թեմի հոգևոր սահմանները որոշվում էին աշխարհիկ վարչական-ավատատիրական բաժանմանը համապատասխան: Իսկ Շիրակ և Արշարունիք գավառները մինևույն Կամսարական տան տիրություններն էին: Շիրակն Արշարունյաց եպիսկոպոսության կազմում մնացել է մինչև XI դ. կեսեր:

Շիրակի եպիսկոպոսությունը հիմնադրվել է (ըստ էության վերահիմնվել) 1072 թ. և գործել մինչև XV դ. կեսեր: Թեմանիստ կենտրոնը եղել է Անիի Ս. Առաքելոց եկեղեցին: Շիրակի թեմում որպես աթոռակալի օգնական և հաջորդ եղել է երկրորդ՝ աթոռակից եպիսկոպոս:

Բանալի բառեր՝ Շիրակ, Անի, թեմ, եպիսկոպոսություն, եպիսկոպոս, կաթողիկոս, սկզբնաղբյուր, վիմագիր:

REFOUNDATION OF THE DIOCESE OF SHIRAK AND ITS ACTIVITIES IN THE XI-XV CENTURIES

Ashot MANUCHARYAN

Institute of Archeology and Ethnography of NAS RA, PhD in History, Armenia
ashot.manucharyan.1959@mail.ru

The Shirak diocese held a significant historical position as one of the earliest Armenian bishoprics, dating back to the first 12 or 13 Armenian bishoprics. The inaugural diocesan leader was Arsukes, and it was established by St. Gregory the Illuminator. However, at a later point in time, Shirak was integrated into the Bishopric of Arsharunyats, where it remained until the middle of the 11th century.

Subsequently, the Shirak bishopric was reestablished in 1072 and continued to function until the mid-15th century. The focal point of this diocese was the Church of the Holy Apostles located in the capital city of Ani. Within the Shirak diocese, a second bishop served as an assistant to and successor of the diocesan head, eventually assuming the role of diocesan bishop. Primary sources, primarily derived from lapidary inscriptions, have preserved the names of over a dozen and a half bishops who led Ani-Shirak. Many of them belonged to the Pahlavuni Apirat family, with Barsegh Anetsi notably ascending to the position of Catholicos of All Armenians from 1105 to 1113.

The leaders of the Shirak diocese held a prominent position within the Armenian Church and played a substantial role not only in the spiritual life of Ani and Shirak but also in the spiritual life of Armenia and the Armenian Cilician kingdom. These leaders contributed to the construction of churches, the restoration of damaged monasteries, and the elimination of church taxes. An intriguing historical note is that in 1216, Bishop Gregory I abolished a tax for the deceased, amounting to 11 drams, which had been imposed equally on both the wealthy and the less affluent.

Furthermore, an inscription from Archbishop Gregory II in 1277 attests to the existence of gender equality in medieval Armenia, as it stipulated that in the event of divorce, the divorced party, whether male or female, was obligated to transfer $\frac{1}{4}$ of their property to the other party. During the period of the Shirak bishopric, particularly in the 13th century, the monasteries and churches of Shirak experienced a period of prosperity and growth.

Key words: Shirak, Ani, diocese, episcopate, bishop, Catholicos, primary source, inscription.

ПЕРЕОСНОВАНИЕ ШИРАКСКОЙ ЕПАРХИИ И ЕЕ ДЕЯТЕЛЬНОСТЬ В XI-XV ВВ.

Ашот МАНУЧАРЯН

институт археологии и этнографии НАН РА, к.и.н., Армения
ashot.manucharyan.1959@mail.ru

Ширакское епископство было основано (переосновано) в 1072 году и функционировало до середины XV в. Центром епархии была церковь Св. Апостолов в столице Ани. В Ширакской епархии, как помощник и преемник главы епархии существовал второй епископ, который позже стал епархиальным. Из первоисточников, в основном из лапидарных надписей, известны имена более полутора десятков епископов Ани-Ширака. Они были в основном из рода Апиратов Пахлавуни. Среди них Барсег Анеци стал Католикосом всех армян (1105-1113 гг.). Главы епархии Ширака занимали видное место в Армянской Церкви. Они играли большую роль не только в духовной жизни столицы Ани и Ширака, но и в духовной жизни Армении и Армянского Киликийского царства. Главы епархии Ширака строили церкви, восстановили разрушенные монастыри, отменили церковные налоги.

Ключевые слова: Ширак, Ани, епархия, епископство, епископ, католикос, рукоположение, первоисточник, надпись.

Նախաբան. Շիրակի թեմը Հայաստանի 12-13 հնագույն եպիսկոպոսություններից մեկն է, որը հիմնադրել է Ս. Գրիգոր Լուսավորիչը, երբ Կեսարիայում ձեռնադրվելուց հետո վերադարձել և երկրում ստեղծել է անդրանիկ նվիրապետությունը¹: Ազաթանգեղոսի «Պատմութեան» հունարեն

¹ Տե՛ս **Ղազարյան Ա.**, Հայ եկեղեցու թեմական բաժանումը IV դարում, «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1996, № 1-2, էջ 193:

խմբագրությունում որպես 10-րդ եպիսկոպոսություն հիշատակվում է Շիրակը՝ թեմակալ Արսուկեսի գլխավորությամբ¹: Նույնի հայերեն բնագրում Արսուկեսը իններորդ եպիսկոպոսն է, իսկ գավառը վկայված չէ²: Ավելի ուշ Գրիգոր Լուսավորիչն աթոռակալ թեմերի թիվը հասցրել է 30-ի՝ ըստ Ուխտանեսի³ (որը նաև հանվանե թվարկում է բոլոր գլխավոր եպիսկոպոսությունները), կամ 36-ի, ինչպես վկայում է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը⁴՝ առանց անվանանշեղու դրանք⁵:

Թեմական նոր բաժանման ուխտանեսյան անվանացանկում արդեն Շիրակը բացակայում է, բայց փոխարենը ցուցակում կա Արշարունիքի եպիսկոպոսություն, որը 17-րդ աթոռն է⁶: Այդ վիճակի հոգևոր իրավասությունը պիտի տարածվեր նաև Շիրակի վրա, քանի որ վերջինս Արշարունիք (Երասխաձոր) գավառի հետ միասին կազմում էին միննույն Կամսարական տան տիրույթները, որոնք այդ նախարարական տոհմին շնորհել էր Տրդատ Մեծը (286-330)⁷: Իսկ եպիսկոպոսությունը կոչվեց Արշարունիքի այն պատճառով, որ իշխանության կենտրոնը՝ Մարմետը (Երվանդաշատը), գտնվում էր այդ գավառում⁸: Բ. Հարությունյանի պարզաբան-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 194:

² Տե՛ս **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն / Քննական բնագիրը Գ. Տեր-Սկրտչյանի և Ս. Կանայանցի: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի/, Եր., 1983, էջ 470, 471:

³ Տե՛ս **Ուխտանես եպիսկոպոս**, հատուած Ա, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 100: Ուխտանեսը նշում է, որ գավառների առաջնորդներ կարգվեցին ևս 370 եպիսկոպոսներ (տե՛ս նույնը), որոնք իրականում քորեպիսկոպոսներ էին:

⁴ Տե՛ս «Պատմութիւն նահանգին Միսական», արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 25:

⁵ Տե՛ս **Ղազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 203:

⁶ Տե՛ս **Ուխտանես**, նույն տեղում, էջ 100:

⁷ Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն / Քննական բնագիրը՝ Ս. Արեղյանի և Ս. Հարությունյանի: Աշխարհաբար թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյանցի: Եր., 1981, էջ 295:

⁸ Տե՛ս **Կոզեան Ա.**, Կամսարականները «Տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 22:

մամբ՝ «Ուխտանեսի եպիսկոպոսական ցուցակը հավաստում է, որ թեմական աթոռները ստեղծված են ավատատիրական վարչական բաժանմանը համահունչ»¹:

Շիրակն Արշարունյաց եպիսկոպոսության կազմում մնացել է միջև XI դ. կեսեր:

Շիրակի թեմի վերահիմնումը և ընթացքը XI-XII դդ.: Ըստ Կ. Մաթևոսյանի՝ «Անիի և Շիրակի եպիսկոպոսությունը հիմնվել է 1072 թ. Բարսեղ Ա Անեցու ձեռնադրությամբ և հարատևել է մինչև ԺԵ. դարի սկզբները»²: Այս առիթով Մատթեոս Ուռհայեցին հայտնում է. «Եւ այնժամ Տէր Գրիգորիս գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց՝ որ կոչի Անի, և անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զԲարսեղն՝ զքեռորդին իւր՝ զորդի Վասակայ որդւոյ Ապիրատին՝ որդւոյ Հասանայ»³: Մ. Օրմանյանի հավելմամբ՝ Բարսեղ Անեցի եպիսկոպոսն օժտվել է «ընդարձակ իշխանութեամբ հսկողութեան Հայաստանի գաւառներու վրայ, իբր կաթողիկոսական փոխանորդ, բայց ոչ դեռ իբրև կաթողիկոս կամ աթոռակից. զի անագան բարձրացաւ Բարսեղ այդ աստիճանին»⁴: Դա տեղի ունեցավ 1081 թ. Տաշիր-Չորագետի թագավոր Կյուրիկե Ա. Բագրատունու (1048-1089) գլխավորությամբ գումարված Հաղբատի եկեղեցական ժողովում, որտեղ Անի-Շիրակի եպիսկոպոս Բարսեղ Պահլավունի-Ապիրատյանի ձեռամբ Աղվանից Ստեփանոս Ա. հայրապետի օժվեց բուն Հայաստանի կաթողիկոս (1081-1105), իսկ իր քեռի Գրիգոր Բ. Վկայասերի (1066-1105) մահից հետո դարձավ Ամենայն հայոց հովվապետ՝ Բարսեղ Ա. Անեցի (1105-1113)՝ հաստատվելով Շուղրի Կարմիր վանքում: Իսկ Շիրակում որպես եպիսկոպոսներ շարունակում էին

¹ **Հարությունյան Բ.**, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում, ՊԲՀ, 2000, № 2, էջ 112:

² **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մ. Էջմիածին, 1997, էջ 101:

³ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն (Գրաբար բնագիրը՝ Մ. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միքայելյանի: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Հ. Բարթիկյանի), Եր., 1991, էջ 226:

⁴ **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Ա., Մ. Էջմիածին, 2001, ս. 1507:

պաշտոնավարել Պահլավունիներից մայրական կողմով ընձյուղված Ապիրատյան տոհմի ներկայացուցիչները՝ աթոռանիստ ունենալով Անի մայրաքաղաքը: Նրանց՝ Արևելյան Հայաստանի հոգևոր կյանքում խաղացած բացառիկ առաջատար դիրքն է ընդգծում Մ. Օրմանյանը, որին հղում է կատարում Կ. Մաթևոսյանը. «Անույ արքեպիսկոպոսները լիագոր իշխանութամբ գլխավորութիւնը կը պահէին բոլոր Հայաստանի մէջ եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ կոչմամբ եւ միայն մեծագոյն իրողութեանց մէջ յարաբերութիւն ունէին Հռոմկլայի աթոռին հետ»¹:

Անի-Շիրակի թեմակալների հիշատակությունների առավելապես հանդիպում ենք վիմագրություններում:

Այսպես, Անիի Առաքելոց եկեղեցու գավթի մի անթվակիր, անչափ հետաքրքրական արձանագրությունում ՄԽԻԹԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՂ ՏԵՂԵՐԷՑԻՆ հայտնում է, որ լԻՂ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԻՍ ԵԻ ՅԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՍԱՐԳՍԻ ԵԻ Ի ՄԵԼԻՔՈՒԹԵԱՆ ՓԱԽՐԱԴԻՆԻՆ, Ի ՅԱՍՄԱՆԷ ՇԱՐԺԻ ԱԻՈՒՐՔՍ, ԲԱՐՁԱՔ

ԶԿԻՐ¹ Ա¹ ԿԷԻ ՎԱՃԱՌՆ Ի ՓՈՂՈՑԷ...²:

Արձանագրության ժամանակը որոշվում է Անիի սելջուկյան տիրակալ Փախրադինի հիշատակությամբ: Նա՝ ալ-ամիր ալ-խարասալար **الإسباسلار الأمير شداد فخرالدین**, Անի մայրաքաղաքում, ըստ

¹ Նույն տեղում, ս. 1784: **Մաթևոսյան Կ.**, *Անի-Շիրակի պատմության էջեր*: Եր., 2010, էջ 52:

² «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Եր., 1966, էջ 24: Այսուհետև՝ Դիվան, պր. I և էջը: Բնավ չուզենալով հակադրվել Կ. Մաթևոսյանին, որն այս Փախրադինին նույնացնում է 1277 թ. վիմագրի համանուն գործչի հետ (տե՛ս **Մաթևոսյան Կ.**, *Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը*, էջ 80), կարծում ենք՝ արձանագրությունում հիշատակվողը Անիի սելջուկ տիրակալն է, քանի որ նրա իշխանությունն Անիում կոչված է մելիքություն, այսինքն՝ թագավորություն (ծագում է արաբ. مالک «մալիք» բառից, որ նշանակում է թագավոր): Մինչդեռ մայրաքաղաքի 1277 թ. վիմագրում Փախրադինը վկայված է սոսկ որպես պատրոն (տե՛ս նույն տեղում, էջ 15): Բացի այդ, աղբյուրներում 1132-1319 թթ. չի նշվում ուրիշ երկրաշարժ Անիում (Տե՛ս **Ստեփանյան Կ.**, *Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակալքում*: Եր., 1964, էջ 56-63):

տեղի արաբերեն վիմագրի, հրամայել է կառուցել դարպասներ¹: Հ. Մարգարյանի պարզաբանմամբ՝ սա նույն այն կառավարիչն է, որին Անիի քրիստոնյա բնակիչները՝ հայերը, 1155թ. ապստամբելով, տապալեցին և փոխարենն ամիրա հաստատեցին նրա եղբորը՝ Փալտունին, սակայն 1161թ. անեցիները սրա դեմ նույնպես ըմբոստացան՝ արտաքսելով քաղաքից²:

Վերևի հայերեն անթվակիր վիմագրում Մխիթար եպիսկոպոսն ակնարկում է երկրաշարժի մասին, որի ընթացքում կիրակի օրերին վաճառքը փողոցից վերացրել են: Վարդան Ստեփանյանը բացահայտում է, որ տեղի է ունեցել «1132 թ. ուժեղ կործանիչ երկրաշարժ **Անիում**, որի հետևանքով փլվում է մեծ ու շքեղ Ամենափրկիչ եկեղեցին»³: Արձանագրությունից հայտնի է, որ այդ եկեղեցին կառուցել է Հայոց մարզպան Աբղղարիբ Պահլավունին 1036 թվականին⁴:

Հասկացվում է, որ Մխիթար եպիսկոպոսը Արագածոտնի Տեղեր (Դղեր) գյուղից է, որը փաստորեն հայտնի է եղել նախքան տեղում Մամախաթուն Վաչուտյան իշխանուհու կողմից նշանավոր Ս. Աստվածածնի վանքի հիմնումը՝ 1213-1232 թթ.: Բացի այդ, արձանագրությունը փաստում է, որ արդեն XII դ. կեսին Անիում նստում էր երկու եպիսկոպոս, մեկը՝ գլխավորը, որը Պահլավունի-Ապիրատյան տոհմից էր, տվյալ դեպքում՝ Տ. Սարգիսը, Անիի և համայն Շիրակի համար, մյուսը (մեր օրինակում Մխիթար Տեղերեցին)՝ Անիի քաղաքի:

Սարգիս եպիսկոպոսը հիշատակվում է նույն Ս. Առաքելոց եկեղեցու մեկ ուրիշ անթվակիր արձանագրությունում ևս: Այն իրավական բնույթի արձանագրություն է՝ վճիռ, որով թեմակալը մայրաքաղաքի ԻԲԻՑԱՆՈՒՍ

¹ Տե՛ս *Վաչագրյան Ա.*, *Корпус арабских надписей Армении VIII-XVI вв.*. Ер., 1987, էջ 54:

² Տե՛ս *Մարգարյան Հ.*, *Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր*: Եր., 1980, էջ 98:

³ *Ստեփանյան Վ.*, նշվ. աշխ., էջ 56:

⁴ Տե՛ս *Դիվան, պր. I*, էջ 44-45:

կարգադրում է Անի եկած և բնակություն հաստատածների զավակներից, լինի թ¹ է¹ ԴՈՒՍՏՐ ԹԷ ԿՏՐԻՃ, ՊՍԱԿ/Ո լՌԷՀՄԱՆ՝ ՉՈՒԶԷ¹:

Միջնադարում պսակի համար քահանային ընծայում էին 30 դահեկան²: Այդ հրամանով ըստ էության Անի-Շիրակի թեմակալը խրախուսում էր 1132 թ. երկրաշարժից մեծապես տուժած մայրաքաղաքի բնակեցումն ու բնակչության աճը:

Անիի Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային պատի վրա կա խազագիր մի վկայություն, որտեղ 1156 թ. հիատակվում է. «Տր/ Ներս/ես, անապ/ատին իպիսկ/ապոս/. :ՈԵ: թվին»³:

Կ. Մաթևոսյանը միանգամայն տրամաբանորեն նկատում է, որ խազագրություն կրող քարը Ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային պատին վերաշարվել է մի ավելի վաղ կառույցից և տարակուսում. «Արդյո՞ք մինչև հիշյալ անապատ տեղափոխվելը Անիի եպիսկոպոս չի եղել: Ցավոք, լրացուցիչ փաստերի բացակայությունը թույլ չի տալիս այս հարցում որոշակի եզրակացության հանգել»⁴:

Սակայն նկատենք, որ Ներսես անունը հատկանշական էր Պահլավունի-Ապիրատյանների համար, և ինքն էլ ժամանակակից է իր կիլիկյան համանուն հավանական ազգականին՝ Շնորհալուն:

Արդեն Անիի 1160 թ. արձանագրությունում հայրապետ՝ եպիսկոպոս է հիշատակվում Տեր Բարսեղը⁵: Հռոմոսի ՈՒԳ (1174) նվիրատվական վիմագիրն սկզբնամասում հայտնում է. «Ի հայրապետութեան

¹ Նույն տեղում, էջ 25: Վերծնությունում բացակայում է ՌԷՀՄԱՆ բառը: Այն ծագում է արաբ. رحمان (ռահման) բառից և նշանակում է «բարեգթություն», «գթություն», «ողորմածություն»:

² Տե՛ս **Մանուչարյան Ա.**, Հայոց եկեղեցու պատմության վիմագրագիտական-պատմագիտական ուսումնասիրություններ: Եր., 2019, էջ 118:

³ Դիվան, պր. I, էջ 64:

⁴ **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 326-327, ծանոթ. № 19:

⁵ Տե՛ս Դիվան, պր. I, էջ 2:

նահանգիս մերում տն Բարսղի¹: Կ. Մաթևոսյանի գնահատմամբ՝ Անիի արքեպիսկոպոսը Հյուսիսային Հայաստանի եպիսկոպոսական մյուս աթոռների նկատմամբ առաջնայնություն է ունեցել², ինչպես ասվել է վերը: «Այդ Բարձր դիրքը վկայվում է նաև Հռոմկլայի 1178 թ. ապրիլի եկեղեցական ժողովի փաստաթղթի տակ Շիրակի թեմակալ Բարսեղի ստորագրության՝ երրորդը լինելու փաստով (Հայոց և Աղվանից կաթողիկոսներից հետո)»³, որը Կ. Մաթևոսյանի եզրահանգմամբ՝ «ակներևորեն ցույց է տալիս Անիի արքեպիսկոպոսի գրաված բացառիկ դիրքը»⁴:

Տեր Բարսեղ Ապիրատյան արքեպիսկոպոսը հիշատակվում է նաև Անիի Ս. Առաքելոց եպիսկոպոսանիստ եկեղեցու ՈԻԹ (1180) թվականի վճռագրում⁵, Լմբատավանքի 1191 թ. վիմագրում, որտեղ հայտնում է, ՈՐ ԳՆԵՑԻ ԶՎԱՆՔՍ ԵՒ ԱԶԱՏԵՑԻ ՅԱՆԱԻՐԻՆԱՅ ԵՒ ԵՏՈՒ ԶՑԻՑՔՆ ՎԱՆԻՑՍ ԵՒ ԶԶՈՒՐՆ, ՈՐ ԻԻՐՍ ԷՐ Ի ՀՆՈՑ ԼԵԱԼ...»⁶: Ըստ Կ. Մաթևոսյանի՝ Տեր Բարսեղ Ապիրատյանը Ամենայն հայոց կաթողիկոս «Բարսեղ Ա Անեցու եղբայր Գրիգոր իշխանի որդի Հասան մագիստրոսի որդին է»⁷, որը սելջուկներից գնելով Լմբատավանքը՝ վերականգնել է վանքի եկեղեցական-ավատատիրական իրավունքները: Ցիցք գյուղը, ըստ հնագիտական հետազոտությունների, գտնվել է վանքից 0,5 կմ դեպի հարավ-արևմուտք, սարահարթի վրա, Պեմզաշեն գյուղ տանող կարճ ճանապարհի եզրին⁸:

¹ Վիմական տարեգիր, էջ 32: **Կարապետյան Ս.**, Հոռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, «Վարձք», 2021, № 15, էջ 6:

² **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 63:

³ **Սանուչարյան Ա.**, Հայոց եկեղեցու պատմության վիմագրագիտական-պատմագիտական ուսումնասիրություններ, էջ 113-114:

⁴ **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 65-66:

⁵ Տե՛ս Դիվան, պր. I, էջ 12:

⁶ «Դիվան հայ վիմագրության», պրակ X, Շիրակի մարզ, կազմեց Ս. Բարխուդարյան, Եր., 2017, էջ 69: Այտուհետև՝ Դիվան, պր. X և էջը:

⁷ **Մաթևոսյան Կ.**, նույն տեղում:

⁸ Տե՛ս Դիվան, պր. X, նույն տեղում:

Բարսեղ արքեպիսկոպոս Ապիրատյանն այն աստիճան է հզորացել, որ արդեն Անիի Ս. Ամենափրկիչ եկեղեցու ՈւԲ (1193) թվի արձանագրությունում հանդես է գալիս որպես Հայոց կաթողիկոս¹, «ինչն արդյունք էր արևելյան վարդապետների և Կիլիկիայի հոգևորականության կաթողիկամետ շրջանակի միջև տարաձայնությունների»²: Կ. Մաթևոսյանի պարզաբանմամբ՝ «Երբ 1193 թ. մահանում է Գրիգոր Տղան (Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Դ. Տղա՝ 1173-1193՝ Ա.Ս.), Հայաստանում առաջ է քաշվում Բարսեղ Անեցու թեկնածությունը, բայց այն ընդունելություն չի գտնում կիլիկեցիների մոտ»³: Հռոմոսի 1195թ. կանոնական արձանագրությունն սկսվում է. «Ի թւ(ին) ՈւԲ (1195) յառաջին ամն կաթողիկոսութե(ան) տն Բարսղի»⁴:

Հայրապետ Տեր Բարսեղը հիշատակվում է նաև Հռոմոսի և Տայլարի 1198 թ. վիմագրերում⁵:

Շիրակի թեմը XIII դարում

«Բարեբախտաբար, Հայոց հայրապետական աթոռի պառակտումը վերացավ Բարսեղ Բ. Անեցու մահվամբ՝ XIII դ. սկզբին, որից հետո Ջաքարե ամիրսպասալարն արգելեց Հայաստանում կաթողիկոս ընտրել՝ ի շահ նվիրապետական միասնականության»⁶:

Արդեն Լոռեի 1204/7 թ. ժողովի մասնակիցների մեջ հիշատակվում է «Մարգիս աթոռակալ Անույ»⁷: Նա մինչ այդ եղել է Հռոմոսի վանքի միաբան և իր հորեղբոր հետ հիշվում է տակավին 1187 թ.-ին նույն ուխտի

¹ Տե՛ս Դիվան, պր. I, էջ 47:

² Մանուչարյան Ա., նշվ. աշխ., էջ 114:

³ Մաթևոսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 54:

⁴ Վիմակն տարեգիր, էջ 32: Գարսապետյան Ս., Հռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, էջ 6:

⁵ Տե՛ս Կարապետյան Ս., նույն տեղում, էջ 7, Վիմակն տարեգիր, էջ 42:

⁶ Մանուչարյան Ա., նշվ. աշխ., էջ 114:

⁷ Գիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961 էջ 172:

Հովհաննես գրչի ձեռագրում. «Ի հայրապետութեան տէր Բարսղի եւ եղբարորդոյ նորա *աստուածարեալ* մանկագոյն քահանայի Սարգսի»¹: Բագնայրի ՈՄԸ (1209) նվիրատվական արձանագրությունը մանրամասնում է, որ Տեր Սարգիս Բ.-ը Բարսեղ Բ. Անեցու Ապիրատ եղբոր որդին է²: Նա որպէս «վերադիտող ի մայրաքաղաքին Անո» հիշատակվում է Բագնայրի 1210 թ. վիմագրում³: Սարգիս եպիսկոպոսը վերջին անգամ հիշվում է Անիի Ս. Առաքելոց եկեղեցու ՈԿԹ (1220) թ. վիմագրում, որով վճռում է, որ իրիցակնոջ վախճանվելու դեպքում աթոռին հարկ չտան: Տ. Սարգիսը ապահարկությունից հետո սահմանում է. ԵՒ ՉԱՅՍ ԵՒՍ ՆԱՍՍՍԵՅԱՔ ՈՐ Չ՝ՈՒՆ՝Ի ՀՐԱՄԱՆ Ի ԲԱՆԷ ԱՅ. «ԵՊ՝ԻՄԿՈՊՈՍ ՈՐ ԱՅԺՄ ԵՒ ԿԱՍ ՉԿՆԻ ՄԵՐ/ ՅԱԻԳՆՈՒԹԻՒՆ ՅՈՒԶԷ»⁴: Այս վերջին հատվածը Կ. Մաթևոսյանը բացատրում է. «Սարգիսը, որպէս առաջնորդ, խոսում է մեկ ուրիշի՝ իր ժամանակի եպիսկոպոսի մասին՝ շեշտելով, որ նա իրավունք չունի հարկն ուզել: Մեր կարծիքով, այդ եպիսկոպոսը հենց երեցապետ եպիսկոպոսն է՝ Ապուղամբի որդի Գրիգորը»⁵: Ապա այստեղից եզրակացնում է, որ «ԺԳ դարում Անիի բարձրագույն հոգևոր իշխանությունը եղել է երկաստիճան (կարելի է նաև ասել՝ երկիշխան)՝ ունենալով **հոգևոր առաջնորդ և երեցապետ եպիսկոպոս**»⁶: Երեցապետը նաև փոխանորդ եպիսկոպոսն է⁷:

Ամենայն հավանականությամբ, եղբորորդին՝ Տեր Գրիգորը, մինչև հորեղբորն աթոռակցելը, եղել է Անիի մոտ գտնվող Արջո Առիճի հոգևոր առաջնորդը, ինչը հուշում է տեղի 1213 թ. նվիրատվական արձանագրությունը⁸: Թվակիր արձանագրություններից Տեր Գրիգորը հիշվում է Բագ-

¹ *Մաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 104:*

² *Վիմական տարեգիր, էջ 49: Բասմաջեան Կ., Հայերէն արձանագրութիւնք Անոյ, Բագնայրի եւ Մարմաշինու: Պարիս, 1931, էջ 361-362:*

³ *Վիմական տարեգիր, նույն տեղում, էջ 50: Բասմաջեան Կ., նույն տեղում, էջ 364:*

⁴ *Դիվան, պր. I, էջ 17:*

⁵ *Մաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 80:*

⁶ *Նույն տեղում, էջ 81:*

⁷ *Տե՛ս նույն տեղում:*

⁸ *Տե՛ս նույն տեղում, էջ 77:*

նայրի 1215 թ. երկու վիմագրերում¹: Հաջորդ՝ 1216 թ. առաջնորդն Անիի Վրացական եկեղեցու հայերեն վիմագրում իրեն կոչում է. «ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ԻՐԻՑԱՊԵՏ ԵՊԻՄԿՈՂՈՍ»², իսկ այդ թվականի մայրաքաղաքի Ս. Առաքելոց տաճարի իրավական բնույթի ուշագրավ արձանագրությունում հայտնում է. ՇՆՈՐՀԻԻՆ ԱՅ. ԵՍ ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ԱՊՈՒՂԱՄՐԻ/ԺԱՌԱՆԳՈՐԴ ՍԵՓՉԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻ ԱԹՈՌՈՅՍ ՄՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԱՆԻՈ, ԱՐՀԻԵՊԻՄԿՈՂՈՍ ԱՅՍՍ ՆԱՀԱՆԳԻ, ԹՂՈՂԻ ՋԱՐԿՆ ՀՈՂԳՈՅՍ ԶՈՐ Ի ՍԿԶԲԱՆԷ ՍԱՀՄԱՆ ԷՐ ՅԱՄԵՆԱՅՆ ՍԵՌԵՆԷ :ԺԱ: (11) ԴՐԱՍ ՏԱԼ Ի ՓԱՐԹԱՄԱՅ ԵԻ ԱՂՔԱՍԱՅ...³:

Պարզվում է, որ XIII դարակազմի եղել է հոգու հարկ, որը մեռելի համար հավասարապես գանձվել է հարուստներից և աղքատներից: Այն կազմել է 11 դրամ և սահմանված է եղել վաղուց, գուցե սելջուկյան տիրապետության ժամանակներից: Եվ հիմա Անի-Շիրակի թեմակալ Գրիգոր Ապիրատյանն ընդմիջտ վերացնում է այն. ԲԱՐՁԻ ԶԱՅՍ ՀԱՐԿՍ ՅԱՄԵՆՈՒՍ ՄԻՆՂԵԻ Ի ԿԱՏԱՐԱԾ ՅԱԻԻՏԵՆԻՍ⁴:

Արձանագրությունների հետագա ժամանակագրությունից երևում է, որ Գրիգոր եպիսկոպոսը բնակչությանը եկեղեցական այլ հարկերից էլ է ազատել՝ թեթևացնելով մարդկանց հարկային բեռը: Անիի նույն Ս. Առաքելոց եկեղեցու ՈԿԶ (1217) թ. արձանագիր վճռում այրոռակալը սահմանում է. ԵՍ ՏԵՐ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ԱՊՈՒՂԱՄՐԻ, ԱՐՀԻԵՊԻՄԿՈՂ/ՈՍ, ԿԱՄԵՅԱՔ ԱՌՆՈՒԼ ԶԵՂ/ԵԱԼ ՀԱՐԿ Ի ՄԵՐ ԳԱԻԱՌԷՍ ՇԻՐԱԿԱՅ, ԵԻ Ի ՔԱՂԱՔԻՍ ԵԿԵՂԵՑԵԱՅՍ Ի ՅԱՆՈՅ. ԶԻ ՍԱՀՄԱՆ ԷՐ Ի ՍԿԶԲԱՆԷ ՅԱՄԵՆԱՅՆ ԳԵՂԷ ԵՐԿՈՒԴՐԻԻ ՀԱՅ ՅԱԹՈՌՈՍ ՏԱԼ, ԵԻ Ի ՔԱՂԱՔԻՍ/ԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՍ ՄՈՐԹԻ ՄԻՆ ԶԱՏԿԻՆ ՏԱԻՆ...⁵:

¹ Վիմական տարեգիր, էջ 57: *Բասմաջյան Կ.*, նշվ. աշխ., էջ 368:

² Դիվան, պր. I, էջ 61:

³ Նույն տեղում, էջ 14:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 16:

Այս վկայությանն անդրադառնալով՝ Ռաֆիկ Վարդանյանը հաշվարկել է, որ որպես աթոռահարկ յուրաքանչյուր գյուղից վերցված երկու գրիվ հացը կազմել է «17,28 կգ և 23,07 լիտր ցորեն»¹:

1227 թ. Տեր Գրիգորը՝ ՄԱՂԶԻԷՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԱՆՈ ԵՒ ԺԱՌԱՆԳՈՐԴ ՍԵՓԱԿԱՆ / ՀԱՅՐԷՆԻ ԱԹՈՌՈՅՍ ՄԵՐՈ, թողել է/ՉԶԱՐԿ ՔԱԶԱՆԱԻՑ ՔԱՂԱՔԱՑԵԱՅ/, ՉՈՐ Ի ՄԱՀՈՒԱՆ ԱԻՐՆ ՏԱԻՆ...²:

Նման հարկի գոյությունը փաստվում է Անիի Ս.Սարգիս (Սիրի Պահլավունու) եկեղեցու ՈՂԵ (1226) արձանագրությամբ, որով Գրիգոր արքեպիսկոպոսը վճռում է. ԹՈՂԻ ՉԶԱՐԿ ԹԱՂՄԱՆ ՔԱԶԱՆԱԻՑՍ ԱՆՈՅ...³:

Գրիգոր թեմակալը ոչ միայն կատարել է ապահարկություններ, այլև եկեղեցիների նվիրել խոշոր, անշարժ գույք: Մասնավորապես՝ նա 1216 թ. գնում է Թաղք գյուղը, որը գտնվում էր ՄԵՐՉ Ի ՅԱՐԴՔ (Արթիկին մոտ) և ընծայում Լմբատավանքի Ս. Ստեփանոսին⁴:

Անի-Շիրակի թեմակալ Գրիգոր Ապիրատյանն ապահարկություններից, նվիրատվություններից զատ, կատարել է հիմնովին նորոգչական աշխատանքներ, մասնավորապես՝ իր եղբայր Ղարիբ գորական իշխանի հետ ձեռնամուխ է եղել իրենց նախնի, Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունու (998-1045) և նրա մայր Շուշան տիկնաց տիկին Անձևացու ջանքերով 988-1029 թթ. հիմնարկված Մարմաշենի վանական համալիրի ամբողջական վերականգնմանը, որն ավերել էին սելջուկները 1064 թվականին, ԵՒ ՎԱՆՔՍ ԳԵՂ ԱՐԱՐԵԱԼ ԵՒ ՉԿԱԹՈՂԻԿԵՍ ԲԵՐԴԱՆՄԱՆ ԱՄՐԱՑՈՒՑ՝ԵԱՂ՝ԵՒ Կ՝ԱՅՐ ԽԱԻԱՐ ԵՒ Ի ՍԳԱԻՈՐՈՒԹ/ԵԱՆ ՉՐԿԵԱԼ ՅԱՄԵՆԱՅՆ ԳՈՅԻՑ:

Եվ ահա, 1225 թ. ՏՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԶԻԷՊԻՍԿՈՊՈՍԸ և նրա ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐ ԽԱՐԻՓԸ՝ ՔԱՉ ԵՒ ԱՐԻ ՉՈՐԱԿԱՆՆ ՔԻ՝, դուրս են բերում վանքը մթից՝ հասուցանելով ՆԱԽԿԻՆ ՓԱՌԱԻՈՐՈՒԹԵԱՆՆ՝ մենաստանի

¹ Վարդանյան Ռ., Հայաստանի չափերն ու կշիռները (V-XV դարեր), Եր., 1989, էջ 191:

² Դիվան, պր. I, էջ 18:

³ Նույն տեղում, էջ 55:

⁴ Տե՛ս Դիվան, պր. X, էջ 70:

տարածքից հեռացնելով շինականներին և այն վերստին դարձնելով ԲՆԱԿԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՔԱՀԱՆՆԱՅԻՑ ԵՒ ԿՐԱԻՆԱԻՈՐԱՑ՝ պայծառացնելով վանքը և զարդարելով այն ոսկեղենով, արծաթեղենով, ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱԻՔ: Վերականգնվում են նաև Մարմաշենի վանքապատկան իրավունքները՝ վերադարձվելով Ազատա գյուղը (նախկինում վեց այլ գյուղերի հետ պատկանել է վանքին), նվիրաբերվելով նորակառույց Տիրաշեն բնակավայրը, ջրաղացներ, հողեր, ինչպես նաև՝ ԵՐԿՈՒ ԱՅԳԻ Ի ՄԱՐՄԵՏԻ, ՈՐ Ի ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ Ի ՄԵՁ ԷՐ ՀԱՍԵԼ...ՄԻՆՉ ԱՅՍ ԱՌ ԿԱՏԱՐԵՑԱԻ ԱՌ ԺԱՄԱՅՆ ԳԵՂԵՅԿԱԳԵՂ ԵՂԲԱՅՐՆ ԻՄ ԽԱՐԻՓ ՄԱԳԻՍՏՐՈՍՆ ԳՈՎԵԱԼՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԼԵՁՈՒԱՑ ՄԱՐՏԻՐՈՍԱՑԱԻ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆՆԱԻՐԻՆԱՑ... ՋՄԱՐՄԻՆ ՆՈՐԱ ԲԷՐԵԱԼ ԹԱՂԵՅԱՔ ԱՌ ԴՐԱՆ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷԻՍ, ՄԵՐՉ ԱՌ ՆՇԽԱՐՍ ՀԱԻՈՒՆ ՄԵՐՈՑ ՎԱՐՀԱՄԱ ԻՇԽԱՆԻ...¹:

Անիի վերոհիշյալ 1227թ. իրավական, ապահարկային բնույթի արձանագրության շարունակությունից տեղեկանում ենք, որ Տեր Գրիգոր արքեպիսկոպոսի եղբայր Ղարիբ Մագիստրոսը գոհվել է Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ԽՈՐԱԶՄԵՏԵԱՑ Ի :ՈՀԴ: (1225) լծոՒԻՆ²: Խոսքը վերաբերում է Խորասանի սուլթան Ջալալ աղ-Դինի 1225-1232թթ. վայրագ ասպատակություններին:

1233թ. Բագնայրի մի նվիրատվական արձանագրության մեջ կարդում ենք «... ի տերութեան տեղոյս Գրիգոր Մագիստրոսի, որոյոյ Ապուղամրի»³:

Գրիգորն ամուսնացած էր (կինը՝ Մամքան), ունեցել է երեք զավակ՝ Սարգիս, Աբուղամր, Վահրամ, որոնցից առաջինը դարձել է Անիի եպիսկոպոս⁴: Իրոք երևույթը զարմանալի է ու հակականոնական:

¹ Դիվան, պր. X, էջ 95-96, հմմտ.՝ *И. Орбели, Избранные труды, էջ 443*:

² Դիվան, պր. I, էջ 18:

³ *Մաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 85-86*:

⁴ *Տե՛ս նույն տեղում, էջ 87-88*:

Համաձայն վիմական ժամանակագրության՝ տակավին Հռոմոսի ՈՅԸ (1229) թ. Նորբերդի տիրակալ Վասակ Կյուրիկյանի և Այրարատ աշխարհի կողմնապետ Վաչե Ամբերդեցու արձանագրություններում հիշատակվում է. «յառաջնորդութեան $\overline{\text{ՄՆ}}$ Բարսղի, որդոյ Ամիր Երկաթայ»¹: Տեր Բարսեղի հայրը՝ Երկաթ Պահլավունի-Ապիրատյանը, Անի մայրաքաղաքի կառավարիչ իշխանն էր («ամիր» բառը ծագում է արաբ. أمير և նշանակում «իշխան», «իշխանավոր»)², որը դեռևս հիշվում է Տեր Սարգսի՝ մեզ ծանոթ 1220 թ. վիմագրում:

Հռոմոսի ՈԶ (1231) թ. ընծայագիրն ավարտվում է. «յառաջնորդութեանս $\overline{\text{ՄՐ}}$ Բարսղի արհիեպիսկոպոսի՝ որդոս Ամիր Երկաթա...»³:

1233 թվականից որպես Անի-Շիրակի երկրորդ եպիսկոպոս (կարելի է ենթադրել Աբուղամրի որդի Գրիգորից հետո) հանդես է գալիս « $\overline{\text{ՄՐ}}$ Աբաս», ինչը փաստվում է Խծկոնքի արձանագրությամբ⁴: Նույն վայրի ոձթ (1241) թ. ընծայագրում հիշատակվում է. «ի ձեռն եպիսկոպոսիս $\overline{\text{ՄՐ}}$ Աբաս»⁵:

Անիի ՈԶԸ (1239) թ. վճռագրում ԵՄ ԲԱՐՄԵՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՂՈՍ, ՈՐԴԻ ԱՄԻՐ ԵՐԿԱԹԱՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԱՆՈՅ, վերահաստատում է իր ազգական նախորդի որոշումը՝ Ի ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԺԱՌԱՆԿՈՒԹԵԼԷՍ ՉՄԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՀԱՅՐԵՆԻՔ ՄԲ ՈՒԽՏԻՆ ՄԱՐՄԱՇԻՆՈՅ ՎԱՆԻՑՆ...⁶:

¹ **Գարսայեոյան Ս.**, Հռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, էջ 10:

² Տե՛ս **Մանուչարյան Ա.**, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Եր., 2015, էջ 128:

³ **Գարսայեոյան Ս.**, Հռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, նույն տեղում:

⁴ Վիմական տարեգիր, էջ 76:

⁵ Նույն տեղում, էջ 82:

⁶ Դիվան, պր. I, էջ 17:

Ինչպես երևում է, Բարսեղ Գ.-ին աթոռակից Աբասին արդեն 1246 թ. փոխարինել է «եպիսկոպոսն Անույ միւս Սարգիս»¹՝ Գրիգոր Աբուղամրյան արքեպիսկոպոսի որդին, քանի որ նա է այդ թվին ստորագրել Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանտին Ա. Բարձրբերդցու (1221-1267) հանձնակատար Վարդան Արևելցու Հայաստան բերած Սսի 1243 թ. Բ. ժողովի 25 կանոնների տակ:

Հոռոմոսի ՈՂԵ (1246) թ. ուշագրավ արձանագրությունից իմանում ենք, որ նվիրատուն՝ «Աշոտ Դսեղեցի, որդի Գեարգե, թոռն Աշոտ», Հայոց և Վրաց Դավիթ Է. Ուլու թագավորի (1245-1270), ամիրսպասալար Շահնշահ Ա. Զաքարյանի (1212-1251) «եւ «յառաջնորդութեան տն Բարսղի արքեպիսկոպոսի, որդո Ամիր Երկաթայ», «միաբանեցա ՄԲ Յովանիսի ի նեղ եւ ի չար ժամանակիս յետ կործանման տաթարին. մինչ էր վանքս ի նեղութեան, ետու զամենագով աւետարան եւ Խ (4) եզն, Գ (3) կով, Խ (4) էշ, Բ (2) ձի և այլ զինչ անձ պատրաստէ...»²:

Նվիրատուն փորձել է իր չափով օգտակար լինել Անիին՝ մալրաքաղաքը 1236 թ. մոնղոլների կողմից գրավվելուց, ավերվելուց, թալանվելուց հետո:

Աշոտ Դսեղեցին սովորական նվիրատու չէ: Նա Դսեղի Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչ է, որը մի շարք նվիրատվություններ է կատարել նաև հայրենի Բարձրաքաղի վանքին³: Իսկ ըստ Քառասնից Մանկանց վանքի 1241 թ. արձանագրության՝ Աշոտ Մամիկոնյանն իր ազգական Մարծպան Համագասայանից հետո եղել է Դսեղի իշխանը⁴:

¹ *Կիրակոս Գանձակեցի, էջ 310:*

² *Վիմական տարեգիր, էջ 90: Կարապետյան Ս., Հոռոմոսի վանական համալիրի վիմագրական ծառանգությունը, էջ 11:*

³ *«Դիվան հայ վիմագրության», պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սարգսյան, Եր., 2012, էջ 363, 370, 372: Սյունիե տեղի Դիվան, պր. IX և էջը:*

⁴ *Տե՛ս նույն տեղում, էջ 411:*

Հռոմոսի **ռղ** (1247) թ. ընծայագրում տան նվիրատվությունը՝ «իւր հողովն», վանքի Ս. Հովհաննես եկեղեցուն կատարվել է «առաջնորդութեան տէր Բարսղի, որդո Ամիր Երկաթա»¹:

1250 թ. Հռոմոսի մեծահռչակ վանք է այցելում Մանահնի հռչակավոր վանքի առաջնորդ «Աւետիս վարդապետ», որը ծագումով Շիրակից էր՝ «ազգաւ ի մայրաքաղաքէս Անո»: Նա, միաբանվելով «սր ուխտիս Հռոմոսի վանաց սր Յովանիսի», կատարում է նվիրատվություն՝ «յառաջնորդութեան տր Բարսղի արհեպիսկոպոսի, որդոյ Ամիր Երկաթայ»²:

Մանահնի վանական առաջնորդ Ավետիս վարդապետը հիշվում է Հյուսիսային Հայաստանի այդ նշանավոր մենաստանի մի քանի վիմագրերում՝ սկսած 1240 թվականից³: Ավետիս վարդապետի օրոք՝ 1255 թ., նորոգվել է Մանահնի գրատունը⁴:

Հռոմոսի արձանագրությունների ժամանակագրական համեմատությունը ցույց է տալիս, որ Ամիր Երկաթի որդի Տեր Բարսեղ Գ. Ապիրատյանն Անի-Շիրակի հոգևոր առաջնորդ կանչվել է Հռոմոսի վանահայրությունից, որտեղ էլ վերադարձել է վերադիտողի պաշտոնն իր ազգական Գրիգորին փոխանցելուց հետո: Տեր Բարսեղ Գ.-ն վերջին անգամ հիշատակվում է Հռոմոսի ՉԲ (1253)թ. վիմագրում որպես «առաջնորդ վանացս տր Բարսեղ»⁵:

Հայոց եկեղեցում արատավոր երևույթների, մասնավորապես՝ եպիսկոպոսների՝ ԿԱՇԱՌԱԻՔ, ժամանակից շուտ (ԱՆՄՈՐՈՒ) կամ ԱՌԱՆՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ձեռնադրվելու դեմ 1251թ. Հայաստանի իշխանապետ Շահնշահ Ա. Զաքարյանի՝ Մրենի քարեղեն հրամանի վավերացումը կատար-

¹ Վիմական տարեգիր, էջ 91: **Գարապետյան Ս.**, Հռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, էջ 12:

² Վիմական տարեգիր, էջ 93: **Գարապետյան Ս.**, Հռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, էջ 15:

³ Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 59:

⁴ Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 95:

⁵ Վիմական տարեգիր, էջ 97: **Գարապետյան Ս.**, Հռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, էջ 16:

վել է ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՐ ԳՐԻԳՈՐՈՂ¹: Սա միև Սարգսի եղբորորդի է²:

Վիմական ժամանակագրությունում Սարգիսը հիշատակվում է Բագնայրի ՉԺԱ (1262) թ. արձանագրությունից. «Ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի, տեառն տեղոյս...»³: Հղման ավարտը վկայում է, որ Սարգիսը եղել է «Բագնայրի տերը, այսինքն՝ պատրոնը»⁴:

Անիի Ս. Առաքելոց եկեղեցու :ՉԻԶ: (1277) թ. վճռով ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՂԻՍԿՈՂ/ՈՍ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԱՆԻՈ ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԲՂԱՏՐՈՆ ՓԱԽՐԱԴԻՆԻՆ ԵՒ ՔԱՀԱՆԱԻՑ ՔԱՂԱՔԱՑ/ԵԱՅՍ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԱԻ Ի ՎԵՐԱ ԵԿԵՂԵՅԻՈՅՍ. ԵԹԷ ԱՅՐ ԶՂԿԻՆ ԹՈՂՈՒ Դ: (4) ԻՅՆ :Ա: (1) ԶԻՆԶ ԲԱԺԻՆՔ ԼԻՆԻՐՍԱ ՆՄԱ, ԵՒ ԹԷ ԿԻՆ / ԶԱՅՐՆ : Դ: (4) ԻՅՆ :Ա: (1) ՏԱ ՅԵՐԻԿՆ...⁵:

Իրավական բնույթի բավականին ուշագրավ արձանագրություն է, որը փաստում է միջնադարյան հայ իրականությունում կնոջ և տղամարդու միջև իրավահավասարության առկայությունը, երբ ամուսնալուծության ժամանակ, անկախ հայտատուից՝ կին լինի, թե տղամարդ, պարտավոր է ունեցվածքի ¼-ը զիջել հակառակ կողմին: Պարոն Փախրադինը (Ֆախրադինը) տվյալ ժամանակաշրջանում Անիի տերերից՝ գլխավորներից մեկն է՝ մոնղոլական իլխանության վարչապետ Շամս ադ-Դին ալ-Ջուվեյնու, Ավետեց Սահմադինի և Քարիմադինի հետ միասին:

Գրիգոր Բ.-ին աթոռակից Սարգիս Գ.-ն Առաքելոց եկեղեցու գրեթե նույն մասում փորագրել է տվել ամուսնությանն առնչվող մեկ այլ վճիռ... ԿԱՄԱԻՆ ԱՅ. ԵՍ ՏՐ ՍԱ/ԳԻՍ, ՈՐԴԻ ՄԱՔԻՍՏՌՈՍԻՆ, որով արգելում է ԲՈՆԱ/ՊՍԱԿ ԱՌՆԵԼ: Արձանագրության ժամանակը որոշվում է

¹ *Орбели, Надписи Мрена И., с. 40, Գարսպեղյան Ս., Սրենը և նրա հուշարձանները, «Վարձք», 2012, № 7, էջ 58:*

² *Սաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 94:*

³ *Վիմական տարեգիր, էջ 104: Բասմաջյան Կ., նշվ. աշխ., էջ 369:*

⁴ *Սաթևոսյան Կ., նույն տեղում, էջ 89:*

⁵ *Դիվան, պր. I, էջ 15:*

բնագրի սկզբնամասում մոնղոլ իլխանի անվան հիշատակությամբ. ՓԱԹՇԱՀԻՆ ՅԵՐԿԱՐ ԿԵ/ՆԱՅՆ, ԱՐԴՈՒՆ ԱՂԻՆ... Վերջինս իշխել է 1284-1291 թթ.: Նրանից հետո հիշատակվում է. ԵՒ ՄԱԻՊ/ ԴԻԻԱՆԻՆ¹: Սա վերոհիշյալ Շամս ադ-Դին ալ-Ջուվեյնին է՝ մոնղոլական իշխանության վարչապետը. սաիպ (սահիբ) դիւան արաբ. բառակապակցություն է՝ *أديوان صاحب* (սահիբ ադ-դիուան), բառացի թարգմանությամբ նշանակում է «դիվանապետ», «դիվանատեր»: Ալ-Ջուվեյնու կինը աթաբեկ Իվանեի դուստր Խոշաքն էր: Սրանց դուստր Խունդգեին կնության առավ Հայոց և Վրաց ամիրսպասալար, աթաբեկ Շահնշահ Բ. Չաքարյանը (1291-1320), ըստ էության իր ազգականուհուն: Դա մերձամուսնություն էր 4-րդ և 3-րդ զարմերի միջև, ինչն արգելված էր Սսի 1243 թ. Բ. ժողովի Ը. կանոնով, որը սահմանում էր «վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան»²: Ամեն դեպքում այդ ամուսնության շնորհիվ Չաքարյանները կարողացան վերստին տիրանալ իրենց հայրենի Անիին³, որը ճարահատյալ վաճառել էին 1260-ականների սկզբներին՝ չկարողանալով վճարել հարկերը⁴:

Նույն Արդուն իլխանի գահակալության տարիներով ենք (1284-1291) թվագրում Անիի գլխավոր դարպասի անթվակիր արձանագրությունը, որով փաստվում է քաղաքին մոնղոլ տիրակալի շնորհած արտոնյալ կարգավիճակը (որպես հատուկ տիրույթ)՝ ՈՐ ԵՂԵԻ ՄՍՅՐԱՔԱՂԱՔ ԱՆԻ ԽԱՍԻՆՋՈՒԻ: ԵՒ Ի ՏԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔ/ԻՍ ԱԾ ԱՍԷՐ ՊԱՏՐՈՆԱՅՆ ԳՐԻԳՈՐ ԱՂԻՆ ԵՒ ՅՈՎԱՆՆԻՍԻ ԵՒ ՅԵՊԻՄԿՈՂՈՍՈՒԹԵԱՆ ՏԵՐ ՅՈՀԱՆՆԻՍԻ⁵: Համաձայն պատմագիտության մեջ ընդունված տեսակետի՝ Անիին հատուկ տիրույթի՝ խաս ինջուի կարգավիճակ տվել է մոնղոլ

¹ Նույն տեղում, էջ 19:

² *Կիրակոս Գանձակեցի*, էջ 304-305:

³ Տե՛ս *Մանուչարյան Ա.*, *Վիճակները որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.)*, էջ 151:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

⁵ *Դիվան, պր. I*, էջ 1:

իլխան Աբու Սաիդը (1316-1335)¹: Այս դեպքում Անիի պարոններ պետք է հիշատակվեին Ջաքարյան տոհմի ներկայացուցիչները, այլ ոչ թե ուրիշներ (Գրիգոր աղա, Հովհաննես), որոնք հավանաբար Քարիմադինի, Փախրադինի հետնորդներ են, իսկ եպիսկոպոս՝ Վարդանը:

Շիրակի թեմը XIV-XV դդ.

Ըստ Կ. Մաթևոսյանի պրպտումների՝ Հովհաննես եպիսկոպոսը միև Սարգսի եղբայր Աբուղամրի որդին է, որը ձեռագիր հիշատակարաններում հանդես է գալիս 1298, 1308, 1313 թվականներին²:

1307 թ. մարտի 19-ի Սսի Ե. Ժողովի 26 մասնակից եպիսկոպոսների ցանկում 25-րդն Անիի արքեպիսկոպոս Վարդանն է³: Կ. Մաթևոսյանը հնարավոր է համարում, որ Վարդանը Հովհաննես Ա.-ի աթոռակալության շրջանում հանդիսացել է «Անիի երկրորդ եպիսկոպոսը»⁴:

Ճիշտ է, Աղբուղա Ջաքարյանը վերացնում է մի քանի հարկեր, սակայն դա չի փրկում իրավիճակը, չի կասեցնում Անիի անկումը: Ահա այս եղելությամբ պետք է բացատրել այն իրողությունը, որ XIV դ. սկզբներին, երբ Անի քաղաքն ԱՂՔԱ/ՏԱՅԵԱԼ⁵ էր մի պահ Ամբերդի կամ Հովհաննևավանքի եպիսկոպոսությունն իր մեջ ներառել է նաև Շիրակ գավառը: Այդ է վկայում Հովհաննևավանքի՝ Ժամանակին եղած, հետո անհետացած 1311 թ. խաչքարը՝ հետևյալ արձանագրությամբ. «զՎասիլ հայր Յօհաննու վանից՝ Առաջնորդ Շիրակայ և ամենայն Ամբերդու. Յիշեցէք ի Քրիստոս: թուին ՉԿ»⁶:

Հովհաննևավանքի այս արձանագրության մեջ պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք՝ այն, որ թեմակալը կրում է Վասիլ անունը: Վասիլը նույն Բարսեղ անունն է, որը տարածված էր Ապիրատյան Պահլա-

¹ Տե՛ս 'ս ՉԺՊ, III, էջ 648, **Բաբայան Լ.**, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Եր., 1964, էջ 356:

² **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 95:

³ Տե՛ս 'ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, ս. 2086:

⁴ **Մաթևոսյան Կ.**, նույն տեղում:

⁵ Դիվան, պր. I, էջ 28:

⁶ Ջաքարեայ Սարկաւազի Պատմագրութիւն, հ. 3-րդ, Վաղարշապատ, 1870, էջ 30:

վունիների տոհմի հոգևորական ներկայացուցիչների մոտ: Այստեղից ենթադրելի է, որ Վասիլը (Բարսեղը) նախապես եղել է Անիի երկրորդ եպիսկոպոսը՝ աթոռակցելով Հովհաննես Ա.-ին, որի պատճառով էլ վիմագրում կոչվում է «Առաջնորդ Շիրակայ»: Ապա նշանակվել է Հովհաննավանքի առաջնորդ վանահայր՝ թեմակալելով Ամբերդի եպիսկոպոսությունում՝ միաժամանակ պահպանելով Շիրակի նկատմամբ իր հոգևոր իշխանությունը: Վասիլի (Բարսեղ Դ.-ի)՝ Հովհաննավանք տեղափոխվելուց հետո Անիում երկրորդ եպիսկոպոս է դարձել Վարդանը՝ Սսի 1307 թ. ժողովի մասնակից արքեպիսկոպոսը: Նա Հովհաննես Ա.-ին էլ հաջորդել է որպես Անի-Շիրակի թեմակալ, ինչը հուշում է Սրենի 1320թ. արձանագրությունը. Ի ՀԱՅԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ի ՏՐ ՎԱՐԴԱՆ:՝

1394 թ. հիշատակվում է Շիրակի ևս մեկ եպիսկոպոս՝ Մկրտիչ, որը նստում էր Բագարան բերդաքաղաքում²:

Իսկ XV դ., ըստ Կ. Մաթևոսյանի պրպտումների, Անիի եպիսկոպոս է եղել գրիչ Հովհաննես Բ. Ոսկեփորիկը, որը ձեռագրեր է ընդօրինակել 1423թ. Սանահնում, 1426-ին՝ Գուգարքի Թմկաբերդ ամրոցում, 1443-ին՝ Արևագածոտնի Սերկևիլ գյուղում³: Կ. Մաթևոսյանի ճշգրտմամբ՝ «Հովհաննես Ոսկեփորիկից հետո աղբյուրներում այլևս չենք հանդիպում Անիի եպիսկոպոսի որևէ հիշատակության»⁴:

¹ *Орбели И.,* *Надписи Мрена, էջ 38:*

² *Թովմա Մեծոփեցի,* *Պատմագրություն, աշխ. Լ. Խաչիկյանի, խմբ. Ա. Մահակյանի, Եր., 1999, էջ 68:* Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկի 1860թ. փարիզյան հրատարակությունում Բագրնայ տեղանունը տպագրված է Բագրատունոյ (էջ 42), ինչից Մ. Օրմանյանը ենթադրել է, որ խոսքը Կարսի մասին է (տե՛ս *Օրմանեան Մ.,* *Ազգայատում, հ. Բ., ս. 2339*), որից էլ պետք է հետևի, որ Մկրտիչ եպիսկոպոսը Կարուց թեմակալն է, մինչդեռ հարկ է նրան համարել Շիրակի առաջնորդ: Նա իր եղբայրների և հավատացյալ ժողովրդի հետ (1860 թ. հրատարակությունում նշվում է 300 քրիստոնյա), հավանաբար, թողնելով վաղուց ավերված ու անպաշտպան Անին՝ ապավինել է ավրակոտ բերդին:

³ *Մաթևոսյան Կ.,* *Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 100:*

⁴ *Նույն տեղում:*

Այդպիսով ավարտվում է Շիրակի եպիսկոպոսության անիական շրջանը: Ամփոփելով այն՝ ստորև ներկայացնում ենք Անի-Շիրակի եպիսկոպոսների ցանկը.

Բարսեղ Ա. Անեցի՝ 1072-1105 թթ .

Սարգիս Ա., աթոռակից (երկրորդ) եպիսկոպոս **Մխիթար Տեղերեցի**՝ 1132-1155 թթ.

Ներսես Անապատական՝ 1155 թ.

Բարսեղ Բ.՝ 1160-1203 թթ.

Սարգիս Բ.՝ 1204-1220 թթ., աթոռակից՝ Գրիգոր Ա. Մազիստրոս

Գրիգոր Ա. Մազիստրոս՝ 1213- 1233 թթ., աթոռակից՝ Բարսեղ Գ.

Բարսեղ Գ.՝ 1229- 1253 թթ. աթոռակից՝ **Աբաս** (1241), Սարգիս Գ.

Սարգիս (միւս) Գ.՝ 1246-1284/91, աթոռակից՝ Գրիգոր

Գրիգոր Բ.՝ 1251-1277 թթ.

Հովհաննես Ա.՝ 1284/91-1313 թթ., աթոռակից Վասիլ (1311), Վարդան (1307)

Վասիլ (Բարսեղ Դ.)՝ 1311 թ.

Վարդան՝ 1307-1320 թթ.

Մկրտիչ՝ 1394 թ.

Հովհաննես Բ. Ոսկեփորիկ՝ 1423-1443 թթ.:

Եզրահանգում. Այսպիսով, վերոշարադրյալից ակնառու է Շիրակի թեմի խաղացած կարևորագույն դերակատարությունը IX-XV դարերում ոչ միայն Անի-Շիրակում, բուն Հայաստանում, այլև Կիլիկիայի հայկական թագավորության ազգային-եկեղեցական կյանքում: Պատմական սկզբնաղբյուրներից, հատկապես վիմական արձանագրություններից հայտնի Շիրակի ավելի քան մեկուկես թեմակալները, որոնք հիմնականում Ապիրատյան Պահլավունիների տոհմից են (մի շարք վիմագրերում նրանք Անիի եպիսկոպոսական աթոռը համարում են իրենց սեփական ժառանգությունը), կառուցել, վերակառուցել են եկեղեցիներ, սելջուկներից դրամով գնել ամբողջական վանքեր, վերականգնել և ընդլայնել դրանց եկեղեցական-ավատական իրավունքները, պայծառացրել իրենց հոգևոր իրավա-

սության ներքո գտնվող բոլոր վանական հաստատությունները (Հառիճավանք, Մակարավանք, Մարմաշեն, Հոռոմոս, Խծկոնք և այլն), կատարել բազմապիսի նվիրատվություններ, թեթևացրել անեցիների, շիրակցիների հարկային բեռը, պայքարել եկեղեցու ներսում արատավոր երևույթների (բռնի ամուսնության, կաշառքով ձեռնադրության, ժամանակից շուտ օծության) դեմ, առանց խտրականության, անաչառ դիրքորոշում որդեգրել ամուսնալուծության դեպքում ունեցվածքի արդարացի բաժանման հարցում՝ այդպիսով փաստելով կնոջ և տղամարդու միջև իրավահավասարության առկայության գոյությունը միջնադարյան Հայաստանում:

Անի-Շիրակի թեմի XI-XV դդ. հոգևոր, մշակութային, եկեղեցաշինական, կրթական, գիտական լավագույն ավանդույթներն իրենց բարերար ազդեցությունն ունեցան նաև հետագա ազգային-հոգևոր վերածննդի գործում XVII և XIX դարերում:

References

1. Agatangeghos, *History of Armenia / Examination original G. Ter-Mkrtchyan and S. Kanayanc; Secular translation and annotations by A. Ter-Ghevondyan/* [Hayoc patmutyun/Qnnakan bangiry G. Ter-Mkrtchyan yev' S. Kanayanci; Ashxarhabar t'argm. yev' c'anut'agr. A. Ter-Ghevondyani], Yerevan, YSU publ.,1983, 451 p. (in Armenian).
2. Babayan L., *Socio-economic and political history of Armenia in the 13-14th centuries* [Hayastani social-tntesakan yev' qaghaqakan patmut'yuny 13-14 -rd darerum], Yerevan, Armenian State Publishing House, 1964, 601p. (in Armenian).
3. Basmajian K., *Armenian inscriptions of Ani, Bagnair and Marmashen* [Hayeren ardz'anagrut'yunq Anvo, Bagnayri yev' Marmashinu], Paris, «Firmen-Dido and company» publ., 1931, 246 p. (in Armenian).
4. *Corpus of Armenian epigraphy, prak I, city of Ani*, compiled by H. Orbeli [Divan hay vimagrut'yan, prak I, Ani qaghaq, kazmec H. Orbeli], Yerevan, publ. Academy of Sciences of the Armenian SSR, 1966, 76 p. (in Armenian).
5. *Corpus of Armenian epigraphy, prak X, Shirak marz*, compiled by S. Barkhudaryan [Divan hay vimagrut'yan, prak I, Shiraki marz, kazmec S. Barxudaryan], Yerevan, «Gitutyun» publ., 2017, 212 p. (in Armenian).

6. Ghazarian A., *The Eparchial Division of the Armenian Church in the IV Century*, [Hay ye'kegh'ecu t'emakan bajanumy IV darum], «Historical-Philological Journal» , 1996, № 1-2, pp. 193-206 (in Armenian).
7. Haroutyunyan B., *The Eparshial Division of the Armenian Church in the Period of Archpastorhood of Gregory the Illuminator* [Hay ye'kegh'ecu t'emakan bajanumy Grigor Lusavorch'i hovvapatut'yan shrjanum], «Historical-Philological Journal» , 2000, № 2, pp. 108-127 (in Armenian).
8. Karapetyan S., *Mren and his monuments* [Mreny yev' nra nra hushardz'annery], «Vardzq», 2012, № 7, pp. 31-63 (in Armenian).
9. Karapetyan S., *The epigraphic heritage of the Horomos monastery complex*, [Horomosi vakanakan hamaliri vimagrakan jarangut'yuny], «Vardzq», 2021, № 15, pp 3-18(in Armenian).
10. Khachatryan A., *The Corpus of Arabic inscriptions of Armenia, 8th-16th centuries* [Korpus armyanskix nadpiosey Armenii VIII-XVI vv.], Yerevan, publ. Academy of Sciences of the Armenian SSR, 1987, 235 p. (in Russian).
11. Kirakos Gandzaketsi, *History of Armenians*, with diligence K. Melik-Ohanjanyan [Hayoc patmut'yun, ashx. K. Meliq-Ohanjanyani], Yerevan, publ. Academy of Sciences of the Armenian SSR, 1961, 426 p. (in Armenian).
12. Kogian S., *Kamsarakans "Teark Shirakay and Arsharuneats"* [Kamsarakannery "Tearq Shirakay jev' Arsharuneats"], Vienna, «Mkhitarian» publ, 1926, 180 p. (in Armenian).
13. Kostanianc K., *Epigraphy chronicle: list of the collection of Armenian inscriptions* [Vimakan taregir. cucak zh'ogh'ovac'oy ardz'anagrut'eanc hayoc], St. Peterburg, Printing house of the Imperial Academy of Sciences, 1913, 292 p. (in Armenian).
14. Manucharyan A., *Epigraphic-historical studies of the history of the Armenian Church* [Hayoc ye'kegh'ecu patmut'yan vimagragitakan-patmagitakan usumnasirut'yunner], Yerevan, «Lusabac publishing house», 2019, 301 p. (in Armenian).
15. Manucharyan A., *lapidary inscriptions as the primary sources of the political history of Armenia (IX-XIV centuries)* [Vimagrery vorpes hajastani qagh'aqakan patmut'yan skzbnagh'byurner (IX-XIV darer)], Yerevan, YSU publ., 2015, 240 p. (in Armenian).
16. Margaryan H., *Some issues of the history of Northern Armenia and Georgia in the 12th century* [Hyusisyin Hayastani yev' Vrastani XII d. patmut'yan mi qani harcer], Yerevan, publ. Academy of Sciences of the Armenian SSR, 1980, 255 p. (in Armenian).
17. Matevosyan K., *Ani. The Church life and manuscript Heritage* [Ani. ye'kegh'ecakan kyanqy yev' dz'eragrakan jarangut'yuny], S. Ejmiatsin, Mother See publ., 1997, 412 p. (in Armenian).

18. Matevosyan K., *Ani-Shirak story pages* [Ani-Shiraki patmut'yan eger], Yerevan, author publishing, 2010, 294 p. (in Armenian).
19. Matteos Urhayetsi, *Chronology (The original manuscript by M. Melik-Adamyani and N. Ter-Mikaelyan. The secular translation and annotation by H. Bartikyan)* [Zh'amanakagrut'yun (Grabar bnagiry M. Meliq-Adamyani yev' N. Ter-Miqaelyani: Ashxarhabar t'argm. yev' c'anut'agr. H. Bart'ikyani)], Yerevan, YSU publ., 1991, 226 p. (in Armenian).
20. Movses Khorenatsi, *Armenian History / Examining original by M. Abeghyan and S. Harutyunyan. Worldly translatio. and commentator St. of Malkhasyanc',* [Patmut'yun Hajoc / Qnnakan bnagiry M. Abegh'yani yev' S. Harut'yunyani. Ashxarhabar t'argm. yev' meknaban. St. Malxasyanci], Yerevan, YSU publ., 1981, 588 p. (in Armenian).
21. Orbeli I., *Selected writings* [Izgrannye trudy], Yerevan, publ. Academy of Sciences of the Armenian SSR, 1963, 683 p. (in Russian).
22. Orbeli I., *Mren inscriptions, «Armenian studies», prak I,* [Nadpisi mrena, «Hayagitakan hetazotut'yunner»], Yerevan, YSU publ., 1974, pp. 33-43 (in Russian).
23. Ormanian M., *Azgapatum,* [Azgapatum], volume I-II, St. Etchmiadzin, Mother See publ., 2001, 3894 p. (in Armenian).
24. Stepanos Orbelyan, *The History of Sisakan province* [Patmut'yun nahangin Sisakan], Tiflis, Elektracharzh publ. 1910, 618 p. (in Armenian).
25. Stepanyan V., *The Earthquakes in the Armenian highlands and its vicinity* [Ye'rkrasharzh'ery Haykakan lernashkharhum yev' nra merdz'akayqum], Yerevan, «Hayastan» publ., 1964, 247 p. (in Armenian).
26. Tovma Metzopeci, *Historiography, with the diligence of Levon Khachikyan* [Patmagrut'yun, ashx. L. Khachikyani], Yerevan, Matenadaran publ., 1999, 226 p. (in Armenian).
27. Ukhtanes, *Part I, Armenian history* [hatuac' I, Patmut'yun Hayoc], Vagharshapat, St. Etchmiadzin printing house, 1871, p. 141 (in Armenian).
28. Vardanyan R., *The dimensions and weights of Armenia (V-XV centuries)* [Hayastani chapern u kchirneri (V-XV darer)], Yerevan, publ. Academy of Sciences of the Armenian SSR, 1989, 334 p. (in Armenian).
29. Zakaria Sarkavag, *Historiography,* volume III [Patmagrut'yun, h., III], Vagharshapat, St. Etchmiadzin printing house, 1870, p. 46 (in Armenian).

УДК 397

ВЕКОВОЕ СМЕШЕНИЕ КАВКАЗСКИХ ЭТНОСОВ (С УЧЕТОМ ОПЫТА ЧЕРКЕСОГАЕВ)

Марзият БИДАНОК

Адыгейский республиканский институт гуманитарных исследований им.

Т.М. Керашева, д. ф. н., ГБУ РА Россия,

marziyatbidanok@mail.ru

В статье на материале имеющихся в науке этнографических работ, касающихся Кавказа, прослеживается изученность вопроса, изучающего взаимное смешение проживающих на данной территории наций. После этого, по мере выявления актуальности избранной тематики, в статье применительно к кавказской семье происходит освещение межличностных связей, включающих как внутренние, так и внешние семейные отношения. В рамках этого подраздела автор обозначает специфические признаки, присущие характеру кавказского индивида. Это позволяет ему говорить об имеющейся на территории общности и обращаться к историческим фактам смешения этносов. Что и происходит в работе посредством рассмотрения образа жизни среди адыгов (черкесов) субэтноса черкесогаев.

Ключевые слова: Кавказ, этнос, культура, смешение, черкес, армянин, черкесогай.

THE CENTURIES-OLD MIXING OF CAUCASIAN ETHNIC GROUPS (Based on the Experience of the Circassian Armenians)

Marziyat BIDANOK,

Adygea Republic Research Institute for the Humanities named after T.M. Kerashev, Doctor

of Philology, Russia

marziyatbidanok@mail.ru

Based on the material of ethnographic works available concerning the Caucasus, the article gives a review of the studies concerning the mutual mixing of nations living in this territory. Further, as the relevance of the chosen topic is

revealed, the article highlights interpersonal relationships in the Caucasian family, including both internal and external family relations. Within this subsection, the author designates specific features inherent in the character of the Caucasian individual. This allows him to talk about the community existing on the territory and refer to the historical facts of the mixing of ethnic groups, specifically related to the subethnic group of the Circassian Armenians (Cherkesogays) who have been living among the Adyge people (Circassians).

Keywords: Caucasus, ethnos, culture, mixing, Circassian, Armenian, Cherkesogays (Circassian Armenians)

Имеющиеся на сегодняшний день в исторических и лингвистических науках теории кавказоведения отнюдь не всегда способны подойти к центру стержневых линий и конфликтов, присущих российским преобразованиям здесь. Непосредственное понятие этнографии, являющейся наукой, изучающей материальную грань традиции, время от времени ощутимо преобразуется посредством идущего десятилетиями (а с ними, – веками) социальными и личностными модификациями. Как нередко утверждают на сегодняшний день исследователи (к примеру, в 2021 г. – З. Жаде), как российские, так и иностранные научные базы фактически лишены доктрины, которая способна осветить имеющиеся этно- и социально-обусловленные траектории и определить возможности прогрессивного преобразования кавказских территорий.

Народы многонационального Кавказа различаются хрониками прошлого, верованиями, языками, культурами, интересовавшими и интересующими мировую цивилизацию. Так, к примеру классик французской литературы А. Дюма со своим спутником (парижским художником Жан-Пьером Муане) в своем «Кавказе» не устает восторгаться увиденным на протяжении многомесячного перемещения из Петербурга в Тифлис. К примеру, там посредством обстоятельств они оказались свидетелями проходивших в Поти мингрельских похорон. И это позволило французскому классику сильно удивиться «странным звукам», подобным «воплю, положенному на ноты», а также, – самой их носительнице: «...Что больше всего поразило нас в этой вдове, одетой в черное платье и царапавшей лицо ногтями, несмотря на увещевания окружающих, – так это ее богатырский рост...» [1]. Периодически высказывая такие экспрессивные комментарии, А. Дюма создает текст, заметно отличающийся от более спокойных ремарк своего спутника. Как говорит об

этом современный этнограф Зоя Махмудова, «Записки Муане – этнографическое произведение, он описывает как путешественник, этнограф» [2].

Этнографические изучения научных исследователей относительно Кавказа в первую очередь обычно выделяют межличностные, а также внутри- и меж- семейные отношения. Манеры поведения внутри семьи, на коммуникационных полях ее членов ощутимо, заметно регулируются этикетными нормативами. Культурная миссия, ведущая к целостности наций и поколений, преимущественно осуществляется посредством единения социума. Испокон веков и даже по сей день манера слога и поведения членов кавказской семьи регулировалась в основном уважительностью младшего к любому взрослому, причем уровень уважения определялся возрастом. Такая степенная строгость, выверенная и разумная, сближала этно- представителей, создавала среди них ощущение отнесенности к общему этносу, прикрывала их пониманием товарищества, включала их в коллективную, достоверную и выверенную предками среду.

Данные ментальные нормативы обязывают здесь старших снисходительно смотреть свысока на молодежь. Однако достаточно отличима здесь манера коммуникации, используемая старшими третьего поколения по отношению к внукам и правнукам. Их дети (от младенцев до подростков) нередко зовут именами «нана» (= «мама») и «тата» (= «папа»), что не слишком приветствуется по отношению к самим молодым родителям. В этом случае с пожилыми возможны шуточные нежности, игровые соревнования, радующие участников и вызывающие зависть окружающих. Тем самым, социально обусловленные жизненные реалии этносов Северного Кавказа обладают кругом признаков поведения, которые носят огранку этикета.

К тому же ученые убедительно ведут речь об имеющемся уже не первый век, устоявшемся, соревновательном механизме, ввиду того, что наглядно заметно в социуме личностное желание конкурировать по степени смелости и отваги. Такое отнюдь не считалось лихим мальчишеством. Оно порой способствовало тому, что происходило иногда постоянно обусловленное увеличение масштабов и углубление ресурсов культурных залежей, которые гарантировали, в свою очередь, – созвучие поколений, обеспечивая некую слитность социума. Конкурентность здесь определяется конкретными этическими приоритетами, выводящими известные каждому национальные каноны. Рядовой кавказец по жизни является носителем целой базы этических

нормативов, полученных от старших и помогающих ему изо дня в день ориентироваться в рыночной конкурентности.

Социум, который в качестве конструктивного элемента образуется однажды, вырабатывает собственные прогрессивные принципы. Это помогает ему посредством собственных законов бытия оказывать влияние на своих участников, то есть в некоторой степени со стороны контролировать своих членов. Как признается мировой наукой, на так называемых «диких, свободных» кавказских территориях (в частности, ряд земель на Западном Кавказе, Чечня, частично, – Дагестан) испокон веков образ жизни определялся нормативами старшинства, а также – профессионализма на имеющейся социальной лестнице. Кроме того, осязаемым контролером у горцев нередко оказывается распространенная в каждом из этнических социумов культура бытия. Подобный контроль способен прогрессивно наладиться, если роль контролера на себя принимает культура, несомая центральной нацией, условно скрепляющая всю страну.

В частности, в ходе рассмотрения бытовых и административных вопросов на адыгских (черкесских) Хасэ (= собрания) либо в ходе аульских сходов у чеченцев и проч. самый значимый авторитет несут аксакалы (= старейшины), являясь условными вершинами почитаемых и знатных родов. Однако в ситуации с черкесогаями иногда имелось в виду то, что являвшиеся христианами армяне неспособны поддаться горскому народному суду, они могут образовать специфическую область, чтобы оказаться контролируемыми по общегосударственным в тогдашней России законам. Помимо этого конструктивные механизмы ратификации предложений во время совещаний являли собой своеобразную процедуру. Она свою итоговую успешность предусматривала отнюдь не «высотой реек» того или иного макета, а, скорее, – социально известным и принятым престижем того, кто ее представил.

Уделяют внимание в собственных записках уже упоминавшиеся нами выше путешественники практически всем народам кавказского региона. Особенно часто, – черкесам, грузинам, армянам, имевшим здесь весьма длительные и насыщенные хроники событий, а также – межэтнических пересечений. Непосредственно черкесские армяне (черкесоган), располагавшиеся в числе адыгов средневековья и позже, брали в Черкесии на себя именно торговые роли, столь характерные для них в ментальном восприятии также и современного черкеса. Это признанная сегодня наукой этно- группа

армян, уже столетиями (семь веков) обитающая на Северо-Западном Кавказе. На стартовой стадии такого перемещения, в XV в. в называемом по-адыгски «Ермэл-хьабль» Армянском ауле присутствовало 120 семейных дворов, причем к 1840 году их число подошло к четырем сотням.

Подобное длительное присутствие на поле действия черкесского языка обусловило фактически завершенное этническое растворение армянских представителей среди адыгов, а также – преобразование их в обособленный этнолект, т.е. субэтнос. В противовес своим братьям-армянам, рождавшимся в государстве Армения, черкесогай в антропологическом отношении является представителем северокавказского типажа. Помимо этого, ментальное сходство налицо в нередко общей целевой структуре поведения и мышления. Обладая ощутимыми, но точечными признаками специфики, этикетное поведение данных представителей с разными происхождениями имеет целый цикл схожестей.

Ввиду того, что черкесы испокон веков поклонялись христианским религиозным установкам, это было заметно и для соседних армян, заходивших в священные рощи адыгов с обнаружением там столь знакомых крестов, которые использовались в процедурах многих обрядовых церемоний. Принявший на себя миссию торговца в местной этнической среде черкесогай заметно содействует адыгу (черкесу), поскольку последний не очень уважает эту, материально продуктивную, профессиональную деятельность. Именно поэтому действующие черкесогай достаточно скоро упрочили свой финансовый статус, нажили заметное бизнес-имущество, вследствие чего ощутимо приобрели достаточное уважение в рядах адыгских (черкесских) сословий (в том числе, – высших).

В соответствии со сказанным, у исследователей оказываются приведенными детали взращивания княжеских черкесских сынов разных племен (чаще, – шапсугов, но также – бжедугов, натухайцев и др.) в семьях аталыков-черкесогаяев, дружественных родителям. И именно в ходе таких процедур аталычества ребенок начинает ощущать кавказские каноны, а также всю мощь их креплений. Так, к примеру, весьма строго соблюдается на всем Кавказе табу местного этикета в условиях меж- сексуальной коммуникации. Оно исключает проявления какого бы то ни было чувственного изъяснения и ласки. Не обнимая своих женщин и не делая им прямых признаний, адыги приобретают в социуме статус сдержанных в любви, что не могли не заметить

жившие среди них черкесогаи. Они, тем самым, как ментально, так и физически оказались схожими с адыгами, различаясь только следующим. В несколько преобразованной модификации черкесогаи несли и передавали потомкам некоторые обряды христиан с применением образов-картин из Грузии. Также потому налицо ощутимая схожесть либо подобие каждодневного бытия, поскольку в момент обитания черкесогаев на черкесских землях они, несшие среди адыгов название «срмел» (= «армянин»), явно понимали собственное отчетливое отличие от прочих представителей армянской нации. Культурно-бытовая и обрядово-ритуальная среды преимущественно были приближены к черкесам, что, в свою очередь, явно разнило их с другими армянами. В условиях указанной схожести межнациональный и межличностный этикеты ощутимо настаивают на том, чтобы взаимно присматривать за языками и традициями соседей. Это потому, что всякое уклонение от норматива есть оскорбляющий собеседника анти-норматив, уже разрушающий контакт.

Вообще этническая культура, будучи стержневым координатором той или иной личности, ощутимо определяет и определяется социальными обстоятельствами. Обитавшие среди адыгов черкесогаи жили в вышеназванном ауле, а позже, – и в пункте поселения, который был поделен квартално. Такой пункт заселялся по территориально-номинальному принципу: в зависимости от того, из каких именно аулов выходили пришедшие семьи. Новообразованное поселение было названо самими живущими здесь Армавиром (1848) во славу ранне - векового (в первые века до нашей эры) центрального града армян в древней Армении, почитаемого этносом по сей день.

Именно поэтому бытийно-деловая деятельность переселившихся на черкесские земли армян начинала проходить порой с сохранением имевшихся у них ранее горских семейных канонов. Ведь известно, что деятельностная среда выстраивается посредством присущих индивиду нравственно-духовных и эмоционально-логических мотивов, включающих карьерные и семейные приоритеты. И это социологи и культурологи чаще обозначают как потребность в становлении, в карьерном возвышении, а также, – во внешнем почтении и симпатии, дающей душевно-мысленное созвучие с прочими. Многие из этого нередко определяет непосредственно ценности индивида, которые обозначены для этнографов в качестве так называемого сдерживающего поведения, располагающего к избеганию.

Подобные этнические каноны можно классифицировать как личные (внутрисемейные) и социальные (общественные). Уже на ранней стадии личностного становления возможно наличие целого ряда личных мотивов, выращаемых семьей и отнюдь не определяемых обществом. В частности, поведенческие контактные традиции, присущие главе семьи и его супруге, являются базисной гранью этикета всей семьи, порой завещааемыми предкам. Но есть и социум. Тем самым как общественные, так и семейные нормативы формируются многочисленными возрастными представителями нации. Насколько это принято по сей день в порядочной семье, уже примерно в пятилетнем возрасте ребенок обязан начать поглощать имеющийся в этносе обширный каталог норм и правил обитания в социальном пространстве. Так, в частности, как у черкесогаев, так и любых других кавказцев растущий малыш обязан откликнуться на просьбу взрослого, первому заговаривать с которым, обгонять которого либо пересекать дорогу которому запрещено; обязательно уступить лучшее место старшему, инвалиду или матери с ребенком, и проч. Данные, обусловленные духовно, поведенческие приоритеты поддерживают создание личностной панорамы бытия (и внутренней, более – психологической, и внешней, чаще – PR-среда).

Таким образом, всякое поколение, как выражаются сегодняшние ученые-культурологи А.М. Сиюхова и З.А. Кobleва, «добавляет к полученному от предков культурному наследию свой культурный пласт» [3: 12]. И потому, армянские представители, порой будучи географически потерянными в стране черкесов, нашли достойный выход из ситуации. Они, мысленно и духовно поддерживая собственный этнос, за недолгий срок смогли, находя и очерчивая, обозначить культурные тенденции всей нации армян, сохраняя и передавая их младшим.

References

1. Dumas A. *Georgians are a people without flaws*[Gruziny–narod bez nedostatkov] // <https://sputnik-georgia.ru/20151023/22887752.html>. (in Russian)
2. *How Dumas saved his career in the Caucasus* [Kak Dyuma spasal na Kavkaze svoyu kar'eru] // <http://www.kavkaz-uzel.eu/articles/298666/>. (in Russian)
3. Siyukhova A., Kobleva Z. *Bases of regional cultural policy* [Osnovy regionalnoj kulturnoj politiki]. Maykop: “Ajax”, 2008. 137 p. (in Russian)

УДК 304.42

КАВКАЗСКАЯ ИДЕНТИЧНОСТЬ КАК В ХРОНИКАЛЬНЫХ, ТАК И В ГЛОБАЛИЗАЦИОННЫХ СРЕДАХ (С УЧЕТОМ ОПЫТА ЧЕРКЕСОГАЕВ)

Фатимет ХУАКО

Майкопский государственный технологический университет, д. ф. н., РФ
fatimah2@mail.ru

В данной статье рассматривается существующий как в исторических хрониках, так и в современной глобализации фактор своеобразия кавказской идентичности. Отталкиваясь от ее малой изученности учеными, автор статьи уверен: лингвистическая, а также этнографическая специфика отдельных кавказских наций веками преобладают в процессах их развития, что позволяет Ф.Н.Хуако привести стратегию, учитывающую ментальную суть, а также культурную тональность самой нации, иллюстрируя ее воплощение на примере ассимиляции в черкесском социуме армянских переселенцев.

Ключевые слова: Кавказ, этническая идентичность, армянские переселения, черкесские армяне, история, глобализация, своеобразие.

CAUCASIAN IDENTITY IN BOTH CHRONICLE AND GLOBALIZED ENVIRONMENTS (BASED ON THE EXPERIENCE OF CIRCASSIAN ARMENIANS)

Fatimet KHUAKO

Maykop State Technological University, Doctor of Philology Russian Federation
fatimah2@mail.ru

In the context of the multinational ancient Caucasus, the serious stress of a tangible and soldered ethnic unity was the promotion of their own original events. Circassogai, as interested neighbors of the Circassians here, paid special attention to participation in the development and containment of territorial brands from time immemorial. Thus, we can say: linguistic, as well as ethnographic especially often

Caucasian nations for centuries prevail in the processes of their development. Centuries of unchanging wars that have lasted here and continue in the neighborhood up to the present day, could not but affect the North Caucasian prototype, analyzing which the author sorts through the qualities and generalizes the image of the Caucasian mountaineer in the world consciousness. Illustrating the generalization on the examples of the Adyghe life that adopted the Circassogays, the author cites and generalizes the events of the activity, cultural life of Adyghea and its inhabitants. Having reviewed the history of the resettlement of Circassian Armenians in the Caucasus and embracing their adaptation here, the author of surveys on the prevalence of the original Caucasian identity, shared by the settlers.

Key words: Caucasus, ethnic identity, Armenian migrations, Circassian Armenians, history, globalization, originality

Аннотация. В обстановках многонационального древнего Кавказа серьезным фактором осязаемого и спаянного этнического единения выступило продвижение собственной оригинальности нациями. Черкесогаи, как заинтересованные соседи адыгов здесь, принимали явное участие в разработке и прогрессировании указанных территориальных брендов еще испокон веков. Тем самым, можно сказать: лингвистическая, а также этнографическая специфика отдельных кавказских наций веками преобладают в процессах их развития. Иллюстрируя обобщение на примерах принявшего черкесогаев адыгского бытия, автор приводит и обобщает события деятельности, культурной жизни Адыгеи и ее жителей. Рассмотрев истории переселений черкесских армян на Кавказ и некоторую адаптацию их здесь, автор делает выводы о распространенности своеобразия кавказской идентичности, разделенной переселенцами.

Кавказ, этническая идентичность, армянские переселения, черкесские армяне, история, глобализация, своеобразие

В обстановках многонационального древнего Кавказа серьезным фактором осязаемого и спаянного этнического единения выступило продвижение собственной оригинальности нациями. Так, в частности, несмотря на то, что запутанная длительная хроника событий, составивших судьбу армянской нации, не могла не задеть соседних черкесов, черкесогаи (черкесские армяне) выступили весьма самостоятельным этносом. Принимая в своем образе жизни этнические обязанности торговцев на заграничных путях Черкесии, черкесские армяне, как утверждают специалисты современной Википедии, совмеща-

ют в себе фактически абсолютную «ассимиляцию в обществе адыгов (черкесов) и превращение в отдельный субэтнос» [3].

Данный фактор есть настояние каждой из кавказских наций на личной своеобразности в соотнесении с атмосферой территориально ближнего этнического социума. Вооруженный фольклором тот или иной кавказский этнос действительно весьма своеобразен и произносит ошутимое, ярко отличное, слово в общекавказской мудрости. Причем фольклор при этом выступает одним из заметных орудий социального уравнивания, национального успокоения, целевого контролирования проблем этнической сохранности. Одновременно серьезной сплывающей конструкцией выступает индивидуальный для каждой из наций язык, поскольку именно он позволяет общаться семейно разграниченным частным кругам. При этом рассматриваемые как историческими, так и сегодняшними гуманитариями этнические аспекты оказываются ошутимыми стимуляторами манеры поведения и жизненного бытия. Они взвешенно контролируют как личные, так и коллективные настроения, организуют национальную ментальность, взаимоотношения, социальную адаптацию. Исследовательская стезя отнюдь не шагала насыщенной, хотя, как известно, дореволюционная историческая отечественная мысль наработала некий слой кавказоведения, каковой оказался затронутым и частично разработанным следующими учеными: А.П. Берже (СПб) в его двенадцатитомных «Актах, собранных Кавказской археологической комиссией», издававшихся на протяжении 1860 – 1904 гг.; И.А. Ограновичем в его «Провинциях Ардабильская и Серабская» (1876, Тифлис), П.С. Петуховым в его «Описании части Кавказской области между реками Егорлыком, Калаусом и Манычем, составленном капитаном Петуховым в 1843 году» (1911, Ставрополь), П.И. Головинским в его работах конца XIX в., посвященных кабардинцам; И.М. Поповым в его «Ичкерии» (1870, Тифлис), Н.С. Семеновым в его «Туземцах Северо-Восточного Кавказа» (1895, СПб), картографом Н.С. Иваненковым в его изданиях начала прошлого века (к примеру, «Горные чеченцы» (Владикавказ, 1910)). Либо уже в первой половине прошлого столетия исследовательский интерес указанных ученых к Кавказу продолжил столичный специалист А.Н. Генко, разработав «Лекции по этнографии Кавказа», тщательно применяя их к чеченской нации. Или – тогда же – А.П. Ипполитов, представляя «Этнографические очерки Аргунского округа» (Тифлис, 1868) в «Сборнике сведений о кавказских горцах».

Тем самым, можно сказать: лингвистическая, а также этнографическая специфика отдельных кавказских наций веками преобладает в процессах их развития. Такая тенденция прослеживается непосредственно в определенных научных исследованиях, но, как видно из нашего предыдущего абзаца, чаще – в работах дореволюционных авторов. В ходе изучения современных глобализационных условий данные (лингво- и этно-) грани обязаны рассматриваться посредством стратегии, учитывающей ментальную суть, а также культурную тональность самой нации. Такая стратегия беспристрастно уплотняет ощущения коллективного созвучия, поскольку выступает мощным стимулом на поле формирования пониманий той или иной национальной либо общей кавказской адекватности. В частности, являясь питательным источником для национальных созвучий этносов, стратегия иллюстрирует присущую им ощутимую прогрессивность и выдержанность. Происходит это с учетом историко-культурных обстоятельств, которые несколько подвигают порой традиционную аграрную схему вплоть до новых веков. Так, к примеру, в культурной политике одной из кавказских республик (Адыгее), этнически близкой к рассматриваемым нами черкесогаям, действующий президент Мурат Кумпилов обращает усиленную активность на восстановление и сбережение доставшихся горцам от предков черкесских садов. Как говорят сегодня о деятельности Президента Адыгеи республиканские СМИ, «Он считает, что наравне с уже известными брендами республики эти сады должны стать еще одной визитной карточкой региона» [4]. Черкесогаи, как заинтересованные соседи адыгов здесь, принимали явное участие в разработке и прогрессировании подобных территориальных брендов еще испокон веков.

Вообще это были армянские представители, нередко имевшие переселенческие судьбы, присущие всей той нации. Как убеждает своего читателя сегодня Википедия, данный этнос был подвергнут мощным нападениям, вследствие чего оказывался неуклонно перемещаемым. Не существует каких-либо противопоставлений развитой сегодня научной мысли: на протяжении последних столетий общемировые рыночные экономики, технологизация информации, цифровизация, а также прочие глобализационные развития содействовали интенсивной активизации межкультурных связей и цивилизационным контактам. Но, применительно к черкесогаям, многие хроники стартовали именно в VIII в., когда подчиненная Византии Армения сдалась наступлениям арабских мусульман. Уже тогда существенное число армянских представите-

лей оставило отечественные пенаты, спрятавшись у недалеких от них византийцев, организуя конкретные, но подчиненные территории князей. В частности, начиная с последних десятилетий XI-го столетия Армянское государство было атаковано со стороны турков-сельджуков, которые являлись ответвлением исламизированных огузов (средневековых туркоманов), изначально проживавшее на берегах древней среднеазиатской Сырдарьи. Это стимулировало оставление родных пенатов и перемещение армянской нации в северном (точнее, – в северокавказском, грузинском) направлении. Некоторые армянские семьи тогда отправились в южном направлении, точнее, – в историко-географическую область на юго-востоке Малой Азии Киликию, которая сегодня является областью Турции. В результате состоявшейся в августе 1071 года на полях Византии (г. Манцикерт, сегодня – г. Малазгирт) турками-сельджуками оказалась сформирована их начальная империя. Это был султанат Рума, состоявший из всей Армении, а также – внутренней доли Анатолии, именно из которого нарастала миграционная волна армянских представителей к прибрежным районам Азии. Подобного рода преследования длились веками, и это ко второй половине века тринадцатого более наглядно проявилось в исторической Нахичевани Азербайджана. Последующие всенародные перемещения нации по кавказским землям обусловлены татаро-монгольским наступлением и сменившимися его тамерланскими действиями. Армянские территории в этом случае насильно изымались для того, чтобы стать турецко-наполненными. Вследствие этого возникал частый затем на Северном Кавказе осязаемый спрос на землю, каковой оказывался наказанием для горского домохозяйства. Поскольку тюрко-монгольский завоеватель разместил здесь пять десятков тысяч семей, принадлежащих к иранской династии турецких каджаров, земли здесь (Карабах, Эриван, Гяндже) оказывались все более занятыми. Соответственно данным миграционным процессам на протяжении XIII – XIV столетий армянская властная стезя выступала потесненной со стороны ратных кочевников (курдов, монгол, тюрков). Таким преобразованиям также содействовали модификации в политике территориальных размещений. В данный период, по мере становления иранской (Персия), а также османской государственности преследования лишь нарастают. В таком случае северокавказские, предкавказские, крымские земли являются весьма насыщенными и спасительными местами для поселений армянских представителей.

Продолжающаяся веками планетарная цифровизация, сближающая нации и аннулирующая этническое своеобразие, реально способствует уходу из обихода наработанных бытийных конструкций. На основании этого стадии сближения отдельных наций развиваются тогда, когда происходит повреждение родовых своеобразий. Тем не менее, общемировая цивилизация отнюдь не становится однотипно стандартной: приходя на новые земли армяне, изгнанные из родных, приобретают условное право на экстерриториальность, в обстоятельствах каковой «принцип родовой гомогенности потерял свою императивность» (терминология А.Н. Генко) [1: 172]. Формирующиеся в подобных случаях цивилизационные структуры отнюдь не исключают стилевых бытийных многообразий.

Появляющиеся на Кавказе с приходом планетарных течений жизненные устройства вырабатывают разнообразные инструменты культуры, каковые порой основаны на выработанных предками механизмах. Тем самым, несмотря на возможные ассимиляции, цивилизационные культуры этносов ощутимо различаются и по сути, и по форме. Так, в частности, применительно к черкесам этнограф Барасбий Бгажноков в собственной монографии «Адыгская этика» в ряду из пяти этнических качеств адыгства наиболее достойным обозначает человекоподобие, то есть непосредственную человечность (=ц1ыхугъэ): «Ее считают и повсеместно выделяют как первую заповедь и характерную черту адыгства» [2: 16]. Или другой, духовно питающий кавказцев, ресурс – фольклор. Поскольку в глобализационных условиях современности, благодаря прогрессированию разнообразных технических и профессиональных словесных сложений, у фольклорной строки выработался конкретный прогрессивный типаж. Следовательно, весьма значимыми для науки выступают сравнительно-сопоставительные разборы межкультурных преобразований, происходивших в течение вековых событий на Кавказе.

Столетия неизменных войн, длившихся здесь и продолжающихся по содействию вплоть до наших дней, не могли не подействовать на северокавказский прототип. Сформированный историей и литературой специфический типаж кавказского представителя определенно просматривается и в условиях современности. Несмотря на то, что сегодняшняя глобализация нередко приводит к мобильным преобразованиям в культурах, менталитетах и поведении, тем не менее северокавказский типаж весьма устойчив и упорно продвигается сквозь столетия. В карьере он оглядывается на административные кресла, посты, а

также старается приобрести и сберечь престижные лавры отважного бойца, усидчивого, неумемного в своих стремлениях борца за правду. Сосредоточиваясь на проявлениях имущественных разногласий в кавказских социумах, ученые на сегодняшний день уверены: материальный признак здесь отнюдь не выступает значимым деятельностным стимулом. Позывы их бравых порывов нередко проявляются в пафосных преувеличенных победах, творимых лихо, во благо славы и доброй репутации. Частая для кавказцев манера игнорирования своего разума перед опасностью, готовность броситься в пекло являются следствием желанья загасить предсмертный трепет. Этническое мнение, бытовавшее внутри нации, нередко возносило к небесам семейные приоритеты во всех обязательных комплексах твердых и неуклонных поведенческих установок. Эта, состоявшая из семейных приоритетов, «родовая» (терминология А.Н. Генко) психология «нивелировала личность, но наделяла индивида статусными показателями группы, к которой он принадлежал» [1: 170].

Адыгея в качестве действующего участника общепланетарного культурного процесса начала работать лишь с девятого десятилетия прошлого века. Оптимально усиленное умножение цивилизационных нитей случается на грани столетий. Свообразным стимулятором к организации научных исследований выступило решение Кабинета министров Адыгеи «Об утверждении программы сохранения и использования генетического фонда «старых черкесских садов» и дикоплодовых деревьев и кустарников на территории РА», начатое в 1996 году. В рамках значимого внимания к культуре, присущей черкесской миграции за рубежом, в последние годы 90-х прошлого века в Турцию оказалась осуществлена экспедиция адыгских этнографов. С ориентацией на собранные в ней ресурсы древних адыгских песен филологом Р. Унароковой оказалась защищена докторская диссертация и издана монография. Одновременно посвященной трудностям сбора фольклора адыгов выступила в 2008 году в Нальчике научно-практическая конференция «Проблемы изучения и публикации материалов по фольклору и этнографии народов Юга России». Ученые нового века признают наличие прямого воздействия конструкции имеющегося социума на габариты его созвучия внутри той или иной нации. Публикация сборника подобных ресурсов с комментариями и переводами способна оказаться инструментом притягивания интереса к народной культуре, к ее традициям, а также – гарантией приближения к фольклорному языку.

Причем культура при этом отнюдь не наследуется на семейном уровне посредством гено- формул, она накапливается в течение жизненной судьбы. Так, к примеру, искусство древесной прививки наследовалось от старших к младшим. В обстоятельствах преобладания семейного бытия имело место быть ослабление движений интеграции. Соответственно этому личностная отнесенность оказывалась мощнее, чем общенациональная тождественность. К тому же наличие группы родственников у горцев оценивается выше, чем место в этнической среде. К примеру, испокон веков среди кавказцев любой воин, начиная свою дорогу, захватывал с собой ростки предпочитаемых им плодов, каковые умело прививал к стволам диким. Общепланетарные цифровые, а также культурные новые технологии есть итог прогрессирования инфо- социума. Глобализация на планетарном уровне сжигает межнациональные рубежи, однако, – усиливает соперничество, к тому же, – и на культурном, и на интеллектуальном уровнях. Растущие на Кавказе в диких условиях плодовые деревья сохранились и до текущих веков. В наше время ряду деревьев более двух столетий, однако они все так же результативно продуцируют. Имевшиеся течения социальных культур демонстрируют: сегодняшнее региональное различие культур преимущественно выступает итогом этнического взаимовлияния, нежели национальной нелюдимости. Очевидно следующее: в прежние столетия аграрная результативность для кавказца выступала не только личным интересом, но и вопросом достоинства. Он обеспечивал дальние дороги тенистыми аллеями с тем, чтобы любой путник способен был расслабиться, а также, – победить жажду, утолить голодание сладкими плодами.

Социум обязан внушать цивилизационную идентичность любому представителю той или иной нации. Тем самым выполняет свою обязанность и внушительный кавказский социум. Он презентует всякому, родившемуся в своих границах, имеющиеся нормативно-поведенческие каноны. Представляя индивиду конструктору с наработанными нацией жизненными установками, социум позволяет устойчиво распределить пределы, за гранями коих может завершиться стандартное бытие, уступающее позиции культурному своеобычию. Подобное, присущее Кавказу, восприятие культуры дает ей возможность выступать отнюдь не в качестве окаменевшей, хроникально неподвижной системы.

Выводы. Кавказская культура, порождающая соответствующую идентичность, являет собой мобильно развивающийся, неугомный клубок взаимных влияний, который постоянно нарабатывает свежие формы и макеты

социально-интеллектуальной деятельности. Таким образом, как можно судить по биографиям приходящих сюда переселенцев (черкесогаев), коллективное бытие кавказских наций насыщено кодексами чести, которые несут строгие морально-ценностные табу, порой обладающие региональным смыслом. Ввиду того, что горы Кавказа выступают родными землями для целого ряда наций, выскажемся далее мыслью из методического пособия наших МГТУ- коллег: «главным, духовно сплывающим фактором является то, что является продуктом диалогического развития этнокультур, – общечеловеческое, интернационалистическое видение мира, противостоящее национальным фобиям, розни между народами» [5: 7]. Но и продолжим немного эту мысль: помимо общей человечности кавказская идентичность в своей завидной и привлекательной устойчивости обусловлена имеющимся в мировой истории стандартом раздумий о Кавказе, а также весьма обаятельными словесными творениями и поэтов, и этнографов, сумевшими сотворить редкий, своеобразный территориально-этнический лик кавказского социума и его культуры. И это не могло не отразиться на судьбах и характерах адаптированных здесь черкесогаев.

References

1. Anchabadze Yu. "Lectures on the Ethnography of the Caucasus" by Anatoly Genko: Chechen pages. [«Lektzii po etnografii Kavkaza» Anatoliya Genko: chechenskiye stranitsy] // Ethnogenesis and ethnic history of the peoples of the Caucasus: A collection of materials of the I International Nakh Scientific Congress. Grozny: JSC "Publishing and Printing complex "Grozny Worker", 2018. 1072 p. PP. 166-175. (in Russian)
2. Bgazhnokov B. Adyghe ethics [Adygskaya etika]. Nalchik: El-Fa, 1999. 96 p. (in Russian)
3. Historical migrations of the Armenian population [Istoricheskie migracii armyanskogo naseleniya]. Material from Wikipedia – free Encyclopedia // https://ru.wikipedia.org/wiki/%D0%98%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5_%D0%BC%D0%B8%D0%B3%D1%80%D0%B0%D1%86%D0%B8%D0%B8_%D0%B0%D1%80%D0%BC%D1%8F%D0%BD%D1%81%D0%BA%D0%BE%D0%B3%D0%BE_%D0%BD%D0%B0%D1%81%D0%B5%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F (in Russian)
4. Shram N. The second life of Circassian gardens [Vtoraja zhizn Cherkesskih sadov] // Soviet Adygea. 2023. May. № 16 (in Russian).
5. Siyukhova A.M., Kobleva Z.A. A short course of lectures on the discipline "Fundamentals of regional cultural policy and the formation of cultural and leisure programs" [Kratkij kurs lekciij po discipline "Osnovy regionalnoj kulturnoj politiki i formirovanije kulturno-dosugovyh program]. Maykop: Ajax, 2008. 141 p. (in Russian).

ՀՏԴ 93.94

**ՇԻՐԱԿԸ IV-XVIII դդ.
(պատմական ակնարկ)**

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
պ.գ.թ., դոցենտ, ՀՀ
armenani@mail.ru

Տրդատ Գ-ի կողմից Կամսարականներին հանձնված Շիրակ գավառը, չնայած տարածաշրջանում ընթացող քաղաքական բուռն գործընթացներին, մինչև XV դարավերջ պահպանվեց իբրև մեկ ամբողջական վարչաքաղաքական միավոր: XVI-XVII դդ. իրավիճակը փոխվեց. թուրք-պարսկական պատերազմների հետևանքով գավառը տրոհվեց Արևելյան և Արևմտյան հատվածների՝ իրենց ուրույն պատմաքաղաքական զարգացումներով ու ճակատագրերով: Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը սկզբնաղբյուրների անաչառ օգտագործումն է, հիմնահարցերի աղբյուրագիտական վերլուծությունը՝ իրադարձությունների անկողմնակալ լուսաբանման պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ: Սկզբնաղբյուրների համեմատական վերլուծությամբ ներկայացվում է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառի վարչաքաղաքական պատկերը IV-XVIII դդ.: Ուսումնասիրության արդյունքում հերքվեց հայ պատմագիտության մեջ ընդունված այն տեսակետը, թե Շիրակի անցումը Կամսարականներից Բագրատունիներին տեղի է ունեցել առք ու վաճառքի միջոցով: Իրականում գավառը նախ ազատագրվել է արաբական ցեղերից, ապա նոր տերերը դրամական փոխհատուցում են տվել Կամսարականներին: Հերքվեց նաև հայ պատմագիտության մեջ առայսօր արմատացած այն սխալ տեսակետը, թե Արևելյան Շիրակը Երևանի խանությանն է միացվել XVIII դ. երկրորդ կեսին՝ Հուսեյն-Ալի խանի օրոք: Ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Շորագյալի սուլթանությունը Երևանի

խանության մաս է կազմել դեռևս Զալ խանի (Երևանի խանը մինչև 1670 թ.) իշխանության տարիներին:

Բանալի բառեր՝ Շիրակ, Արշարունիք, գավառ, Բագրատունի, Կամսարական, տիրապետություն, Երևանի խանություն, վարչամիավոր, Շորագյալ:

SHIRAK IN THE IV-XVIII CENTURIES (historical review)

Armen HAYRAPETYAN

Shirak Center for Armenological Studies of NAS RA, PhD in History, Armenia
armenani@mail.ru

The province of Shirak, initially granted by Trdat III to the Kamsarians, managed to maintain its integrity as an administrative and political entity despite the tumultuous political developments in the region. This continuity endured until the conclusion of the 15th century. However, significant changes occurred as a consequence of the Turkish-Persian conflicts, leading to the division of the province into Eastern and Western parts, each with its distinct historical-political events and fates.

The study relies on a methodological framework that prioritizes the objective utilization of archival materials, the analysis of historical sources, and the application of the historical-comparative method to offer an unbiased portrayal of events. Through a comparative analysis of primary sources, the administrative and political landscape of the Shirak province within the broader context of the Hayrarat province of Great Armenia from the 4th to the 18th centuries is elucidated.

The findings of the study challenge prevailing narratives in Armenian historiography. Specifically, the notion that the transition of Shirak from the Kamsarakans to the Bagratids occurred through a transaction of purchase and sale is debunked. Instead, it is revealed that the Bagratids initially liberated the province from Arab tribes and subsequently compensated the Kamsarakans financially. Additionally, the study refutes the erroneous belief, entrenched in Armenian historiography, that Eastern Shirak was annexed to the Yerevan khanate in the 18th century. It establishes that the Shoragyal Sultanate was, in fact, a part of the Yerevan

Khanate during the reign of Zal-khan, who held the position of Yerevan Khan until 1670, providing robust evidence to support this claim.

Keywords: Shirak, Arsharunik, Gavar, Bagratuni, Kamsarak, domination, Yerevan khanate, administrative composition, Shoragyal.

ШИРАК В IV-XVIII ВВ. (исторический обзор)

Армен АЙРАПЕТЯН

Ширакский центр арменоведческих исследований НАН, к.и.н., Армения
armenani@mail.ru

Провинция Ширак, переданная Трдатом III Камсарянам, несмотря на бурные политические процессы в регионе, до конца XV века сохранялась как одна целостная административно-политическая единица. Ситуация изменилась в результате турецко-персидских войн: провинция раскололась на Восточную и Западную части, со своими историко-политическими событиями и судьбами. Методологическую основу исследования составляет непредвзятое использование архивного материала, источниковедческий анализ вопросов, с использованием историко-сравнительного метода непредвзятого освещения событий. Посредством сравнительного анализа первоисточников представляется административно-политическая картина провинции Ширак Айраратской губернии Великой Армении IV-XVIII вв.. В результате исследования было опровергнуто принятое в армянской историографии мнение о том, что переход Ширака от Камсараканов к Багратидам произошел путем купли-продажи. На самом деле провинция сначала была освобождена Багратидами от арабских племен, а затем новые хозяева выплатили Камсаракам денежную компенсацию. Было опровергнуто также укоренившееся до сих пор в армянской историографии ошибочное мнение о том, что Восточный Ширак был присоединен к Ереванскому ханству в XVIII веке. Доказанным можно считать тот факт, что Шорагяльский султанат входил в состав Ереванского ханства еще в период правления Зал-хана (Ереванский хан до 1670 г.).

Ключевые слова: Ширак, Аршаруник, Гавар, Багратуни, Камсарак, господство, Ереванское ханство, административный состав, Шорагял

Նախաբան. Պատմական Շիրակը Մեծ Հայքի Այրարատ նահանգի 8-րդ գավառն էր՝ 3730 կմ² տարածքով: Արևմուտքում նրան հարևան էին Վանանդի, հարավում, Արշարունիքի (Երասխաձոր), արևելքում, Նիգի, Արագածոտնի, Վերին Տաշիրի, իսկ հյուսիսում, Աշոցքի գավառները¹: Գավառի բնական սահմաններն անցնում էին արևմուտքում, Ախուրյան և Կարս գետերի ջրբաժանով, հյուսիսում, Մեծ Աղբաբա լեռնագագաթով, հասնելով մինչև Ղրզըլ-Դաղ (Կարմիր սար), Ախուրյան գետ և Փամբակի լեռնաշղթա: Արևելքում գավառի սահմանը Ախուրյան, Փամբակ և Ղազախ գետերի ջրբաժանն էր, ինչպես նաև Քեփենեկի (Քյափանակ) լեռնագագաթները, Ղուղաթը (Շարայի լեռ) և Արագածի հրաբխային ձագարը, իսկ հարավում այդ սահմանը ձգվում էր Արագածից մինչև Թոփ-քար (Գնդաքար), ապա Ղաբախ-Թափայով հասնում մինչև Անձավիզուխ, որից հետո, բարձրանալով արևմուտք, կիսում էր Ախուրյանը Տեկոր և Արաքս գետերի ջրբաժանով²: Գավառի ամենամեծ գետը՝ Ախուրյանը, սկիզբ է առնում Արփա լճից և կիսելով Շիրակի սարահարթը երկու մասի, Երվանդաշատ քաղաքի մոտ թափվում Արաքսը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Մ. Խորենացու հավաստմամբ, գավառն իր անունը ստացել է Արամայիս նահապետի որդի Շարայից, որին «...զուրվածին և զշատակեր, առաքել ամենայն աղխին ի դաշտն մի... արգաւանդ և բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերին, որ անուանեցաւ Արագած»³: Պատմահայրն անդրադարձել է նաև Շիրակը Տրդատ Գ-ի կողմից Կամսարականներին նվիրելու հարցին: Նրա պնդմամբ, երբ Սասանի որդի Արտաշիրը, սպանելով Արտավան Ե-ին, դարձավ թագավոր, պահլավյան Ասպահապետի ու Սուրենի ցեղերն ընդունեցին նրա

¹ Երեմյան Ս., Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 73:

² Այլիշան Ղ., Շիրակ. Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 1:

³ Խորենացի Մ., Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1881, էջ 39-40:

իշխանությունը, իսկ Կարենի Պահլավը դիմադրեց և կոտորվեց¹: Ամբողջ ցեղից ողջ մնացած Պերոզամատ անունով միակ երեխան դարձավ Կամսարական տոհմի նախնին: Վերջինիս որդի Կամսարին Տրդատ Գ-ն բերեց Հայաստան, ապա Գրիգոր Լուսավորչի ձեռամբ մկրտելով՝ տեղ դարձրեց Երասխաձոր ու Շիրակ գավառներին: Որոշ ժամանակ անց Երասխաձոր գավառը վերանվանվեց Արշարունիք, ի պատիվ Արշավիր Կամսարականի: Երկրորդ գավառի անունը մնաց անփոփոխ, և Կամսարականները շարունակեցին կրել իրենց «Տիարք Շիրակայ» կոչումը²: Ավելին, Ս. Կոզյանի հավաստմամբ, «...Շիրակն իր անունով այնքան էր հռչակված, որ դրվել էր նաև հարավում Աղձնյաց մեջ իբրև Լոր Շիրակ կամ Լոր Շիրական»³:

Շիրակում և Արշարունիքում Կամսարականների տիրապետությունը շարունակվեց մինչև VIII դ. վերջերը, ապա պայմանավորված տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակով, գավառներն անցան Բագրատունիներին:

Հայ պատմագրության մեջ XI դ. սկսած արմատացել է մի սխալ կարծիք, թե իբր Բագրատունիներն Արշարունիքն ու Շիրակը գնել են 785թ. Դարբանդի մոտ սպանված Կամսարական տանուտեր Ներսեհի գավակներից: Ստեփանոս Տարոնեցու հավաստմամբ, մայրական գծով Մամիկոնյան տոհմից սերած Աշոտ Մսակերը նախ ժառանգական իրավունքով տիրացել է Տարոնին, ապա «գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսարականաց...»⁴:

¹ Կոզեան Ս., Կամսարականներու ծագումը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1924, թիւ 3-4, էջ 125: Հիւրշման Հ., Հայոց տեղւոյ անունները, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1905, թիւ 12, էջ 378:

² Գեորգեանց Ս., Համառոտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ և Մայրաքաղաքին Անվոյ, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 10:

³ Կոզեան Ս., Կամսարականները «Տիարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 31-32:

⁴ Տարոնեցի Ս. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական: Երկրորդ տպագրութիւն: Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:

Մակայն, արաբական տիրապետության ողջ ժամանակաշրջանում Հայաստանում նմանատիպ գործարքներ հիշատակված չեն: Ավելին, հայտնի է, որ խալիֆայության նվաճած երկրները թեկուզ և ձևականորեն, բայց համարվում էին խալիֆի սեփականությունը¹: Հետևաբար դժվար է պատկերացնել, թե Բագրատունիները խալիֆի սեփականություն հանդիսացող գավառները կարող էին ուղղակիորեն գնել Կամսարականներից: Փոխարենը կարելի է ենթադրել, որ Բագրատունիներն ինչ-որ պահ օգտագործելով նախ զենքի ուժով տիրացել են գավառներին, իսկ հետո դրամական հատուցում տվել նախկին տերերին: Եվ դա տեղի է ունեցել հետևյալ կերպ. Ջահապ անունով արաբ մի զորահրամանատար, չունենալով խալիֆից կամ Էրմինիայի Դվինում նստող ոստիկանից թույլտվություն, տիրանում է Արշարունիքի մի մասին և պատրաստվում է այն ամբողջությամբ գավթելու: Այս առիթն օգտագործելով՝ Բագրատունիները հարձակվում են նրա վրա և վտարում գրավված տիրույթներից: Կամ ինչպես պնդում է Վարդան Արևելցին, «...ելեալք ի կողմամբքն Շիրակայ, հարին զգօրսն Իսմայիլի, որ անդ, եւ գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք և զգաւառն Տայոց»²: Եվ միայն դրանից հետո ըստ Մ. Չամչյանի «... էտուն գանձ բազում ի Կամսարականս, և գնոյ առին ի նոցանէ զայն գաւառ. ուր և նորոզ շինեալ Աշոտոյ զերկրորդն Անի, որ յառաջն էր աւան փոքրիկ, բնակեցոյց ի նմա զընտանիս իւր»³: Կամսարականներին տրված դրամական փոխհատուցման մասին ակնարկում է նաև Ղ. Ալիշանը. «Աշոտ Մսակեր պետ Բագրատունեաց, որ գանձագին արար ի Կամսարականաց զերկիր նոցա Արշարունիս և զՇիրակ, և զմասն մի սորա թափեաց զինու

¹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմեց Հ.Թ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 132:

² Բարձրաբերդցի Վ., Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 76:

³ Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց: Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեան 1784: Կ. Բ., Վենետիկ, 1785, էջ 415:

գորութեամբ յԱրաբացուց, առաջին յետ բազում դարուց նորոգեալ երևի ամրին Անոյ յելս Ը դարու, ուր և հաստատե զբնակութիւն իւր»¹:

Ի տարբերություն Կամսարականների, գավառներին տիրացած Բագրատունիներն առավել մեծ տեղ տվեցին Շիրակին: Արդեն Աշոտ Մսակերի որդի Հայոց սպարապետ Սմբատ Խոստովանողն իր աթոռանիստը դարձրեց գավառի ամենամուր բերդը, Անին²: Բագրատունիների և հատկապես Գագիկ Ա թագավորի օրոք Շիրակը՝ որպես Անի-Շիրակի թագավորության կենտրոն, հասավ իր տնտեսական և ռազմական բարգավաճման բարձրակետին: Ցավոք, Գագիկ Ա-ի մահից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Հայոց գահը կռվախնձոր դարձավ նրա որդիների միջև և բաժանվեց երկու մասի, Հովհաննես-Սմբատը ստացավ Անի մայրաքաղաքը, Շիրակը, Արարատյան դաշտը, Աշոցաց ձորը, Ամբերդը, Կալան և Կայծոն բերդերն ու Տավուշի գավառը, իսկ մնացած հողերը բաժին հասան Աշոտ Դ-ին: Կարճ ժամանակ անց թուլակամ Հովհաննես-Սմբատն իր կտակով Անի քաղաքն ու Շիրակը հանձնեց Բյուզանդիային: Այն նույն Բյուզանդիային, որ սկսած Ջդվերջերից արդեն տիրացել էր Բարձր Հայքի մեծ մասին, Տայքին և Վասպուրականին: 1045թ. բյուզանդացիները Անին հռչակեցին կատապանության կենտրոն:

Բյուզանդիայի հայահալած քաղաքականությունը թուլացրեց հայ ժողովրդի ռազմական ուժը, և անպաշտպան մնացած երկիրն անկարող եղավ դիմադրելու Կովկաս ներթափանցած սելջուկ-թյուրքերի հարձակումներին: Գրավելով Իրանը՝ վերջիններս XI դ. կեսերին ներխուժեցին Հայաստան: 1064 թ. սելջուկյան չորրորդ արշավանքի մասին Ստ. Օրբելյանը գրում է. «...առին և զԿարս, առին զբոլոր գաւառն Շիրակայ և Վանանդայ և Արշարունեաց և զԱրարատյան և զՍիսական աշխարհս և զԲաղացն և զամենայն երկիրս մինչ ի դուռն Տիգրեաց»³: Արշավանքին մասնակցած

¹ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 37:

² Նույն տեղում:

³ Օրբելեան Ստեփանոս, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 376-377:

Գանձակի Աբուլսվար էմիրը 1072 թ. Ալփ-Ասլանից գնեց ավերված Անին ու հանձնեց իր որդուն՝ Մանուչեին: Այսպես Անիում սկիզբ դրվեց Շադդադյան տիրապետությանը, որ որոշ ընդհատումներով շարունակվեց մոտ 125 տարի:

Մանուչեն վարեց հայամետ քաղաքականություն: Մինչդեռ նրա տկար ու վախկոտ որդի Աբուլսվար Բ-ն (մոտ 1118-1124թթ.), չկարողանալով կառավարել և տեսնելով, որ Գանձակի Սելջուկ Մելիք Տուղրիլ Շահը գրավել է Շիրակի մի մասն ու սպառնում է Անիին, որոշեց 60.000 դինարով այն վաճառել Կարսի ամիրային¹: Այդ մասին տեղեկացած անեցիները 1123թ. ապստամբեցին և դիմեցին վրաց թագավորի օգնությանը: Ժամանակակիցն այդ կապակցությամբ գրել է. «Տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անույ և Շիրակ գաւառի, խորհեցեալ էլս գտանել մրրկին ձեռն տալով յարքայն Վրաց ի Դաւիթ, նենգեցին ամիրային Աբլսուարայ, որդւոյ Մանուչէի, որ տիրէր քաղաքին յետ հօրն մահու, առնլով զթագաւորն ի ներքս, բանալով զդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն, եղև վնաս արեան և ոչ միոյ շնչոյ»²:

Շադդադյան տիրապետությունից Անին վերջնականորեն ազատագրվեց միայն 1199 թ.: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում Չաքարե և Իվանե իշխանների զլխավորությամբ հայ-վրացական զորքերն ազատագրեցին նաև Արարատյան աշխարհը, Արցախն ու Սյունիքը:

Նոր ազատագրված Հյուսիսարևելյան Հայաստանը բաժանվեց Չաքարյանների միջև: Շիրակ գավառը, Անի մայրաքաղաքով, Լոռու մի մասը և այլ գավառներ, մինչև Բասեն անցան Բագրատունյաց «շահն-շահ»-ի տիտղոսն իրեն վերագրած ամիրսպասալար Չաքարեին: Իվանե աթաբեկը ստացավ Լոռվա մյուս մասը, Այրարատյան նահանգի արևելյան մի քանի շրջաններ, Սևանա լճին հարակից տարածքները և Սյունիքի հյուսիս-

¹ Ալչոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 298:

² Անեցի Սամուել, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 125-126: Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, Կ. Ս (Ե-ԺԲ դար), Երևան, 1934, էջ 218:

արևելյան մասը: Չաքարյան երրորդ իշխանությունը տարածվեց Տավուշի, Փառիսոսի ու Գարդմանի վրա:

Ցավոք, ձեռք բերված խաղաղությունը երկարատև չեղավ: Արդեն 1226 թ. Խորեզմի շահ Ջալալ աղ-Դինը, հալածվելով մոնղոլների կողմից, գրավեց Գանձակը, Լոռին, Տփխիսը և մտնելով Շիրակ, պաշարեց Անին: Տասը տարի անց՝ 1236 թ., նվաճելով Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները, Անին գրավեցին մոնղոլ զորավար Չարմաղանի զորքերը: Մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում Անիում և Շիրակում իբրև Չաքարյան իշխողներ հիշատակվում են ամիրսպասալար Չաքարեի որդի Շահնշահ Ա-ն, նրա որդիներն ու թոռները: Ըստ Ղ. Ալիշանի՝ Չաքարյաններն Անիում գոյատևեցին մինչև XIV դ. առաջին կեսեր (Շահնշահ Ա-ի թոռներ Շահնշահ Բ-ը (մահացած 1320 թ., Վահրամ, Չագա)¹:

Մոնղոլական արշավանքներին հաջորդած թուրքմենական ցեղերի (կարա-կոյունլու, աղ-կոյունլու) շուրջ մեկդարյա տիրապետությունը ոչ միայն տնտեսական կործանման եզրին հասցրեց տարածաշրջանը, այլև պատճառ հանդիսացավ արդեն ուրվագծվող թուրք-պարսկական բախումների:

XVI դ. սկզբներին Մերձավոր Արևելքի քաղաքական թատերաբեմում կարևոր դեր սկսեցին խաղալ նոր կազմավորված Մեֆլեյան Իրանն ու Օսմանյան Թուրքիան: Այդ ժամանակներից սկսած՝ Հայաստանը ավելի քան երկու դար դարձավ թուրք-պարսկական պատերազմների արյունոտ թատերաբեմ:

XVI դ. սկզբներից մինչև Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պահը ընկած ժամանակահատվածի՝ Շիրակի քաղաքական պատմությունը, որ այս առումով գրեթե լիովին նույնանում է ամբողջ Արևելյան Հայաստանի քաղաքական պատմությանը, ավերում, սով ու կոտորած բերող թուրք-պարսկական պատերազմների մի մտայլ ժամանակագրություն է: Ուսումնասիրվող խնդրի տեսակետից մեկ առ մեկ թվարկել և նկարագրել այդ ամենը, կարծում ենք, անհրաժեշտ չէ: Նպատակահարմար

¹ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 101:

ենք համարում քննության ենթարկել միայն քաղաքական այն խոշոր իրադարձությունները, որոնք առանցքային նշանակություն ունեցան Շիրակի՝ նշված ժամանակաշրջանի պատմության համար:

Թուրք-պարսկական առաջին պատերազմը սկսվեց 1512 թ. սուլթան Սելիմ Ա-ի և Շահ-Իսմայիլի միջև ահաբեկիչ նամակների փոխանակումից հետո: Վճռական ճակատամարտում, որ տեղի է ունենում Չլդրանի դաշտում 1514 թ. օգոստոսին, Շահ-Իսմայիլը ծանր պարտություն կրեց և իր զորքերի մնացորդներով փախավ երկրի խորքերը՝ թուրքերին թողնելով Արևելյան Հայաստանի մեծագույն մասը, այդ թվում նաև Շիրակը:

Արևելյան Հայաստանին տիրանալու մարմաշը XVI դ. 50-ական թվականների առաջին կեսին թուրք-պարսկական նոր պատերազմի պատճառ դարձավ: Նախահարձակ եղած Շահ Թահմազի արշավանքին ի պատասխան, թուրքերը 1554 թ. Կարսի վրայով անցան Ախուրյան գետը, մտան Արարատյան դաշտ և շարժվեցին դեպի Երևան՝ ճանապարհին ավերելով և հողին հավասարեցնելով գյուղերն ու շեները: Այս աղետաբեր արշավանքի հետևանքով Շիրակի դաժան ավերումների վերաբերյալ թուրք պատմագիրներ Իբրահիմ Փեչևին ու Սոլաք Զադեն գրում են. «Հաղթական բանակը քանդեց ու ավերեց այդ քարաշեն գյուղերը, շինությունները ոչնչացրեց ու հողին հավասարեցրեց»¹:

1555 թ. Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որով Հայաստանն առաջին անգամ բաժանվեց այդ տերությունների միջև: Այդ բաժանման արդյունքում Հայկական Պար լեռնաշղթայից դեպի հյուսիս ընկած շրջանները և նրանց մեջ նաև Արևելյան Շիրակը մնացին պարսկական տիրապետության տակ: Սակայն հաշտությունը երկարատև չեղավ: XVI դ. 70-ական թվականների վերջերից սկիզբ առավ թուրք-պարսկական պատերազմների մի նոր շրթա, որ գրեթե առանց ընդհատման տևեց 12 տարի՝ 1578-ից մինչև 1590 թթ.: Հարձակման անցած թուրքական 300.000-ոց բանակը, գրավելով Շորագյալի, Թալինի,

¹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Չ. Ա. Կազմ., Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 33:

Ակչակալայի և Սուրմալուի բերդերը, մտավ Երևան, ապա տիրացավ ողջ Անդրկովկասին: Վերջնական կործանումից խուսափելու համար պարսիկները ստիպված եղան 1590թ. հաշտություն խնդրել թուրքերից, զիջելով Վրաստանը, Արևելյան Հայաստանը, Շիրվանն ու Ատրպատականը¹:

Սակայն, նվաստացուցիչ այս պայմանագիրը երկար կյանք չունեցավ: Կորցրածը վերադարձնելու ակնկալիքով պարսից Շահ-Աբասն արդեն 1603 թ. անցավ հարձակման, գրավեց Թավրիզը, Նախիջևանը, ապա պաշարեց Երևանը: Դրան զուգընթաց, պարսկական մեկ այլ զորաբանակ արշավեց դեպի արևմուտք՝ սոսկալի ավերածության ու կոտորածի ենթարկելով Շիրակի, Էրզրումի, Բասենի, Խնուսի գավառները, ինչի մասին առանձնակի ցավով են վկայել Առաքել Դավրիժեցին² և Զաքարյա Քանաքեռցին³: Թուրքերը պարսկական հարձակմանը պատասխանեցին Երևանի անկումից միայն երկուս ու կես ամիս անց, երբ Շահ-Աբասը տիրել էր նաև Կարսին. «...և եհաս ի գաւառն Շիրակավանայ»⁴: Սթափ դատելով, որ ուժերի քանակական հարաբերությունը իր օգտին չէ, և բաց ճակատամարտում թուրքերին դիմադրելն անհնար կլինի, Շահ-Աբասը նահանջեց՝ ամայացնելով իր նահանջի ճանապարհին ընկած բոլոր բնակավայրերը, տեղահան անելով բնակչությանը, «... սկսեալ ի կողմանցն Նախիջևանոյ, զԵղեգնաձոր, զԳեղամ, զԼոռի, զՀամգաչիման, զՆիզ, զՇարապլխա-նայ,

¹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդների մասին, հ. Բ, Կազմ. Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1964, էջ 272: Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Ժ, Խմբ. Գիւտ Աւագ Քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 37-39:

² Դավրիժեցի Առաքել, Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցւոյ, Վաղարշապատ, 1884, էջ 29-30:

³ Քանաքեռցի Զաքարիա, Զաքարեայ Սարկաւազի Պատմագրութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 18: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.), հ. Ա, Կազմեցին Ա. Հովհաննիսյան, Վ. Հակոբյան, Երևան, 1974, էջ 129-130:

⁴ Նաջարյան Հ., XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարեգրությունը, Երևան, 1959, էջ 40:

զՇիրակ, զՋարիշատ, և զդաշտն Արարատու, զԵրևան քաղաք, զԿոտեւ գաւառ, զԾաղկնաձոր...», - գրում է Ջաքարյա Քանաքեռցին¹:

1639 թ. կնքվեց թուրք-պարսկական հաշտության նոր պայմանագիր, որ պատմությանը հայտնի է Կասրի-Շիրինի անունով: Այդ պայմանագրով որոշված սահմանները գրեթե անփոփոխ մնացին մինչև XIX դարասկիզբ:

Կասրի-Շիրինի պայմանագրով Հայաստանը վերջնականապես բաժանվեց երկու մասի: Արևելյան Հայաստանը, որի մեջ էին Գուգարքը, Արշարունիքի մի մասը, Շիրակի արևելյան հատվածը, Արարատյան դաշտը, Երևան քաղաքով, Ապարանի շրջանը մինչև Լոռվա լեռները, Սևանա լճի ավազանը, Նախիջևանը, Սյունիքը, Արցախն ու Վասպուրականի արևելյան մասը, անցավ Պարսկաստանին²:

Խնդրո առարկայի քննության տեսակետից տարածաշրջանի XVI-XVII դդ.-ի պատմաքաղաքական անցքերի այսպիսի համառոտ շարադրանքն անհրաժեշտ համարեցինք ոչ միայն ցույց տալու, թե Շիրակի գավառը վերոհիշյալ թուրք-պարսկական պատերազմների ընթացքում քանիցս ձեռքից ձեռք անցավ, այլև ընդգծելու, թե Հայաստանի աղետալի բաժանումը ինքնին որքան առավել աղետալի եղավ այս գավառի համար՝ տրոհվելով նույնպես երկու մասերի, իրենց ուրույն ճակատագրերով ու պատմաքաղաքական զարգացումներով: Գավառի արևմտյան՝ առավել ընդարձակ հատվածը Շորագյալ կամ Շիրակավան անունով (կենտրոնը՝ Մաղասբերդ) անցավ Օսմանյան տիրապետության տակ և մաս կազմեց 1580թ. ձևավորված Կարսի նահանգին³: Արևմտյան Շիրակն Օսմանյան լուծը թոթափեց միայն 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում:

¹ *Ջաքարիա Մարկաուզ Քանաքեռցի, էջ 18:*

² *Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, հրատ. 2, Երևան, 1968, էջ 378:*

³ *Կարսի նահանգի Շորագյալի սանջակը արևելքից սահմանակից էր Արևելյան Շիրակին (Շորագյալի սուլթանություն), հյուսիս-արևմուտքից՝ Ջարիշատի, հյուսիսից՝ Գուգարքի Աշոցք գավառներին, արևմուտքից՝ Թախտա և Կէչվան գավառներին, իսկ հարավից՝ Կաղզվանի գավառին: (Մանրամասն տե՛ս Մուրադյան Հ.,*

Այլ ճակատագիր ունեցավ գավառի արևելյան հատվածը:

XVI դ. վերջերին Շիրակի արևելյան հատվածում կազմավորվեց Շորագյալի սուլթանությունը՝ Արթիկ կենտրոնով: Հարավից այն սահմանակից էր Թալինի, արևելքից, Ապարանի մահալներին, արևմուտքից, Կարսի, հյուսիս-արևմուտքից, Ախալցխայի նահանգներին, իսկ հյուսիս-արևելքից, Փամբակի սուլթանությանը¹: Շորագյալի սուլթանության ձևավորման մասին ժամանակագրական առումով կարծիք են հայտնել նախ Վ. Իվանենկոն², ապա նաև Լեոն³: Երկուսն էլ իրողությունը ներկայացնում են հետևյալ կերպ. XVI դ. երկրորդ կեսին պարսից շահերի հրամանով Բորչալու և Ղազախ գավառներում բնակություն հաստատեցին մոտ 35.000 թաթարներ: Այդ երկիրը պատկանում էր Վրաստանին և սկզբնապես բնակեցված էր հիմնականում հայերով, որոնք, տեղի տալով թաթարներին, հեռացան ավելի ապահով վայրեր (տեղում մնացին շատ քչերը): Թաթարները՝ որպես հուսալի տարր, չպետք է թույլ տային վրացիների ընդլվել Իրանի դեմ և միևնույն ժամանակ մշտական հսկողության տակ պիտի պահեին Վրաց արքունիքը: Սկզբում այս թաթարներն անկախ էին և կառավարվում էին իրենց խաների կողմից, բայց Նադիր Շահը սրանց ենթարկեցրեց վրաց Թեյմուրազ թագավորին, իսկ արդեն Հերակլ Բ-ն, օգտվելով Իրանում տիրող խառը իրավիճակից, Վրաստանը հռչակեց անկախ ու լրիվ իշխանություն ձեռք բերեց նաև թաթարական շրջանների կամ, այսպես կոչված, թաթարական դիստանցիաների (ուղեմասեր) վրա: Դրանք Աղստև գետի մոտ բնակվող դագախական, սրանցից հարավ-արևելք՝ Գյանջայի խանության սահմանին, Շամշադինի, արևմուտքում՝ Դեբեդ գետի մոտ, Բորչալուի, սրանից դեպի հարավ, Փամբակի, իսկ

Կարսի մարզի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006, էջ 27-33, 77):

¹ Վիրաբյան Ս., Շորագյալի սուլթանությունը XVI դարի վերջերից մինչև XIX դարի առաջին քառորդը, «Պատմագիտական հետազոտություններ», Վանաձոր, 2001, էջ 38:

² Иваненко В.Н., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича, Тифлис, 1901, стр. 25-27.

³ Լեո, Երկերի ժողովածու, հ. Գ., գիրք 1, Երևան, 1969, էջ 90-91:

սրանից էլ արևմուտք՝ Երևանի խանության և Թուրքիայի սահմանին, Շորագյալի թաթարական դիստանցիաներն էին:

Սակայն անկախությունը կորցրած թաթարներին հաջողվեց պահպանել ներքին ինքնավարությունը, որ ունեին դեռևս պարսկահպատակության շրջանից: Նրանց գյուղերը կառավարվում էին աղալարների ու մեղիքների կողմից, որոնք, հողի սեփականատեր չլինելով և չվարձատրվելով պետության կողմից, ապրում էին ժողովրդից գանձված հարկերով: Իբրև ժողովրդի առաջնորդներ և նրա գորական ուժը գլխավորողներ, իրենց մեջ կենտրոնացնելով նաև ներքին դատաստանական և վարչական իշխանությունը՝ սրանք հետզհետե հայտնվեցին կատարյալ իշխողների դրության մեջ: Աղալարները նաև իրենցից մեկնումեկին ընտրում էին որպես գլխավոր՝ դիստանցիայի բոլոր բնակավայրերը կառավարելու և միմյանց միջև ծագած վեճերը հարթելու նպատակով: Ղազախում դրանք կոչվեցին վեքիլներ, իսկ Շամշադիում և Շորագյալում՝ սուլթաններ:

Պարսկական տիրապետության շրջանում Շորագյալի սուլթանությունը կամ նույն Արևելյան Շիրակը Այրարատ, Վարաժնունիք (Դարաչիչազ), Նիզ (Ապարան), Մազազ-Ուրծ-Մասսյացոտն (Գառնի-Վեդի), Ճակատք (Մուրմալու), Արագածոտն (Կարբի), Կոտայք (Գրիսբուլաղ) և Սյունիք աշխարհի Գեղարքունիք ու Սողք գավառների հետ մտնում էր Չուխուր-Սաաղ կամ Չուգուր-Սաաղ¹ կոչված կուսակալության մեջ, որ առաջացել էր XIV դ. վերջերին, կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության ժամանակ²: Ադամ Օլեարիի վկայությամբ, արդեն XVII դ. կուսակալությունն ընդգրկում էր Ղափանը, Ջուղան, Սիսիանը, Քաշաթաղը, Երևանը Կրրիս-Բուլաղը, Աղստաֆան, Ապարանը, Դմանիսը, Ալզե-

¹ *Բնձիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 255:*

² *Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան Երկրում, ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1960, N 7-8, էջ 25:*

տը, Չըլդրը և շատ այլ շրջաններ¹: Ինչ վերաբերում է բուն Երևանի խանության XVII դ. սահմաններին ու տարածքի մեծությանը, ապա այդ մասին վկայությունները տարտամ են ու ոչինչ չասող և թույլ չեն տալիս մեզ հստակ պատկերացում կազմել այդ ժամանակաշրջանում Արևելյան Շիրակի պատկանելության հարցի մասին: Օրինակ, այդ դարի երկրորդ կեսի հայտնի հեղինակներից Շարդենը Երևանի խանության սահմանների վերաբերյալ բավարարվում է միայն հետևյալ անորոշ արտահայտությամբ. «Երևանի խանությունը տարածվում է Երևանի շուրջը ավելի քան քսան մղոն: Այդ տարածության մեջ կան քսաներեք մենաստաններ և հինգ կուսանոցներ»²: Փաստորեն, ժամանակակից ճանապարհորդի վկայությունը բանալի չի տալիս որևէ չափով մեկնելու Երևանի խանության գրաված տարածքի ու սահմանների իրական մասշտաբները: Նույնչափ թերի են նաև հայ ժամանակագիրների և վրաց աղբյուրների վկայությունները: Այսպես, XVII դ. հեղինակ Հակոբ Կարնեցին Երևանի խանության սահմանների մասին գրում է միայն, որ նրա խանը «մեծ պարոն է և բազում զորաց տեր. և ունի սինոռ մինչև ի շրջապատն Մասիսոյ, երկիրն Երեվանայ և մյուս կողմն մինչ ի Արտագ, որ է Մակու և Յապաղան»³: Այս վկայությունից հայտնի է դառնում միայն, որ Երևանի խանության սահմանները հարավ-արևելքում ձգվել են մինչև Մակուի մերձակայքը, ընդգրկելով Արարատյան դաշտն իր շրջակայքով: Նույն հեղինակի մեկ այլ անուղղակի վկայությունից մեզ քիչ թե շատ հայտնի է դառնում Երևանի խանության նաև արևմտյան սահմանը, երբ խոսելով թուրքական տիրապետությունների արևելյան սահմանների մասին, գրում է. «Եւ ի յարևելից կողմն Ախալցխոյ և

¹ *Olearius Adam, Voyages Très-curieux & très-renommez faits en Moscovie, Tartarie et Perse, P.1, Amsterdam, 1727, p. 22.*

² *Путешествие Шардена по Закавказью в 1672-1673гг., Перевод Е.В. Бахутовой и Д.П. Косовича, Тифлис, 1902, с. 248.*

³ *Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դարերի, հ. 2, Գազմ., Վ.Ս. Հակոբյան, Երևան, 1956, էջ 557:*

Չլտրոյ երկիրն և Շիրակավանս երկիրն, Յանի քաղաքն իւր թէմովն մինչ ի դուռն Էրեւանայ...»¹:

Երևանի խանության հյուսիսային սահմանի մասին վկայություն ունի XVIII դ. վրաց անանուն հեղինակներից մեկը: Նկարագրելով Վրաց Կոստանդինի որդի Դավիթ թագավորի տիրությունը, սա ընդգծում է, որ հարավում դրանք հասնում են «... մինչև Երևանի սահմանը, որև տարածվում է մինչև Բամբակ և Լոռի և մինչև Ղազախի սահմանը»²: Ինչ վերաբերում է խանության արևելյան սահմանին, ապա հայտնի է, որ Երևանի խանությունը այդ կողմում շփվում էր Նախիջևանի խանության հետ, և դրանց սահմանագիծը սովորաբար անցնում էր Գեղամա լեռների հարավային վերջավորություններով: Այսպիսով վերոբերյալ վկայությունների համադրմամբ կարելի է պնդել, թե Երևանի խանությունը XVII դ. սկզբներին ձգվում էր հետևյալ սահմանների մեջ. Արևմտյան Արփաչայից (Ախուրյան) մինչև Գեղամա լեռները և Հայկական Պար լեռնաշղթայից (սա 1555թ. թուրք-պարսկական սահմանագիծ էր և այդպիսին էլ մնաց հետագա դարերում) մինչև Փամբակի լեռնաշղթան ու Արագածի հյուսիսային ստորոտները: Ասվածից հետևում է, որ Արևելյան Շիրակը XVII դ. սկզբին չկար Երևանի խանության կազմում: Սրան համամիտ լինելով՝ Թ. Հակոբյանը նշում է, թե Շորագյալը Երևանի խանության կազմի մեջ է մտել միայն կիսասանկախ խաների տիրապետության շրջանում, ի մասնավորի Հուսեին-Ալի խանի օրոք (1762-1783 թթ.)³:

Հայ պատմագրության մեջ ընդունված այս կարծիքը վիճելի է, քանի որ արդեն Ջաքարյա Քանաքեռցու կողմից XVII դ. կեսի դեպքերի, մասնավորապես Ջալ խանի (Երևանի խանը մինչև 1670 թ.) իշխանության գլուխ գալու և խանության ներքում անհուսալի ու վնասակար տարրերին պատժելու նկարագրությունից երևում է, որ Արևելյան Շիրակն արդեն այդ շրջա-

¹ Նույն տեղում, էջ 562:

² Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Բ (ԺԳ-ԺԸ դար), Երևան, 1936, էջ 144:

³ Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800թթ.), Երևան, 1971, էջ 142:

նում մտնում էր Երևանի խանության մեջ: Քանաքեռցին գրում է. «Եւ որք անդ էին, համբուրեցին զծունկ. և մունետիկ ելալ աղաղակեր, ահա Ջալ խան եղև տէր Երևանայ: Եւ ի նմին ժամու...ըմբռնեաց այր մի Այրումլու Տաշտամուր անուն. վասն զի յառաջին դանորեկց ապստամբեալ էր և Ջալս այս այլ հնարիք իմն ըմբռնեաց զնա, և կախեալ ի ոտանէն, բրածեծ արարին այնքան, մինչև մերձ ի մահ լինել. և ապա արկին ի բանտ. և բազում տուգանս առին, և արձակեցին. և զնաց ի տուն իւր ի Շիրակ. և ի բազում հարուածոց անտի մեռաւ»¹:

Արևելյան Շիրակի, XVIII դ. 30-ական թվականներին Երևանի խանության կազմում լինելու մասին շատ ավելի հստակ տեղեկություն է հաղորդում պատմիչ, ժամանակի կաթողիկոս (1734-1737թթ.) Աբրահամ Կրետացին՝ նշելով, թե Շորագյալը Երևանի խանության ինը մահալներից մեկն է. «...զի յԵրևան Թ մահալ գալով, Թ մեկիք կան. Կարբու և Ղրխպուլախու, Շորակլու, Իքտիրու, Գառնու, Ծաղկաձորու, Գեղարքունոյ, Ապարանու և Շիրակաւանու»²: Շատ ավելի ամբողջական ու որոշակի են դառնում տեղեկությունները Շորագյալի մասին՝ սկսած XVIII դ. երկրորդ կեսից:

XVIII դ. 70-ական թվականների վերջերին, կապված Հուսեին-Ալի խանի կողմից Վրաստանին հարկ չվճարելու հետ, հարաբերությունները Վրաց թագավորության և Երևանի խանության միջև լարվեցին: Բանակցություններում հաջողության չհասնելով վրաց Հերակլ Բ թագավորը 1779 թ. հարձակվեց Երևանի խանության վրա, պոկեց Շորագյալի սուլթանությունը և նրա սուլթան Ղահրամանին դարձրեց իրեն հպատակ³: Դրանից հետո Շորագյալը հետ վերցնելը դարձավ Երևանի խաների մշտական մտահոգության առարկան ընդհուպ մինչև դարավերջ. 1800 թ. վերջերին Նախիջևանի Քյալբալի խանի գլխավորությամբ պարսիկներին հաջողվեց

¹ Չաքարիա Սարկաւագ Քանաքեռցի, էջ 102-107:

² Կրետացի Աբրահամ, Պատմութիւն անցից իւրոց և Նաղր Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 61-32:

³ Бутков П.Г., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803г., т. 2, СПб., 1869, с.73. Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Երևան, 1958, էջ 32-33:

հետ բերել կորցրածը¹, սակայն ընդամենը հինգ տարով: 1805թ. ռուսական զորքերը գնեռալ-մայր Պ. Նեսվետսևի գլխավորությամբ երկրամասը վերջնականորեն միացրին Ռուսական կայսրությանը:

Եզրահանգում. Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառը մինչև VIII դ. վերջերը մնաց իբրև Կամսարական ոստան, ապա պայմանավորված տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակով, անցավ Բագրատունիներին: Ընդ որում, դա տեղի ունեցավ ոչ թե ըստ հայ պատմագիտության մեջ ընդունված առք ու վաճառքի մասին սխալ տեսակետի, այլ արաբական ցեղերի հետ ռազմական ընդհարման հետևանքով: Հաջորդ 7 դարերի ընթացքում Բագրատունյաց տիրապետությունը Շիրակում փոխարինվեց բյուզանդականով, սելջուկ-թյուրքականով, Չաքարյանով, մոնղոլականով և թուրքմենականով: Չնայած տարածաշրջանում ընթացող քաղաքական բուռն գործընթացներին՝ գավառը IVդ. մինչև XV դարավերջ պահպանվեց իբրև մեկ ամբողջական վարչամիավոր: Իրավիճակը փոխվեց XVI-XVII դդ., երբ պարբերաբար կրկնվող թուրք-պարսկական պատերազմների պատճառով Շիրակը տրոհվեց Արևելյան և Արևմտյան հատվածների, իրենց ուրույն պատմաքաղաքական զարգացումներով ու ճակատագրերով: Գավառի արևմտյան հատվածն Օսմանյան տիրապետության տակ՝ 1580 թ. ձևավորված Կարսի նահանգին մաս կազմեց և օսմանյան սանջակի կարգավիճակում մնաց մինչև XIX դ. 70-ական թվականների վերջերը:

Գավառի արևելյան հատվածը, անցնելով պարսկական տիրապետության տակ, մաս կազմեց նախ Չուգուր-Սաադի կուսակալության, ապա Երևանի խանության: Ի դեպ, հակառակ հայ պատմագիտության մեջ առայսօր արմատացած սխալ տեսակետի՝ Արևելյան Շիրակը Երևանի խանությանը միացվեց ոչ թե XVIII դ. երկրորդ կեսին, այլ XVIIդ. կեսերին:

Պարսկական տիրապետության վերջին շրջանում գավառը կովախնձոր դարձավ Երևանի խանության և Քարթլի-Կախեթի թագավորության միջև:

¹ Дубровин Н.Ф., История войны и владычества русских на Кавказе. От вторжения персов до учреждения русского правления в Грузии 1802г., т. 3, СПб., 1886, с. 207.

References

1. Alboyajyan A. *The borders of historical Armenia* [Patmakan Hayastani sahmannery]. Cairo. Print New Star. 1950 453 p.. (In Armenian).
2. Alishan Gh. *Shirak. Imagination topography* [Teghagrut'yun patkerats'uyts']. Venice: S. Lazarus. 1881 192 p.. (In Armenian).
3. Anetsi Samuel. *A collection of historiographical writings from the time period of the invention to the present* [Hawak'munk' i grots' patmagrats' yaghags giwti zhamanakats' ants'elots' minch'ev i nerkeys tsayrak'agh arareal]. Vagharshapat. St. Echmiadzin printing house. 1893. 302 p.. (In Armenian).
4. *Arabic sources about Armenia and neighboring countries, Yakut al-Hamawi, Abul-Fida, Ibn Shaddad* [Arabakan aghbyurnery Hayastani yev harevan yerkrneri masin, Yakut al-Hamavi, Abul-Fida, Ibn Shaddad]. composition: H.T. Nalbandyan. Yerevan: Publ. of the Arm.SSR AS. 1965. 367 p.. (In Armenian).
5. *Archive of Armenian History* [Diwan Hayots' Patmut'ean]. Book 10. Edited by: Gyt Aghanyants. Tiflis. Print Electric motor. 1912. 602 p.. (In Armenian).
6. Bardzraberdtsi Vardan. *A collection of stories with illustrations by the Venerable Vardanai* [Hawak'umn patmut'ean Vardanay vardapeti lusabaneal]. Venice: St. Lazarus. 1862: 184 p.. (In Armenian).
7. Butkov P.G. *Materials for the new history of the Caucasus from 1722 to 1803* [Materialy dlya novoy istorii Kavkaza s 1722 po 1803g.]. Vol. 2. St. Petersburg. Tipography of the Imperial Academy of Sciences. 1869. 602 p. (In Russian).
8. Chamcheants Michael. *History of Armenians. From the beginning of the world to the end of the world 1784* [Patmut'iwn Hayots': I skzbane ashkharhi minch'ev ts'am Tearnn 1784]. Vol. B. Venice. Petros Vazvazeants printing house. 1785. 1060 p.. (In Armenian).
9. *Chardin's Travels in Transcaucasia in 1672-1673* [Puteshestviye Shardena po Zakavkaz'yu v 1672-1673gg.]. Translated by E.V. Bakhutova and D.P. Kosovich. Tiflis. Speed printing house of M. Martirosyants. 1902. 305 p.. (In Russian).
10. Dubrovin N.F. *History of war and domination of Russians in the Caucasus. From the Persian invasion to the establishment of Russian rule in Georgia in 1802* [Istoriya voyny i vladychestva russkikh na Kavkaze. Ot vtorzheniya persov do uchrezhdeniya russkogo pravleniya v Gruzii 1802g.]. Vol. 3. St. Petersburg. Tipography of I.N. Skorokhodov. 1886. 550 p.. (In Russian).
11. Gevorgyants M. *Brief topography of the antiquities of the Great Shirak and the capital of Ani* [Hamarrot teghagrut'yun hnut'yants' Metsin Shirakay yev mayrak'aghak'in Anvoy]. Alexandrapol. 1903. 86 p.. (In Armenian).
12. Grigoryan V. *Yerevan Khanate at the End of the XVIII Century (1780-1800)* [Yerevani khanut'yuny XVIII dari verjum (1780-1800)]. Yerevan: Publ. of the Arm.SSR AS. 1958. 227 p.. (In Armenian).

13. Hakobyan T. *Historical geography of Armenia* [Hayastani patmakan ashkharhagrut'yun]. Ed. 2. Yerevan. YSU ed.. 1968 509 p.. (In Armenian).
14. Hakobyan T. *History of Yerevan (1500-1800)* [Yerevani patmut'yuny (1500-1800t't.)]. Yerevan. YSU ed.. 1971 624 p.. (In Armenian).
15. Hubshman H. *Armenian place names* [Hayots' teghwoy anunnery], // "Handes amsorya". Num. 12. Vienna. 1905. pp. 376-381. (In Armenian).
16. Inchichian G. *Geography of the Four Parts of the World* [Ashkharhagrut'iwn ch'vorits' masants' ashkharhi], Vol. A: Venice: S. Lazarus. 1806. 462 p.. (In Armenian).
17. Ivanenko V.N. *Civil administration of Transcaucasia from the accession of Georgia to the viceroyalty of Grand Duke Mikhail Nikolaevich* [Grazhdanskoye upravleniye Zakavkaz'yem ot prisoyedineniya Gruzii do namestnichestva Velikogo Knyazya Mikhaila Nikolayeicha]. Tiflis. Tipography of Loris-Melikov. 1901. 525 p.. (In Russian).
18. Kanakertsi Zachariah. *A historiography of Deacon Zachariah* [Zak'area Sarkavagi Patmagrut'yuny]. Vol. A. Vagharshapat. St. Echmiadzin printing house. 1870. 302 p.. (In Armenian).
19. Khorenatsi Movses. *History of Armenians* [Patmut'yun Hayots']. Tphis. Hovhan Martirosyants printing house. 1881 226 p.. (In Armenian).
20. Kogian S. *Kamsarakans "Lords of Shirak and Arsharunik"* [Kamsarakannery «Tiark' Shirakay yev Arsharuneats'»]. Vienna. Mkhitaryan printing house. 1926. 180 p.. (In Armenian).
21. Kogyan S. *Origin of Kamsarakans* [Kamsarakanneri tsagumy] // "Handes amsorya". Num. 3-4. Vienna. 1924 pp. 123-131. (In Armenian).
22. Kretatsi Abraham. *History of the Passages of the Persians and Natr-Shah* [Patmut'iwn ants'its' iwrots' yev Nadr Shahin Parsits']. Vagharshapat. Print St. Etchmiadzin. 1870. 129 p.. (In Armenian).
23. Leo. *Collected Works* [Yerkeri zhoghovatsu]. Volume C. Book 1. Yerevan. Armenia ed. 1969. 511 p.. (In Armenian).
24. Melikset-Bek L. *Georgian sources on Armenia and Armenians* [Vrats' aghbyurnery Hayastani yev hayeri masin]. Vol. I (V-XII century). Yerevan. Ed. Melkonian Foundation. 1934. 470 p.. (In Armenian).
25. Melikset-Bek L. *Georgian sources on Armenia and Armenians* [Vrats' aghbyurnery Hayastani yev hayeri masin]. Vol. II (XIII-XVIII century). Yerevan. Ed. Melkonian Foundation. 1936. 168 p.. (In Armenian).
26. Muradyan H. *Administrative and demographic description of Kars province in the first thirty years of the 19th century* [Karsi marzi varch'azhoghovrdagrakan nkaragiry 19-rd dari arrajin yeresnamyakin]. Yerevan. Catalogue of Mesrop Arc. Ashjyan. 2006. 236 p.. (In Armenian).

27. Najaryan H. *The Turkish-Iranian War of the Early XVII Century and the Annals of Armenians* [XVII dari skzbi t'urk'-iranakan paterazmy yev hayeri taregrut'yuny]. Yerevan. Ed. YSU. 1959 83 p.. (In Armenian).
28. Olearius Adam. *Voyages Très-çurieux & très-renommez faits en Moscovie, Tartarie et Perse*. P.1. Amsterdam. Chez Michel Charles Le Cene. 1727. 560 p.. (In French).
29. Orbeyan Stepanos. *History of the province of Sisakan* [Patmut'iwn nahangin Sisakan]. Tiflis. Printing house N. Aghanian. 1910 618 p.. (In Armenian).
30. Papazyan H. *Foreign domination in the Ararat land* [Otar tirapetut'yuny Araratyan Yerkrum] // "Bulletin" of the Arm.SSR AS (social sciences). Yerevan: No. 7-8. 1960 pp. 21-40. (In Armenian).
31. *17th century records of Armenian manuscripts (1601-1620)* [Hayeren dzerrageri ZHE dari hishatakaranner (1601-1620t't.)]. Vol. A. Made up by: A. Hovhannisyanyan, V. Hakobyan. Yerevan. Publ. of the Arm.SSR AS. 1974. 433 p.. (In Armenian).
32. Taroneci S. *General History by Stepanos Taroneci Asohik* [Step'anosi Taronets'woy Asoghkan Patmut'iwn tiyezerakan]. Second edition. C. Petersburg. Typography of I.N. Skorokhodov. 1885. 438p.. (In Armenian).
33. *Small annals of the XIII-XVIII centuries* [Manr zhamanakagrut'yunner XIII-XVIII dareri]. Vol. 2. Compiler: V.A. Hakobyan. Yerevan. Publ. of the Arm.SSR AS. 1956. 685 p.. (In Armenian).
34. Tabrizetsi Arakel. *Book of History* [Patmut'iwn Arrak'el vardapeti Dawrizhets'woy]. Vagharshapat. "St. Echmiadzin printing house". 1884. 524 p.. (In Armenian).
35. *Turkish sources on Armenia, Armenians and other peoples of Transcaucasia* [T'urk'akan aghbyurnery Hayastani, hayeri yev Andrkovkasi myus zhoghovurdneri masin]. Vol. A. Compiled by A.H. Safrastian. Yerevan. Publ. of the Arm.SSR AS. 1961. 403 p.. (In Armenian).
36. *Turkish sources on Armenia, Armenians and other peoples of Transcaucasia* [T'urk'akan aghbyurnery Hayastani, hayeri yev Andrkovkasi myus zhoghovurdneri masin]. Vol. B. Compiled by A.H. Safrastian. Yerevan. Publ. of the Arm.SSR AS. 1964. 337 p.. (In Armenian).
37. Virabyan S. *Shoragyal Sultanate from the end of XVI to the first quarter of XIX century* [Shoragyal sult'anut'yuny XVI dari verjerits' minch'ev XIX dari arrajin k'arrordy] // "Historical Studies". Vanadzor. 2001. pp. 31-42. (In Armenian).
38. Yeremyan S. *Armenia according to "Ashkharatsoits"* [Hayastann yst «Ashkharhats'voyts'i»]. Yerevan. Publ. of the Arm.SSR AS. 1963. 154 p.. (In Armenian).

ՀՏԴ. 39

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅՏՆԻ ՍՐԲԵՐԻ ԵՎ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ**

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Շիրակի
պետական համալսարան, հոգ. գիտ. թեկն., դոցենտ, ՀՀ
sahakyanani@mail.ru

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՀՀ,
vard-rosa@mail.ru

Անդրադարձել ենք Շիրակի մարզում հայտնի սրբերի /սուրբ գրքերի ու սրբավայրերի, սուրբ ջրերի կամ գորավոր աղբյուրների մասին հավատալիքներին ու տեղական զրույցներին, որոնք ցայսօր էլ ժողովրդի շուրթերին են որպես հավատալիքային համակարգի դրսևորումներ: Սրբերն ու սրբավայրերը Շիրակում առավել հայտնի են դարձել, երբ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից (Բարձր Հայք, Կարս, Բասեն, Ալաշկերտ, Մուշ և այլն) այստեղ են հաստատվել բազմաթիվ գաղթականներ՝ բերելով իրենց բնաշխարհի ժողովրդական հավատալիքային տարրեր ու պատկերացումներ: Ըստ ժողովրդական ընկալման՝ սուրբն ու սրբատեղին ընդհանրապես կենսական գործառույթ ունեն, օժտված են հրաշագործ, պահպանիչ հատկանիշներով և իրենց գորությամբ օգնում են բուժելու տարաբնույթ ախտեր:

Շիրակի մարզի գրեթե բոլոր համայնքներում կան սրբեր ու սրբավայրեր, որոնք կոչվում են իրենց էական հատկանիշներով ու գործառույթներով:

Բանավոր ավանդված գրույցները գերազանցապես գրառել ենք «Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից» ծրագրի¹ շրջանակներում: Նյութը վերլուծելիս կիրառել ենք պատմահամեմատական **մեթոդը**, ընդգծելով, որ Շիրակի մարզում սրբերի ու սրբավայրերի, սուրբ ջրերի կամ գորավոր աղբյուրների մասին հավատալիքներն ու տեղական գրույցները բացառիկ տպավորիչ են ազգաբանական տեսակետից և վկայում են ժողովրդական սրբությունների ու սրբավայրերի պաշտամունքային առանձնահատկությունները, հայ մարդու նվիրվածությունը նախնայաց ու հայրենի սրբատեղիների հանդեպ:

Բանալի բառեր, հավատալիք, ժողովրդական ընկալում, տեղական գրույց, սրբավայր, գորավոր աղբյուր, սրբազան գործառույթ, սուրբ գիրք:

BELIEFS AND LOCAL LEGENDS ABOUT FAMOUS SAINTS AND SANCTUARIES IN THE SHIRAK REGION

Karine SAHAKYAN

Shirak Center for Armenological Studies of NAS RA,
Shirak State University, PhD, Armenia,
sahakyanani@mail.ru

Roza HOVHANNISYAN

Shirak Center for Armenological Studies of NAS, Armenia,
vard-rosa@mail.ru

The beliefs, local legends, and sagas surrounding the renowned saints, shrines, holy waters, and potent springs in the Shirak region are regarded as significant manifestations of the regional belief system. The prominence of saints

¹ «Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից» ծրագիրն իրականացվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնը ԿԳՄՄՆ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության» դրամաշնորհային ծրագրի շրջանակում/Ծրագրի համակարգող՝ Մ. Մարտիկյան/:

and shrines in Shirak has seen a notable increase, particularly following the settlement of numerous immigrants from diverse regions of Western Armenia, such as Upper Hayk, Kars, Bassen, Alashkert, Mush, and others. These newcomers brought with them their folk beliefs and notions pertaining to their places of origin.

In accordance with these folk beliefs, saints and holy places serve a crucial role, believed to possess miraculous, protective attributes, and the ability to heal various ailments. Virtually every settlement within the Shirak region boasts its own native saints and sanctuaries, each bearing names that reflect their primary attributes and functions.

Within the scope of the "Fragments of Shirak's Oral Culture" project, oral conversations were predominantly documented. In analyzing this material, the historical-comparative method was applied, underscoring the remarkable ethnological significance of the beliefs and local legends concerning saints, shrines, holy waters, and potent springs in the Shirak region. These narratives offer valuable insights into the cultic aspects of folk shrines and sanctuaries, as well as the deep-seated devotion of the Armenian people to their ancestors and native sacred sites.

Key words: belief, popular perception, local legend, sanctuary, powerful spring, sacred function, the Holy Scriptures.

ПОВЕРИЯ И МЕСТНЫЕ СКАЗАНИЯ ОБ ИЗВЕСТНЫХ СВЯТЫХ И СВЯТЫХ МЕСТАХ В ШИРАСКОМ РЕГИОНЕ

Карине СААКЯН

К.п.с.н., доцент, Ширакский Центр арменоведческих исследований НАН РА,
Ширакский Государственный Университет, Армения,
sahakyanani@mail.ru

Роза ОГАННИСЯН

Ширакский Центр арменоведческих исследований НАН, РА,
vard-rosa@mail.ru

В статье сослались на верования и местные сказания о знаменитых святых и святынях, святых водах или целительных источниках в Ширакской

области, которые до сих пор на устах людей, как проявления системы верований.

Святые и святилища стали еще более известны в Шираке, когда здесь поселились многочисленные переселенцы из разных провинций Западной Армении (Бардзр Айк, Карс, Басен, Алашкерт, Муш и др.), принеся с собой народные верования и представления о своих родных местах.

Записаны устные сказания в рамках проекта «Устная культура Ширака». При анализе материала применялся историко-сравнительный метод, подчеркнувший, что поверья и местные сказания о святых и святынях, святых водах или целительных источниках в Ширакской области исключительно впечатляющи с этнологической точки зрения и свидетельствуют о культовых особенностях народного святилища и святыни, преданность армян своим предкам и родным святыням.

Ключевые слова: поверье, народное мнение, местное сказание, святилище, целительный источник, сакральная функция, Священная Книга.

Նախաբան: Ժողովրդական պաշտամունքի առարկա սուրբ գրքերը, որոնք Շիրակի մարզում գերազանցապես կոչվում են Տան սուրբ, ինչ-որ չափով ներկայացված է 19-20-րդ դարերի ազգագրական-նկարագրական գրականություն մեջ: Ադ. Մխիթարյանը «Փշրանքներ Շիրակի ամբարներից»¹ ժողովածուում անդրադառնում է նաև «Տան սուրբ» ավետարանների անձնավորվածությանը, գորությունների շառավիղին, դրանց բնավայրին ու հեղինակների սակավապես լինելուն և այլ ուշագրավ երևույթների: Շիրակի մարզում հռչակված բազմաթիվ սրբավայրեր ու սրբեր կոչվում են հենց Ավետարանների էական հատկանիշներով ու գործառույթներով՝ Կարմիր Ավետարան, Ծեկ Ավետարան, Ոսկեհասկի Ոսկեկող Ավետարան (փախեփախին Զարեհ-Սերոբի մարմնի վրա է կապած եղել, թուրք զինվորը չախմախը քաշել է, որ կրակի, հրացանը չի կրակել. Ավետարանի գորությունը թույլ չի տվել), Սարալանջի Քամի Ավետարան (բուժում է կարմիր քամի հիվանդությունը), Ծաղկի Ավետարանը, Կամո գյուղում

¹ Մխիթարյանց Ադ., Փշրանքներ Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, Հատոր Ա, 1901, էջ 162-165:

հայտնի էին Իրիցու Ավետարանը, Շահենի չարխափան Ավետարանը, Հոգա Ավետարանը, Դրմե Ավետարանը, Մշեցու Ավետարանը, Հացիկում՝ Չալապ պապի Ավետարանը (այս Մբ Գիրքը հանգրվանել է տնից դուրս կառուցված մատուռում, որ առտնին կյանքի խոսակցությունները չխաթարեին սրբի գորությունը), Լանջիկ գյուղում՝ Սբ Զայրաթ Ավետարանը, Կենաց խաչը (տունը կառուցել են խաչի գտնվելու վայրում): Առանձնանում էին երագում տեսած կամ երագում իրենց տեղը հայտնած սրբերը՝ Սառնաղբյուրի Մանուկ Ավետարանը, Կարմիր Ավետարանը, Սքանչելագործը¹:

Սրբերն ու սրբատեղիները Շիրակի բանավոր պատումներում.

Սուրբ գրքերի փաղանգի մեջ պաշտամունքի ուշագրավ մի պատում է Հայկավան գյուղի Բայո մամի կամ Սբ Խաչ («Ղլիջ») հրաշագործ Ավետարանը: Գիրքը, ցավոք, չկա, բայց կան պատմությունը և գյուղի եկեղեցին, որ կոչվում է Սբ Խաչ ավետարան, և կառուցել են գրքի պատմության վրա: Տարոնի Մշո գավառի հայտնի Արկավանք գյուղից էր Բայազ Մելքոնյանը, որի շնորհիվ էլ փրկվել է Մշո Կարապետ վանքին պատկանած այդ մատունքը: Նա պատմել է, որ եղել է երկու ավետարան՝ շեկ ու սև՝ քույր ու եղբայր: «Տատրակն ամեն տարի եկել, չոքել է մեր դռանը ու մնացել է էնքան, մինչև Սուրբ Գիրքը դուրս բերեին ու մատաղ էսեին: Մինչև մատաղ չենեին, տատրակը չէր հեռանա, - պատմում է Բայոյի թոռնուհին (բանասաց՝ Սիրվարդ Մելքոնյանը, 76 տարեկան),- հիմա էլ ամեն գարնան առաջին արագիլն է գալիս նստում եկեղեցու խաչին (եկեղեցին կառուցել են հայկավանցի երկու եղբայրներ 2008 թ.: Նրանցից մեկը հավատի գորությամբ գավակ է ունեցել հենց եկեղեցու բացման օրը): «Գաղթի ճամփին տատս իր երկու որդիներին ջուրն է գցել. հորովս հղի է եղել, միայն մի հորեղբորս է կարողացել շալակն առել: Շալակին կապել է նաև Ավետարանն ու մի քանի սրբապատկերներ՝ խալու մեջ փաթաթած:

¹ Մահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Գիրքը՝ որպես հոգևոր հաց, «Սուրբ Էջմիածինը՝ գրքի հանգրվան»: Հոդվածների ժողովածու. Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2022. էջ 198:

Ավետարանի երեք կողը մագաղաթյա է եղել, թռչնապատկերներով: Գիրքը մեծ պատմություն ունի, գողացան, էջերը տարան Ամերիկա, երկար փորձություններից հետո հիմա Մատենադարանում է: Ըստ բանասացի՝ աշխարհի բոլոր ծայրերից, հատկապես Ռուսաստանի տարբեր անկյուններից գալիս են Հայկավան՝ բուժման: «Գիրքը շատ գորավոր է եղել. անզավակներին երեխա է պարզել, հիվանդների է բուժել: Տատիկիս հին տանը, որտեղ գտնվում էր Ավետարանը, հիվանդները եկել, բուժվել են, ամենաշատը վախեցածների է բուժել: Տատս իր գորությունը փոխանցեց ինձ, ասաց՝ պիտի շարունակես մարդկանց բժշկել. իր 12 թոռների մեջ միակ աղջիկը ես եմ: Ինքը գրագիտություն չունեի, բայց յուրահատուկ բուժում էր անում. քարը տաքացնում էր մոմով, դադում ու դնում էր մարմնի ցավոտ մասերին, պարտադիր դիմում էր Ղլիջ Ավետարանին ու խնդրում բժշկել հիվանդին: Ասում էր. «Ավետարան ջան, մեծ տանջանքներով ես եկել հասել մեզ, մի՛ թող ես մարդուն տանջանքի մեջ»: Բայո տատս նաև 1888 թվականով թվագրված փոքրիկ երկաթյա խաչ է տեղափոխել Ղլիջ Ավետարանի հետ. էդ խաչը մտցնում էր օրինաձ ջրի մեջ ու դնում մարմնի ցավոտ մասերին: Ես էլ նույնն եմ անում»:

Ուշագրավ է, որ Բայո մամի ավետարանի մասին այուժետային տարբեր հարակցումներ կան, թեև բովանդակային միջուկը կարծր է ու անփոփոխ՝ հավատն առ Սուրբ գիրքն ու աստվածային խոսքը:

Սուրբ գրքի ողիսականի ու գորության մի հետաքրքիր պատում է նաև Արթիկի տարածաշրջանի Պեմզաշեն համայնքում բանասաց Շուրա Հակոբի Հովհաննիսյանի /83 տարեկան/ պատմածը: Ըստ նրա հաղորդածի՝ իր պապը գաղթել է Արևմտյան Հայաստանի Մշո գավառից. տոհմն ունեցել է Ոսկեկող ավետարան, փախեփախին կճուճներով ոսկեղենը թողել է այնտեղ՝ պահել է դաշտում ու իր հետ բերել է տան Սուրբ Գիրքը՝ Ավետարանը: 1942 թ. գիրքը տարել են Էջմիածին, այնուհետև՝ Երևանի Մատենադարան: Պատում է նաև, որ իրենց տոհմի բոլոր տղամարդկանց Սբ Գրքի գորությամբ տրվել է շնորհ՝ երեխաների բուժում կոխ հիվանդության կամ թուլության դեպքում. «3 անգամ 3 օր կոխ էրեխուն կլողաց-

նեմ. բուժողը ձեռքերս են ու ջուրը: Ջուրը կլցնեմ էրեխի գլխուն, երեսին, ոտքերին: Եթե հեռու տեղ են բնակվում ու չեն կարողանում երեխային բերել, ձեռքերս լվանում եմ, ջուրը լցնում շշի մեջ: Շշալցած ջուրը տանում, խառնում են իրենց տանը հոսող ջրին ու երկու օր էլ իրենց տանն են լողացնում. նույն բուժումն է լինում: Մայրս պատմում էր, որ մեծ, ծանր գիրք էր՝ տառերը ոսկու նման փայլուն: Մեր շենը հայտնի է պապիս տրված «Բոց ու կրակ» մականունով: Մբ Գիրքը տարել են տնից, բայց գրքի շնորհիվ մնացել է մեր շեմին. շեմն անցնողը բուժված է»:

Սովորաբար սրբերին նվիրատվություններ էին անում, հաճախ՝ զոհաբերության ընծա, քանի որ հավատում էին նրա մուրազատու լինելուն: Եթե փոխում էին Սրբի տեղը, անպայման մատաղ էին անում՝ սիրաշահելով նրան:

Ժողովրդական աղոթատեղիները պարբերաբար վերանորոգում են: Հավատավորների ու անեղծ հոգիների համար երբեմն սրբի ձայնը լսելի է տան մեջ. հավատում են, որ նա կարգավորում է մարդու ներաշխարհը: Սուրբը կարող է նեղանալ, բարկանալ, երբ խախտվում են արգելքները /տաբուները/: Հայ հավատալիքային համակարգում կան հմայական որոշակի արգելքներ, ինչպես, օրինակ՝ «սուրբը» չտեղափոխել, չհանձնել օտար մարդու ձեռք, չթերթել, չլուսանկարել. հիշյալ մոգարգելքներով թերևս փորձում են պահպանել սրբավայրի տարածքի գաղտնագիրը: Նարեկը տանում էին միայն ծանր հիվանդի մոտ կամ երկունքի ժամանակ դնում ծննդկանի բարձի տակ՝ ի թեթևացումն նրա ցավերի:

Որպես կանոն՝ սրբերին առնչվող ավանդական բանավոր գրույցներում գերակա է բարությանը, գթասրտությանը լի հրաշագործի մոտիվը:

Հմայական գործության ուշագրավ վկայություն է նաև Շիրակի մարզի Հացիկ գյուղի Չալապ պապի ավետարանը, որ գրվել է հավանաբար 1500-ական թվականներին: 1828թ. ձեռագիր այս մատյանը բերվել է Բասենից քահանա Տեր-Մինասյանի ձեռամբ: Առաջին երկու թերթերը մագաղաթյա են: Գրքի կազմը չալ է, դրա համար էլ կոչել են Չալապ: Մբ Գիրքը բազմիցս փորձությունների է ենթարկվել, մի քանի անգամ գողացել են, բայց ամեն

անգամ, երկյուղելով սրբի բարկությունից, վերադարձրել են իր նախկին օթևանը: Հնագույն այս Ավետարանն այժմ գտնվում է Հացիկ գյուղի մատուռում՝ ի պահպանություն ողջ համայնքի (բանասաց՝ Գառնիկ Սարգսյան, ծնվ. 1961 թ., նախնիները գաղթել են Բասենից):

Նմանօրինակ գորավոր ավետարանի մասին է վկայում նաև Հարթագյուղի բնակիչ Վազգեն Հախոյանը, որը նյութը լսել և գրի է առել բանասաց Ազնիվ Աֆրիկյանից (ծնվ. 1946թ., Հարթագյուղ, Ֆիդային Գրիգորյանի հարսն է): Ըստ բանասացի՝ Նարեկը բերվել էր Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջան՝ Բասենի Հերթն գյուղից 1829 թ. Տաշվեյանների (Գրիգորյանների) կողմից, որոնք մեծ մասամբ եղել են տերտեր, տիրացուներ: «Նրանք սրբի գրքեր են բերել՝ սայլը լցրած, որոնց մեջ առանձնահատուկ վերաբերմունք կար Սբ Նարեկի նկատմամբ: Այն իրենց տան սուրբն էր և առավել հայտնի էր որպես «Խնկանոցների գիրք»: Վերապրած Ֆիդային Գրիգորյանը (ծնվ. 1908 թ. Ղաթախչիում, այժմ՝ Հարթագյուղ), 1920 թ. -ին՝ Փամբակի կոտորածներից հետո, ենթարկվելով հետապնդումների ու բռնությունների, փրկում է Սբ Նարեկը թուրքական վայրագություններից ու թաքցնում: Այժմ իրենց տան մոտ գտնվող Սուրբ Խնկանոցներ մատուռում է»¹: Անհավատության տարիներին, ըստ ականատեսի, Նարեկը մի քանի անգամ գցել են թոնիրը, բայց այն զարմանալիորեն դուրս է թռել. այդպես երեք անգամ: Դրանից հետո այս ընտանիքը հայտնվել է դժբախտության մեջ: Խելագարվել են թե՛ Նարեկը թոնիրը գցողները, թե՛ այդ շեմից ծնվածները:

Հետագայում գերդաստանի անդամների միջև վեճ է ծագել, թե ում պիտի պատկանի Նարեկը: Բանասացը պատմում է, որ Նարեկը «չէր ուզում գնալ» այլ օթևան. այնքան էր ծանրացել, որ թներս թուլացավ, մինչև տարա»:

¹ Տե՛ս **Հախոյան Վ.**, *Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների ընտանեկան հիշողությունների (1920-1921 թթ.)*, // *Ցեղասպանագիտական հանդես 9, թիվ 1, Եր., 2021, էջ 91*:

Հարթաշենի տարածքում հսկայական ժայռաքարերի բյուր ակունքներից բխող «Լուսաղբյուրների» ջրերը տարբեր հիվանդություններ (բոր, քոս) են բուժում, վիշտ են ամոքում, վերադարձնում են տարագիրներին, նպատակներ իրականացնում, երեխաներ պարզում: «Լուսաղբյուրները» նաև անօրեններին են պատժում,- պատմում է գյուղի դպրոցի երկարամյա տնօրեն, 74-ամյա Հովհաննես Ավետիսյանը:

Ակնհայտ է, որ սուրբ գրքերին առնչվող պատումների մեջ հարանման պլոտներ կան: Այսպես. ըստ Արեգնաղեմ համայնքի բնակիչ Աղունիկ Շառուկյանի պատմածի՝ իրենց գյուղի հայտնի գերդաստաններից մեկը գաղթի ճանապարհին կորցրել է Սբ Նարեկը, դրանից հետո այդ տոհմի բոլոր երեխաները լացով են ծնվում: Գերդաստանի ավագը մեկնաբանում է, որ այդ շարունակական լացը Նարեկի կորստի պատճառով է:

Նարեկաբուժությանը հրաշքներ գործող գյուղը՝ ուխտատեղի.

Արագած լեռան հյուսիսարևմտյան փեշերին փոված Սարալանջ գյուղը Շիրակի մարզի այն եզակի համայնքներից է, որտեղ ուխտավորների պակաս չկա: Հայաստանի տարբեր բնակավայրերից մարդկանց այստեղ բերում է «Նարեկ»-ով բժշկվելու, զորանալու հավատը: Նարեկաբուժության շնորհիվ գյուղը վերածվել է ուխտավայրի, նրա համբավը տարածվել է շրջանի սահմաններից էլ դուրս: Ամեն չորեքշաբթի՝ ժամերգության ժամերին, գյուղի «Մուրբ Նարեկ» անունը կրող 5-րդ դարի բազիլիկ ոճի եկեղեցում «Նարեկ»-ով բժշկության կարգ են կատարում: Եկեղեցի է բերվում բազում մարդկանց բուժած, հրաշագործություններ կատարած սուրբ գիրքը՝ 1700 թվականների «Նարեկ»-ը, որը եղել է գյուղի քահանայինը: Այն բերվել է Արևմտյան Հայաստանից, երբ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, Կարսից, Մուշից, Ալաշկերտից գաղթելով, հիմնել են Սարալանջը:

Գյուղից 10-12 կմ բարձրության վրա կա մի Թթու ջուր կոչվող վայր, որտեղից հոսում է աղբյուր: Դարեր ի վեր արձանագրել են, որ այս ջուրը բուժիչ հատկություն է ունեցել: Սարալանջում պատմում են Թթու ջրի պարզևած զավակների և դարմանած հիվանդությունների մասին: Մարդիկ

ջուրը հավաքել են փոքրիկ ջրավազանում, որտեղ լողացել կամ լվացվել են, և կատարվել է նրանց ցանկությունը: Երկար տարիներ զավակ չունեցող մի կին, լսելով այս ավանդազրույցը և ջրի բուժիչ հատկության մասին, լողացել է այս ջրում և շուտափույթ հղիացել: Բնակիչները պատմում են՝ Թթու ջրի կողքին կա մի փոքր աղբյուր, որից ժանգաջուր է հոսում: Մարդիկ, այդ ջուրը ցելիս հետ խառնելով, բուժում են իրենց հողացավը:

Ըստ Մարալանջի քահանա տեր Եղիշեի՝ լինում են դեպքեր, երբ վիրահատության պատրաստվող մարդիկ նախ գալիս են բժշկության աղոթքներ լսելու և սուրբ գրքով գորանալու, որ վիրահատությունը բարեհաջող լինի: Եկեղեցու մոմավաճառ Հեղինե Մարգարյանն էլ պատմում է. «Կան մարդիկ, որ իրենց երազներում են տեսել Նարեկը ու տեսիլքի հուշումով գյուղ են հասել: Մի անգամ էլ Արմավիրի Մարդարապատ գյուղից եկան, 10-րդ դասարանի ավարտական քննությունների ընթացքում 17 տարեկան աղջիկը թուլացել էր: Թևերի տակ ընկած՝ բերեցին մեր եկեղեցի: Տեր Եղիշեին կանչեցինք, գիրքը բերեցինք, հետո մեր քահանային գրքի հետ հրավիրեցին իրենց տուն: Հրավիրեցին, ու աղջիկը քննություններին իր ոտքով գնաց: Ահա ինչպիսի՜ գորություն:

Մի ընտանիք կար, 12 տարի երեխա չէր ունենում, քահանան գիրքը կարդաց ամուսինների գլխին ու ասաց՝ մյուս տարի այս ժամանակ եթե Նարեկ անունով երեխայի հետ չեկաք էստեղ, էլ իմ բոլորը չերևաք: Մեկ էլ մի գեղեցիկ օր տեսնենք երեք ամսական Նարեկին բերում են մեր եկեղեցի՝ կնքելու»:

44-օրյա պատերազմից հետո էլ մեր «Նարեկ»-ը բազում զինվորների է բուժել, օգնել ամոքելու նրանց վերքերը»: Մոմավաճառը հիշում է, որ «Մուրբ գիրքը՝ «Նարեկը», եղել է այս եկեղեցու գիրքը: Երբ խորհրդային տարիներին եկեղեցին փլուզել ու պահեստի են վերածել, գիրքը տեղափոխել են իրենց օջախ, Նարեկացի անունով իրենց սրբում դրել: Մի օր սարսափելի բուք էր, դուրս եկա, տեսա քամին դուռը բացել, գիրքը շպրտել էր գետնին: Վերցրի, բերեցի տուն, երկու տարի պատուհանի գոգին դրած՝ թերթ առ թերթ չորացրել եմ լուցկու հատիկներով»:

Ըստ բանասաց Տիգրանուհի Հովհաննիսյանի՝ իրենց պապական գիրքը՝ «Նարեկ»-ը, բուժել է իր եղբորը, որը ինչ-որ միջադեպից հետո վախեցել էր: Գիրքը յոթ օր շարունակ դրել են եղբոր գլխի տակ: «Պապիս պապն է տերտեր եղել: Նա սուրբ է ունեցել, այն ժամանակ եկեղեցին վերանորոգած չեն եղել, սրբում է պահել, իսկ հիմա տանում ենք եկեղեցի, բայց քանի որ խոնավ է, այնտեղ չենք պահում: Գրքի գորությունն ամեն վայրկյան ես զգում եմ, բազմաթիվ ուխտագնացների ենք հյուրընկալում, բոլորը դրսից են: Եղել է դեպք, երբ «Նարեկ»-ը անպտուղ կնոջ գլխին դնելուց հետո կինը հղիացել է: Բմ տղայի անունը, ի պատիվ սուրբ գրքի, Նարեկ ենք դրել ու խոստման համաձայն՝ մազերը յոթ տարի չեն կտրել», - պատմում է բանասացը: Գյուղացիները պատմում են, որ 1700 թվականի «Նարեկ»-ից բացի, ևս մեկ «Նարեկ» կա գյուղում: Թուրքերի հարձակման ժամանակ տանտերն այն փրկելու նպատակով շորի մեջ դրել ու թաղել է: Գիրքը տարիներ շարունակ երազ է եկել տանտիրոջ սերունդներին՝ հորդորելով իրեն հանել հողի տակից: «Թոռն ասել է՝ գնամ, քանդեմ, հանեմ, տեսնեմ՝ ինչ է, արդեն գժվա»: Երազում տեսել է, որ ձորի մեջ է, գիրքն իրեն ասել է՝ դու տեղանքին լավ ծանոթ ես, ձեր տնից 20 ոտք հեռու՝ էս ինչ քարի մոտ եմ, ես նեղ, մութ տեղում եմ, ինձ հանի արևի երես»: Էդ մարդն էլ էնպիսի հայհոյանքներ տվող մարդ է եղել, բայց հողը փորելուց ու «Նարեկ»-ը գտնելուց հետո վերափոխվել է, այլևս չի հայհոյել:

Հրաշագործ մոտիվներով հարակցված պատմություն կա նաև **Ջրաձորի**՝ զավակ պարզևող Սրբի սարի ու կրակի բոցերի մեջ չայրված Սուրբ Նարեկի մասին: Ջրաձորցիների պատմելով՝ Սրբի սարը Սուրբ Գևորգն է, որը համանուն է իրենց եկեղեցուն: Կուլեկտիվացման տարիներին մարդիկ սուրբը տեղափոխել են սարի գագաթին՝ ընտրելով բարձունքը և ազատ ապրելու իրենց հնարավորությունը: Այստեղ է գտնվում նաև գյուղի Սրբի աղբյուրը կամ Լուսաղբյուրը՝ բուժիչ ջրերով: Բնակիչները խորհրդավորությամբ են վերաբերում այդ ջրին՝ ընդունելով սրբի գորությունը: Ուշագրավ է, որ ամեն մեկն իրենն է համարում այդ սուրբը:

Գյուղի տներից մեկի Նարեկը բերել են Արևմտյան Հայաստանից՝ Բասենից, տերը «մեջքին է կապել, որ սուրբ գիրքն իրեն պահապան լինի. ցերեկը քարանձավներում են պատսպարվել, բայց հետո տղան թաքնվել է բուլուլի՝ խոտի փոքր դեզի մեջ: Նարեկըն նրան իրոք պահպանել է, նրա հետ եկողները մահացել են, իսկ նա փրկվել է: Երբ թուրքերը ճանապարհին բռնել են, ուզել են սուրբ գիրքը վառել, զցել են կրակի բոցերի մեջ, գիրքը չի այրվել, կրակի միջից դուրս է թռել», - պատմում էին գյուղացիները:

Հավատալիքներ ու զրույցներ հրաշագործ աղբյուրների մասին.

Աշոցքի տարածաշրջանի բնակավայրերում տները հոսող ջրերի ակունքին կառուցելն ու աղբյուրները գերդաստանի պապի անունով կնքելը ավանդույթ են եղել: Աշոցք գետի ափին գտնվող նույնանուն բնակավայրը՝ Աշոցքը, որը հիմնադրվել է 1829 թվականին Արևմտյան Հայաստանից գաղթած Մուշ ու Ալաշկերտ գավառի բնակիչների կողմից, այժի է ընկնում գերդաստանների անունները կրող աղբյուրներով, հավատալիքներով, սրբերի պաշտամունքով:

Աշոցքի՝ Ախուրյանի գետի ափին գտնվող հին թաղամասերից մեկում 74-ամյա Միշա Խաչատրյանը պատմեց իր պապի՝ «Ակոյի աղբյուրի» մասին, որի շուրջբոլորի ծառերը բերվել էին Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտից, դեռևս 1825 թվականին: Պապը ծառի շյուղերը շալակել ու բերել է իր բակից՝ չմտածելով, որ դրանք գրեթե երկու դար կանգուն են մնալու: Ըստ բանասացի՝ իր հայրը հաճախ էր զրուցում ջրի հետ, թե ինչ էր ասում, չգիտի, սակայն հոսող ջրի հետ խոսում էր այնպես, ինչպես կենդանի մարդու հետ կխոսեր: «Տները պարտադիր պիտի սարքեին աղբյուրների մոտ, ջուրը կենսական պահանջ է, ամեն գերդաստան իր աղբյուրն ունի. իմ պապինը «Ակոյի աղբյուր»-ն է, Ատաշը եկել է Արևմտյան Հայաստանից, Ատաշենց աղբյուրն է սարքել, որը հիմա կա, Կիրեղենք եկել են, իրենց աղբյուրն են սարքել՝ «Կիրեղենց աղբյուրը». յուրաքանչյուրն իր ազգի անունով է կոչել: Մոտ 6-7 աղբյուրներ կան՝ բնական, առանց խողովակների», - պատմում է բանասացը:

Ջրին վերագրվող առասպելագրույցներ է պատմում նաև Աշոցքի 87-ամյա բնակչուհի Ջուլիետա Պողոսյանը: Սուրբ Գևորգ եկեղեցու կամ ժողովրդական լեզվով ասած՝ «Ժամի աղբյուր»-ի, «Լույս» գերեզմանի «խաչով» ձկների ու Աշոցքի ոսկի բերող մկան մասին ավանդական գրույցներն ու զարմանահրաշ պատմությունները վկայում են մեր ժողովրդի աշխարհընկալման, պատկերացումների ու հավատալիքների յուրօրինակությունը: «Մեր «Լույս» գերեզմանի սուրբը գորավոր է. ժողովուրդը նստած է եղել, մուկը՝ ոսկին բերանը, մեր եկեղեցուց դուրս է եկել, զարկել, սասկեցրել են: Մեր եկեղեցու տակը ոսկու հանք կա, քայց օձը վրան նստած է, ոչ մեկը ռիսկ չի անում մտնելու, Լեննագանի գողերը եկան, ռիսկ չարեցին մտնել, վախեցան, դիտահոր կա եկեղեցու մեջտեղը, ներսը՝ հենց էդտեղ է նստած օձը:

Մեր եկեղեցու ջրի մեջ գորավոր ձուկ կար, հացը կզցեին, ձուկը կվերցներ, կփախներ, ձկի կոնակին խաչ կար: Վարպետները եկան՝ եկեղեցու աղբյուրը սարքելու, ասին՝ պիտի բռնենք ձկներին, ուտենք, ասի՝ էդպես բան չանեք, ա՛յ բալա, գորավոր ձուկ է, հանկարծ չուտեք, չի կարելի: Ականջ չարեցին ու չհավատացին, բռնին ձուկը կերան, գիշերը հեր ու տղա մեռան», - պատմում է տատիկը՝ ընդգծելով, որ գյուղի տարեց մարդիկ էլ այս պատմության իսկությունը կվկայեն:

Եզրահանգում. Շիրակի մարզում հռչակված սրբերի /սուրբ գրքերի/ ու սրբավայրերի, կենսարար աղբյուրների բուժիչ ու սքանչելագործ հատկությունների վերաբերյալ ուշագրավ պատումները, տեղական գրույցներն ու ժողովրդական հավատալիքները, պաշտամունքի դրսևորումները վկայում են հայ ժողովրդի աշխարհատեսության, ժողովրդաքրիստոնեական ընկալման առանձնահատկությունների ու գորավոր հավատի մասին: Այսօր էլ կենսունակ են սրբերի ու սրբավայրերի պաշտամունքի ձևերը, քանի որ փոխանցվելով սերնդեսերունդ՝ կրոնահավատալիքային համակարգի անտրոհելի մաս են և իրենց գործառույթով ձեռք են բերել հասարակական մեծ հնչողություն:

References

1. *Armenian saints and saintuaries* [Hayots' srbery yev srbavayrery], Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, "Armenia" publ., 2001. 437 pages. (in Armenian).
2. Hakhoyan V. *The mass massacres carried out by the Kemalites in Pambak area (Shirak province) according to the family memories of eyewitnesses-survivors (1920-1921)*, [K'emalakanneri irakanats'rats zangvatsayin kotoratsnery P'ambaki taratsk'um (Shiraki nahang) yst akanates-verapratsneri yntanekan hishoghut'yunneri (1920-1921 t't.)], // Journal of Genocide Studies 9, No. 1, Yer., 2021, p. 91. (in Armenian)
3. Mkhitaryants Agh. *"Debris from Shirak's granaries"*/ [Mkhit'aryants' Agh. «P'shrank'ner Shiraki ambarnerits'»], Eminian ethnographic collection, Volume I, 1901, pages 162-165. (in Armenian).
4. Sahakyan K., Hovhannisyanyan R. *Writing as spiritual bread* [Giry, vorpes hoguevor hats']: "Saint Etchmiadzin, the haven of books". Collection of articles: - S. Etchmiadzin. Mother See of Holy Etchmiadzin Publishing House, 2022.-196-208 pages. (in Armenian).

ՀՏԴ 316

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ
ԵՎ ՀԱՄՔԱՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹ**

Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ
aghanyan@mail.ru

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, արվ.թ., ՀՀ
hasmik.har@mail.ru

Որպես հայ քաղաքային մշակույթի կարևոր բաղադրիչ՝ Ալեքսանդրապոլում ինքնատիպ զարգացում ապրեց աշուղական ավանդույթը, որը սերում էր Արևմտյան Հայաստանի արհեստավորաառևտրական քաղաքներից: Ալեքսանդրապոլում գործեցին բազմաթիվ աշուղներ ու երաժիշտներ՝ իրենց հետ բերելով արևմտահայ աշուղական արվեստի հարուստ ավանդույթները: Արդյունքում ձևավորվեց Ալեքսանդրապոլի աշուղական կենտրոնը, որը ապահովեց արևմտահայ ավանդույթների ոչ միայն ժառանգականությունը, այլև շարունակականությունը նոր կենցաղամշակութային իրողությունների պայմաններում:

Աշուղական համքարությունը կազմակերպել ու կանոնակարգել է աշուղների աշխատանքը քաղաքում՝ նպաստելով նրա զարգացմանն ու բնականոն գործընթացին: Սակայն XIX դ. վերջին քառորդին Ալեքսանդրապոլի աշուղական համքարության ներսում ծագած խժոժությունները, հատկապես կրոնադավանաբանական հողի վրա, թուլացրին ու մասնատեցին երբեմնի հռչակավոր այդ կառույցը:

Այդուհանդերձ, Ալեքսանդրապոլի աշուղական կենտրոնը ձևավորվեց ու զարգացավ պատմաքաղաքական և մշակութային գործընթացների անմիջական ազդեցությամբ և իր հասարակական պահանջվածությամբ իրագործեց կարևոր մի առաքելություն:

Բանալի բառեր՝ աշուղ, համբարություն, սրճարան, Ալեքսանդրապոլ, ավանդույթ, քաղաքային մշակույթ:

ASHUGH ART OF ALEXANDRAPOL AND TRADE UNION TRADITION

Grigor AGHANYAN

Institute of Archeology and Ethnography of NAS RA, Armenia
aghanyan@mail.ru

Hasmik HARUTYUNYAN

Shirak Center for Armenological Studies of NAS RA, PhD of Arts, Armenia
Hasmik.har@mail.ru

The city of Alexandropol played a significant role in the development of the Armenian urban culture, particularly in the realm of the Ashugh tradition. This tradition had its origins in the artisan-commercial cities of Western Armenia which underwent a unique evolution in Alexandropol. The city became a hub for Ashughs (traditional Armenian troubadours) and musicians who brought with them the rich traditions of Western Armenian Ashugh art.

As a result, Alexandropol became a thriving center for Ashughs, fostering the preservation of Western Armenian traditions and ensuring their continuity in the face of new everyday and cultural realities. The Ashugh community in Alexandropol organized and regulated the activities of various troupes in the city, contributing to its cultural development and normal functioning.

However, in the latter part of the 19th century, particularly in the last quarter, internal disagreements arose within the Alexandropol Ashugh community, often stemming from religious differences. These disagreements weakened and fragmented what was once a famous and cohesive structure.

Nevertheless, the Alexandropol Ashugh center had already been established and developed in response to historical, political, and cultural processes. It played a vital role in meeting the demands of the public and in preserving and advancing the Ashugh tradition within the city and the broader Armenian cultural landscape.

Keywords: ashugh, gang, café, Alexandropol, tradition, urban culture.

АШУГСКОЕ ИСКУССТВО АЛЕКСАНДРОПОЛЯ И ЦЕХОВАЯ ТРАДИЦИЯ

Григор АГАНЯН

Институт археологии и этнографии НАН РА, Армения
aghanyan@mail.ru

Асмик АРУТЮНЯН

Ширакский центр арменоведческих исследований НАН РА, к.иск., Армения
hasmik.har@mail.ru

В качестве важной составляющей армянской городской культуры в Александрополе получила своеобразное развитие ашугская традиция, пришедшая из ремесленно-торговых городов Западной Армении. В Александрополе работало множество ашугов и музыкантов, принесших с собой богатые традиции западноармянского ашугского искусства. В результате образовался ашугский центр Александрополя, обеспечивший не только наследование западноармянских традиций, но и преемственность в условиях новых бытовых и культурных реалий.

Цех ашугов организовывал и регулировал их работу в городе, способствуя ее развитию и нормальному ходу. Однако в последнем квартале 19 века разногласия, возникшие внутри Александропольского цеха, особенно на религиозной почве, ослабили и раздробили эту некогда знаменитую организацию.

Тем не менее, Александропольский ашугский центр формировался и развивался под непосредственным влиянием исторических, политических и культурных процессов и выполнял важную миссию, обусловленную его общественным запросом.

Ключевые слова: ашуг, цех, кафе, традиция, Александрополь, городская культура.

Նախարան. աշուղական կենտրոնները ստեղծվել ու գործել են պատմամշակութային այնպիսի միջավայրում, որտեղ պահանջված են եղել ժո-

դովրդապրոֆեսիոնալ բանաստեղծ-երաժշտի արվեստն ու ստեղծագործությունը: Այս արվեստի կամ արհեստի բազմաբովանդակ էությունն աշուղներին հնարավորություն է տվել հասարակական բոլոր շերտերի մեջ առաջացնելու հետաքրքրություն ժամանակակից մշակութային, քաղաքական, սոցիալական, ժամանցային բնույթի խնդիրների ու հարցերի շուրջ, գտնել դրանց ինքնատիպ պատասխաններ՝ արժանանալով ունկնդրի անթաքույց համակրանքին: «Լինելով Մերձավոր Արևելքի էպիկական երգարվեստի դասական դրսևորումներից մեկը, - ինչպես իրավացիորեն նկատել է Լ.Երնջակյանը, - աշուղական սիրավեպը քննելի է իբրև հայարևելյան երաժշտական առնչությունների հարուստ շտեմարան, որտեղ ամփոփված են հարակից մշակույթներում ձևավորված գեղարվեստական երևույթներ՝ կրոնագեղագիտական ու ժողովրդահավատալիքային պատկերացումների ընդգրկումով»¹:

Եթե փորձենք մոտենալ այդ ավանդույթի ակունքներին, ապա վստահությամբ պետք է նշենք հայ միջնադարյան արվեստում զարգացման մի քանի փուլեր ապրած **գուսանական արվեստի ավանդույթների ժառանգականության մասին**: Պատահական չէ, որ IX-XIII դդ. Հայաստանում տարածված արհեստների մեջ, որոնք կապված չեն արտադրության հետ, տեղ է գտել նաև **գուսանը**, որը 15-րդն է Վ.Աբրահամյանի աշխատության մեջ բերված՝ հիշյալ ժամանակաշրջանի արհեստների ցանկում: Անցումը աշուղական ավանդույթին, ըստ ամենայնի, չի խանգարել պահպանելու արհեստի գործառույթն ու ներքին կանոնակարգը: Վերջինս լիարժեքորեն համապատասխանում է հայկական համաքարային կառույցի առանձնահատկություններին և, հետևաբար, դեռևս միջնադարում գործել է հատուկ կանոնագրերով:

Ուշ միջնադարում, երբ գուսանականը փոխակերպվեց աշուղական արվեստի, հայ արհեստավորական համաքարությունները համարվեցին ևս մեկով՝ աշուղականով: Համաքարությունը՝ որպես աշուղների գործունեու-

¹ Երնջակյան Լ. *Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում*, Եր., 2009, էջ 6:

թյան և կենսապահովման համակարգ սահմանող կառույց, մի կողմից՝ շարունակել է հայ միջնադարյան գուսանական արվեստի, մյուս կողմից՝ յուրացրել մերձավորարևելյան բանավոր ժառանգության դասական երաժշտության ավանդույթները:

Այսպես. աշուղի ստեղծագործության մեջ առաջնային համարվող բանաստեղծական տեքստն ու տաղաչափությունը հնարավորություն են տվել դրանք եղանակավորելու ըստ նախընտրության, քանի որ վարպետ աշուղը ազատ է եղել երաժշտական բաղադրիչի ընտրության մեջ, և ստեղծագործության կամ ելույթի համապատասխան պահի ընտրել է իր ուզած եղանակը:

Միննույն ժամանակ, հատկապես նվագարանային կատարումների, հիմնականում մուղամների մեկնաբանություններում հնարավորինս պահպանվել է կանոնական համարվող թեմատիկ նյութը՝ տվյալ նվագարանի տեխնիկական կատարողական բազմակողմանի հնարավորությունների բացահայտմամբ:

Հետևաբար, հայ գուսանական արվեստից եկող մասնագիտացված երաժշտության ավանդույթները հայտնվեցին պատմամշակութային մի նոր իրականության մեջ և զարգացման համարժեք ուղի անցան:

Մեր դիտարկումները փորձել ենք ընդհանրացնել Ալեքսանդրապոլի աշուղական համբարության գործունեությանը վերաբերող փաստերի հիման վրա: Որպես հայ քաղաքային մշակույթի կարևոր բաղադրիչ՝ Ալեքսանդրապոլում ինքնատիպ զարգացում ապրեց աշուղական ավանդույթը, որը սերում էր Արևմտյան Հայաստանի արհեստավորաառևտրական քաղաքներից: XIX դարի սկզբին Կարինում, Կարսում և Բայազետում հայ աշուղական ավանդույթը վերջնափաստատվել էր որպես մասնագիտացված արվեստի տեսակ կամ արհեստ¹: Հիշյալ քաղաքներից և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից եկան և հաստատվեցին Ալեքսանդրապոլում

¹ Հարությունյան Ն. Կարսի և Ալեքսանդրապոլի աշուղական ավանդույթների փոխառնչությունները: ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ.16: Գյումրի: 2013, էջ 72-80:

բազմաթիվ աշուղներ ու երաժիշտներ, իրենց հետ բերելով արևմտահայ աշուղական արվեստի հարուստ ավանդույթները: Արդյունքում ձևավորվեց Ալեքսանդրապոլի աշուղական կենտրոնը, որը ապահովեց արևմտահայ ավանդույթների ոչ միայն ժառանգականությունը, այլև շարունակականությունը նոր կենցաղամշակութային իրողությունների պայմաններում: Ալեքսանդրապոլի աշուղական կենտրոնը ձևավորվեց ու զարգացավ պատմաքաղաքական և մշակութային գործընթացների անմիջական ազդեցությամբ և իր հասարակական պահանջվածությամբ իրագործեց կարևոր մի առաքելություն: Դա հայ ազգային ինքնագիտակցության զարթոնքից բխող մտածողության նոր որակների յուրացումն էր աշուղական դպրոցի բոլոր ոլորտներում՝ հայրենասիրական, գաղափարական, քարոզչական, երաժշտաբանաստեղծական: Անշուշտ, այս աշուղական դպրոցը նախ ձևավորվեց որպես աշուղների կենտրոն: Դրան նպաստեցին XIX դ. երկրորդ կեսից Ալեքսանդրապոլի տնտեսական սրընթաց վերելքը և քաղաքային կյանքի աննախադեպ աշխուժացումը: Բազմաթիվ օժտված երիտասարդներ Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերից գալիս էին Ալեքսանդրապոլ աշուղական արվեստի հմտությունները յուրացնելու և որպես աշուղ կայանալու, կամ ավելի ճիշտ ձեռնադրվելու ակնկալիքով (օր. աշուղ Շիրինը/Հովհաննես Կարապետյան/ ավեքպոլցի աշուղ Բավեի աշակերտը և այլք):

Հակիրճ անդրադառնանք աշուղի մշակութային տարածքին ու նրա ծավալած գործունեությանը:

Աշուղը կարող էր ունենալ այլ զբաղմունք և ընդգրկվել մեկ այլ էսնաֆության¹ մեջ (օր. աշուղ Խայաթն ընդգրկված էր դերձակների էսնաֆության մեջ, Շերամը հյուսն էր և այլն): Այս դեպքում նրա գործունեությունը հիմնականում սահմանափակվում էր ներքաղաքային ելույթներով:

¹ Ալեքսանդրապոլում համքարությունները կոչվում էին էսնաֆություններ, իսկ դրանց անդամները՝ էսնաֆներ: Համքար կամ էսնաֆ բառերն օտար ծագում ունեն, և երկուսն էլ թարգմանաբար նշանակում են արհեստակից, միևնույն արհեստով զբաղվող: Արևելահայ իրականության մեջ արմատացած էր պարսկերեն **համքար** եզրույթը, իսկ արևմտահայերի շրջանում՝ արաբերեն **էսնաֆ** ձևը:

Աշուղը սրճարանում կամ համապատասխան քաղաքային վայրում մասնակցում էր մրցույթների: Վերջիններիս պարտադիր մասնակցում էր քաղաքային բնակչությունը:

Աշուղը կարևոր մասնակցություն ուներ քաղաքային տոնախմբությունների ժամանակ: Դրանք հիմնականում եկեղեցական տոնածխական համախմբումներ էին կամ այլ իրադարձություններ:

Աշուղը պարտադիր մասնակից է եղել ընտանեկան բազմազան հավաքույթներին ու իրադարձություններին: Ալեքսանդրապոլում ընդունված է եղել նաև ընտանեկան աշուղի գործառույթը, ինչի մասին հետաքրքիր վկայություններ կան Ավ.Բսահակյանի «Հայրենի հուշեր» պատմվածքում և Կ.Կոստանյանի անտիպ հուշերում:¹

Աշուղը մասնակցել է քաղաքի համերգային կյանքին՝ բեմական ելույթներով և այլն²:

Իրենց բոլոր գործառույթներին փայլուն տիրապետող վարպետ աշուղներն անգամ, ըստ աշուղ Խայաթի, ապրել են համեստ ու չափավոր կյանքով: Աշուղական արվեստը չի ապահովել մեծ եկամուտներ, ինչպես ուրիշ շատ արհեստներ: Սակայն ավելի գործուն են եղել բարոյական բարձր պահանջներն ու հասարակությանը օրինակ ծառայելու ներքին մղումները, ինչը ալեքսանդրապոլցի աշուղներին վերածել է քաղաքային մտավոր դասի ազնվագույն ներկայացուցիչների, ավելին՝ աշուղ Խայաթի բնորոշմամբ. «Աշուղը համոզված է, որ իր հոգեբուխ բանահյուսություններով կարող է իր անունը անմահացնել աշխարհում»³:

¹ Բազեյան Կ., Շիրակի ազգագրական համայնապատկերը Ավ. Բսահակյանի «Ուստա Կարո» վեպում: // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2023: Հ. 1(26), էջ 22:

² Հարությունյան Հ. Աշուղական ավանդույթը Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթում: ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ.20: Գյումրի: 2017: էջ 216-223:

³ Խայաթ Չահրիյան, Հիշողություններ աշուղների մասին, 1930, անտիպ ձեռագիր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF 1, 7829:/

Այլ արհեստով չպարապող կամ եկամուտի այլ աղբյուր չունեցող ավերակացի աշուղներն ընդգրկված էին երաժիշտների (չալդջիների) էսնաֆության մեջ: Ալեքսանդրապոլի էսնաֆությունների ծաղկման շրջանում հաշվվում էր 22 վարպետ երաժիշտ¹, որոնց թվում նաև վերը հիշատակված աշուղները:

Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունն ընդհանուր շատ կողմերով է ներկայացրել Գ.Լևոնյանը. «Տվյալ քաղաքի բոլոր աշուղներն ունեին իրենց արհեստակցական միությունը, որն ուներ իր կանոնադրությունը և իր վարչությունը՝ գլխավորությամբ ամենի կողմից քվեարկությամբ ընտրված ուստաբաշու: Վարչության կից կար փոխատու դրամարկղ, որի եկամուտը գոյանում էր անդամների ամսավճարներից: Իրենք՝ աշուղները, մշտական, որոշակի եկամուտ չունեին, այլ բավարարվում էին սրճարանի այցելուների կամավոր և պատահական նվիրատվություններով, մեկ էլ հարսանիքներին, խնջույքներին, ուր հրավիրվում էին երգելու և նվագելու»²:

Ինչպես և մյուս բոլոր համքարությունները, այնպես էլ աշուղականը լիարժեք կառույց չէր համարվի, եթե չունենար իր հովանավոր սուրբը (պատրոն-փիրը) կամ նախահայրը: Աղբյուրների մեծ մասում հիշատակվում է Սբ Հովհաննես Կարապետ (Մկրտչի) անունը, որը եղել է մուրազատու սուրբ, որի օրհնությունն ստանալու համար բոլոր աշուղները պարտադիր ուխտագնացություն են կատարել Մշո Սբ Կարապետ վանք, գիշերել այնտեղ՝ ակնկալելով սրբազան երազատեսություն³: Հուշագիր աղբյուրներից մեկում, որպես աշուղների հովանավոր սուրբ, նշվում է Դավիթ

¹ Բազեյան Կ., Աղանյան Գ. Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ // «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» մատենաշար-2, «Գիտություն» հրատ., 2012, Երևան-Գյումրի, էջ 55:

² Լևոնյան Գ., Աշուղները և նրանց արվեստը: Երևան, 1944, էջ 20:

³ Խայաթ Ջահրիյան, նշվ., աշխ., էջ 7826:

մարգարեի¹ անունը այն առումով, որ նա սաղմոսարան է նվազել և, հետևաբար աշուղների արհեստի նախահայրը պետք է համարվեր.²

Այս մասին այլ հիշատակություններ չկան, հետևապես մենք հակված ենք առավել հավաստի համարելու Մբ Կարապետի հովանավորչության խորհուրդը: Մբ Հովհաննես Մկրտիչը հայ մատենագրության մեջ հիշատակվում է ոչ միայն Կարապետ կամ Նախակարապետ անուններով, այլև «Ձայն» մականվամբ, քանզի ինչպես ձայնն է գալիս, հետո խոսքը, այնպես էլ սրբի ձայնը հնչեց Փրկչի գալստյան մասին և հետո եկավ Հիսուս Քրիստոսը և բերեց Հայր Աստծո խոսքը՝ բանը: Աշուղները ձայնի ու խոսքի միջոցով ժողովրդի մեջ քարոզում էին ազնվություն, հավատարմություն, բարեպաշտություն և գովերգում սերն առ Աստված և առ մարդիկ՝ հովանավոր ունենալով իրենց պատրոն-փիրին: Ալ. Մխիթարյանցի վկայությամբ, Համբարձումից Կարդավառ միջոցին Մբ Հովհաննես Մկրտչի պասը պահողները գնում էին «Մշու սուլթան սուրբ Կարապետի» «մարման գերեզմանին» ուխտի ու երկրպագության, խնդրելով մուրազատու սրբից որ «...իրանց «Օխտ գոմշի ոյժ տայ», ոմանք լարախաղացութիւն են խնդրում, ոմանք սազ ածել ու բանաստեղծական տաղանդ»:³ Երբ աշուղը երգվելիս վկայաբերում էր «սուրբ Կարապետին», ապա ճշմարտությունը կասկածելի չէր, և նրա անվամբ երգվելը ինքնին մեծ պատասխանատվություն էր, իսկ երգմանագանցությունը հավասար էր հոգևոր «մահվան»⁴:

¹ Դավիթ մարգարեն երկաթագործների հովանավոր սուրբն էր, և հուշագիր Մնացական Թամրազյանը անշուշտ լավ գիտեր դրա մասին, սակայն ինչ-ինչ պատճառներով հիշյալ սրբին վերագրել է նրան ոչ բնորոշ գործառույթ:

² Թամրազյան Մ. Ալեքսանդրապոլի աշուղները: 1930: Անտիպ ձեռագիր: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF1, էջ 7611:

³ Մխիթարեանց Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից: Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 1, Մոսկուա-Ալեքսանդրապոլ: 1901, էջ 272:

⁴ Բազեյան Կ., Աղանյան Գ. Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները գյուրբեցիների տոնածիսական վարքում: ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2011, հ. XIV, էջ 83:

Ըստ ամենայնի, սրբի հիշատակի եկեղեցական տոնը (հունվարի 15-ին) և նշելի է եղել աշուղների համար, և ըստ համաքարաց կարգի՝ կատարվել է տոնախմբություն:

Երաժիշտների և աշուղների ճյուղային համաքարության ներքին կանոնադրության, ծիսակարգի և աստիճանակարգի մասին մեր ձեռքի տակ հստակ տեղեկություններ չկան: Ամենայն հավանականությամբ, վերոհիշյալները պետք է շատ հարցերում նման լինեին մյուս արհեստավորական կազմակերպություններում ամրագրված և կենսագործվող կանոնակարգերին՝ մի քանի բնորոշ առանձնահատկություններով հանդերձ: Ձեռնադրության ծեսի արդյունքում ցանկացած արհեստ ներկայացնող վարպետացուն պահպանում էր իր մկրտության կամ ավագանի անունը, որի դիմաց դրվում է *ուստա* կոչումը. օր. ուստա Թաթոս, ուստա Մկրտիչ և այլն: Դրությունն այլ է աշուղների պարագայում: Վարպետության աստիճան ստացած աշուղն իր ուսուցչից ստանում էր աշուղական մականունն. Սերոբվեն դառնում էր Ջիվանի, Սուքիասը՝ Խայաթ և այլն: Հարկ է նշել, որ այս ավանդույթը շարունակվեց խորհրդային և հետխորհրդային տարիներին, երբ համաքարություններն ու բազմաթիվ արհեստներ ու զբաղմունքներ վաղուց վերացվել էին: Խորհրդային տարիներին Ալեքսանդրապոլում մեծ անուն վաստակած աշուղ Մալուլի թոռը՝ Գեղամ Մարտիրոսյանը, ձեռնադրվեց աշուղ՝ Իգիթ անվամբ, որն իր հերթին ձեռնադրել է լենինականցի և շիրակցի մի շարք աշուղների: Ձեռնադրված աշուղը, դառնալով վարպետ-ուսուցիչ, իրավունք էր ստանում երգի բանաստեղծական տեքստի միջոցով քարոզելու և գովերգելու մարդկային մարմնական և հոգևոր առաքինությունները, խրատել ու հորդորել ունկնդիրներին հավատարիմ մնալ բարոյական բարձր արժեքներին:

Աշուղների հետ կապված մի առանձնահատկություն ևս հարկ է նշել: Ալեքսանդրապոլում կային մի քանի անվանի արհեստավորներ՝ դերձակներ, հյուսներ և այլք, որոնք վարպետ էին ձեռնադրվել իրենց զբաղմունքի ասպարեզում, միևնույն ժամանակ վարպետության աստիճան, այսինքն՝ աշուղի կոչում և աշուղական անուն էին ստացել: Կրկնակի վարպետական

ձեռնադրություն թույլատրվում էր միայն այն դեպքերում, երբ որոշակի արհեստի տեր անձը դիմում էր աշուղական աստիճան ստանալու խնդրանքով: Աշուղներ Խայաթն ու Պայծառեն դերձակ էին, ուռում (հույն) աշուղ Ադաշը՝ ատաղձագործ,¹ Նիհանին քարտաշ և այլն:

Այսպիսով, աշուղական համքարությունը կազմակերպել ու կանոնակարգել է աշուղների աշխատանքը քաղաքում՝ նպաստելով նրա զարգացմանն ու բնականոն գործընթացին: Հարկ է նշել, որ XIX դ. վերջին քառորդին Ալեքսանդրապոլի աշուղական համքարության ներսում ծագած խժոժությունները՝ հատկապես կրոնա-դավանաբանական հողի վրա, թուլացրին և մասնատեցին երբեմնի հռչակավոր այդ կառույցը: Այս խնդիրը առանձին հետազոտության կարիք ունի և մանրամասներին հաջլ ճենք անդրադառնալ:

Աշուղական համքարության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ իբրև արհեստանոց աշուղներին հիմնականում ծառայել են սրճարանները, որտեղ էլ երեկոյան նրանք հանդես են եկել ելույթներով:

Ալեքսպոլցիների ժամանցի անքակտելի և կարևորագույն բաղկացուցիչներն էին համքարային ակումբները (կլուբները), սրճարանները (խայֆախանաները), պանդոկները (դուքանները), գինետներն ու ավելի ուշ՝ գարեջրատները: Հիշյալ հաստատությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ համքարական ակումբ-սրճարաններ և ընդհանուր սրճարաններ: Հայտնի էին Կուզիկենց, Տալոյենց (Տալյանների), Հայկագունիների, Բախալբաշոնց մեծ սրճարաններ: Քաղաքի յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր սրճարան-ակումբը, որտեղ աշխատանքից հետո հավաքվում էին էսնաֆական ավագանին, ծանրաբարո ուստաբաշիներն ու վարպետները: Ակումբ-սրճարանները նաև քաղաքի կամ դրսեկ աշուղներին անբռնազբոս միջավայրում ունկնդրելու վայրեր էին: Աշուղական ար-

¹ Աշուղ Ադաշը՝ Իվան Գյուրջին, աշխարհահռչակ թեոսոֆիստ Գեորգի Գյուրջինի հայրն էր, տե՛ս Նիկողոսյան Ա. Աշուղ Ադաշի պատմախմբաբանական հայեցակարգը: ԳՄԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 1999, հ. I, էջ 231-232:

վեստի հետ շփվելը ոչ միայն գեղագիտական, այլև հասարակական-քաղաքական, սոցիալական և կրոնաբարոյագիտական խնդիրներ էր հետապնդում, քանզի աշուղներն էին միայն, որ բաց տեքստով կամ այլաբանորեն կարող էին խոսել պեքպոլցիներին և ընդհանրապես հայությանը հուզող բազմաթիվ հարցերի մասին: Ակումբ-սրճարաններում տեղի և շրջիկ աշուղները, հայտնի արևելյան սիրավեպեր ու հեքիաթներ պատմելուց և միմյանց ու հանդիսատեսին *մուհամմա*՝ հանելուկ առաջադրելուց բացի, կազմակերպում էին մրցույթներ, որոնց ընթացքում հանդիսատեսներից *փասիյա բախալ*՝ խաղաղրույք (խաղագումար) էին հավաքում, որի մի մասը հասնում էր աշուղներին, մի մասը՝ սրճարանատիրոջը, իսկ մնացյալը՝ հանելուկի պատասխանը գտնողին¹:

Ալեքսանդրապոլի աշուղական կյանքի մասին բացառիկ արժեքավոր աղբյուրներից է Մ.Թամրազյանի ձեռագիր հուշատետրը:² Այստեղ կարելի է գտնել բազմապիսի վկայություններ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմելու այն ազատ ու անկաշկանդ մթնոլորտի մասին, որում ստեղծագործել են տեղացի և դրսեկ աշուղները սրճարաններում և դրանցից դուրս:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

Անշուշտ, ամենահամբավվոր աշուղները հանդես են եկել սրճարաններում, ավելին, նրանցից յուրաքանչյուրը ունեցել է իր ելույթների մշտական սրճարանը.

«Աշուղ Հավասին /Հաճի Թաթոս/ երգում էր իր մշտական սրճարանում: Աշխատավորությունը ամեն օր լցնում էր սրճարանը ու աճել էր տալիս նրան իր սիրած դաստանը կամ երգը և առատ վարձատրում էր աշուղին: Հավասին ապրում էր այդ փողերով»: /էջ 7622/

Որոշ աշուղներ հանդես են եկել սրճարաններում՝ ըստ իրենց ցանկության և նախընտրության.

¹ Բագեյան Գ., Աղանյան Գ. Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ, էջ 80-81:

² Թամրազյան Մ. Ալեքսանդրապոլի աշուղները: 1930: Անտիպ ձեռագիր: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF1, էջ 7611:

«Աշուղ Պայծառեն զբաղվում էր դերձակությունով և իր արհեստի մեջ բռնում էր առաջնակարգ դեր: Նա ածում էր թառ: Նրա հորինած երգերը շատ համով ու հոտով էին, և բոլորն էլ անխտիր երգվում էին հրավերներում, հարսանիքներում և սրճարաններում: Պայծառեն երբ ձանձրանում էր ասողից, նստում էր սրճարանի թախտին, ուր նստում էին աշուղները, և իր գեղեցիկ ու սաղաֆով զարդարած թառը ձեռք առնելով՝ երգում էր ու նվագում հաճախորդների համար»: /էջ 7646/

Մեծահամբավ որոշ աշուղներ թեն հանդես են եկել սրճարաններում, սակայն նրանք ավելի շատ սպասարկել են քաղաքի մեծահարուստ խավին:

«Աշուղ Ղայրաթին Էրզրումից էր /ծնվ. 1830 թ./:1876թ.-ից սկսած՝ այդ շնորհավի աշուղին էս տեսնում էի շարունակ մեր քաղաքացի հայտնի բարեգործ հարուստ մահտեսի Կարապետ աղա Բաբայանի տանը: Աշուղ Ղայրաթին ամեն առավոտ իր տանից գնում էր եկեղեցի, իսկ ժամերգությունը վերջանալուց հետո գնում էր ուղիղ Կարապետ Բաբայանի մոտ: ... Մեր մեծերից շատ անգամ եմ լսել, որ նա եղել է շատ շնորհավի երգիչ-աշուղ, և նույնիսկ Տաճկաստանից եկել են աշուղներ նրա հետ մրցման մտնելու և հետ են դարձել պարտված»: /էջ 7618/

Աշուղները, որոնք երգել են սրճարաններում, հաճախ ելույթներով մեկնել են նաև այլ վայրեր.

«Աշուղ Հազրին /Համբար Աթոյան/ երգում էր աշուղ Հավասու հետ մի սրճարանում, ածում էր սագ, երգում էր իր և ուրիշ վարպետների հորինած հայերեն երգերը: ... Նա երբեմն տանից հեռանում էր և սագն առած գնում էր օտար շրջաններ երգելու համար»: /էջ 7622/

Եղել են աշուղներ, որոնք հրաժարվել են սրճարանում ելույթներից, սակայն սիրով մասնակցել են սրճարաններում անցկացվող աշուղական մրցույթներին.

«Խայաթը /Մուքիաս Զահրիյան/ արհեստով դերձակ էր և սագ ածող: Նա չէր նստում սրճարաններում և աշուղությանը չէր պարապում: Մակայն

նա աշուղական գիտելիքներն ու կանոնները շատ լավ գիտեր, որոնք սովորել էր իր հորից՝ Բաբա Զահրուց:

Նրա գրվածքները աշուղական բնույթ չունեին, դրանք ավելի քան բանաստեղծություններ էին: Մակայն մուհամանների մրցումների ժամանակ, նա նստում էր մրցողների շարքում սազը ձեռքին և ամենադժվար հարցերին պատասխանում էր իսելացի և լուրջ դատողությամբ» /էջ 7645/

Որոշ աշուղներ հրաժարվել են մրցույթների մասնակցություններից.

«Աշուղ Խաչոն /Խաչատուր Ալեքսանյանը/ բնիկ ակեքաղցի էր: Նա կույր էր և ածում էր ճիւղներ: Նա մի հասարակ աշուղ էր և երգում էր հին աշուղների երգերը: Նա ուներ դուրեկան ձայն: Հին մարդիկ էլ նրան երգել էին տալիս կրոնական բնավորություն ունեցող դաստաններ ու երգեր: Նա ազահ չէր, որի համար էլ սիրում էին նրան:

Շատ էր պատահում, որ սրճարանի հաճախորդները հրամայում էին ուստա Խաչոյին մի դուրեկիթ ասել, նա էլ նույն բուպեին վերցնում էր ճիւղները և սկսում էր նվագել ու երգել, իսկ լսողները նրան չէին վարձատրում: Համեստ աշուղը չէր տրտնջում ու դժգոհություն հայտնում:

Աշուղական մրցումներին նա չէր կարող մասնակցել» /էջ 7644/

Որոշ աշուղներ իրենց կրոնական-բողոքական հայացքների պատճառով հրաժարվել են սրճարանում ելույթներից.

«Մալուին /Գալուստ Մարգարյան/ բողոքական աշուղ էր՝ Հավասիի, Հազիրիի ժամանակակիցը: Ածում էր քյամանի, հորինած երգերի մեծ մասը կրոնական բնույթի էր: Նա ուներ երգերի ժողովածու, որը տպագրվել էր Բաբվում: Նա չունեի աշուղին հատուկ ոգևորություն ու շնորհք: Նրա արվեստը չէր ոգևորում ժողովրդին նաև նրա համար, որ կրոնական էր՝ նման աղոթքի: ...Նա երբեք չէր մասնակցում աշուղական մրցություններին, որովհետև չունեի ընդունակություն՝ տրված հարցերին իսկույն պատասխան տալու համար» /էջ 7623/

«Աշուղ Մալուլու փոքր եղբայրն էր աշուղ Նիհանին/Օհաննես Մարգարյան/: Նա ծնվել է Ալեքաղում, մի չքավոր ջուլիակ Մարգսի ընտանիքում: Նա զբաղվել է քարտաշուրջամբ և բանջարաբուծությամբ /բոստան-

չի/, ածում էր քյամանի /ջութակ/, որը սովորել էր մեծ եղբայր Մալուլիից: Ունեցել է բավական հայերեն և տաճկերեն երգեր: Շատերը նրան ճանաչում են որպես լավ աշուղ: Բայց նա չի նստել սրճարաններում որպես աշուղ, իսկ նրա երգերը տարածված էին ժողովրդի մեջ: Եղել է բնավորությամբ շատ համեստ, ինչպես լսում ենք, նրա վրայից էլ բողոքական հոտ է փչել»: /Էջ 7636/

Ալեքսանդրապոլում գործել են համբավավոր և շատ համեստ կարողությունների տեր աշուղներ:

«Աշուղ Պոտոսը /Խաչատրյան/ կույր աշուղ էր և ածում էր ճիհնուր: ... Սա ավելի հասարակ դասակարգի աշուղ էր»: /Էջ 7642/



Եզրահանգում. Աշուղական համբարությունում համակարգվել են աշուղների մասնագիտացված գիտելիքները՝ չկաշկանդելով դրանց ազատ ու ստեղծագործական փոխակերպումներն ու արդիականացման դրսևորումները: Դա վերաբերել է ինչպես երգերի ժանրերին, այնպես էլ բանաստեղծական տեքստերի եղանակավորմանը:

Ալեքսանդրապոլի աշուղական համաքարությունը ի վերջո վերաճեց յուրահատուկ դպրոցի՝ քաղաքում ստեղծված հասարակական-քաղաքական նոր՝ ազգային-ազատագրական գաղափարախոսության անմիջական ազդեցությամբ:

Մեր ձեռքի տակ է գեղանկարիչ Գևորգ Բրուսյանի «Աշուղական սրճարան Ալեքսանդրապոլում» գծանկարը, որտեղ հստակ երևում են աշուղների տեղն ու դիրքը սրճարանում: Այն խոսուն վկայում է նաև նրանց խոսքի ու գործունեության բարձր հեղինակության ու արժեքի մասին:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ 21T-6E197 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

References

1. Bazeyan K. *Ethnographic panorama of Shirak Av. In Isahakyan's novel "Usta Karo"* [Shiraki azgagrakan hamaynapatkery Av. Isahakyan «Usta Karo» vepum]. «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 2023, v. 1(26), pp. 19-29. (in Armenian).
2. Bazeyan K., Aghanyan G. *Manifestations of popular Christianity in the festive behavior of Gyumri people* [Zhoghovrdakan k'ristoneut'yan drsevorumnery Gyumrets'ineri tonatsisakan vark'um]. «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 2011,
3. v. XIV, pp. 80-86. (in Armenian).
4. Bazeyan K., Aghanyan G. *Aleksandrapol: ethnographical sketches (historio-ethnographic study)* [Aleksandrapol. azgagrakan esk'izner (patmazgagrakan usumnasirut'yun)] // Archeological and historico-ethnographical studies in Shirak. Yerevan-Gyumri. «Gitutyun» Publishers NAS RA. 2014. 156 p..(in Armenian).
5. Harutyunyan H. *The implications of ashugh traditions in Kars and Alexandrapol in XIXth century (Part A)*[Karsi yev Aleksandrapoli ashughakan avanduytneri phokharrchutyunery]. «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 2013,v. 16,pp. 72-80. (in Armenian).
6. Harutyunyan H. *The ashugh tradition in the urban culture of Alexandrapol* [Ashughakan avanduyty Aleksandrapoli kaghakayin mshakuytum]. «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 2017, v. 20, pp. 216-223. (in Armenian).
7. Khayat Zahriyan *Memories of the Ashughs* [Hishoghut'yunner ashughneri masin]. 1930, Manuscript.Archive of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, FF 1.

8. Levonyan G. *Ashughs and their art* [Ashughnery yev nrants' arvesty]. Yerevan. "Hayphtat" 1944. 107 p.. (in Armenian).
9. Mkhitarants Agh. *Crumb from Shirak's granaries* [Pshrank Shiraki ambarnerits]. Eminyan ethnographic collection, v. 1. Moscow-Alexandropol. G.Sanoyan pulish.1901, 338 p.. (in Armenian).
10. Nikoghosyan A. *Ashugh Adash's historical-philosophical concept* [Ashugh Adashi patmaimastasirakan hayetsakargy]. «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 1999, v. 1, pp. 19-29. (in Armenian).
11. Tamrazyan M. *The ashughs of Alexandropol* [Aleksandrapoli ashughnery]. 1930. Atypical handwriting. Archive of the Institute of Archeology and Ethnography of the NAS RA. FF1. (in Armenian).

ՀՏԴ 93.930

1926 թ. ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՎ ՆՈՐ
ՔԱՂԱՔԻ ՎԱՂ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈԻԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինգա ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
«Կուսմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան, պ.գ.թ., դոցենտ, ՀՀ
inga.avagyan.76@mail.ru

Հոդվածի նպատակն է՝ առաջնորդվելով 1980-ական թթ. խորհրդային փորձով՝ վերականգնել խորհրդային մեթոդաբանությունը «Կուսմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի պահպանական տարածքում և հուշարձանների համակարգված պահպանության նպատակով վերագործարկել լենինականյան շրջանում գործող վերականգնող արվեստանոցները, դրանք համարելով համապատասխան միջոցներով ու մասնա-

գետներով՝ շինարարներով, վարպետներով, ճարտարապետներով, դաստիարակել մասնագետների նոր սերունդ՝ ավեքսանդրապոլյան և լենինականյան մշակույթը և ավանդույթը կորստից փրկելու նպատակով:

Հոդվածի շրջանակներում կներկայացնենք Լենինականի վաղ խորհրդային ճարտարապետությունը և սույն մշակույթի պահպանության կարևորությունը: Աշխարհի շատ երկրներ, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, անում է ամեն ինչ տուրիզմի ոլորտի զարգացման համար, կարևոր են նաև մշակութային ժառանգության համակարգված պահպանման նպատակով մեթոդաբանության մշակումը, հուշարձանների պահպանության իրավական դաշտի վերանայումը և լրամշակումը, մասնավորապես՝ «Կումայրի» արգելոց-թանգարանի պահպանության համար:

Բանալի բառեր՝ Լենինական, խորհրդային ճարտարապետություն, Հ. Քաջազնունի, Դ. Չիսլիև, Ս. Մազմանյան, Ղ.Սարգսյան, 1926 թ. Լենինականի երկրաշարժ:

THE 1926 EARTHQUAKE OF LENINAKAN AND THE HISTORY OF THE CONSTRUCTION OF THE NEW CITY IN THE EARLY SOVIET PERIOD

Inga AVAGYAN

Shirak Center for Armenological Studies of NAS RA,
"Kumayri" Historical-Cultural Preserve-Museum, PhD, Associate professor, Armenia,
inga.avagyan.76@mail.ru

The objective of this article is to rekindle the memory and experiences of the Soviet era within the well-preserved domain of the "Kumayri" historic-cultural preserve-museum, as it was guided by the principles of the 1980s. It aims to reintroduce and invigorate systematic efforts for the protection and restoration of historical monuments by reestablishing restoration workshops in the Leninakan area. These workshops will be equipped with the necessary resources and staff, including builders, craftsmen, and architects. Furthermore, the article seeks to nurture a new

generation of specialists in the fields of Alexandrapol and Leninakan culture, ensuring the preservation of cherished traditions from potential oblivion.

Within the context of this article, the early Soviet architectural heritage of Leninakan will be highlighted, emphasizing the significance of safeguarding this cultural legacy. In the current era, where numerous countries worldwide, including the Republic of Armenia, are diligently promoting tourism development, it becomes increasingly vital to formulate a methodical approach for the consistent preservation of cultural heritage. Additionally, there is a need to reevaluate and update the legal framework governing the protection of historical monuments, especially within the "Kumayri" preserve-museum, to adapt to the evolving requirements of heritage conservation in the contemporary world.

Keywords: Leninakan, Soviet architecture, Kh. Kajaznuni, D. Chisliev, M. Mazmanyan, G. Sargsyan, 1926 Leninakan earthquake.

ЛЕНИНАКАНСКОЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЕ 1926 ГОДА И ИСТОРИЯ СТРОИТЕЛЬСТВА НОВОГО ГОРОДА В РАНЕСОВЕТСКИЙ ПЕРИОД

Инга АВАГЯН

Ширакский центр арменоведческих исследований НАН РА, Историко-культурный музей-заповедник "Кумайри", к.и.н., доцент, Армения, inga.avagyan.76@mail.ru

Цель данной статьи – восстановить советский опыт 1980-х годов по охране территории Историко-культурного музея-заповедника «Кумайри», а в целях планомерной охраны памятников возобновить работу реставрационных мастерских, созданных в Ленинакане, оснастив их соответствующими средствами и специалистами: строители, мастера, архитекторы, воспитать новое поколение специалистов, чтобы ограничить утрату александропольской и ленинаканской культуры и сохранить традиции. В статье будет представлена раннесоветская архитектура Ленинакана и важность охраны культуры этого периода. В настоящее время, когда многие страны мира, в том числе и Республика Армения, делают все возможное для развития туризма, важно также разработать методологию систематической охраны культурного нас-

ледия, а также пересмотреть и обновить правовую базу охраны памятников, в частности охраны музея-заповедника «Кумайри».

Ключевые слова: Ленинанкан, советская архитектура, Х. Каджазнуни, Д. Числиев, М. Мазманян, Г. Саргсян, 1926 г., Ленинанканское землетрясение.

Ալեքսանդրապոլի վերանվանումը և 1926 թ. աղետալի երկրաշարժը.

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո 1920 թ. նոյեմբերի 29-ին Ալեքսանդրապոլում ճարտարապետական կառուցապատումն ընթանում էր նախորդ դարավերջի մեթոդաբանությանը համահունչ: 1924 թ. Վ. Լենինի մահվանից հետո Ալեքսանդրապոլ կայարանը վերանվանվեց Լենինական, այսպիսով՝ քաղաքին տրվեց նոր անուն: Անվանակոչությունից երկու տարի անց մեծ թափ առավ Լենինականի քաղաքաշինությունը: Այն էլ ուրույն պատճառով: 1926թ. տեղի ունեցավ Լենինականի աղետալի երկրաշարժը, որի հետևանքով հիմնահատակ ավերվեցին Ալեքսանդրապոլյան շրջանի մի շարք տներ (նկ.¹ 1-6): Ամբողջ Շիրակի մարզում գոհերի քանակը շուրջ 300 էր: Պահպանված արխիվային լուսանկարներից երևում է, թե ինչպես են կարմիրբանակայիները օգնում աղետի գոտու բնակիչներին: Աղետի պատճառած վնասները ահռելի էին, ուստի խորհրդային իշխանությունների ուսերին ծանրացավ նոր քաղաքի կառուցապատումը: Լենինականի հատակագծերի մշակման ակունքներում կանգնեցին այնպիսի նշանավոր ճարտարապետներ, ինչպիսիք էին Միքայել Մազմանյանը, Ղազարոս Մարգսյանը, Հովհաննես Քաջազունին, Նիկոլայ Բանը, Դավիթ Չիսլիևը, Ռոբերտ Կասպարովը, Հայկ Ավետովը, Տիրան Երկանյանը, Գևորգ Քոչարը, Կարո Հալաբյանը: Նրանք Լենինականում հիմնադիրները դարձան խորհրդային կոնստրուկտիվիզմի, որը համեմատված էր հայ միջնադարյան ճարտարապետության և ալեքսանդրապոլյան քաղաքաշինական առանձնահատկությունների համադրությամբ:

¹ *Արխիվային լուսանկարները՝ «Կոմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ֆոնդից և լուսանկարիչ Տիգրան Գասաբյան արխիվից:*



Նկ. 1




Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6

Դավիթ Չիլիևի նախագծած շենք-շինությունները Լենինականում.

Դ.Չիլիևի երկրաբանական հայտնագործությունների արդյունքում մշակվեց Արթիկ տուֆի արդյունահանման մեթոդաբանությունը: Վարդագույն տուֆը դարձավ այն շինանյութը, որը գործնականում, ըստ ճարտարապետի, անսպառ շինանյութի աղբյուր էր Հայաստանի Հանրապետության համար: Լենինականի 1926թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժից հետո, որի ուժգնությունը 7-8 բալ էր, մագնիտուդը՝ 5,7, Չիլիևին հրավիրում են Հայաստան, և նա մինչև 1934թ. որպես գլխավոր ճարտարապետ ղեկավարում է Լենինականի վերականգնման արվեստանոցը [2, էջ 56,58]: Հենվելով Արթիկի տուֆերի ինժեներատեխնիկական հատկությունների և սեփական փորձարարական ուսումնասիրությունների արդյունքների վրա՝ 1924թ. Չիլիևը Արթիկի տուֆի լայնածավալ արդյունահանման և շինարարությունում օգտագործման առաջարկություն է ներկայացնում Հայաստանի ժողտնտխորհ: Նա մանրամասն տնտեսական հաշվարկներով հիմնավորում է, որ նույնիսկ երկաթգծով տեղափոխման ծախսերի դեպքում այն ավելի էժան է, քան տեղական աղյուսը [2, էջ 55]: 1927թ. Անդրֆեդերացիայի ժողտնտխորհի նախագահի տեղակալ Սարգիս Լուկաշինի շնորհիվ Չիլիևին հանձնարարվեց նախագծել և Արթիկի տուֆից կառուցել միահարկ փորձական-ցուցադրական տուն, որն իրականացվեց նույն տարում Գյումրիում: Կառույցը XXդ. Արթիկի տուֆից կառուցված առաջին տունն էր Հայաստանում [2, էջ 55]:

Դավիթ Չիլիևի ջանքերով կառուցապատվեց Լենինականի Ինտերնացիոնալ՝ այժմ՝ Տիգրան Մեծ պողոտան, Խաղաղության օղակը, այժմ՝ Բագրատունյաց օղակ (Նկ.7), և Գայի փողոցի՝ Գորկու այգու դիմաց ընկած հատվածը: Ճարտարապետական ուրույն ոճով նախագծված այս քսան շենքերը սեյսմիկ առումով և ճարտարապետական հորինվածքով կարևոր լուծումներ ունեին և բնականաբար դիմացան 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի հուժկու հարվածներին: Շենքերը երկհարկանի են, արտաքինապես իրար նման հորինվածքներով, բայց նույն ձևը կրկնվում է ընդամենը մի քանի անգամ: Նախագծված երեք տիպի շենքերից երկուսը սեկցիոն

տիպի են՝ բնակարանների մուտքերն անհատական են, կազմակերպված են անմիջապես դրսից՝ բաց աստիճանավանդակի միջոցով [3, էջ 61-63]: Ճարտարապետական ուրույն հորինվածքով այս շենքերը համալրեցին 1980 թ. ստեղծված «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի խորհրդային շրջանի ճարտարապետությունը: Դավիթ Չիսլինը նաև նախագծեց «Լենինական» հյուրանոցի (պետ. ցուցիչ 7.7.1.4.935) (Նկ.8) և Կենտրոնական բանկի (7.7.1.4.908 Հ) [1] (Նկ.9) շենքերը այսօրվա Ազատության հրապարակում: «Լենինական» հյուրանոցը կառուցվել է 1927թ., կառույցի ճակատը մշակված է բաց մոխրագույն կոպտատաշ և սրբատաշ բազալտի համադրությամբ, ինչը եզակի է քաղաքի այս շրջանի ճարտարապետության համար: Կենտրոնական բանկի շենքը կառուցվել է 1928թ., 1930-ական թթ. լրակառուցվել է երկրորդ հարկը (ճարտարապետ՝ Ռ.Կասպարով), իսկ 1980-ական թթ.՝ Գայի փողոցի հատվածը (ճարտարապետ՝ Մասուն Գրիգորյան): 2000-ականներին այս հատվածում կատարված փոփոխություններով խախտվեց շենքի ներդաշնակությունը [3, էջ 61-63]: Այսօր բոլորովին նոր մեթոդաբանությամբ է նախագծվել «Լենինական» հյուրանոցի վերականգնման նոր նախագիծը, որտեղ մեր առաջարկով պահպանվելու են խորհրդային ճարտարապետությանը բնորոշ ոչ միայն արտաքին, այլև ներքին հարդարանքի բազմաթիվ դեկորներ: Մակայն առանձնահատուկ է ճարտարապետի նախագծած Ալեքսանդրապոլի ժողովրդական տան ճակատը, որը վերակառուցվել է 1930-ական թթ. և վերականգնվել է բոլորովին վերջերս, շենքն ունի հանրապետական նշանակության հուշարձանի կարգավիճակ (պետցուցիչ՝ 7.7.1.4.901)[1]: Այս թատրոնում առաջին անգամ 1912 թ. օգոստոսի 4-ին և 8-ին ներկայացվեց Արմեն Տիգրանյանի «Անուշը»՝ հայկական առաջին ազգային օպերան:

Ղազարոս Սարգսյանի նախագծած շենք-շինությունները Լենինականում. Լենինականի ճարտարապետության մինչ Հայրենական պատերազմի շրջանի եզակի նախագծով է կառուցված Տեքստիլ գործարանը (Նկ. 11) և գործարանի բանավանդ (ճարտարապետ՝ Ղազարոս Սարգսյան): 1924թ. Շահագործման է հանձնվում Մանվածքային ֆաբրիկայի շենքը (պետցուցիչ

7.7.1.8) [1] (Նկ. 10, 15), որտեղ ճարտարապետը Լենինականում առաջին անգամ կիրառել է երկաթբետոնե կոնստրուկցիաներ, իսկ սև և կարմիր տուֆի համադրությունը փոխադրել է պլեքսանդրապոլյան ճարտարապետությունից: Տեսական ժամանակահատվածում՝ 1920-30-40-ական թթ. ճարտարապետի գլխավորած խումբը նախագծեց նաև տեքստիլ ֆաբրիկայի մասնաշենքերը, որոնք դարձյալ հաշվառված են որպես պահպանական միավորներ և ընդգրկված են «Կումայրի» արգելոցի պահպանական տարածքում՝ որպես հանրապետական նշանակության հուշարձան (պետցուցիչ՝ 7.7.1.8): Գործարանին զուգահեռ տեղաբաշխված է բանավանը, որը կառուցվել է 1920-30-ական թթ., որտեղ բնակություն էին հաստատել հազարավոր ընտանիքներ, այսօր բանավանի շուրջ 25 շենք-շինություն դարձյալ պահպանվում է պետության կողմից: Հատկանշական է, որ այս երկհարկանի շենքերից մի քանիսին ավելի ուշ լրակառուցվել են նոր հարկեր, սակայն այս ամենը չի խաթարել շենքերի սեյսմիկ ամրությունը, և բանավանը նույնպես կարողացավ դիմանալ 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հուժկու հարվածներին (Նկ.12): Բանավանի շենքերից անհրաժեշտ է նշել Գարեգին Նժդեհի 20 հասցեում տեղակայված մանկապարտեզի շենքը, որի պատին ամրացված է, Ղ. Սարգսյանին նվիրված մեմորիալ տախտակը (ճարտարապետ՝ Ս. Կուրազյան): Շենքը (պետցուցիչ՝ 7.7.1.4.936) [1] կառուցվել է 1930-ական թթ.: Սակայն Ղազարաս Սարգսյանը Լենինականի պատմության մեջ մտավ նաև որպես «Հոկտեմբեր» կինոթատրոնի նախագծող ճարտարապետ (պետցուցիչ՝ 7.7.1.4.928) [1] (Նկ.13), շենքը կառուցվել է 1926թ., այն ինչպես նաև ճարտարապետի նախագծած մյուս կառույցները կարմիր և սև տուֆերի համադրությամբ է: Շենքի ներքին հարդարանքում պահպանվել է պատշգամբների հատակի տոմետը [3, էջ 26] (Նկ.14): Այսօր արդիական է այս կառույցի՝ որպես կինոթատրոնի շենք շահագործելու անհրաժեշտությունը, մինչդեռ հուշարձան-շենքը նոր սեփականատերերի ջանքերով կարող է վերածվել առևտրի կենտրոնի:

Հովհաննես Քաջազունու և Գևորգ Քոչարի նախագծած շենքերը. Հովհաննես Քաջազունին իր վաստակն ունեցավ Լենինականի սեյսմակայուն

ճարտարապետության կայացման գործում: Նա նախագծեց «Լողկա» շենքը (Ռիժկովի 6) (պետցուցիչ՝ 7.7.1.4.801) (Նկ.16), որը համարվում է Լենինականի ճարտարապետության գլուխգործոցը և կառուցվել է 1920-30 ական թթ.: Այսօր Գյումրու ժամանակակից ճարտարապետության մեջ հաճախ կրկնվում են Քաջագունու այս շենքի մոտիվները: Օրինակ՝ Ռուսթավելի 27, 29 Սանոյանցների առանձնատան բակային հատվածի ոչ հուշարձանային մասում նման լուծումներով է հարդարված պատերից մեկը: Նմանօրինակ երկրորդ «Լողկա» շենքը նարնջագույն տուֆից կառուցվել է Սպանդարյան 24 հասցեում՝ Ս. Շահումյանի արձանի հարևանությամբ (պետցուցիչ 7.7.1.4.700) (Նկ.17), այն Ստալինոյան դարաշրջանի ճարտարապետությանը բնորոշ կառույցներից է: 1930-ական թթ. է կառուցվել Գևորգ Քոչարի նախագծած Քաղաքային խորհրդի շենքը, որը թները բացած ինքնաթիռ էր հիշեցնում: Շենքը ապամոնտաժվել է Սպիտակի երկրաշարժից հետո, երբ պարզվեց, որ շենքը վերականգնելը անհնարին է: Գ. Քոչարի՝ այսօր կանգուն, սակայն բազմաթիվ աղճատումներ տեսած հաջորդ կառույցը Արագած մարզամշակութային ակումբի՝ «Տեքստիլի ակումբ»-ի շենքն է (Նկ.18), որի կառուցումը, սակայն, ավարտել է ճարտարապետ Սպարտակ Խաչիկյանը: Շենքը 2000թ. հետո, բազմաթիվ անգամներ աղճատվել է լրակառուցումներով: Այս կառույցները նույնպես խորհրդային կոնստրուկտիվիզմին բնորոշ ճարտարապետական հորինվածքներ էին, որոնք մինչ օրս ուշագրավ են իրենց լուծումներով և նյութի ընտրությամբ [3, էջ 64-66]:

Անհայտ ճարտարապետների նախագծած շենք -շինությունները Լենինականում. Այլ ճարտարապետական մինչպատերազմյան Լենինականի կարևոր ճարտարապետական կառույցներից են թիվ 2 հիվանդանոցի մասնաշենքը 1926թ. (Նկ.19) և Երկաթգծի հիվանդանոցը, որի մի քանի մասնաշենքեր կառուցվել էին դեռևս դարասկզբին, սակայն ծավալատարածական առումով տիրապետողը 1926թ. կառուցված մասնաշենքն է, որ իր ճարտարապետական հորինվածքով նման է թիվ երկու հիվանդանոցին: 1930-ական թթ. է կառուցվել նաև Լենինականի Հ. Թումանյանի անվան թիվ 13 դպրոցի (Նկ.20), Բժշկական ուսումնարանի շենքերը (Նկ.21), Սպայի

Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում

տունը, որ այսօր վերապրոֆիլավորվել է Հայորդաց տան (Նկ.22), Ռիժկովի ճենափողոցում զուգահեռ դասավորված երկհարկանի վեց շենքերը: Սպայի տանը ճարտարապետական հորինվածքով նման է Սևյանի անվան մշակույթի պալատի շենքը քաղաքի կայարանամերձ հրապարակում (7.7.1.22 Հ) [1] (Նկ.23), որը համաժամանակյա թվագրություն ունի: Պալատի կառուցումը սկսվել է 1926թ., ավարտվել 1930թ.: Բացումը կատարվել է մայիսի 1-ին: Այս կառույցի մեջ է գտնվում մեկ այլ խորհրդային հուշակոթող՝ Ֆերդինանտ Մանուկյանի «Մասունցիների պարը» խճանկարը (16x4 մ): Մակայն իր հորինվածքով բոլորովին առանձնանում է 1930-ական թթ. կառուցված, Գորկու 1 հասցեում տեղակայված նախկին հիվանդանոցի շենքը (7.7.4.900 Հ) [1] (Նկ.24): Այս ճարտարապետական կառույցները նախագծող ճարտարապետական խմբերի ղեկավարների մասին տեղեկություն չունենք: Մակայն հույս ունենք, որ հետագայում այս հարցերը պարզաբանվելու են:



Նկ. 7



Նկ.8



Նկ. 9



Նկ. 10




Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 15



Նկ. 14



Նկ. 16

Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում



Նկ. 17



Նկ. 18



Նկ. 19



Նկ. 20



Նկ. 21



Նկ. 22



Նկ. 23



Նկ. 24

Եզրահանգումներ. Այսօր մեր առջև ծառայած խնդիրներից է ոչ միայն վաղ լենինականյան ճարտարապետության պահպանությունը, այլև բազմաթիվ կոնստրուկտիվ միջոցների կիրառումը արգելոցի տարածքում վերականգնման աշխատանքների ժամանակ: Ժամանակին հարիր մեթոդաբանության պահպանումը կարևոր է, քանի որ համապատասխան մասնագետների կարիք է զգացվելու մի քանի տասնամյակ անց, ինչպես այսօր արդեն հազվադեպ են տարադներով աշխատող քարագործ վարպետները, փայտից առաստաղներ այսպես կոչված, «բոխչա թավան», խլափեղկեր, դոլաբներ և դռներ պատրաստող հյուսն-ատողձագործ վարպետները, տանիքագործները: 1980թ. այս խնդիրները լուծելու համար ստեղծվեց «Կոմայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանը, որի հիմնադիրն էր վերականգնող ճարտարապետ Սաշուր Քալաշյանը և կառույցին կից գործող վերականգնող արվեստանոցները, որ ղեկավարում էր Սասուն Գրիգորյանը, համապատասխան մասնագետներով ու վարպետներով: 1980-ականների վերականգնող արվեստանոցերի նախատիպն էր դեռ 1926թ. ստեղծված Լենինականի վերականգնող արվեստանոցները, որոնց ջանքերով երկու տասնամյակ անց հաղթահարվեցին 1926թ. աղետալի երկրաշարժի հետևանքները: Արվեստանոցի ուսերին ծանրացել էին ոչ միայն Լենինականի, այլև Շիրակի մարզի մի շարք հանրապետական նշանակություն ունեցող հուշարձանների վերականգնումը (Մայիսյանի եկեղեցի, Սառնաղբյուրի վանական համալիր): Այսօր վերականգնող արվեստանոցների վերաբացումը կարևոր գործոն կդառնա «Կոմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանը պահպանելու և վերականգնելու համար, այդ թվում նաև՝ լենինականյան ժառանգության պահպանության գործում:

References

1. Government of the Republic of Armenia, Decision, September 9, 2004 N1270 on approving the state list of immovable monuments of history and culture of the Shirak region of the Republic of Armenia. State list of immovable monuments of history and culture of the Republic of Armenia, 7. Shirak Marz, 7.1. The city of Gyumri [*Hayastani*

- Hanrapetut'yan karravarut'yun, Voroshum, 9 septemberi 2004 t'vakani N1270-n Hayastani Hanrapetut'yan Shiraki marzi patmut'yan yev mshakuyt'i ansharzh hushardzanneri petakan ts'uts'aky hastatelu masin: Petakan ts'uts'ak, Hayastani Hanrapetut'yan patmut'yan yev mshakuyt'i ansharzh hushardzanneri, 7. Shiraki marz, 7.1. Gyumri k'aghak'.] //https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=12877. (In Armenian).*
2. Meliq-Adamyanyan H., Khachatryan H. The Contribution of Architect David Chislyan (Chisliev) in Artik Tuff promotion and usage // 27-29 September, 2019, Gyumri 10th international conference "Historical and Cultural Heritage of Shirak: Contemporary Issues of Armenology" Yerevan – Gyumri: "Gitutyun" publ., 2019, pp. 54-58.
 3. Mirzoyan A., Khachatryan A. Business card Gyumri-Alexandrapol-Kumayri-Leninakan [Ays'tek'art, Gyumri-Alek'sandrapol-Kumayri-Leninakan] Gyumri, 2022, 74 p. (in Armenian).

ՀՏԴ՝ 908

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻԳՐԱՑԻԱՑԻ
ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ**

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն, պ.գ.թ., ՀՀ
a.bojajyan@mail.ru

Սույն հոդվածում ներկայացվել է Շիրակի մարզի բնակչության միգրացիոն գործընթացները XX դ. վերջին և XXI դ. սկզբին: Մեր ուսումնասիրությամբ բացահայտել ենք միգրացիոն գործընթացների վրա ազդող սոցիալ-տնտեսական, պատմական և ժողովրդագրական գործոնների ազդեցության չափը: Տրվել է միգրացիոն գործընթացների ժամանակագրական պարբերացում: Դաշտային ազգագրական նյութերի և պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա տրվել է աշխատանքային միգ-

րանտների և մարզի զբաղվածությունն ունեցող բնակչության եկամտի տարբերության չափը: Ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են հանդիսացել հիմնականում ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները, դաշտային ազգագրական նյութերը:

Բանալի բառեր` միգրացիա, ներգաղթ, արտագաղթ, արտագնա աշխատանք, միգրացիայի մնացորդ, միգրացիոն հոսքեր, միգրացիայի տեմպ, բնակչության տեղաշարժ, մշտական միգրացիա, ժամանակավոր միգրացիա:

MODERN MIGRATION PROCESSES OF SHIRAK REGION

Artashes BOYAJYAN

Shirak Center of Armenological Studies NAS RA, PhD in History, Armenia
a.boyajyan@mail.ru

The article presents the migration processes of the Shirak Marz population in the 20th, last and 21st centuries. We have identified the socio-economic, historical and demographic factors influencing migration processes. The chronological breakdown of migration processes is highlighted in the paper. Based on field ethnographic materials and official statistical data, the amount of income difference between labor migrants and the employed population of the region was given. The primary sources for the study were the results of censuses, the data of the RA National Statistical Committee, and field ethnographic materials. The characteristics of migration processes of the population of the region were given in the article.

It should be emphasized that corresponding research work on the population migration of the Shirak marz has not been carried out until now. The purpose of this article is to present the Shirak marz in 1988-2022 based on official statistical data, field ethnographic materials and scientific literature related to the topic. Our aim is to analyze the quantitative and qualitative changes of the external and internal migration flows of the population and evaluate the demographic and

socio-economic consequences of the migration processes by highlighting the migration problems and presenting the possibilities of overcoming them.

Key words: migration, immigration, emigration, foreign work, migration balance, migration flows, rate of migration, population movement, permanent migration, temporary migration.

СОВРЕМЕННЫЕ МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ ШИРАКСКОЙ ОБЛАСТИ

Арташес БОЯДЖЯН

НАН РА Ширакский центр арменоведческий исследований, к.и.н., Армения
a.boyajyan@mail.ru

В статье рассматриваются миграционные процессы в населении Ширакского марза в конце XX и начале XXI века. Мы выявляем социально-экономические, исторические и демографические факторы, оказывающие влияние на эти миграционные процессы. Также представлена хронологическая периодизация этих событий. На основе полевых этнографических материалов и официальной статистической информации рассматривается разница в доходах между трудовыми мигрантами и занятым населением региона. В качестве основных источников для исследования использовались данные Национального статистического комитета РА и полевые этнографические материалы.

Следует подчеркнуть, что данное исследование обладает особой актуальностью, поскольку ранее практически не проводилось исследований миграции населения Ширакской области. Основная цель статьи заключается в анализе и представлении демографических и социально-экономических изменений в Ширакском марзе с 1988 по 2022 год на основе официальных статистических данных, полевых этнографических материалов и соответствующей научной литературы. Мы стремимся оценить как количественные, так и качественные изменения в экстерналих и интерналих миграционных потоках населения, а также выявить последствия этих миграционных процессов и обсудить связанные с ними проблемы миграции.

Ключевые слова: миграция, иммиграция, эмиграция, иностранная работа, сальдо миграции, миграционные потоки, интенсивность миграции, движение населения, постоянная миграция, временная миграция.

Նախաբան. Վերջին 35 տարիների ընթացքում ՀՀ բնակչության միգրացիոն գործընթացները բավականին լավ են ուսումնասիրված¹: Հարկ է ընդգծել, որ Շիրակի մարզի բնակչության միգրացիայի հետազոտություն գրեթե չի իրականացվել: Օգտվելով պաշտոնական վիճակագրական տրվյալներից, դաշտային ազգագրական նյութերից և թեմային առնչվող գիտական գրականությունից՝ ներկայացրել ենք Շիրակի մարզի 1988-2022թթ. բնակչության արտաքին և ներքին միգրացիոն հոսքերի քանակական և որակական փոփոխությունները, վերլուծել և գնահատել ենք միգրացիոն գործընթացների ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հետևանքները՝ վեր հանելով միգրացիոն հիմնախնդիրները, քննարկել դրանց հաղթահարման կամ սրությունը մեղմելու հնարավորությունները: Մարզի միգրացիոն հոսքերն ուսումնասիրելիս փորձել ենք ուշադրություն դարձնել բնակչության տեղաշարժերի ուղղություններին:

XX դ. վերջին և XXI դ. սկզբին Շիրակի բնակչությանը բնորոշ է եղել ակտիվ շարժունակությունը, որն առանձնակի մեծ ծավալներ է ընդունել բնական աղետի, սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, պատերազմական գործողությունների և քաղաքական խորը հակամարտությունների իրավիճակներում: Սպիտակի 1988թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժի պատճառով ավերված բնակավայրերը լուրջ խթան հանդիսացան բնակչության լայնածավալ արտագաղթին: Շուրջ 160 հազ. մարդ (հիմնական մասը բաժին է ընկել Շիրակի մարզին) տարհանվեցին դեպի հանրապետության

¹ Աթոյան Կ., *Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում (2015)*, Գարապետյան Ս.Ռ., *Միգրացիան և հայկական նոր սփյուռքը, էթնոսոցիալական հետազոտություն (2013)*, Գալստյան Մ. Վ., *Ազգային փոքրամասնությունների միգրացիան ՀՀ-ում, էթնոսոցիոլոգիական հետազոտություն (2015)*, Թադևոսյան Զ. Ա., *Աշխատանքային միգրացիա, գնահատականներ և մոդորումներ (2014)*, և այլն:

տարբեր բնակավայրեր և ԽՍՀՄ տարբեր հանրապետություններ, հիմնականում ՌԽՍՖՍՀ և Վրաստան: Տարհանվածներից 50 հազարը չվերադարձան¹: Ադետալի երկրաշարժը Շիրակում հիմք դրեց բնակչության զանգվածային արտագաղթի նոր ժամանակափուլին: Բնակարանաշինության տեմպերի դանդաղումը նույնպես խթանեց արտագաղթողների թվի աճին: 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով միայն Գյումրի քաղաքում 20 հազար 612 բնակարան փլուզվեց կամ դարձավ բնակչության համար ոչ պիտանի: Այդ թիվը ողջ մարզում հասավ 22 հազար 700-ի²: Սակայն 1989-2000թթ. կառուցվել է 9500, հաջորդ երկու տարիներին՝ 1500, իսկ 2003թ.՝ 2500 բնակարան³, 2010-2012 թվականներին շահագործման է հանձնվել 2812 բնակարան⁴: Ի վերջո 1989-2015 թվականներին մարզում ընդհանուր կառուցված, վերականգնված, ԲԳՎ (բնակարանների գնման վկայագիր) ծրագրով և ֆինանսական աջակցությամբ, 22906 անօթևանի խնդիր է լուծվել, որից 21093-ը՝ Գյումրիում: Այդ տարիներին ընտանիքների թվի աճը և բնակարանների կառուցման դանդաղ տեմպերը նախադրյալներ ստեղծեցին արտագաղթողների թվի աճի: Մարզում 1988-1989թթ. բնակչության

¹ Մաֆարյան Լ. Վ., Փիրուզյան Ս. Ա., Սպիտակի երկրաշարժի պատճառահետևանքային ընկալումները Հայաստանում// Լրաբեր հասարակական գիտությունների, հ.1, Եր. 2002, էջ 66, 65-78:

² Մխոյան Ա., Գյումրիում կառուցվել է ավելի շատ բնակարան, քան քանդվել է, բայց քաղաքում դեռ անօթևաններ կան, <https://armeniasputnik.am/20171207/armeniagyumri-anotevanner-9705127.html> (դիտվել է 14.07.2023):

³ Մխիթարյան Ա.Բ., Երկրաշարժի հետևանքների վերացման հիմնախնդիրները Շիրակի մարզում// Լրաբեր հասարակական գիտությունների, հ.1, Եր. 2006, էջ 221, 219-224էջ:

⁴ Մխոյան Ա., Գյումրիում կառուցվել է ավելի շատ բնակարան, քան քանդվել է, բայց քաղաքում դեռ անօթևաններ կան, <https://armeniasputnik.am/20171207/armeniagyumri-anotevanner-9705127.html> 14.07.2023թ.:

թիվը արտագաղթի պատճառով նվազել է նաև Ամասիայի տարածաշրջանում՝ ադրբեջանցիների արտագաղթով, որոնց թիվը կազմել է 12.9 հազար¹:

ՀՀ ազգային վիճակագրական տվյալներից օգտվելով և մեր հաշվարկով՝ 1989-2022թթ., Շիրակի մարզը լքած բնակչության թիվը տատանվում է 250-300 հազ. միջև: Հիշատակենք, որ սկսած 1992թ. նույն ցուցանիշը ՀՀ համար կազմել է 900 հազարից մինչ 1.0 միլիոն²: Մատնանշելով պաշտոնական և ոչ պաշտոնական վիճակագրական տվյալները՝ հաճախ մտահոգություն է հնչում Շիրակի «դատարկվելու» մասին, և իրավամբ մարզի առկա բնակչության ամբողջ թվի մոտ կեսը բաժին է ընկնում մինչաշխատունակ և կենսաթոշակային տարիքի բնակչությանը: Այսպես, 2022թ. ըստ ՀՀ ԱՎԿ տվյալի՝ ժողովրդագրական խնամառության գործակիցը Շիրակի մարզում տղամարդկանց մոտ կազմել է 59.3%, իսկ կանանց՝ 57.3%³:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շիրակի մարզի բնակչության միգրացիոն գործընթացները պայմանական կարելի է բաժանել հետևյալ ժամանակափուլերի.

Զանգվածային արտահոսքի և ներհոսքի փուլում (1988-1993թթ.)

վճռորոշ հանդիսացան հասարակական-քաղաքական բնույթի գործոնները (ԽՍՀՄ փլուզում, միջէթնիկ հակամարտություն, սոցիալական անվստահություն ու լարվածություն և այլն), ինչպես նաև Սպիտակի ավերիչ երկրաշարժը: Այս փուլի սկզբի տարիներին (1988-1991թթ) ՀՀ-ում (բացառությամբ ադետի գոտու) արտագաղթողների թիվը կազմել է 170 հազար, իսկ ներգաղթողներինը՝ մոտ 420 հազ. մարդ: Ներգաղթողների ճնշող մեծա-

¹ Ավետիսյան Խ.Ա., Սպիտակի երկրաշարժի բնակչության թվի փոփոխությունները (1988-1991թթ.)//Լրաբեր հասարակական գիտությունների, հ.2, Եր. 1993, էջ 84, 84-89 էջ:

² Գալստյան Մ.Վ., Աշխատանքային միգրացիան հետխորհրդային գյուղական բնակչության շրջանում// Լրաբեր հասարակական գիտությունների, հ.1-2, Եր. 2011, էջ 164, 164-177 էջ:

³ Ժողովրդագրական խնամառության գործակիցը հաշվարկվում է 0-15 տարեկան և 63 ու բարձր տարիքի բնակչության թվաքանակների հանրագումարի հարաբերակցությամբ՝ 16-62 տարեկան բնակչության նկատմամբ, 100 բնակչի հաշվով, <https://armstat.am/file/doc/99533623.pdf>, 13.07.2023թ.:

մասնությունը բաժին է ընկել Ադրբեջանից բռնի տեղահանված հայերին: Իսկ աղետի գոտուց տարհանվածների թիվը կազմել է 200 հազ. մարդ, նրանցից վերադարձել են 150 հազարը¹: Իսկ 1992-1993թթ. մեր հանրապետության հասարակական-քաղաքական և տնտեսական անկայունության, Արցախյան առաջին պատերազմով պայմանավորված բնակչության արտահոսքը կազմել է շուրջ 250 հազ. մարդ, իսկ ներհոսքը՝ մոտ 30 հազար մարդ²:

Այդուսակ 1-ի թվային ցուցանիշների հաշվարկից երևում է, որ Շիրակի մարզում ներկայացվող ժամանակափուլում մեկնողների թիվը գերազանցել է եկածների թիվը 80 հազարով, ինչը կազմել է մարզի բնակչության ընդհանուր թվի մոտ 22%-ը: Արտագաղթողների թվի 15%-ից ավելին բաժին է ընկել Ամասիայի տարածաշրջանում բնակվող ադրբեջանցիներին: Արցախյան հակամարտությունով պայմանավորված՝ նրանք արտագաղթել են հիմնականում Ադրբեջան: Սակայն ադրբեջանցիների զանգվածային արտագաղթին զուգընթաց, դեպի տարածաշրջան նկատվել է ջավախահայերի ներգաղթ, որոնք հիմնականում բնակություն են հաստատել Ամասիայի տարածաշրջանում³: Այս ժամանակափուլում ամենաշատ նվազել է Գյումրի քաղաքի բնակչության թիվը՝ շուրջ 50 հազար⁴:

Չանգվածային արտահոսքի փուլ (1994-1998թթ.). Այս փուլում մեկնածները գերազանցել են եկածների թվին 60 հազարով և արտագաղթի հաշվին բնակչության թիվը նվազել է 21.4%-ով՝ հիմնականում, Գյումրի քաղաքի բնակչության թվի նվազման հաշվին: Եթե նախորդ փուլում

¹ ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, պետպատվերով գիտահետազոտական թեմայի գիտական հաշվետվություն, Եր. 2013 էջ 7:

² Նույն տեղում:

³ Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր // ՀՀ ԳԱԱ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 8, Գյումրի, 2005, էջ 67, 65-71 էջ:

⁴ Բոյաջյան Ա., Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունը (XXդ. վերջ - XXI սկիզբ)//ՀՀ ԳԱԱ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1(24)// Գյումրի, 2021, էջ75:

մարզի բնակչության թվի նվազման հիմնական պատճառ հանդիսացել է բնական աղետը և Արցախյան առաջին պատերազմը, ապա այս փուլում՝ արտագաղթի հիմնական աղբյուրը՝ սոցիալ-տնտեսական գործոններն են հանդիսացել (Էներգետիկ ճգնաժամ, սոցիալիստական տնտեսահամակարգից անցում կապիտալիստականի, արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումով պայմանավորված, դրանց գործունեության դադարեցում, հաղորդակցման ուղիների շրջափակում և այլն, որի արդյունքում տասնյակ խոշոր և միջին արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցին գործելուց, ինչը հանգեցրեց ինստիտուցիոնալ գործազրկության և զանգվածային արտագաղթի, հիմնականում Ռուսաստանի Դաշնություն): Բացի վերը նշած գործոններից, արտագաղթի ծավալների մեծացման վրա որոշակի ազդեցություն է ունեցել միգրացոն ցանցի առկայությունը: Այսինքն, մարզի բնակչության մեծ մասը մեկնել է այնտեղ, որտեղ ունեցել է բարեկամներ և ընկերներ¹: Արժե հիշատակել, որ մինչև 2000-ական թվականների սկիզբը Հայաստանի պետական միգրացիոն քաղաքականությունը, ըստ էության պարփակված էր միայն Ադրբեջանից փախստական հայերի հիմնախնդիրների լուծման շրջանակներում²: Այդ տարիներին ՀՀ-ում միգրացիայի տեմպն ամենաբարձրն է եղել Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Վայոց Ձորում և Տավուշում³:

Արտահոսքի ծավալների նվազման և կայունացման փուլ (1999-2008թթ.).

Էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը և սոցիալ-տնտեսական կայունացումը իրենց գործուն ազդեցությունն ունեցան բնակչության մշտական արտագաղթի ծավալների նվազման վրա: Հատկանշական է, որ մեր հանրապետությունում սկսած 1998թ. կարգավորվեց միգրացիայի հաշվառման գործիքակազմը:

¹ Բոյաջյան Ա, *Բնակչության միգրացիան Շիրակի մարզում, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), տետր 3, Գյումրի, 2022, էջ 10:*

² Միգրացիա և հմտություններ. *Հայաստանի ազգային զեկույց, Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012, էջ 35:*

³ Մինասյան Ա. և այլք, *Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն, Եր. 2008, էջ 13:*

Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում

Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների հաշվարկից երևում է, որ 1994-1998թթ. համեմատ եկածների թիվը 1999-2003թթ. նվազել է 23.6%-ով, իսկ մեկնողներինը՝ 7.2 անգամ: Այսինքն՝ մեկնողների թվի շեշտակի անկումն առաջին հերթին պայմանավորված տնտեսության կայունացմամբ, երկրորդ՝ աշխատաշուկան բեռնաթափվեց աշխատուժի ավելցուկից: Մշտական միգրացիան աստիճանաբար իր տեղը զիջում է սեզոնային աշխատանքային միգրացիային:

Աղյուսակ 1

**Շիրակի մարզի բնակչության միգրացիայի շարժընթացը
(1988-2022թթ.)**

Տարեթիվ	Եկողների թիվը	Մեկնողների թիվը	Միգրացիայի մնացորդը	Բնակչության թվի նվազումը արտագաղթի հաշվին %
1988-1993թթ.	70000	150000	-80000	-22.0
1994-1998թթ.	6000	66000	-60000	-21.4
1999 -2003թթ.	4583	9116	-4583	-1.8
2004- 2008թթ.	4908	12366	-7458	-3.1
2009- 2013թթ.	5884	11335	-5451	-2.3
2014 -2018թթ.	5625	13747	-8122	-3.5
2019 -2022թթ.	10676	11347	-671	-0.3
ընդամենը	107676	273911	-166285	-45.7

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. ՀՀ ՄՎԿ տվյալները,

<https://armstat.am/am/?nid=81&pthid=demo&year=2001>

Մեր հետազոտությամբ, որտեղ տվյալների հավաքման հիմնական մեթոդը մարզի տարբեր բնակավայրերում մարդկանց հարցումներն են եղել, պարզվեց, որ 1990-ական թվականներին մեկնածների ճնշող մեծամասնությունը չի վերադարձել, իսկ 2002-2011թթ. մեծ մասը վերադարձել է: Այսպես, 2002-2007թթ. Շիրակի միգրանտների բացարձակ թվի՝ 93%-ը վե-

րադառնում են¹: Այդ առումով ՀՀ-ից Ռուսաստան մեկնածների հետադարձի ցուցանիշը կազմում է 82%, ԱՄՆ-ի և ԵՄ երկրների համար կազմում է 47.1 և 54.6 %²: Կարծում ենք՝ այդ ցուցանիշը նույնն է նաև Շիրակի մարզի համար: Հայաստանից 2002-2005թթ. մեկնած աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը կազմել է 116-147 հազ. մարդ կամ հանրապետության մշտական բնակչության 3.5-4.6%-ը, 2005-2007 թթ.՝ 96-122 հազ. կամ մշտական բնակչության՝ 3.0-3.8%³, իսկ 2015 թ.՝ 60-65 հազ. մարդ⁴: Դաշտային ազգագրական նյութերի համաձայն՝ այդ տարիներին Շիրակի մարզից աշխատանքային միգրանտների թիվը տատանվել է 25-50 հազարի միջև, որի կեսը բաժին է ընկնում Գյումրի քաղաքին⁵: Այսինքն՝ հանրապետության միգրանտների 1/3-ը բաժին է ընկնում Շիրակի մարզին: Այդ տարիներին ՀՀ, այդ թվում Շիրակի մարզի բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման մեջ որոշակի նշանակություն ունեն սեզոնային աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումները: Այսպես, 2003-2007թթ. միգրանտների դրամական փոխանցումները կազմել է ՀՀ ՀՆԱ-ի 17-24%-ը, իսկ դրամական փոխանցումները՝ 2011թ. կազմել է 1.5 մլրդ դոլար, որի 1.2 մլրդը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը⁶ և 2017թ.՝ 1.7 մլրդ դոլար, որից 60.6%-ը Ռուսաստանից⁷: Մեր կողմից իրա-

¹ Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց, Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին 2012, էջ 74:

² Նույն տեղում, էջ 24:

³ Գալստյան Մ. Վ., Աշխատանքային միգրացիան հետխորհրդային գյուղական բնակչության շրջանում// Լրաբեր հասարակական գիտությունների, հ.1-2, Եր. 2011, էջ 165, 164-177 էջ:

⁴ Գալստյան Մ. Վ., Աշխատանքային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ// Լրաբեր հասարակական գիտությունների, հ.2, Եր. 2018, էջ 159-169 էջ:

⁵ Բոյաջյան Ա., Բնակչության միգրացիան Շիրակի մարզում, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), տետր 2, Գյումրի, 2021:

⁶ Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց, Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին 2012, էջ 26-27:

⁷ Գալստյան Մ. Վ., Աշխատանքային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ// Լրաբեր հասարակական գիտությունների, հ.2, Եր., 2018, էջ 164:

կանացված թվային ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ Շիրակի մարզի աշխատանքային միգրանտների դրամական հոսքերը տարեկան միջինը կազմում է 400-500 մլն ԱՄՆ դոլար: Աշխատանքային միգրանտների շնորհիվ զարգանում են նաև մարզի տրանսպորտային, տեղեկատվական հաղորդակցության և ֆինանսական գլոբալ ենթակառուցվածքները, որի արդյունքում երկրների միջև ավելի է ամրապնդվում սոցիալ-տնտեսական և մշակութային կապերը¹:

Արտահոսքի ծավալների աճի փուլ (2009-2019 թթ.). Այս ժամանակափուլում մեկնածների թիվը գերազանցել է եկածների թիվը 12.2 հազարով, և մարզի բնակչության թիվն արտազաղթի հաշվին նվազել է 5.8%-ով: Աշխատանքային միգրացիայի պատճառների վերաբերյալ օբյեկտիվ իրավիճակը ներկայացնելու համար մարզի բազմաթիվ բնակավայրերում (Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Ախուրյան, Աշոցք, Ամասիա և այլ) իրականացրել ենք սոցիալական հարցումներ. «Որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցին՝ հիմնականում պատասխանել են, որ արտագնա աշխատանքի մեկնում են բանկերից վերցված վարկերը կամ դրա տոկոսները մարելու համար: Նրանք վարկեր վերցրել են տարբեր նպատակներով (բնակարանի հիմնանորոգման, կենցաղային իրերի, ավտոմեքենայի գնում, երեխաների ուսման վարձ և այլն)²: Մարզի խոշոր գյուղական բնակավայրերից տարեկան միջինը 300-500 աշխատունակ տարիքի՝ մեծ մասամբ տղամարդիկ մեկնում են արտասահմանյան երկրներ՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնություն, սեզոնային արտագնա աշխատանքի, որոնց ամսական միջին եկամուտը՝ 501-1000 ԱՄՆ դոլար է կազմում³:

¹ Գարապետյան Ս.Ս., *Գլոբալացումը և աշխատանքային միգրացիայի բովանդակությունը*// *Լրաբեր հասարակական գիտությունների, հ.1, Եր., 2007, էջ 99*:

² *Բոյաջյան Ա, Բնակչության միգրացիան Շիրակի մարզում, Դաշտային ազգագրական նյութեր, տեսր 2, թ. 1, Գյումրի, 2017*:

³ *Բոյաջյան Ա, Բնակչության միգրացիան Շիրակի մարզում, Դաշտային ազգագրական նյութեր, տեսր 2, թ. 10, Գյումրի, 2017*:

Շիրակի մարզի միգրանտների և զբաղվածություն ունեցող բնակչության ամսական միջին եկամուտը 2017թ.

(ըստ էթնոսոցիալական հարցումների արդյունքի¹)

	Մինչև 200 դոլար	201-500	501-1000	1001 և ավելի
Միգրանտների եկամուտն արտերկրում %	15.0	15.0	55.0	15.0
Մարզի զբաղվածություն ունեցող բնակչության եկամուտը %	55.0	25.0	14.0	6.0

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. Բոյաջյան Ա, Բնակչության միգրացիան Շիրակի մարզում, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, թ. 10, Գյումրի, 2017:

Աղյուսակ 2-ից երևում է, որ Շիրակի աշխատանքային միգրանտների եկամուտները տոկոսային համեմատությամբ բազմիցս գերազանցում են մարզում զբաղվածություն ունեցող բնակչության եկամուտը: Այսպես, եթե մինչև 500 ԱՄՆ դոլար աշխատանքային միգրանտների 30%-ը, 500-ից բարձր՝ 70%-ը, նույն ցուցանիշը Շիրակի մարզում կազմել է համապատասխանաբար 80% և 20%:

Բնակչության արտահոսքի և ներհոսքի II փուլ (2020թ.-ից մինչ այսօր)

ՀՀ, այդ թվում Շիրակի մարզի բնակչության տեղաշարժերում արմատական փոփոխություններ գրանցվեցին 2020 թ., մասնավորապես՝ COVID-19-ով պայմանավորված: Համավարակի պատճառով կտրուկ նվազեց բնակչության տեղաշարժը: Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների հաշվարկից երևում է, որ մեկնածների թիվը գերազանցում է եկածների թիվը 671-ով: Այսինքն՝ գրանցվել է աշխատանքային միգրանտների թվի նվազում, և 2022թ. ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում գրանցվել է տասնյակ հազարավոր ռուսաստանցիների ներգաղթ, որոնք տեղավորվել են

¹ Հարցումներն անցկացվել են Գյումրի քաղաքում և խոշորացված համայնքների 15 բնակավայրերի 200 հոգու հետ:

հիմնականում Երևան և Գյումրի քաղաքներում: Մեր մոտավոր հաշվարկով Գյումրիում բնակչություն հաստատած ռուսաստանցիների թիվը գերազանցում է չորս հազարը¹:

Եզրահանգումներ և առաջարկություններ. Ամփոփուելով՝ կատարում ենք հետևյալ եզրահանգումները.

- Վերջին 35 տարում Շիրակի մարզից բնակչության արտագաղթի և ներգաղթի շարժառիթները և դրդապատճառները տարբեր են եղել, պայմանավորված հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական միջավայրի փոփոխությունով:
- Ճգնաժամային տարիներին արտագաղթողների թիվը մի քանի անգամ գերազանցել է ներգաղթողների թիվը: Մարզի, մասնավորապես՝ Գյումրի քաղաքի բնակչության թվի նվազման հիմնական աղբյուրը եղել է մշտական արտագաղթը:
- Մարզի բնակչության արտագաղթի հիմնական պատճառներն են՝ լավ աշխատանքի որոնումը, բարեկեցիկ միջավայրում ապրելը, ավելի լավ ապագա ունենալ, ԽՍՀՄ-ի փլուզումը, երկրի անվտանգության խաթարումը, երեխաներին բանակում ծառայելուց զերծ պահելու ցանկությունը և ներհասարակական համերաշխության անկումը:
- Վերջին երեք տարվա արտագաղթի նվազումը և ներգաթի աճը բացատրվում է COVID-19-ով և ռուս -ուկրաինական պատերազմով:
- Արտագաղթի ծավալների նվազման և ներգաղթի խթանման համար անհրաժեշտ է, որ մարզում զբաղվածություն ունեցող և արտագնա միգրանտների եկամուտները հավասարվեն, երկրորդ՝ ներգաղթողների թվի ավելացման հիմնական խթան կարող է հանդիսանալ արդյունաբերության աշխատատար ճյուղերի զարգացումը և ներհասարակական համերաշխության միջավայրի ստեղծումը:

¹ Բոյաջյան Ա, Բնակչության միգրացիան Շիրակի մարզում, Դաշտային ազգագրական նյութեր, տեսր 1, թ. 10, Գյումրի, 2023:

References

1. Avetisyan K.A. *Changes in the population of the Spitak earthquake (1988-1991)*, [Spitaki yerkrasharzhi bnakch'ut'yan t'vi p'vop'vokhut'yunnery(1988-1991)]// Social science news, no. 2, Yer. 1993, , pp. 84-89 (in Armenian).
2. Boyajyan A. *Some issues of socio-economic development of Shirak marz*, [Shiraki marzi sots'ial-tntesakan zargats'man mi k'ani harts'er], NAS of RA, Shirak Armenological Research Center//Collection of Scientific Works No. 8 // Gyumri 2005, pp.65-71. (in Armenian)
3. Boyajyan A. *The change in the sex-age structure of the population of Shirak marz (end of the 20th century - beginning of the 21st century)*, [Shiraki marzi bnakch'ut'yan serratarik'ayin karruts'vatsk'i p'vop'vokhut'yuny (XXd. verj - XXI skizb) National Academy of Sciences of the Republic of Armenia, Shirak Armenological Research Center // collection of scientific works no. 1(24) // Gyumri 2021, pp.73-84.] (in Armenian)
4. Boyajyan A. *Migration of the population in Shirak Marz*, [Bnakch'ut'yan migrats'ian Shiraki marzum], Ethnographic field materials. notebook 2, Gyumri 2017. (in Armenian)
5. Boyajyan A. *Migration of the population in Shirak Marz*, [Bnakch'ut'yan migrats'ian Shiraki marzum], Ethnographic field materials. notebook 2, , Gyumri 2021. (in Armenian)
6. Boyajyan A. *Migration of the population in Shirak Marz* [Bnakch'ut'yan migrats'ian Shiraki marzum], Ethnographic field materials. notebook 3, Gyumri 2022. (in Armenian)
7. Boyajyan A. *Migration of the population in Shirak Marz* [Bnakch'ut'yan migrats'ian Shiraki marzum], Ethnographic field materials. notebook 1, Gyumri 2023. (in Armenian)
8. Galstyan M. *Labor migration among the post-Soviet rural population* // Social science news, v. 1-2// [Ashkhatank'ayin migrats'ian hetkhorhrdayin gyughakan bnakch'ut'yan shrjanum], Yer. 2011, pp. 164-177. (in Armenian)
9. Galstyan M. *Socio-economic consequences of labor migration RA* [Ashkhatank'ayin migrats'iayi sots'ial tntesakan hetevank'neri HH] //News of social sciences, v.2// Yer. 2018, pp. 159-169. (in Armenian)

10. Karapetyan S.M. *Globalization and the content of labor migration* [Globalats'umy yev ashkhatank'ayin migrats'iayi bovandakut'yuny], //Laber social sciences, v.1// Yer. 2007, pp. 99-100. (in Armenian)
11. *Assessment of the RA migration situation through a sample survey, a scientific report of a scientific research topic commissioned by the state* [HH migrats'ion iravichaki gnahatum` yntrank'ayin hetazotut'yan mijots'ov, petpatverov gita-hetazotakan t'emayi gitakan hashvetvut'yun,] Yer. 2013. 144p. (in Armenian)
12. *Migration and skills. National Report of Armenia* [Migrats'ia yev hmtut'yunner. Hayastani azgayin zekuyts'], European Educational Foundation, Turin 2012, 111p. (in Armenian)
13. Minasyan A. et al., *Survey of migrants returning to Armenia* [Hayastan veradardzoghmigrantneri hetazotut'yun], Astghik ed., p. 13, Yer. 2008, 80 p.(in Armenian)
14. Mkhitaryan A. *Problems of elimination of the consequences of the earthquake in Shirak Marz* [Yerkrasharzhi hetevank'neri verats'man himnakhndirneri Shiraki marzum], // Social sciences news, vol. 1// Yer. 2006, pp.219-224. (in Armenian)
15. Mkhoyan A. *More apartments were built in Gyumri than demolished* [armenia-gyumri-anotevanner] but there are still homeless people in the city, <https://armeniasputnik.am/20171207/07/14/2023>. (in Armenian)
16. Safaryan L., Piruzyan S.A. *Cause and effect perceptions of the Spitak earthquake in Armenia* [Spitaki yerkrasharzhi patcharrahetevank'ayin ynkalumnery Hayastanum], // Social sciences news, vol. 1// Yer. 2002, pp. 65-78. (in Armenian)

ՀՏԴ 93.94, 726

**ՈՔԱՂԵ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՁ¹**

Արկադի ԱԿՈՊՈՎ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՀՀ,
arkadone1@gmail.com

Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՃՇՀԱՀ, ՀՀ
davit.nahatakan@gmail.com

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՀՀ,
armenani@mail.ru

Պատմական Մեծ Հայքի Տայք նահանգի Ոքաղե գավառը տեղագրվում է Թորթում գետի վերին ու միջին հոսանքի և նրա բազմաթիվ վտակների ավազանում: Ոքաղեի հարուստ պատմամշակութային ժառանգության լավագույն նմուշներն են Մասքուրի, Քցխայի, Սուրբօհանի, Այգեկի եկեղեցիները, Օղիկի, Չարնեսի, Թորթումի, Լսկավի, Նիխաղի ամրակուռ բերդերը և դեռևս վաղ միջնադարից հայտնի Գյուղիկ ու Վարդիշեն բնակավայրերն այնտեղ առկա հուշարձաններով:

Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության ու վերլուծության մեթոդները: Աշխատանքում ներկայացված են Մեծ Հայքի Տայք աշխարհի Ոքաղե գավառի պատմաճարտարապետական հուշարձանները, որոնց մեծ մասը ոչ միայն հանիրավի անուշադրության է մատնված հայագիտության մեջ, այլև առհասարակ հայտնի չէ: Կատարվել են հուշարձանների տարածաչափական ուսումնասիրություններ և ընդհանուր կերպարային վերլուծություն:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Ուսումնասիրության մեջ հստակեցվել է գավառի գրեթե բոլոր հուշարձանների տեղագրությունը: Կատարվել է 2023 թ. իրականացված դաշտային աշխատանքների արդյունքում ստացված նյութերի և գրականության մեջ առկա տվյալների համեմատական վերլուծություն: Հստակեցվել են հուշարձանների ճարտարապետական ձևերը:

Հոդվածը գրվել է հեղինակների համատեղ ջանքերով: Պատմական մասը հեղինակել են Ա. Ակոպովը և Ա. Հայրապետյանը, ճարտարապետական մասը՝ Դ. Նահատակյանը:

Բանալի բառեր՝ Տայք, Ճորոխ, Օդիկ, Սուրբօհան, Թորթում, ամրոց, եկեղեցի, հայեր:

ON THE LOCATION AND CURRENT CONDITION OF THE HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS OF VOKAGHE DISTRICT

Arkadi AKOPOV

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia,
arkadone1@gmail.com

David NAHATAKYAN

Shirak Center of Armenological Studies NAS RA, NUACA, Armenia,
davit.nahatakan@gmail.com

Armen HAYRAPETYAN

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia,
armenani@mail.ru

The Vokaghe District, situated within the historical province of Tayk in Greater Armenia, is nestled in the basin of the upper and middle reaches of the Tortum River, along with its numerous tributaries. Some of the most notable examples of Vokaghe's rich historical and cultural heritage include the churches of Maskur, Ktskha, Surbohan, and Aygek, as well as the fortresses of Odik, Charnes, Tortum, Lskav, Nikhagh. Additionally, the villages of Gekhik and Vardishen have been renowned since the early Middle Ages for their remarkable monuments.

This work employs historical-comparative methods, as well as techniques for comparing and analyzing primary sources. It presents historical-architectural

monuments of the Vokaghe district within the historical Tayk region, most of which have not only been overlooked in Armenian studies but remain completely unknown. We conducted spatial and osteometric studies on these monuments and conducted a comprehensive analysis of their characteristics. The paper also provides a thorough examination of the topography of nearly all the district's monuments and includes a comparative analysis of data gathered during the 2023 fieldwork with existing literature. Furthermore, the architectural features of these monuments have been elucidated.

This article is the result of collaborative efforts by the authors. The historical portion was authored by A. Akopov and A. Hayrapetyan, while the architectural section was written by D. Naatakyán.

Key words: Tayk, Chorokh, Odik, Surbohan, Tortum, castle, church, Armenians.

О РАСПОЛОЖЕНИИ И СОВРЕМЕННОМ СОСТОЯНИИ ИСТОРИЧЕСКИХ И АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ ПРОВИНЦИИ ВОКАГЕ

Аркадий АКОПОВ

Ширакский центр арменоведческий исследований НАС РА, Армения,
arkadone1@gmail.com

Давид НААТАКЯН

Ширакский центр арменоведческий исследований НАС РА, НУАСА, Армения
davit.nahatakan@gmail.com

Армен АЙРАПЕТАН

Ширакский центр арменоведческий исследований НАС РА, Армения,
armenani@mail.ru

Округ Вокаге, расположенный в исторической провинции Тайк Великой Армении, находится в бассейне верхнего и среднего течения реки Тортум и её многочисленных притоков. Лучшими образцами богатого историко-культурного наследия Вокаге являются церкви Маскур, Кцха, Сурбохан, и Айгек, а также крепости Одик, Чарнес, Тортум, Лскав, Нихах. Кроме того, села Гехик и Вардишен, известные ещё с раннего средневековья своими памятниками, также заслуживают внимания.

В данной работе используются историко-сравнительные методы, а также методы сопоставления и анализа первоисточников. В работе представлены историко-архитектурные памятники округа Вокаге в исторической провинции Тайк, большинство из которых не только полностью игнорируются в арменоведении, но и вообще неизвестны. Были проведены пространственно-остеометрические исследования памятников и проведен общий анализ их характеристик. В статье также подробно рассмотрена топография практически всех памятников округа. Был проведен сравнительный анализ материалов, полученных в ходе полевых исследований 2023 года, с имеющимися данными в литературе. Кроме того, были уточнены архитектурные формы памятников.

Статья была написана совместными усилиями авторов. Историческую часть подготовили А. Акопов и А. Айрапетян, а архитектурную часть – Д. Наатакян.

Ключевые слова: Тайк, Чорох, Одик, Сурбохан, Тордум, замок, церковь, армяне.

Նախաբան: Պատմական Մեծ Հայքի Տայք նահանգի հարավարևմտյան Ոքաղե գավառը տեղագրվում է Թորթում գետի վերին ու միջին հոսանքի և նրա բազմաթիվ վտակների ավազանում: Հյուսիսից այն սահմանակից էր Տայքի Ագորդացիոր գավառին, հյուսիս-արևմուտքից՝ Տայքի Արսեացիոր գավառին արևմուտքից՝ Բարձր Հայքի Սպեր գավառին, հարավից՝ Բարձր Հայքի Կարին գավառին, արևելքից՝ Տայքի Բողխա գավառին: Օսմանյան տիրապետության շրջանում Ոքաղե և հարևան Ագորդացիոր գավառների տարածքում ձևավորվում է նոր վարչամիավոր՝ Թորթումի սանջակը նույնանուն կենտրոնով, որն ընդգրկվում է Էրզրումի նահանգի մեջ:

Ոքաղե գավառը հյուսիսում հասնում է մինչև Ընկուզկա բերդ, որը, գտնվելով հարևան Ագորդացիոր գավառի տարածքում, վերահսկում էր Թորթում գետի երկայնքով ձգվող ճանապարհը: Գավառի բնակավայրերի տեղանունները միջնադարում գավառի գրեթե համատարած հայաբնակ լինելու լավագույն առիավատյան են: Ոքաղե գավառը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ եկեղեցիներով, բերդերով և ամրոցներով, ինչպիսիք են Մասքուրի, Քցխայի, Սուրբօհանի, Այգեկի եկեղեցիները, Օ-

Օղիկ:Պատմական Տայքի երբեմնի հայաշատ¹ Օղիկ գյուղում (այժմ՝ Aşağı Serdarlı)՝ նույնանուն գետակի աջ ափին՝ ժայռի վրա պահպանված է միանավ սրահավոր եկեղեցի: Եկեղեցու տանիքը, բացառությամբ խորանի արսիդի, փլուզվել է: Եկեղեցու մուտքը հարավից էր, արևմուտքից և արևելքից ուներ մեկական պատուհան: Եկեղեցին կառուցված էր տարբեր գույների անմշակ կամ կիսամշակ քարերով:

Օղիկում պահպանվել է նաև միջին չափի ամրոց (35,0×10,0 մ): Այն կառուցված է ոչ մեծ անմշակ քարերով և կրաշաղախով, պարիսպների առավելագույն բարձրությունը 15 մետր է: Ամրոցի հիմնական մասից դուրս կան մեկ այլ պարսպի բեկորներ: Ամրոցի տարածքում պահպանվել է եկեղեցի, որը ևս կառուցված է կոպիտ քարով և կրաշաղախով, ունի աղյուսե ծածկ՝ զարդարված տարբեր զարդանախշերով ու գույներով: Եկեղեցու ներսի մասում արևելքից թաղածածկ խորշեր են: Այսօր ամրոցն ու եկեղեցին տեղացիների կողմից օգտագործվում են տնտեսական նպատակներով:

Ամրոցից մոտ 150 մ դեպի արևելք՝ ժայռի վրա, գտնվում է մեկ այլ եկեղեցի: Եկեղեցին երկխորան է: Շինության մուտքը բացված է արևմուտքից, արևելքում՝ խորանների վերևի հատվածում մեկական պատուհան է առկա, ևս մեկ պատուհան բացված է հարավային պատի վրա:

Սուրբօհան: Պատմական Տայքի Ոքաղե գավառի Սուրբօհան գյուղում (ժամանակակից Դիքմեն) պահպանվում է խաչաձև հիմքով գմբեթավոր եկեղեցի: Եկեղեցին կառուցված է կոպիտ մշակված, միջին չափի քարով և շաղախով, ներկայումս փլված են գմբեթն ու թևերի տանիքը: Պահպանվել է տանիքի միայն հյուսիսային թևի մի հատվածը: Եկեղեցու միակ մուտքը հարավից էր: Տեղի բնակչությունը եկեղեցին օգտագործել է տնտեսական նպատակներով, ինչի արդյունքում եկեղեցու խորանի հատվածում

¹ *ოსმალური ვრცელი და მოკლე დავთრები ტაო-კლარჯეთის შესახებ (XVI-XVIII საუკუნეები), ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, მცირე შენიშვნებითა დაფაქსიმილებით გამოსაცემად მოამზადა პროფ. ნოდარ შენგელიამ, თბილისი, 2013, გვ. 279-280.*

դուռ է բացվել: Ըստ տեղացիների՝ եկեղեցու գմբեթը փլուզվել է 30 տարի առաջ:

Չարնես: Ոքաղե գավառի Չարնես (այժմ՝ Kaleboynu) գյուղից մոտ 800 մետր դեպի արևմուտք՝ բարձր ժայռի վրա պահպանվում են միջնադարյան ամրոցի ավերակներ: Ամրոցը բավական մեծ չափերի էր (50,0x80,0 մ), պահպանված պատերի բարձրությունը հասնում է 10 մետրի, որոնք շրջապատում են ժայռի եզրը: Ամրոցի հյուսիսարևելյան մասում գտնվում է սրահավոր եկեղեցի: Ամրոցի ներսում մնացել են ջրի մեծ բաքեր և ներքին շինությունների բեկորներ: Պատերը կառուցված են կոպիտ քարով և շահախոլ: Ամրոցի բարձր պարիսպների վերին մասում մարտական արահետներ են: Ամրոցի դարպասը պաշտպանված է կրկնակի պարսպով:

Չարնես գյուղի կենտրոնում պահպանվել է սրահավոր փոքր չափերի եկեղեցի, որը կառուցված է անտաշ քարով ու կրաշաղախով: Եկեղեցու մուտքը հարավից է, արևելքից ու արևմուտքից բացված են փոքրիկ պատուհաններ: Եկեղեցին ներկայումս օգտագործվում է տնտեսական նպատակներով:

Մասքուր: Ոքաղե գավառի Մասքուր գյուղում (այժմ՝ Cihanli) պահպանվում է միանավ սրահավոր եկեղեցի: Եկեղեցու տանիքը փլվել է արևմտյան մասում: Եկեղեցու մուտքը հյուսիսից է, խորանի կամարը պահպանվել է ամբողջությամբ: Եկեղեցին կառուցված է կոպիտ մշակված քարով և կրաբետոնով: Ներկայումս այն օգտագործվում է տեղի բնակչության կողմից գյուղատնտեսական նպատակներով: Մասքուր գյուղի տարածքում պահպանվում են նաև քարայրեր: Հավանական է, որ այնտեղ եկեղեցի է եղել:

Քցխա: Ոքաղե գավառի երբեմնի հայաշատ Քցխա¹ (այժմ՝ Şenyurt) գյուղում պահպանվում է սրահավոր երկխորան եկեղեցի: Եկեղեցու մուտքը հարավից է: Կառուցված է միջին չափի անտաշ քարերով ու կրաշաղախով: Եկեղեցին ներկայումս օգտագործվում է տնտեսական նպատակ-

¹ *Ռեմալոյրի ջրգլեռի և մոզլոյ Դաճոթրեծի Երա-Վլարճեյոտի Մըսախեծ*, թ. 258-261.

ներով: Ամենայն հավանականությամբ, եկեղեցին եղել է Քցխա գյուղի հայության հոգևոր կենտրոնը:

Քցխադուռ: Ոքաղե գավառի Քցխադուռ (այժմ՝ Derekapı) գյուղում պահպանվում են եկեղեցու մնացորդներ: Եկեղեցին գմբեթավոր դահլիճ տիպի է եղել: Պահպանվել են արևմտյան թևը և հարավային պատի մի մասը: Եկեղեցին կառուցված է միջին չափերի կիսամշակ քարերով ու կրաշաղախով:

Այգեկ: Ոքաղե գավառի Այգեկ (այժմ՝ Vişneli) գյուղում էր գտնվում գրավոր աղբյուրներից քաջ հայտնի Այգեկի տաճարը: Եկեղեցին պայթեցվել է 1960-ական թթ.: Եկեղեցու քարերն օգտագործված են ներկայումս եկեղեցու տեղում կառուցված մզկիթի պատերի մեջ: Դրանցից մեկի վրա պահպանվել են հունարեն տառեր, որոնք իրենցից ներկայացնում են 1917թ. է. Թաղայիշվիլու կողմից փաստագրված հունարեն արձանագրության մի հատված: Այս եկեղեցու վրացերեն արձանագրության մասին է. Թաղայիշվիլին հայտնում է, որ արձանագրությունը գրողը, ամենայն հավանականությամբ, լավ չի տիրապետել վրացերենին, քանի որ արձանագրության մեջ բազմաթիվ տառասխալներ կան¹: Սա մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ եկեղեցու վրայի արձանագրությունները արվել են Տայոց աշխարհի բուռն քաղկեդոնականացման շրջանում, իսկ արձանագրություն գրողը եղել է ոչ թե վրացի, այլ քաղկեդոնական հայ: Հենց հայ լինելը կարող է բացատրել արձանագրությունը գրողի՝ վրացերենին լավ չտիրապետելը և տառասխալներով արձանագրություն գրելը: Հայեր են եղել նաև գյուղի բնակիչները, որը փաստվում է ուշմիջնադարյան օսմանյան հարկացուցակների մեջ²: Հակառակ դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչպես կհանդուրժվեր տառասխալներով արձանագրության առկայությունը եկեղեցու պատերին:

¹ *Такайшвили Э. Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии, Тб., 1952, с. 76.*

² *Օսմալյորի շրջելու և մոջլու Դաշտրեմի Եառ-վառըչեթոսի Մեսախեմ, թ. 264.*

Այգեկ գյուղից 2 կիլոմետր դեպի արևելք՝ ժայռի վրա, պահպանվում են փոքրիկ բերդի մնացորդներ (40°23'44,80" հյուսիս; 41°27'4,95"E): Պարսպի առավելագույն բարձրությունը հասնում է 4 մետրի: Բերդը կառուցված է անտաշ քարերով ու կրաշաղախով: Բերդիի հյուսիսարևելյան մասում կա փոքր չափերի սրահավոր եկեղեցի:

Նորշեն: Որպաղե գավառի Նորշեն (այժմ՝ Karlı) գյուղում պահպանվել են եկեղեցու հետքեր: Եկեղեցին հիմնահատակ ավերված է, սակայն ընդգծվում է հիմքը, իսկ քարերը տեղ են գտել տեղացիների տների կամ օժանդակ շինությունների պատերի մեջ: Ամենայն հավանականությամբ, պահպանված մնացորդները Նորշենի Ս. Հակոբ եկեղեցին են:

Նորշենը մինչև Հայոց Մեծ եղեռնը եղել է բնակեցված հայ կաթոլիկներով: Բնակավայրի հայկական լինելու մասին են վկայում ոչ միայն օսմանյան հարկացուցակները¹, սալնամենները², XIX դ. ընթացքում կազմված զանազան վիճակագրությունները³, այլ նաև տեղում պահպանված հայկական գերեզմանատունը: Գերեզմանատանը պահպանվել են տապանաքարեր, որոնց վրա հանդիպում ենք իսաչեր և հայաստառ գրություններ:

XIX դ. կեսերին Նորշենում բնակվում էին 40 տուն հայ կաթոլիկներ⁴: Նորշենը, ինչպես նաև հայ կաթոլիկ մյուս գյուղերը, ստանալով ֆրանսիական հյուպատոսների և կաթոլիկ քարոզիչների որոշ աջակցությունը, կարողանում էր մասամբ հեռու մնալ բռնի մահմեդականացումից և բնակչության շրջանում նկատվող արտագաղթի ընդհանուր միտումից: XIX դարավերջից մինչև 1915 թ. նահատակությունը գյուղի երեցն էր Հ. Ստեփան Վ. Գրիգորյանը⁵:

¹ *Ռեմեմլորի ջրգեղուի և մոզլոյ և ձեռքերի լառ-վարչեյտոսի ջրեհեյթ*, թ. 268-269.

² *Sté u Özger Yunus, XIX. Yüzyılda Tortum'un nüfus durumu// Atatürk üniversitesini sosyal bilimler enstitüsü dergisi, cilt 8, sayı 2 (2006), էջ 117.*

³ *Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բարարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 51:*

⁴ *Sté u Ալիշան Դ., Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1856, էջ 38:*

⁵ *Sté u Թեղիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան և իւր հօտին աղետալի 1915 տարիին, Թեհրան, 2014, էջ 234:*

Գեղիկ և Վարդիշեն: Ոքաղե գավառի Գեղիկ (այժմ՝ Karıkaya) գյուղից 1 կմ հյուսիս պահպանվում է միջնադարյան բերդ, որի պատերի բարձրությունը որոշ հատվածներում հասնում է 3 մետրի: Բերդի տակ կա ջրամբար: Գեղիկի դպրոցի տեղում գյուղի բնակիչները հաստատում են եկեղեցու գոյությունը, սակայն եկեղեցու հետքեր չեն պահպանվել:

Ոքաղե գավառի Վարդիշեն (այժմ՝ Çakılı) տեղի բնակիչները հաստատում են եկեղեցու գոյությունը և նշում գտնվելու վայրը: Ներկայում եկեղեցին ավերված է, նրա տեղում բնակելի տուն է կառուցված, որի տարածքում կան եկեղեցու փոքրիկ բեկորներ: Գեղիկը և Վարդիշենը հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում են դեռևս V դարից և մինչև օսմանյան շրջանի բռնի մահմեդականացումն ամբողջությամբ հայաբնակ էին¹:

Թորթում: Ոքաղե գավառի Թորթում (այժմ՝ Tortumkale) գյուղում՝ բլրի վրա, պահպանվել է միջնադարյան բերդը. «Մեծատարած է բերդս այս քան գայլս և ահեղ, հիմնացեալ յեզր քարափանն, որ առ գետոյն արկեալ պարսպացն ըստ խոտորնակձևոյ քարաժայռին»²: Բերդի հարավային կողմից դեպի ներքև պահպանվում են տարատեսակ քարե շինությունների՝ այդ թվում եկեղեցու ավերակներ: Բերդի հյուսիսային կողմում պահպանվում են երկու հնաշեն բաղնիքների ավերակները:

Նիխաղ: Ոքաղե գավառի Նիխաղ գյուղում (այժմյան Թորթում քաղաքի Քալեդիբի թաղամասը)՝ բարձր ժայռի վրա, կա գրավոր աղբյուրներից հայտնի ամրոց: Պահպանվել են ամրոցի պարիսպները, որոնք շրջապատել են ժայռի եզրերը: Պահպանված հատվածում պատերի բարձրությունը հասնում է 7 մետրի: Ամրոցը կառուցված է փոքր և միջին չափերի անմշակ քարերով ու կրաշաղախով: Ամրոցի տարածքում տեսանելի են նաև եկեղեցու մնացորդներ:

Լսկավ: Ոքաղե գավառի երբեմնի հայաշատ³ Վարի Լսկավ (այժմյան Թորթում քաղաքի Չամլըջա թաղամաս) գյուղից 300 մ հյուսիս՝ դժվա-

¹ *Օսմալյորի շրջցելու և մոզլոյ զաճտրեքի Եթո-վլառչլեյտիս Մեխսեքե*, թ. 268-270.

² *Սարգիսեան Ն. Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս: Վենետիկ, 1864, էջ 85:*

³ *Օսմալյորի շրջցելու և մոզլոյ զաճտրեքի Եթո-վլառչլեյտիս Մեխսեքե*, թ. 245-248.

րահաս ժայռի վրա, պահպանվում է Լսկավի բերդը: Այն կառուցված է միջին չափերի անմշակ քարերով ու կրաշաղիխով: Պարիսպները, որոնց բարձրությունը որոշ տեղերում հասնում է 12 մետրի, եզերում են ժայռը: Պարիսպների վրա բացված են նաև լուսամուտներ:

Շիփեկ: Ոքաղե գավառի նախկինում ամբողջությամբ հայաբնակ Շիփեկ (այժմ՝ Akbaba) գյուղի դպրոցի տեղում է եղել Ս.Գևորգ¹ եկեղեցին, որից, ցավոք, ոչինչ չի մնացել: Եկեղեցու գոյությունը հաստատում են տեղացիները: Գյուղի կենտրոնում պահպանվում է հայերեն արձանագրությամբ աղբյուրը:

Շիփեկցիների մի մասը 1830 թ. վերաբնակեցման ժամանակ հաստատվել էր ներկայիս Վրաստանի Ասպինձայի շրջանի Դամալա գյուղում: 1878 թ. դրությամբ Շիփեկում բնակվում էր 250 հայ²: Գյուղում գործում էր Սմբատյան վարժարանը: 1870 թ. -ից մինչև Հայոց Մեծ եղեռնը գյուղի հոգևոր սպասավորն էր Հակոբ քահանա Քեշիշյանը³: Տեղացիների վկայությամբ, 1915 թ.-ից հետո գյուղում մնացել էր ընդամենը մեկ հայ կին: Վերջինս, ամուսնացած լինելով թուրքի հետ, կրոնափոխվել էր և երկար տարիներ գյուղի միակ բուժաշխատողն էր:

Վերինգեղ: Ոքաղե գավառի Վերինգեղ (այժմ՝ Uzunkavak) գյուղի մզկիթի մոտ տեղացիները հաստատում են եկեղեցու գոյությունը, որից, ցավոք, ոչինչ չի մնացել, բացառությամբ տներից մեկի պատերի մեջ պահպանված եկեղեցու մի քանի քարերի: Ամենայն հավանականությամբ, այդ քարերը վերաբերում են 1663 թ. հիշատակվող կաթողիկե Ս.Աստվածածին եկեղեցուն: Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկը, որը գրվել էր 1663 թ. Վերինգեղում Աբրահամ քահանայի կողմից, վկայում էր այնտեղ եկեղեցու առկայության մասին⁴: Վերինգեղի Ս.Աստ-

¹ Տե՛ս *Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 234*:

² *Էփրիկյան Ս., նշվ. աշխ., էջ 51*:

³ Տե՛ս *Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 234*:

⁴ Տե՛ս *Մատենադարան, Ձեռագիր N 8624, էջ 96բ*:

վաճածին եկեղեցում XIX դարավերջից մինչև 1915 թ. մարտիրոսացումը հոգևոր ծառայություն էր կատարում Գյուտ քահանա Ծատուրյանը¹:

Այլ հուշարձաններ: Ոքաղեի Ռաբաթ (այժմ՝ Kemer kaya) գյուղը գավառի հայաշատ բնակավայրերից էր: XVII դարում Ռաբաթի հայությունն ընդունեց կաթոլիկություն՝ այդ կերպ պահելով ազգային նկարագիրը: Ռաբաթ գյուղում գործել են վարժարան և եկեղեցի: 1864 թ.-ից մինչև Մեծ եղեռնի օրերը գյուղի եկեղեցու հոգևոր սպասավորն էր Հ. Մարտիրոս Վ. Ղազարյանը²: Ներկայումս Ռաբաթի բնակիչները ևս հավաստում են, որ գյուղում եղել է եկեղեցի, որի հետքը, սակայն, չի երևում: Միայն կարելի է տարբեր տների պատերի մեջ տեսնել եկեղեցու քարեր:

Ոքաղե գավառի Մեղուս (այժմ՝ Ballı) գյուղից մոտ 1 կմ արևմուտք առկա են սրահավոր եկեղեցու մնացորդներ: Եկեղեցին կառուցված էր հայկական ավանդական միդիս շարվածքով՝ տարբեր գույների անմշակ քարերով ու կրաշաղախով: Եկեղեցու մերձակայքում կարելի է հանդիպել մի քանի խաչքարեր:

Եզրահանգում. Պատմական Տայքը, լինելով հայոց պետականության կերտման կարևորագույն գոյատարածքներից մեկը, առանձնանում է նրանով, որ այստեղ միջնադարում լայն տարածում ստացավ քաղկեդոնականությունը, ինչն իր կնիքը թողեց երկրամասի էթնոգավանական ու ժողովրդագրական գործընթացների վրա: Զարգացած միջնադարում հայ առաքելական վանական համալիրների մեծ մասը վերածվեց վրացական ծեսով ուղղափառությունը որդեգրած մենաստանների, որոնց կողքին ի հայտ եկան նաև նորակառույց հայ քաղկեդոնական համալիրներ: Այս գործընթացը դրսևորվեց նաև Տայքի Ոքաղե գավառում: Այստեղ ցայսօր պահպանվում են ինչպես հայ քաղկեդոնական, այնպես էլ հայ առաքելական բազմաթիվ հուշարձաններ, որոնց մեծ մասը, ցավոք, գտնվում է անմխիթար վիճակում: Այդ հուշարձանների մի զգալի մասը հայագիտության մեջ ոչ միայն չի ուսումնասիրվել, այլև առհասարակ հայտնի չէ: Գավառի տա-

¹ Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 234:

² Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 234:

րաձքում առկա բազմաթիվ միջնադարյան բերդերի ու ամրոցների առկայությունն էլ իր հերթին վկայում է Հյուսիսային Հայաստանի պաշտպանական համակարգում Ոքաղեի կարևորագույն դերի մասին:

References

1. Akopov A. *Armenian population of the Tortoum district in 1830- 1878* [T'ort'umi gavarrı hay bnakh'ut'yuny 1830-1878 t't']// Scientific works of Shirak Centre of Armenological Studies, v. 21, Gyumri, 2018, p. 96-106. (in Armenian)
2. *Reports of 2016 Research Expeditions of Tao-Klarjeti Monuments* [t'ao-k'larjetis dzeglebis 2016 ts'lis sak'vlevi eksp'editsiebis angarishebi]. T. Khutsishvili, B. Gozalishvili, A. Imedashvili, Sh. Koghuashvili, D. Maisuradze, L. Tsikarishvili. Tbilisi, 2017. (in Georgian)
3. *Ottoman extensive and short books about Tao-Klarjeti (XVI-XVIII centuries)*, [osmaluri vrtseli da mok'le davtrebi tao-klarjetis shesakheb (XVI-XVIII sauk'uneebi)]. Ottoman text with Georgian translation, introduction, small notes and facsimiles were prepared for publication by Prof. Nodar Shengelia. Tbilisi, 2013. (in Georgian)
4. Takayshvili E. *Archeological Expedition of 1917 In the Southern Provinces of Georgia* [Arheologicheskaja jekspedicija 1917 g. v Juzhnye provincii Gruzii]. Tbilisi, 1952. 289 p. (in Russian)
5. Özger Yunus, *XIX. Yüzyilda Tortum'un nüfus durumu*// Atatürk üniversitesi sosyal bilimler enstitüsü dergisi, cilt 8, sayı 2 (2006).
6. Eprikyan S. *Illustrated natural dictionary* [Patkerazard bnashkharhik barraran], v. 2. Venice, 1907. (in Armenian)
7. Alishan G. *Topography of Greater Armenia* [Teghagir Hayots' metsats']. Venice, 1856. (in Armenian)
8. Theodik. *Golgotha of the Armenian clergy and his flock in 1915* [T'eodik, Goghgot'a hay hovevorakanut'ean yev yur hotin aghetali 1915 tariin]. Tehran, 2014. (in Armenian)
9. Sargisian N. *Topographies of the Minor and Mayor Armenia* [Teghagrut'yunq i P'oqr ev i Mec' Hays]. Venice: Saint Lazarus. 1864. 289 p. (in Armenian)
10. Matenadaran, Manuscript N 8624:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Անի ՄԱՐԱՏԻԿՅԱՆ

Նոր տվյալներ Հյուսիսարևելյան Հայաստանի երկաթեղարյան հուշարձանների վերաբերյալ3

Մեեր ԽԵՉՈՅԱՆ, Արման ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Լոռե բերդաքաղաքի 2022-2023 թթ. պեղումներով հայտնաբերված ոսկրե առարկաները..... 26

Դիանա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գազկաշեն (Սուրբ Գրիգոր) եկեղեցու արտաքին քանդակային հարդարանքի առանձնահատկությունները..... 42

Աշոտ Հայկազուն ԳՐԻԳՈՐՅԱՆ, Անի ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տայքի և հարակից շրջանների բնակելի տների տիպաբանական առանձնահատկությունները..... 55

Լիանա ՆԱԶԱԼՅԱՆ

Տայք-Կղարջքյան Բագրատունի կուրապաղատները X դարում..... 67

Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ, Արկաղի ԱԿՈՊՈՎ

Տայք նահանգի Բերդացվոր գավառի Կախամախիքի եկեղեցի. Պատմաճարտարապետական նոր ուսումնասիրություններ..... 83

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ, Արեգնազ ՄԵԼԻՔՄԵԹՅԱՆ

Ջուրը քառուսանքահանի ժողովրդական ծիսական ավանդությունում (Շիրակի դաշտային գրառումների օրինակով)..... 94

Ռուբեն ԳԱՄՊԱՐՅԱՆ

Գոշավանքի Ս. Աստվածածին եկեղեցու :ԶԹ: (1260) Թ. արձանագրությունը և իշխանուհի Գոնցա խաթունը..... 105

Աշոտ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Շիրակի թեմի վերահիմնումն ու ընթացքը XI-XV դդ..... 119

Մարզիաթ ԲԻՂԱՆՈՎ

Կովկասյան էթնոսների դարավոր խառնվելը
(չերքեզահայերի փորձի հիման վրա).....144

Ֆաթիմեթ ՀՈՒՄԿՈ

Կովկասյան ինքնությունը տարեգրական և գրքալիզացիոն
միջավայրերում (չերքեզահայերի փորձի հիման վրա).....151

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Շիրակը IV-XVIII դդ. (պատմական ակնարկ).....160

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շիրակի մարզում հայտնի սրբերի և սրբավայրերի մասին
հավատալիքներ ու տեղական գրույցներ.....181

Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ, Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ալեքսանդրապոլի աշուղական արվեստ և համքարական ավանդույթ...195

Ինգա ԱՎԱԳՅԱՆ

1926թ. Լենինականի երկրաշարժը և նոր քաղաքի
վաղ խորհրդային փուլի կառուցապատման պատմությունը.....211

Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ

Շիրակի մարզի ժամանակակից միգրացիայի գործընթացները.....226

Արկաղի ԱԿՈՂՈՎ, Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ, Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ոքաղե գավառի պատմաճարտարապետական հուշարձանների
տեղագրության և արդի վիճակի շուրջ.....241

С о д е р ж а н и е

Ани САРАТИКЯН

Новые данные о памятниках Железного века
северо-восточной Армении.....3

Мгер ХЕЧОЯН, Арман НАЛБАНДЯН

Костяные изделия, обнаруженные при раскопках
города Лори берд 2022-2023 гг.26

Диана ГРИГОРЯН

Особенности архитектурного декора церкви Гагкашен (Сурб Григор).....42

Ашот Айказун ГРИГОРЯН, Ани ГРИГОРЯН

Типологические особенности жилых домов
Тайка и прилегающих районов.....55

Лиана НАЗАРЯН

Багратидские куропалаты Тайк-Кгарджка в X веке.....67

Давид НААТАКЯН, Аркадий АКОПОВ

Церковь кахамахик в округе бердацпор провинции тайк:
новые историко-архитектурные исследования.....83

Асмик МАТИКЯН, Арегназ МЕЛИКСЕТИЯН

Символика воды в детском ритуале сорокодневки
(в рамках полевых работ в Ширакской области)94

Рубен ГАСПАРЯН

Княгиня Гонца Хатун и фрески на стене Гошаванка.....105

Ашот МАНУЧАРЯН

Переоснование Ширакской епархии и ее деятельность в XI-XV вв.119

Марзият БИДАНОК

Вековое смешение кавказских этносов (с учетом опыта черкесогаев).....144

Фатимет ХУАКО,

Кавказская идентичность как в хроникальных, так и в
глобализационных средах (с учетом опыта черкесогаев)151

Армен АЙРАПЕТЯН

Ширак в IV-XVIII вв. (исторический обзор)160

Карине СААКЯН, Роза ОГАННИСЯН

Поверия и местные сказания об известных святых и святых местах в Ширакском регионе.....181

Григор АГАНЯН, Асмик АРУТЮНЯН

Ашугское искусство Александрополя и цеховая традиция.....195

Инга АВАГЯН

Ленинаканское землетрясение 1926 года и история строительства нового города в раннесоветский период.....211

Арташес БОЯДЖЯН

Современные миграционные процессы Ширакской области.....226

Аркадий АКОПОВ, Давид НААТАКЯН, Армен АЙРАПЕТЯН

О расположении и современном состоянии исторических и архитектурных памятников провинции Вокаге.....241

Contents

Ani SARATIKYAN

New Data on the Iron Age Monuments of Northeastern Armenia.....3

Mher KHECHOYAN, Arman NALBANDYAN

Bone Objects Found during the Excavations of the Lori Fortress in 2022-2023.....26

Diana GRIGORYAN

Features of the Architectural Decoration of Gagkashen (St. Grigor).....42

Ashot Haykazun GRIGORYAN, Ani GRIGORYAN

Typological Features of Tayk and Surrounding Areas Dwellings.....55

Liana NAZARYAN

The Bagratid Kouropalates of Tayk-Kgharjk in the 10th Century.....67

Davit NAHATAKYAN, Arkadi AKOPOV

Kaghamakhik Church in Berdatspor District of Tayk Province:

New Historical and Architectural Studies.....83

Hasmik MATIKYAN, Aregnaz MELIKSETYAN

The Symbolism of Water in Children's Forty-Days' Ritual

(in the frame of the field work carried out in Shirak region).....94

Ruben GASPARYAN

Goshavank St. Church of God (1260) the

Protocol and Princess Gontsa Khatun.....105

Ashot MANUCHARYAN

Refoundation of the Diocese of Shirak

and its Activities in the XI-XV centuries.....119

Marziyat BIDANOK

The Centuries-Old Mixing of Caucasian Ethnic Groups

(Based on the Experience of the Circassian Armenians).....144

Fatimet KHUAKO

Caucasian Identity in both Chronicle and Globalized Environments

(Based on the Experience of Circassian Armenians).....151

Armen HAYRAPETYAN

Shirak in the IV-XVIII centuries (historical review).....160

Karine SAHAKYAN, Roza HOVHANNISYAN

Beliefs and Local Legends about Famous

Saints and Sanctuaries in Shirak Region.....181

Grigor AGHANYAN, Hasmik HARUTYUNYAN

Ashugh Art of Alexandropol and Trade Union Tradition195

Inga AVAGYAN

The 1926 Earthquake of Leninakan and the History of the

Construction of the New City in the Early Soviet Period.....211

Artashes BOYAJYAN

Modern Migration Processes of Shirak Region.....226

Arkadi AKOPOV, David NAHATAKYAN, Armen HAYRAPETYAN

On the Location and Current Condition of the Historical and

Architectural Monuments of Vokaghe District241

Հայաստանի Հանրապետություն Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՅՈՒՄԻՄԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ

(պատմամշակութային համադրություններ)

Միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր

23-24 սեպտեմբեր, 2023, Գյումրի

СБОРНИК СТАТЕЙ

СЕВЕРНАЯ АРМЕНИЯ НА ПЕРЕКРЕСТКАХ ИСТОРИИ

(историко-культурные сопоставления)

Вторая международная конференция

Гюмри, 23-24 сентября, 2023

COLLECTION OF ARTICLES

NORTHERN ARMENIA IN THE CROSSROADS OF HISTORY

(Historical and Cultural Relations)

Second international conference

Gyumri, september 23-24, 2023

Խմբագրումը և արբագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի,

Հ. Մատիկյանի,

Ա. Սառաջյանի

Գեղ. և տեխ. խմբագիր՝ Լ. Կոստանյան

Ժողովածուի հոդվածները գրախոսվել են խմբագրական խորհրդի կողմից:

Ստորագրված է տպագրության՝ 19. 10. 2023

Ծավալը՝ 260 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի – 5ա
<http://shirakcenter.sci.am/>. E-m ail: hkentrone@mail.ru.